

«Ազդեցիկ, մարգարեական եւ ներշնչիչ գիրք մը»

— Քրիսթին Թեյն, «A21» եւ «Յառաջ Մղել

Կիները» կազմակերպութիւններուն հիմնադիրը

Ընդունէ Քու Ինքնութիւնդ եւ Իրագործէ

Կեանքիդ Նպատակը՝ Ծփոթութեամբ եւ

Մրցակցութեամբ Լեցուն Դարու մը Մէջ:

# ԿԵԱՆՔ՝ ԱՌԱՆՅ ՄՐՅԱԿՑՈՒԹԵԱՆ

## ԼԻՍԱ ՊԸՎԻՐ

Երբ Կին Առիւծները Կ'արթննան եւ Սուրբեր Կրող Աղջիկներ  
Մեծ վաճառք ունեցող գիրքերուն հեղինակը

Սիրելի բարեկամ,

Աստուած եզակիորէն ձեւակերպած է քեզ, որպէսզի հզօր եւ նպատակաւորօրում կին մը ըլլաս: Սակայն մեզմէ շատերը երկար ատեն շփոթած եւ անապահով եղած են: Խաղաղութիւնը եւ ուրախութիւնը գողցուած են մեզմէ, քանի որ շարունակ մենք զմեզ ուրիշներու հետ բաղդատած ենք:

Ժամանակն է, որ ոտքի կանգնինք եւ ապրինք այնպիսի կեանք մը, որ անզուգական է իր գեղեցկութեան, զօրութեան, առաքինութեան եւ ազդեցութեան մէջ: Գտիր քու իսկական ինքնութիւնդ Քրիստոսի մէջ, որ յոյսով փայլուն, ծառայելու մէջ հաւատարիմ եւ սիրող եւ նուիրուած է իր բոլոր գործերուն մէջ:

Այս պատգամը ուղղուած է ամէն տարիքի կիներուն: Բարեկանս եւ բոյրս, ինծի համար մեծ պատիւ է, որ կրնամ քեզ օրհնել այս գիրքով: Կը խնդրեմ, որ բաժնեկցիս այս գիրքը եւ համացանցի վրայ տրամադրելի բոլոր միւս աղբիւրները քու բոլոր ծանօթներուդ հետ: Ասիկա իմ նուէրս է քեզի:

Ապրիր կեանքդ քաջութեամբ, համարձակութեամբ եւ կրակով:  
Անկեղծօրէն,



Լիսա Պըվիր  
LisaBevere@gmail.com



«Ազդեցիկ, մարգարեական եւ ներշնչիչ գիրք մը»

— Քրիսթին Բեյն, «A21» եւ «Յառաջ Մղել

Կիները» կազմակերպութիւններուն հիմնադիրը

Ընդունէ Քու Ինքնութիւնդ եւ Իրագործէ

Կեանքիդ Նպատակը՝ Շփոթութեամբ եւ

Մրցակցութեամբ Լեցուն Դարու մը Մեջ:

# ԿԵԱՆՔ՝ ԱՌԱՆՅ ՄՐՅԱԿՑՈՒԹԵԱՆ

## ԼԻՍԱ ՊԸՎԻՐ

Երբ Կին Առիւծները Կ'արթննան եւ Սուրեր Կրող Աղջիկներ  
մեծ վաճառք ունեցող գիրքերուն հեղինակը

**Without Rival**, Western Armenian, by Lisa Bevere

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as **Without Rival** by Lisa Bevere

Copyright © 2016 Revell, a division of Baker Publishing Group

ISBN: 978-0-80072724-6

Additional resources in Western Armenian are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** app

To contact the author: LisaBevere@gmail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

Printed in Lebanon

**Կեանք՝ Առանց Մրցակցութեան**, Լիսա Դըվիր, արեւմտահայերէն

©2024 Messenger International

MessengerInternational.org

Բնագիրը հրատարակուած է անգլերէն լեզուով իբրեւ՝

«Without Rival». հեղինակ՝ Lisa Bevere

Հեղինակային իրաւունք © 2016 Revell, «Baker Publishing Group»ի

մասնաճիւղ

ISBN: 978-0-80072724-6

Արեւմտահայերէն լեզուով յաւելեալ աղբիւններ մատչելի են՝ ձրի ներբեռնումի եւ վիտէօ սփռումի համար հետեւեալ կայքէջին վրայ՝ **MessengerX.com** եւ հետեւեալ բջիջային հեռաձայնի կիրարկումին վրայ՝ **MessengerX**

Հեղինակին հետ կապուելու համար, կրնաք գրել՝

LisaBevere@gmail.com ե-նամակի հասցէին:

Այս գիրքը ձրի նուէր մըն է «Messenger International»

Առաքելութեան կողմէ եւ ԾԱԽՈՒ Զէ:

Տպուած՝ Լիբանանի մէջ



App Store-ը ապրանքանիշն է Apple Inc.-ի, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:



Արեւիս,

Դուք դուարր մըն ես, որ հօր մը կողմէ  
անպուզական կերպով սիրուած է, որուն վարստուած  
է անհամեմարելի պարզամ մը եւ խոսքում մը,  
աննախադէպ ժամանակի մը մէջ: Դուք ընտրուած  
ես այս պահին համար, որ միաժամանակ թե՛  
հիանալի եւ թե՛ սարսափելի է: Այս պարծառով, դուք  
պէտք է ունենաս սեր՝ առանց վախի ... հաւարձ  
գրամարանդերենէ վեր ... եւ յոյս՝ առանց չափի:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինքնուրույն Մը՝ Առանց Մրցակցութեան . . . . .	1
2. Մեր Անզուգական Աստուածը. . . . .	19
3. Խոստում՝ Առանց Մրցակցութեան . . . . .	45
4. Չհամարձակին Բաղդատել . . . . .	75
5. Երբ Քեզ Մրցակից կը Սեպեն. . . . .	99
6. Սեո՝ Առանց Մրցակցութեան . . . . .	127
7. Վախի եւ Սիրոյ Պատերազմը. . . . .	165
8. Խորունկ Ջրհորներ եւ Փափաքներու Ջրհորներ . .	189
9. Դուստր՝ Առանց Մրցակիցներու . . . . .	217
10. Կեանք՝ Առանց Մրցակցութեան . . . . .	247
Նշումներ . . . . .	271



## Ինքնություն Մը՝ Առանց Մրցակցության

Մեր գլխավոր պետքը այն է, որ մեկը ներշնչե մեզ, որպեսզի ըլլանք այնպիսի անձեր, ինչպիսին գիտենք, թե կրնանք ըլլալ:

ՌԱԼՖ ՌԻԱԼՏՕ ԷՄԸՐՍԸՆ

Երբեք մրցակից ունեցած ես: Ես նկատի չունիմ թեթեւ ընկերային մրցակցություն մարզանքի մէջ, ոչ ալ նկատի ունիմ նոր քալել սորվող մանուկները, որոնք կը մրցին իրենց ծնողներուն ուշադրութիւնը եւ սէրը գրաւելու համար:

Ես իմ միտքիս մէջ նկատի ունիմ ասելի հետետողական հակառակորդ մը: Մրցակիցը, վստահաբար, չի նմանիր ոչ ընկերոջ, ոչ ալ ընտանիքի մէկ անդամին: Մրցակցութեան նպատակը ոչ թէ խաղը յաղթելն է, այլ՝ քեզ դաշտէն հեռացնելն է:

Հապա եթէ գիտնայիր, որ այն կեանքը, որուն միշտ ձգտած ես, մրցակցութեան ոլորտէն դուրս է: Հապա եթէ գիտնայիր, որ խաղէն դուրս ելլելու համար պետք չունիս պարտուելու: Հապա եթէ գիտնայիր, որ չես կրնար պարտուիլ: Հապա եթէ



կարենայիր ոչ միայն ստեղծագործ կերպով մտածել, այլև ստեղծագործ կերպով ապրիլ:

Քանի մը տասնամեակ առաջ գիրք մը կարդացի, որ կ'ըսէր, թէ աշխարհի վերջը պիտի գայ լայնատարած օտարացման պատճառով (ոչ թէ՛ այլմոլորակային յարձակումի): Ըստ այդ գիրքին տեսութեան՝ ժամանակ պիտի գար երբ աշխարհը երկու ընդդիմադիր խումբերու կամ մտածելակերպերու պիտի բաժնուէր: Այդպիսի լայնատարած պառակտումի մթնոլորտին մէջ դիրութեամբ կարելի պիտի ըլլար պայքարի հրահրել հակառակ կողմերը, եւ ատոր իբրեւ արդիւնք աշխարհը լիովին պիտի կործանուէր:

Որեւէ համակարգուած պառակտում, որ կրնայ այդ աստիճան տարածուիլ, սկիզբ կ'առնէ աւելի մտերիմ միջավայրի մը մէջ: Անիկա կրնայ սկիզբ առնել տուներու մէջ՝ անմիաբան ընտանիքներու մէջ, որոնց մէջ կ'ապրին երկմիտ սիրտեր ունեցող վիրաւորուած մարդիկ: Գոյութիւն ունին շատ իրական ուժեր, որոնք սուտ զրպարտութիւններ փսփսալով կը յարձակին միտքիդ, կամքիդ եւ զգացումներուդ վրայ: Անոնց նպատակն է՝ քեզ դրդել, որպէսզի նախ դուն քեզի հանդէպ թշնամանաս եւ յետոյ՝ ուրիշներու հանդէպ:

Դժուար է խուսափիլ այն խօսքերէն եւ այն անձերէն, որոնք մեզի կ'ըսեն, թէ մենք այնքան ալ լաւ չենք, բաւարար չենք, բաւարար չափով երիտասարդ չենք, բաւարար չափով խելացի չենք, բաւարար չափով փայլուն միտք չունինք եւ բաւարար չափով հարուստ չենք: Մեզ կը ռմբակոծեն՝ ակնկալելով, որ ետ քաշուինք: Եթէ միայն մարդկային բնութեամբ առաջնորդուինք, պիտի ուզենք մեզմէ հեռացնել այդ մշտական բռնաձաղրը (bullying), որ կ'ակնարկէ, որ մենք երբեք պիտի չկարենանք բաւարարաչափ լաւ ըլլալ: Երբ այդ յարձակումները կը հասնին ճգնաժամային կէտի, ոմանք տեղի կու տան՝ այդ մեղադրանքներուն համաձայն վարուելով, իսկ ուրիշներ կ'ըմբոստանան՝ անոնց ի պատասխան մեղադրանքներ տեղալով:

Մենք կը դատենք, երբ կը զգանք, որ մեզ կը դատեն:

Մենք ամօթի մէջ կը ձգենք կամ կը խայտառակենք, երբ մենք ամօթ կը զգանք:

Մենք կ'ատենք, երբ մենք զմեզ չենք սիրեր:

Երբ սնանկացած ենք, շատ չանցած պիտի ուզենք ուրիշները կողոպտել:

Ասիկա շրջան մըն է, ուր բոլորը կը պարտուին եւ ոչ ոք կը յաղթէ: Հապա եթէ Պօղոսին խօսքերը ճշմարիտ են:

«Սակայն բարեպաշտութիւնը՝ ինքնաբաւութեամբ միասին՝ մեծ շահավաճառութիւն մըն է» (Ա.Տիմոթէոսի 6.6):

Բարեպաշտութիւնը Աստուծոյ տեսանկիւնը որդեգրելու կարողութիւնն է: Ասիկա կը նշանակէ, թէ երբ կը հասկնանք, թէ Ան ինչպէս կը տեսնէ մարդիկը, մենք կ'ընդունինք Անոր մեզի նայած ձեւը:

Քու ներկայ վիճակովդ գոհանալը եւ դուն քեզ իրապէս հանգիստ զգալը անհոգ չի դարձներ քեզ, ընդհակառակը, անիկա քու ստեղծագործութիւնդ պիտի արձակէ: Հեռացի՛ր բոլոր զրպարտող մարդոցմէ եւ շեղումներէ: Ան Իր աչքերը մեր վրայ յառած է, որպէսզի մենք կարենանք վեր նայիլ եւ տեսնել զինք:

Ուրեմն ինչպէս վարուինք:

Փոխանակ մրցակցելու բանի մը համար, որ երբեք նախատեսուած չէր քեզի համար... հաւաքէ՛ ուժերդ, որ բացայայտես այն, ինչ որ իսկապէս քուկդ է:

Կ'աղօթեմ, որ այս գիրքը յստակութիւն բերէ կեանքիդ այն մարզերուն մէջ, ուր պղտորութիւն տիրած է՝ մեր անառողջ առօրեային պատճառով: Քեզի համար ոչ մէկ օգուտ բերող մրցոյթը յաղթելու փոխարէն, կ'ուզեմ, որ դիրքաւորուիս պատերազմը շահելու: Շատ իրական պատերազմ մը կը մղուի քու անձիդ զօրութեանը համար: Ժամանակն է, որ քու տեղդ գրաւես այս աշխարհի մէջ: Եկէ՛ք բացայայտենք բոլոր սուտերը եւ շեղումները եւ գիտնանք մեր իսկական ինքնութիւնը:

## Կորսուած եւ Գտնուած

Ես կը սիրեմ շուները: Վերջերս, երբ Հարաւային Քորէա ճամբորդած էի, մեր սիրելի շունը՝ Թիան, յայտնուած է շուներու ապաստանարանի մը մէջ: Ըստ երեւոյթին, աշխատողներէն մէկը բաց ձգած էր մեր տան մուտքի դուռը, եւ Թիան ձգած էր մեր տաքուկ տունը՝ չափփափելու ձմեռնային Քոլորատոյի փողոցները, ուր դուրսի ջերմաստիճանը զերոյէն վար էր: Պատճառով մը, այդ օրը ան տան ճամբան կորսնցուցած էր: Բարեբախտաբար, մեր դրացիներէն մէկը, որուն ինքնութիւնը անյայտ մնաց, ազնիւ գտնուած է եւ այդ գիշեր զայն իր տունը տարած է, իսկ առաւօտեան զայն տարած է կենդանիներու ապաստանարանը:

Թիային վրայ պիտակ մը կար, բայց աստիկա գրեթէ անօգուտ էր, որովհետեւ անոր վրայ գրուած հեռաձայնի թիւը այլեւս մեր տան հեռաձայնի թիւը չէր: Բացի ատկէ, անոր շան արտօնագիրին ժամկէտը անցած էր (կը ներես, կը կարծէի, թէ աստիկա մէկ անգամ ըլլալիք գործընթաց մըն էր): Այսպիսով, կար շուն մը, որ շատ սիրուած էր եւ տուն ունէր, բայց չունէր ձայն կամ ինքնութիւնը ցոյց տուող որեւէ նշան, որ կրնար անոր օգնել, որ իր տունը գտնէ:

Ես կը գտնուէի Սէուլի մէջ՝ Քորէա, եւ այդ դիպուածէն բոլորովին անտեղեակ էի: Որդիներս իմաստուն կերպով որոշեցին Թիային արկածը ինձմէ պահել, բայց անկասկած, մեր տան մէջ բոլորը խուճապի մատնուած էին: Անոնք շարունակ կը փնտռէին մեր շունը, բայց ոչ մէկ տեղ չէին գտներ: Անոնք կը վախնային, որ ան կրնար շնագայլերու ձեռքը ինկած ըլլալ: Իբրեւ վերջին ելք՝ գրեթէ կատակի համար, անոնք հետեւեցան մէկու մը խորհուրդին եւ հեռաձայնեցին շուներու ապաստանարան:

Երբ Օսթընը կենդանիներու ապաստանարան հասաւ եւ տեսաւ Թիան, ան վստահ չէր, որ անիկա մեր շունն էր: Այդ ծանր փորձութիւնը այն աստիճան փոխած էր անոր

վարմունքը, որ Օսթընը տեսնելով՝ ան ասելի ընկճուած կը թուէր ըլլալ, քան ուրախ: Ան մնաց վանդակին անկիւնը՝ վախէն դողալով: Երբ Օսթընը վճարեց գեղեցիկ պանդոկին մէկ գիշերուայ համարժէք տուգանքը (ըստ երեսոյթին, ժամկէտը անցած արտօնագիրը նորոգելը աժան չեղաւ իրեն համար), մենք կրկին կրցանք Թիան տուն բերել:

Երբ տուն վերադարձայ եւ գիտցայ ամբողջ պատմութիւնը, քիչ մը վիրաւորուեցայ: Ոչ թէ իմ տղաներէս, այլ՝ իմ շունէս: Թիան ասելի քան տասը տարիէ ի վեր, մեր շունն էր եւ առաջին անգամն էր, որ տունէն կը հեռանար եւ առանձինը չէր կրնար վերադառնալ: Ես մտահոգուեցայ ... ինչո՞ւ հիմա: Արդե՞ժք անոր լուսնը (*քաթարաքթը*) կ'ազդէր անոր տեսողութեան: Արդե՞ժք իր յառաջացած տարիքին պատճառով ան իր ուղղութիւնը կորսնցուց: Արդե՞օք ան զի՞ս կը փնտռէր:

Ի վերջոյ, կարետոր չէ, թէ ան ինչո՞ւ հեռացաւ տունէն: Ան մեր ընտանիքին կը պատկանէր, եւ այն իրականութիւնը, որ ան առանձինը չկրցաւ գտնել մեր տան ճամբան, չի ժխտեր այդ իրականութիւնը: Ան փնտռուած եւ գտնուած էր, անոր փրկագինը վճարուած էր, անոր արտօնագիրը նորոգուած էր եւ ան դուրս բերուած էր իր ամօթի վանդակէն եւ վերադարձուած էր իր տեղը, որ մեր անկողինն էր՝ իմ ոտքիս մօտ: Մէկ մոլորած գիշերը բաւարար պատճառ չէր, որ մենք հրաժարէինք իրմէ:

Հաւանաբար դուն գիտես, թէ ես ի՞նչ ըսել կ'ուզեմ: Եթէ մենք (ընտանի կենդանիի մը անկատար տէրերը) պատրաստ էինք այսքան բան ընելու շան մը համար, մեր Երկնաւոր Հայրը որքան բան պիտի ընէ մեզի համար: Ինքնութիւնդ ճշմարտապէս ճանչնալու համար նախ պէտք է հասկնաս, թէ ո՞վ ես դուն Անոր համար: Ա.Յովհաննէսի 3.1-ը մեզի ցոյց կու տայ եւ կը պարզէ, թէ Աստուած ի՞նչպէս կը տեսնէ մեզ:

Ինչպիսի՞ հրաշալի սէր Հայրը շնորհած է մեզի: Միայն տեսէք՝ մենք կոչուած ենք Աստուծոյ զաւակներ: Ա՛յդ է

մեր իրական ինքնությունը: Բայց նաեւ այդ է պատճառը, որ աշխարհը չի ճանչնար մեզ կամ լուրջի չ'առներ մեզ, որովհետեւ անիկա գաղափար չունի, թէ՛ ո՛վ է Ան կամ ի՛նչ է Անոր նպատակը: (Ա.Յովհաննէսի 3.1, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Խօսինք Աստուծոյ սիրոյն ինչքան հիանալի ըլլալուն մասին: Անիկա ակնածալի է, տպաւորիչ եւ ծայրայեղ: Անիկա ձանձրալիին եւ սովորականին ճիշդ հակառակն է: Անոր խորութիւնը կը հիացնէ մեզ: Եւ այս հրաշալի սէրը մեզի տրուած է իբրեւ նուէր՝ ճիշդ ինչպէս երբ գնում կ'ընենք, նուէր կը ստանանք: Բայց Անոր սէրը մեծապէս կը գերազանցէ սովորական նուէրը, քանի որ անիկա նուէր է՝ նուէրի հետ: Մենք ստացանք փրկութեան պարգեւը: Աստուած տեսաւ մեզ թշուառութեան մէջ, վախէն կծկուած կրօնական-մարդասիրական ընկերութեան վանդակին անկիւնը, եւ գին վճարեց՝ մեզ փրկելու համար: Բայց Ան այդ մէկով չբաւարարուեցաւ: Ան մեզ Իրեն մօտեցուց, նորոգեց մեր արտօնագիրը եւ մեզ Իրը կոչեց: (Այս բոլորը տեղի ունեցաւ նոյնիսկ մեր լոգանք առնելէն առաջ): Դուն իրապէս Իրն ես: Եւ Ան հոյակապ կերպով կը սիրէ Իր բոլոր զաւակները: Բայց ամէն մէկուն իւրայատուկ կերպով կը սիրէ:

## **Հաւասար, թէ՛ Իւրայատուկ**

Յաճախ ամէն բան արդար ընելու մեր մարդկային փորձերուն մէջ, կը սկսինք մտածել, թէ Աստուած բոլորս նոյն ձեւով կը սիրէ: Որքան ալ սկիզբը ասիկա ճիշդ թուի ըլլալ, «նոյն» բառը բաւարար մեծ չէ: «Նոյն» բառը կը նշանակէ, թէ մենք կրնանք փոխանակելի կամ փոխարինելի ըլլալ: Պատկերացուր, որ մէկը կ'ըսէ. «Օ՛, ի՛չ, մանիշակագոյն գաւաթներէն մէկը, որ անցեալ շաբաթ *Թարկեթ* հանրախանութէն գնեցի, կտտրեցի: Յուսամ անոնք տակաւին այդ գաւաթներէն կը ծախեն»: Կամ իմ արդէն տուած օրինակս գործածելով. «Իմ սիրելի շունս, որ ատիկ



քան տասը տարիէ ինծի հետ էր, կորսուեցաւ: Բայց հարց չէ. պարզապէս անոր տեղ ուրիշ շուն մը կը գնեմ եւ զայն ալ ճիշդ նոյն ձեւով կը սիրեմ»:

Ես չեմ կրնար այդպէս վարուիլ, եւ համոզուած եմ, որ Աստուած՝ նոյնպէս: Եւ քեզի ըսեմ ասոր պատճառը:

Օր մը կէսօրէ ետք քնացայ: Հարցը այն էր, որ դիւրակիր համակարգիչիս վրայ քնացած էի, ոչ թէ՛ անկողինիս: Երբ գլուխս վեր-վար կը շարժէր, յանկարծ արթնցայ եւ տեսայ, որ ութը էջ շարունակ «թի» տառը գրուած էր:

Այդ պահուն զգացի, որ պէտք է իսկապէս քնանամ: Ուստի գրկեցի շունս, որ ոտքերուս քով նստած էր, եւ ննջասենեակս գացի: Մինչ կը քնանայի, լսեցի Սուրբ Հոգին կը փսփսայ. «Ես հաւասարապէս չեմ սիրեր Իմ զաւակներս»:

Ես ցնցուեցայ եւ անմիջապէս անկողինիս մէջ նստեցայ: Ուրկէ՞ եկաւ այս հայիոյալից միտքը: Ըսի. «Դուն պէտք է նոյն ձեւով սիրես մեզ, այլապէս ատիկա արդար չ'ըլլար»:

Իմ բողոքս ստացաւ հետեւեալ պատասխանը. «Ո՛հ: “Հաւասարապէս” կը նշանակէ, թէ Իմ սէրս կարելի է չափել, եւ Ես կը վստահեցնեմ քեզի ... որ անիկա անչափելի է: “Նոյնը” կը նշանակէ, թէ Իմ զաւակներս փոխանակելի կամ փոխարինելի են, իսկ ատիկա ճիշդ չէ: Իմ սիրտս բաժանմունքներու բաժնուած չէ: Ոչ ոք կրնայ ուրիշի մը տեղը առնել կամ ուրիշ մը փոխարինել Իմ սիրտիս մէջ, քանի որ Ես հաւասարապէս չեմ սիրեր Իմ զաւակներս. Ես իւրայատուկ կերպով կը սիրեմ զանոնք»:

Խոր շունչ մը ան եւ մտիկ ըրէ: Աստուած իւրայատուկ կերպով կը սիրէ մեզ, եւ ոչ թէ հաւասարապէս: Հաւատա՛, որ իւրայատուկը ատելի լաւ է:

Եթէ մէկէ ատելի զաւակ ունիս, հաւանաբար արդէն կը հասկնաս ասիկա: Երբ երկրորդ, երրորդ, կամ վերջին զաւակդ ծնաւ, քու սէրդ չբաժնուեցաւ անոնց միջեւ: Անիկա անչափելի ձեւերով բազմապատկուեցաւ: Դուն չես կրնար որոշել քու սիրոյդ չափը քու զաւակներուդ հանդէպ նոյնիսկ եթէ փորձես:

Ինչպէս կրնաս չափել քու սիրտիդ մղումը: Դուն իւրայատուկ կերպով կը սիրես քու զաւակներէդ իւրաքանչիւրը: Անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր ձեւով կ'արթնցնէ քու ծնողական սէրդ: Հետաքրքրականօրէն դուն կրնաս յատուկ կերպով սիրել որեւէ յատկանիշ քու զաւակներէդ մէկուն մէջ, եւ ուրիշ յատկանիշ մը միւսին մէջ, որ գրեթէ նախորդին հակապատկերն է: Օրինակ՝ ես կայտառ թոռնուհի մը ունիմ, որ կարծես փոքրիկ փոթորիկ մը ըլլար: Անոր եղբայրը՝ իմ առաջին թոռնիկս, զուսպ եւ մեղմ բնատրոյթին ունի: Ես իրարու հետ չեմ բաղդատեր գիրենք: Ես կը սիրեմ, կը վայելեմ եւ կը գնահատեմ կեանքի հանդէպ անոնց տարբեր մօտեցումները: Չեմ ուզեր, որ անոնք նոյն ձեւով վարուին: Անոնցմէ ոչ մէկը միւսէն աւելի տեղ կը գրաւէ իմ սիրտիս մէջ: Ես երկուքն ալ կը սիրեմ ամբողջ սիրտովս, բայց՝ իւրաքանչիւրը իւրայատուկ կերպով:



**Ես հաւասարապէս չեմ սիրեր Իմ զաւակներս. Ես իւրայատուկ կերպով կը սիրեմ զանոնք:**

«Հաւասարապէս» բառը նաեւ կը նշանակէ, թէ Աստուծոյ սէրը չափ ունի կամ չափելի է, որ երկուքն ալ չէ: Անիկա անսահման է: «Իւրայատուկ» բառը շատ աւելի մեծ խորք ունի: Դուն միակն ես, քու նմանդ գոյութիւն չունի: Սուրբ Օգոստինոսը լաւագոյն ձեւով ըսած է ատիկա. «Աստուած մեզմէ իւրաքանչիւրը կը սիրէ այնպէս, որ կարծես մենք միակը ըլլայինք այս աշխարհի մէջ»:

Մեր Հօր սէրը կարելի չէ նմանցնել տապակ մը տուրմով կարկանդակի կամ կերասի գաթայի, որ սիրալիր ծնողը ջանասիրաբար կը բաժնէ հաւասար կտորներու, որպէսզի զաւակներէն ոչ մէկը անտեսուած չզգայ: Անոր հիանալի սէրը չափուած բաժիններով չի տրուիր: Կը հասկնամս, որ Ան սիրեց քեզ՝ նախքան ամէն բանի սկիզբը, եւ Անոր սէրը քեզի հանդէպ վերջ չունի: Դուն կրնաս հեռանալ Անկէ, կրնաս փախչիլ եւ դժոխքը անկողինդ ընել, բայց քու արարքներդ չեն խափաներ Անոր սէրը: (Լրջօրէն, ի՞նչ կ'ուզէ, որ իր վերջը դժոխքին մէջ ըլլայ):

Տէրը Իր սիրոյն մասին խօսեցաւ Երեմիա մարգարէին միջոցով. «Քեզ յաւիտենական սիրով սիրեցի. հեղեաբար քեզ կարեկցութեամբ ինծի քաշեցի»: (Երեմիա 31.3)

Նկատի առ, որ այս նախադասութիւնը անցեալ ժամանակով է: Անոր սէրը որոշուած հարց է: Ան սիրեց քեզ, քու իրական անձդ, քու իւրայատուկ ինքնութիւնդ, անվերջ եւ յաւիտենական սիրով: Կարեւոր չէ, թէ որքան տարեց կամ երիտասարդ ես, որքան գեր կամ նիհար ես: Ան սիրեց քեզ՝ երբ դեռ երիտասարդ եւ անմիտ էիր: Ան կը սիրէ զիս հիմա, երբ ես աւելի հասուն եմ, եւ կը սիրէր այն ատեն, երբ իմ կեանքս դեռ անկանոն էր: Աստուած սէր է: Մեր Հայրը չունի սէր քեզի համար. Ան Ինքը սէր է՝ քեզի համար:

Մեր Հօր հիանալի սէրը մեզի հանդէպ անսահման է, մտերմիկ եւ իւրայատուկ: Դուն իւրայատուկ կերպով սիրուած ես, քանի որ իւրայատուկ կերպով ստեղծուած ես:

«Իւրայատուկ» բառը կը նշանակէ՝ «բանի մը միակ օրինակը, նախատիպ կամ միակ» եւ իմ նախասիրած սահմանումս է՝ «անզուգական՝ առանց հաւասարի կամ մրցակիցի»: Մեր Հայրը առանձնայատուկ եւ անզուգական է. ուստի պէտք չէ զարմանանք, որ Անոր համար մենք անզուգական դուստրեր ենք: Ուստի չկայ ոչ մէկ պատճառ իրարու հետ մրցակցելու:

Դուն քու միակ օրինակդ ես:

Դուն քու սկիզբդ եւ վերջդ ես: Գոյութիւն չունի որեւէ մարդկային նմուշ, որ նախատեսուած է զանգուածային արտադրութեան համար: Անոր սերունդին մէջ չկան պատճեններ, չկան միեւնոյն մարդիկը, եւ ոչ մէկը հաւասար է միւսին: Չկայ ոչ մէկ մրցակից՝ ուրիշներուն հանդէպ Անոր սէրը ցոյց տալու ձեւիդ մէջ կամ քեզի հանդէպ Անոր ունեցած սէրը արտայայտելու ձեւիդ մէջ: Ոչ ոք կրնայ քու տեղդ ըլլալ այնպէս, ինչպէս դուն ես:

Աստուած իւրայատուկ կերպով ստեղծեց քու «Տի.էն.էյ.»դ եւ

ծածկաբար ձեակերպեց քու ոսկորներդ, որպէսզի զարմացնէ աշխարհը: Ան յօրինեց քու ինքնաարտայայտման ձեւը: Ան ձեւաւորեց քու ժպիտդ եւ քու ձայնիդ եղանակը: Ան ստեղծեց քու բոլոր դիմագիծերդ՝ քնքշօրէն միայն քու մասիդ մտածելով: Քու ծնողներուդ հետ միասին Ան կ'ուրախանար քու առաջին ժպիտովդ, եւ սիրով լեցուած՝ կը հետեւէր քու առաջին քայլերուդ:

Այսպիսի նուրբ եւ դիտումնաւոր խնամքի շնորհիւ քու կեանքդ ունի բազմաթիւ երեսներ, որոնք իւրայատուկ կերպով կ'արտայայտեն եւ կ'արտացոլացնեն Անոր սէրը: Ան այդ բոլոր բացառիկ յատկանիշներն ու յատուկ տաղանդները միացուց, որպէսզի կազմէ քեզ՝ Իր աղջիկը: Ան գիտէր, որ այդ յատկանիշներէն իւրաքանչիւրը լաւագոյնս պիտի արտայայտուէր քու կանացի էութեամբդ:

Ան գիտէր, որ դուն լաւագոյնս կը ներկայացնես զինք եւ կը հաղորդակցիս Իրեն հետ՝ իբրեւ դուստր: Ահա թէ ինչու Ան որոշեց, որ քու սեռդ իգական ըլլայ: Հայրերու եւ դուստրերու միջեւ շատ փափուկ կապ մը կայ:

Ան ուրիշ դուստրի մը մասին չէր մտածեր երբ կը ստեղծէր քեզ ... դուն Իր բերկրանքն ես:

Ասիկա կը նշանակէ, թէ քու կեանքդ աւելի լաւ պիտի չ'ըլլար եթէ դուն աւելի բարձրահասակ կամ կարճահասակ ըլլայիր, աւելի սեւ կամ աւելի ճերմակ մորթ ունենայիր:

Ասիկա նաեւ կը նշանակէ, թէ դուն աւելի լիարժէք կերպով պիտի չկրէիր Անոր սէրը եթէ տղամարդ ըլլայիր: Աստուած որդիները աւելի շատ չի սիրեր, իսկ դուստրերը՝ աւելի քիչ: Եւ Ան հաւասարապէս չի սիրեր երկու սեռերը: Ան իւրայատուկ կերպով կը սիրէ տղամարդիկն ու կիները: Թերեւս մինչ կը մեծնայիր, դուն լսած ես փսփուքներ կամ նոյնիսկ բարձրաձայն ըստած խօսքեր, թէ քու հայրդ կամ մայրդ կ'ուզէր, որ տղայ ծնած ըլլայիր: Թերեւս եղած են պահեր երբ դուն ալ ըսած ես, թէ երանի տղայ ծնած ըլլայիր, բայց գիտցիր, որ Աստուած երբեք ատիկա չէ ուզած:

Մեր Հայրը ցնծաց երբ դուն առաջին անգամ շնչեցիր, եւ

երբ տարիները անցան, երկինքի հրեշտակները ցնձացին Անոր հետ երբ դուն վերստին ծնար, Անոր Հոգիով կենդանութիւն ստացար եւ Անոր դուստրը դարձար:

Սքանչելիօրէն սիրուած դուստր, բացարձակապէս ոչինչ կայ քեզի վերաբերող, որ պատահական է:

## **Դուստր՝ Առանց Մրցակցութեան**

Ուստի այս բոլորը ինչ կը նշանակէ: Ասիկա կը նշանակէ, թէ Անոր անչափելի եւ անսպառ սէրը բոլորիս հանդէպ ատելի քան բաւարար է: Դուն պէտք չունիս պայքարելու քու տեղիդ համար Անոր սեղանին շուրջ կամ շահելու Անոր սէրը: Ոչ ոք կրնայ հեռացնել կամ փոխարինել քեզ ... դուն ոչ մէկ մրցակից ունիս:

Բայց բարեկամներ, ահա թէ ո՛վ ենք մենք իրականութեան մէջ՝ Աստուծոյ զաւակներ: Եւ ասիկա միայն սկիզբն է: Ո՛վ գիտէ, թէ ինչ պիտի ըլլանք վերջաւորութեան: Գիտենք, թէ երբ Քրիստոս բացայայտ կերպով յայտնուի՝ պիտի տեսնենք զինք եւ տեսնելով զինք՝ իրեն պէս պիտի ըլլանք: Ով որ անհամբեր կը սպասէ Անոր Գալուստը՝ պատրաստ կը մնայ՝ Յիսուսի կեանքին լուսաւոր մաքրութիւնը դարձնելով օրինակ իր կեանքին համար: (Ա.Յովհաննէսի 3.2,3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Միասին պիտի յայտնաբերենք, թէ ինչպէս լիարժէք կերպով կը դրսեւորենք մեր անհատականութիւնը, ոչ թէ ուրիշի մը անհատականութիւնը՝ փորձելով վաստկիլ ուրիշներու սէրը եւ հաւանութիւնը: Մենք պիտի դադրինք մենք զմեզ բաղդատելէ ուրիշներու հետ, քանի որ բաղդատութիւնը ներշնչում յառաջ չի բերեր: Բաղդատութիւնը մեզմէ եւ այս աշխարհէն խարդախութեամբ կը գողնայ մեր իսկական ինքնութիւնը: Արդեօք բաղդատութեան կամ մրցակցութեան կարիքը կայ եթէ մեր արժէքը եւ ինքնութիւնը, ի վերջոյ, կապուած են մեր բնածին իւրայատկութեան: Այդպիսով պարզապէս մենք



զմեզ կը սպառենք: Դուին անզուգական դուստր մըն ես, որուն ներսիդին կայ լոյս մը, որուն հաւասարը գոյութիւն չունի, եւ սպառազինուած ես պատերազմի մը համար, որուն մէջ ոչ մէկ թշնամի կրնայ գերազանցել քեզ:

Ուստի, քանի որ մենք ստեղծուած ենք ըլլալու հիանալի կերպով ձեւաւորուած եւ սքանչելիօրէն գործող անդամները Քրիստոսի մարմինին, եկէք պարզապէս ըլլանք այն, ինչ որ ստեղծուած ենք ըլլալու՝ մենք զմեզ չբաղդատելով ուրիշներու հետ նախանձի կամ հպարտութեան պատճառով, եւ ոչ ալ փորձելով ըլլալ բան մը, որ մենք չենք: (Հռոմայեցիներուն 12.5,6, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Այս աստուածաշնչական հատուածը ցոյց կու տայ այն երկու գլխաւոր գործօնները, որոնք կը շեղեն մեզ անզուգական կեանք մը ապրելէ՝ հպարտութիւնն ու նախանձը: Աստուծոյ իւրայատուկ, անզուգական դուստրին նկարագիրին ծանօթանալը չի նշանակեր, թէ քու կեանքդ անմիջապէս այդպէս կը դառնայ: Ատիկա կը նշանակէ, թէ կայ ճամբորդութիւն մը, եւ *փազը*լէն կտոր մը, եւ Քրիստոսի մարմինին մէջ գործ մը, որուն մէջ քու մասնակցութիւնդ պէտք է բերես:

Հպարտութիւնը կ'անջատէ մեզ մարմինէն երբ կը փսփսայ միտքեր, որոնք չափէն աւելի կը բարձրացնեն մեզ եւ կը դրդեն մեզ ըսելու. «Իմ դերս ամենակարեւորն է: Ինձի հաւասար մէկը չկայ, ես ինքնաբաւ եմ, ինքնագոհ եմ եւ բոլորէն վեր եմ»:

Միւս կողմէ նախանձը փորձութեան կ'ենթարկէ մեզ, որպէսզի անտեսենք այն դերը, որ Աստուած մեզի տուած է այս աշխարհի մէջ, երբ կը նուաստացնէ մեր աստուածատուր պարտականութիւնները: Նախանձը կ'ըսէ. «Ես չեմ արժեւորեր իմ դերս եւ կոչումս. ես միայն կ'ուզեմ, որ դուն իմ ճամբայէս ելլես, որպէսզի ես ստանամ քու դերդ եւ կոչումդ»:

Այս երկուքն ալ մահացու սուրի մը երկու սայրերն են, որուն նպատակն է սպաննել մարդիկը եւ պառակտել միա-

բանութիւնները՝ անջատելով զանոնք իրենց կոչումէն եւ տեղէն: Երբեմն թշնամին երկուքն ալ կ'օգտագործէ. ան կը յարձակի Քրիստոսի մարմինին մէջ գտնուող տղամարդոց վրայ մրցակցութեամբ եւ աղաւաղուած տղամարդկային հպարտութեամբ, իսկ կիները՝ կանացի նախանձի զոհ կը դառնան:

Եղիր ճշմարիտ բարեկամ բոլորիս համար՝ պահելով քու հարազատ ինքնութիւնդ: Ժամանակն է, որ Աստուծոյ դուստրերը արժեւորեն իրենց «հւրայատուկ» անհատականութիւնը եւ դադրին բաւարարուել «նոյն» չափանիշներով կամ ձգտելէ, որ ունենան «աւելին», քան միաները: Երբ չես արտայայտեր քու ճշմարիտ ինքնութիւնդ, իրականութեան մէջ ուրիշներու արտօնութիւն կու տաս, որ անարգեն քեզ: Մարդիկ միշտ կը զանազանեն կեղծը կամ կրկնօրինակը իրականէն: Նոյնիսկ եթէ չտեսնեն ասիկա, անոնք կը զգան եւ կը լսեն ասիկա քու դատարկ խօսքերէդ, գործերէդ եւ երեսոյթէդ: Շատ մեծ տարբերութիւն կայ ուեւ մէկուն օրինակին հետեւելու եւ ուեւ մէկը նմանակելու միջեւ: Ասիկա պատճառներէն մէկն է, որ յուսախաբ կ'ըլլաս երբ կը փորձես ուրիշ մէկու մը պէս վարուիլ: Կեանքը կը նմանի գրաւորի մը, որուն մէջ պատասխաններու քանի մը տարբերակ կայ, եւ դուն սխալ կը պատասխանես միայն երբ դուն անձամբ չես ընտրեր պատասխանները:

Մենք կ'արհամարհենք մեր Հօր սէրը, երբ չենք արտայայտեր մեր իրական, իւրայատուկ ինքնութիւնը: Եւ կը խնդրենմ, հասկցիր, որ պէտք չէ մտահոգուիս քու արտաքին երեսոյթովդ: Շատեր կը կարծեն, թէ իրենց իւրայատկութիւնը ցոյց կու տան իրենց հագուստին, սանտրուածքին, թանկարժէք զարդերուն կամ ոսկեղէնին եւ շպարին միջոցով: Այս արտաքին դրսեւորումները կողմնակի, լրացուցիչ բաներ են: Անոնք շատ հեռու են քու ինքնութիւնդ խորապէս յայտնաբերելէ:

Իրականութեան մէջ դուն կրնաս փոխել քու արտաքին երեսոյթդ, եւ տակաւին չհասկնալ իւրայատուկ ըլլալու իմաստը:

Եկէք դադրինք մեր ժամանակը վատնելէ՝ մեր շուրջը

Նայելով եւ թոյլ տալով, որ շարունակ փոխուող հանրային կարծիքը իր ընդօրինակուած պատկերը կամ գաղափարները մեր վրայ դրոշմէ: Եկէք վստահութեամբ ընդունինք այն, ինչ որ Աստուած ստեղծած է մեզ իւրայատուկ կերպով արտացոլացնելու:

## **Դուն Որո՞ւ կը Պատկանիս:**

Ես պէտք չունիմ գիտնալու, թէ դուն որո՞ւ հետ ժամանակ կ'անցընես: Ինձի պէտք չեն քու ծնողներուդ, դպրոցիդ կամ գործատէրիդ անունները: Ես պէտք ունիմ գիտնալու անունը Անոր, որ Իր կեանքը զոհեց՝ քեզ գնելու համար: Բայց տակաւին դուն շատ բան կը փախցնես եթէ կը կարծես, թէ Անոր զոհաբերութեան ազդեցութիւնը հոն կը կենայ: Երբ Ան գտաւ քեզ, չվանեց քեզ եւ չվերադարձուց հոն, ուր նախապէս կը գտնուէիր. Ան բարձրացուց քեզ եւ քեզի շնորհեց Իր արդարութիւնը:


Ըսէ այս խօսքերը հիմա, նոյնիսկ եթէ ատիկա միայն քու սիրտիդ փսփսուքը պիտի ըլլայ. «Ես անորն եմ, ու Ան իմա է»:

Քու յաւիտենական Հայրդ միակն է, որ իրաւունք ունի ըսելու, թէ դուն ո՞վ ես եւ ինչպիսի մէկն ես: Քու մայրդ քեզմով յղացաւ, քեզ կրեց եւ հոգ տարաւ քեզի, բայց քու երկնաւոր Հայրդ պատկերացուց քեզ, ստեղծեց քեզ եւ Իր Խօսքով կեանքի կոչեց քեզ: Երբ կորսուած էիր, Ան փրկեց քեզ, որպէսզի անգամ մը եւս Իրը ըլլաս: Պիտի գայ օր մը երբ ժամանակը, ինչպէս որ մենք գիտենք, պիտի վերջանայ. այն ատեն Ան պիտի վերակենդանացնէ մեզ բոլորս, եւ պիտի անդրադառնանք, որ կեանքը այս երկրի վրայ միայն սերմ մըն էր, եւ երկինքի մէջ մենք պիտի ծաղկինք եւ ի յայտ պիտի գայ մեր ճշմարիտ ինքնութիւնը:

Չեմ գիտեր, թէ կեանքը ո՞ր հասցուցած է քեզ հիմա, բայց կը խնդրեմ, հասկցիր, որ քու գտնուած տեղերդ, կեանքիդ եղանակները եւ պարագաները միշտ փոփոխութեան ենթակայ են: Ինչ տեղի կամ վիճակի մէջ ալ գտնուիս, իրականութեան մէջ կարելորդ այն է, թէ ո՞վ ես դուն եւ որո՞ւ կը պատկանիս:

Այս գլուխին սկիզբը իմ նախասիրած խօսքերէս մէկը դրի, որ կը պատկանի Ռալֆ Ուալտո Էմըրսընին. «Մեր գլխաւոր պէտքը այն է, որ մէկը ներշնչէ մեզ, որպէսզի ըլլանք այնպիսի անձեր, ինչպիսին գիտենք, թէ կրնանք ըլլալ»: Աստուած է այդ անձը: Անոր ինքնութիւնը եւ Անոր բոլոր գործերը կը ներշնչեն մեզ: Ստեղծիչը վարպետօրէն շինած է այն բոլոր բաները, զորս կը տեսնենք, կը լսենք եւ արարչագործութիւն կը կոչենք, որպէսզի մենք կրկին կապ հաստատենք մեր աստուածային ինքնութեան հետ: Ան Իր Որդին դրկեց, որպէսզի վերականգնէ մեր յարաբերութիւնը Իրեն հետ:

Նոյնիսկ մեր ճշմարիտ ինքնութիւնը վերագտնելէ ետք, շատեր թոյլ կու տան, որ իրենց ինքնութիւնը բնորոշուի իրենց գործերուն կամ իրենց ունեցածին կամ նոյնիսկ իրենց սիրած անձերուն մակերեսային սահմանափակումներով: Բայց անմտութիւն է քու ինքնութիւնդ կապել այնպիսի բաներու հետ, որոնցմէ կրնաս դիւրութեամբ զրկուիլ: Գործերը կը փոխուին, հմտութիւնները կարելի է մոռնալ, իսկ առարկաները կրնան գողցուիլ: Մենք կրնանք զրկուիլ նոյնիսկ կարեւոր յարաբերութիւններէ: Քու ունեցուածքդ, քու գործդ եւ քու շուրջդ գտնուող անձերը կրնան փոխուիլ, բայց շատ կարեւոր է, որ դուն չկորսնցնես քու ինքնութիւնդ եւ այն Ստեղծիչը, որուն կը պատկանիս:



**Ոչ որ կրնայ  
հեռացնել կամ  
փոխարինել  
քեզ ... դուն  
անզուգական  
ես:**

Եթէ միայն գիտնայիր, թէ ո՛ր կ'երթաս, պատրաստ պիտի ըլլայիր այդ ճամբուն ընթացքին քու անձդ կորսնցնելու: Եթէ միայն գիտնայիր, թէ ի՛նչ բան ընելու համար կանչուած ես, դուն քու անձդ վտանգի պիտի մատնէիր եւ զիջումներ պիտի կատարէիր՝ նպատակիդ հասնելու համար:

Ուստի այս դարաւոր հարցումը կը հնչէ մեզի համար. «Քանի որ մարդ ի՛նչ օգուտ կ'ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը, բայց կորսնցնէ իր անձը [...]» (Մատթէոս 16.26):

Քու ինքնութիւնդ ճանչնալը անսահմանօրէն աւելի կարեւոր է, քան գիտնալը, թէ ո՞ր կ'երթաս կամ նոյնիսկ՝ ինչ կրնաս ընել: Քանի որ Աստուած քու Ստեղծիչդ է, Ան շատ բան ունի ըսելիք քու ինքնութեանդ մասին: Եւ քու ճշմարիտ ինքնութեանդ մէջ կը գտնուի այն յայտնութիւնը, թէ դուն ինչպիսի մէկը կրնաս ըլլալ:

## **Ո՞վ ես Դուն:**

Պէտք չէ նայիս քու ըրածներուդ կամ նոյնիսկ՝ այն իրավիճակներուն, որոնց մէջէն անցած ես: Դուն քեզ մի՛ նկարագրեր քու գործովդ: Պէտք չունիս յիշելու քու ամուսնական կարգավիճակդ՝ ամուրի, ամուսնալուծուած, ամուսնացած կամ՝ յարաբերութեան մէջ գտնուող: Ասիկա Դիմատետրի (*Ֆէյսպուքի*) կարգավիճակի թարմացում չէ: Ասիկա ո՛չ ինձի կը վերաբերի, ո՛չ ալ ուրիշներու:

Ես կ'ուզեմ, որ դո՛ւն գիտնաս, թէ դուն ո՞վ ես:

Նախքան շարունակենք, գրիչ մը առ, գոցէ աչքերդ, եւ քու Ստեղծիչդ խնդրէ, որ քեզի փսփսայ այն իրայատուկ յատկանիշները, զորս ան դրած է քու մէջդ: Մի՛ վախնար՝ մտածելով, որ այն խօսքեր, որոնք կ'ըսեն, թէ ինչքան սիրուած եւ արժէքաւոր ես, պարզապէս քու միտքիդ արդիւնքն են: Այս խօսքերը իրապէս ցոյց կու տան, թէ Ան ինչպէս կը տեսնէ քեզ: Պահ մը հանդարտ կեցի՛ր ու գիտցի՛ր: Կը քաջալերեմ քեզ, որ գրես երեք բառ կամ արտայայտութիւն, զորս Ան կը փսփսայ քեզի: Երբ աւարտես, նայի՛ր այն բառերուն, զորս լսեցիր, երբ կրցար մէկդի դնել բոլորին կարծիքները քու մասիդ եւ լսել այն, ինչ որ Աստուած փսփսաց քու կեանքիդ համար: Թերեւս քիչ մը զարմանաս քու ցուցակովդ: Արդեօք երկամր ժամանակ անցած է այն պահէն, երբ վերջին անգամ այսպէս մտածեցիր դու քու մասիդ:

Կ'ուզեմ քեզի վստահեցնել, որ Աստուած երբեք պիտի չըսէ բան մը, որ Իր Խօսքին հակառակ է: Սուրբ Հոգին կը կենդանացնէ այն, ինչ որ Աստուծոյ Խօսքը կը յայտնէ: Բայց արդե՞օք Աստուածաշունչ ունենալը կը նշանակէ, թէ մենք

պէտք է միայն կարդանք եւ դադրինք լսելէ: Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակին համաձայն Եբրայեցիներուն 12.28-ը մեզի կը վստահեցնէ, թէ՛ «Աստուած անտարբեր դիտորդ մը չէ»: Կը հաւատամ, որ այն երկնային հարցումը, որ եօթը անգամ հարցուած է Յայտնութեան գիրքին մէջ, այսօր ուղղուած է մեզի:

Ձեր ականջները արթուն են: Լսեցէք: Լսեցէք Հովին Խօսքերը՝ Հոգին, որ կը փչէ եկեղեցիներուն մէջ: (Յայտնութիւն 2.7,11,17,29, 3.6,13,22, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Այն իրականութիւնը, որ այս հարցումը եօթը անգամ կրկնուած է Աստուածաշունչին մէկ գիրքին մէջ, պարզապէս կ'ընդգծէ անոր կարեւորութիւնը ... եւ ինձի անդրադառնալ կու տայ, որ իմ ականջներս կրնան քնացած ըլլալ, նոյնիսկ երբ ես արթուն եմ: Ես մեծ յոյս ունիմ, որ այս գիրքը պիտի արթնցնէ քու ականջներդ՝ լսելու համար:

Մենք տակաւին կրնանք դառնալ եւ լսել Աստուծոյ ձայնը: Ինչ կը պատահի եթէ խնդրենք Սուրբ Հոգիէն, որ խօսի մեր կեանքին այն բաժիններուն, որոնց մէջ լռեցուցած ենք զինք: Կ'արտօնեն Անոր, որ քեզի հետ առանձին, դէմ առ դէմ խօսի: Արդեօք Աստուած արտօնութիւն ունի խօսելու քու ընկերներուդ, ամուսնութեանդ եւ ընտանիքիդ մասին: Մենք բազմաթիւ ձեւերով կը գոցենք մեր ականջները Աստուծոյ զգուշացումներուն դիմաց, եւ այդպիսով՝ շատ բան կը փախցնենք, զորս Ան շատ կը փափաքի փոխանցել մեզի: Իբրեւ Քրիստոսի մարմին՝ հաւաքաբար Աստուծոյ ձայնը լսելը կը սկսի անհատներով, որոնք կ'որոշեն լսել Անոր ձայնը: Արդեօք մենք կը համարձակի՞նք մեր ականջները արթնցնել՝ լսելու համար:

Մենք չենք կրնար մենք մեզի թոյլ տալ, որ կասկածի՞նք մեր աստուածատուր, իւրայատուկ կոչումին մասին: Վարանումի, վախի եւ բարկութեան պատճառով մենք վտանգի կ'ենթարկենք մեզի վստահուած բոլոր բաները: Աստուած կ'ուզէ փրկել, վերականգնել եւ փոխել քու ինքնութիւնդ, որպէսզի չմնայ ոչ

մէկ միջադէպ, կեանքի եղանակ կամ անուն քու անցեալէդ, որ կրնայ որոշել քու ինքնութիւնդ: Այո՛, կեանքի եղանակները, քննադատութիւնները եւ տարբեր իրադարձութիւնները կրնան կատարելագործել քու անձը. անոնք ունին զօրութիւնը զօրաւոր անհատականութիւն ձեւաւորելու քու մէջդ, բայց անոնք չեն քու կեանքիդ էութիւնը, այլ՝ Աստուած...

Աստուած քեզ փնտռեց Իր ամբողջ սիրտով, քանի որ Ան իւրայատուկ կերպով կը սիրէ քեզ եւ դուն իւրայատուկ կերպով կ'արտայայտես Անոր սէրը ուրիշներու հանդէպ: Այն ինքնութիւնը, որ մենք ստացած ենք՝ Աստուծոյ զաւակներ դառնալով, կը սկսի արտայայտուիլ երբ Անոր զաւակներէն իւրաքանչիւրը կը դառնայ այն անձը, որ ինք ստեղծուած է ըլլալու: Ան Իր աւարտին կը հասցնէ այն, ինչ որ սկսած է այս աշխարհի մէջ, ուր բոլորը կամ իրենց անձը կը փնտռեն, կամ կը փորձեն ուրիշներու նմանիլ: Այս գիրքը զինք փնտռելու հրաւէր մըն է, որպէսզի Ան, Իր կարգին, քու ինքնութիւնդ բացայայտէ:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Ինչո՞ւ աւելի կարեւոր է գիտնալը, թէ նվ ես դուն, քան, օրինակ՝ գիտնալը, թէ նր կ'երթաս:
2. Քննարկէ, թէ ինչո՞ւ աւելի լաւ է իւրայատուկ ըլլալը, քան հաւասար կամ նոյնը ըլլալը:
3. Որո՞նք են այն կարգ մը մրցակիցները, որոնց պատճառով դուն չես կրնար ընդունիլ քու ճշմարիտ ինքնութիւնդ եւ Աստուծոյ սէրը:
4. Քեզի համար դժուար է դուն քեզ առանց գործիդ պատկերացնելը: Եթէ այո՛, ի՞նչն է պատճառը:
5. Աստուած ի՞նչ կը փսփսայ քեզի:

## Մեր Անգուգական Աստուածը

Հոս գրուած խօսքերը գաղափարներ են: Պէտք է այս խօսքերուն փորձառութիւնը ունենաս:

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍ

### Չկայ Անոր նմանը

1980-ականներու վերջաւորութեան, Հիւսիսային Ամերիկայի մէջ քրիստոնէական պաշտամունքի երաժշտութիւնը փոփոխութիւն կրեց, երբ *Ինթելիգիթի Մյուզիք* ընկերութիւնը սկսաւ փնտռել փառաբանութեան երգեր աշխարհի տարբեր մասերէն՝ տարբեր ցամաքամասերու պաշտամունքի երաժշտութիւնը մեզի ներկայացնելու համար: Մեր ընտանիքը խանդավառութեամբ կը սպասէր նոր ձայներիզներուն, զորս կը ստանայինք ամսական բաժանորդագրութեամբ (այո՛ր, ես այդքան տարեց եմ), իսկ յետոյ շարունակ մտիկ կ'ընէինք զանոնք: Մենք այնքան շատ մտիկ կ'ընէինք մեր նախասիրած երգերը, որ երբ ամուսինս կը վերադառնար իր ճամբորդութենէն եւ մտիկ կ'ընէր զանոնք, երգերուն վարպետօրէն մշակուած բարձր եւ ցած ձայնային թոները



գրեթէ անհետացած կ'ըլլային: Կար ձայներիզ մը, որ մեր ընտանիքին նախասիրածն էր՝ «Յնծան, Ափրիկէ» (*Ռիճոյս Էֆրիքա*): Մինչեւ օրս հետեւեալ պատկերը տակաւին շատ յստակ եւ թարմ է իմ միտքիս մէջ՝ իմ երկրորդ տղաս՝ Օսթընը, իր ճօճուող ձիուն վրայ նստած՝ *Միքի Մաուսի* նկարով վարտիքով եւ վեր-վար ցատկոտելով, ոսկեգոյն մագերով, բարձրաձայն կ'երգէ այդ երգերը:

Այդ երգերէն մէկուն մէջ հարաւային ափրիկեցի փառաբանութեան եւ պաշտամունքի ղեկավարը ջերմեռանդօրէն հետեւեալ արտայայտութիւնը կ'աւելցնէր. «Չկայ Անոր նմանը» (անգլերէնով՝ *նոպասրի լայք հիմ*):

Առանց վարանելու, իմ երեք տարեկան տղաս կը փորձէր կարելի եղածին չափ նմանակել այդ փառաբանութեան ղեկավարին ջերմեռանդ հոշակումը, ամէն անգամ որ կը հնչէր այդ երգը:

Օր մը Օսթընը հարցում մը հարցուց ինծի, որ ես պէտք էր կանխատեսէի.

- Մայր, ինչո՞ւ ոչ ոք կը սիրէ զԱստուած:

Ես լաւագոյնս ըրի, որպէսզի բացատրեմ, որ երգիչը չէր ըսեր, որ ոչ ոք կը սիրէ զԱստուած (անգլերէնով՝ *նոպասրի լայքսր Կասր*, որ կը նշանակէ՝ ոչ ոք կը սիրէ զԱստուած), այլ՝ որ Անոր նմանը չկայ (անգլերէնով՝ *նոպասրի լայք Հիմ*):

Անգլերէնով *Կասր ըլոն* (բառացիօրէն թարգմանուած՝ Աստուած առանձին) բառերը չեն նշանակեր, թէ մենք կը ծառայենք Աստուծոյ մը, որ առանձին է կամ ձանձրացած: Այնպէս ինչպէս անգլերէնով *տեր իզ նօ ուան պիսայր Հիմ* (բառացիօրէն թարգմանուած՝ մէկը չկայ Անոր քով) արտայայտութիւնը չի նշանակեր, որ մէկը չ'ուզեր Անոր հետ նստիլ:

Մեր Աստուածը կրաւորական կերպով չի դիտեր եւ չսպասեր՝ առանց բան մը ընելու: Ան ամէն բանի հոգացած է եւ ինչ որ պէտք է, ըրած է եւ հիմա Ան հանգիստ կ'ընէ Իր աւարտած գործին մէջ եւ կը ցնծայ երբ Իր զաւակները Իրմէ կը

խնդրեն, որ իրենց յայտնէ եւ ցոյց տայ, թէ ամէն բան ինչպէս պիտի ըլլայ:

Ոչ ալ կրնանք ըսել, որ Բարձրեալը եւ Սուրբը դուրսն է եւ ներս կը նայի՝ տեսնելու համար, թէ ինչ կը պատահի աշխարհի մէջ:

Անոր տեսանկիւնը անցեալին, ներկային եւ ապագային վերաբերեալ՝ համաժամանակեայ է. Ան կը տեսնէ վերջը՝ սկիզբէն եւ կը սկսի բան մը ընել՝ զանիկա իր աւարտին հասցնելէն ետք:

Ան կ'ուզէ մեր մէջը ըլլալ եւ մեր մէջէն նայիլ, ոչ թէ որովհետեւ Ան մեր աչքերուն պէտք ունի, այլ որովհետեւ մենք իր տեսողութեան պէտք ունինք:

Բարձրեալ Աստուած բառերը կը նկարագրեն Աստուած մը, որ վեր է ամէն բանէ, որ երբեւէ կրնանք հասկնալ: Սաղմոս 96-ին մէջ կը տեսնենք, որ սաղմոսողը երկիւղածութեամբ լեցուած է այս յայտնութենէն:

Նոր երգ երգեցէք Տիրոջ,  
Երգեցէք Տիրոջ, դուք բոլորդ՝ երկրի բնակիչներ:  
Երգեցէք Տիրոջ, օրհնաբանեցէք անոր անունը,  
Աւետեցէք անոր փրկութիւնը օրէ օր:  
Պատմեցէք անոր փառքը հեթանոսներուն մէջ,  
եւ անոր սքանչելիքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ,  
Քանի որ Տէրը մեծ է, ու յոյժ գովելի.  
Ան ահեղ է, եւ բոլոր աստուածներէն գերազանց,  
որովհետեւ ժողովուրդներուն բոլոր աստուածները կուռքեր են,  
բայց Եհովան ստեղծեց երկինքը:  
Փառաւորութիւն ու վայելչութիւն կան անոր առջեւ,  
զօրութիւն եւ շքեղութիւն՝ անոր սրբարանին մէջ:  
Տիրոջ տուէք՝, ղվ ժողովուրդներու գերդաստաններ,  
Տիրոջ տուէք փառք ու զօրութիւն:  
Տիրոջ տուէք իր անունին փառքը.  
Ընծայ բերէք եւ մտէք անոր գաւիթները:

Տիրոջ երկրպագեցէք սուրբ զարդարանքով.  
սարսափեցէ՛ք անոր առջեւ, դուք բոլորդ՝ երկրի բնակիչներ:  
(հմր 1-9)

Աստուածաշունչը շարունակ կը հարցնէ այս հարցումը տարբեր ձեւերով. «Բարձրեալին պէս ո՞վ կայ»:

Ասիկա ճարտասանական հարցում (անպատասխան հարցում, հարցումի ձեւ մը, որուն պատասխանը յայտնի է: Անոր նպատակը պատասխան ստանալ չէ, այլ խօսքը ազդու ձեւով ըսել է: Փոխանակ խօսքը դրական կերպով ըսելու, հարցումի ձեւով կը դրուի) մը չէ, որուն նպատակը մեզ մտածումներու մէջ ձգել է: Կեանք բնորոշող հարցում մը, որ բարձրաձայն հնչող պատասխան կը պահանջէ. «Ո՛չ ոք»: Անոր գերագոյն պատիւի արժանի ըլլալուն յայտարարութեան հանդէպ մեր պատասխանը ցոյց կու տայ մեր դիրքորոշումը. մենք կամ կ'ընդունինք կամ անզգուշաբար կը մերժենք Աստուծոյ մեզի համար ունեցածը: Գիտնէս, ժամանակին կար մէկը, որ կ'երեւակայէր, որ ինք Բարձրելոյն կը նմանէր: Ան հրեշտակապետ էր, որ շատ առումներով կատարելութեան գագաթնակէտն էր: Մենք զինք կը ճանչնանք իբրեւ Սատանայ, բայց այն ատեն անոր անունը Արուսեակ էր՝ առաւօտեան աստղ, եւ ան պաշտամունքի պատասխանատուն էր: Իբրեւ այդպիսին, ան կը տեսնէր Աստուծոյ փառքը եւ Անոր սուրբ ներկայութեան կը կանգնէր գահի սենեակին մէջ: Եզեկիէլ 28.12-17-ը հետեւեալ ձեւով կը նկարագրէ զինք.

Դուն կատարելութեան կնիքն էիր,  
իմաստութեամբ լեցուած ու գեղեցկութեան մէջ կատարեալ:  
Դուն Աստուծոյ դրախտին՝ Եդեմի մէջ էիր.  
քու ծածկոցդ բոլոր պատուական քարերէն էին [...]  
Ոսկին՝ որ քու թմբուկներուդ ու սրինգներուդ  
համար գործածուեցաւ, քու ստեղծումիդ օրը  
պատրաստուեցաւ քեզի համար:

Դու՛ն օծուած ու ծածկող քերովբէ մըն էիր.  
Ե՛ս քեզ հաստատեր էի:  
Դու՛ն Աստուծոյ սուրբ լերան վրայ էիր.  
Կրակէ քարերուն մէջտեղը կը շրջէիր:  
Դու՛ն ընթացքիդ մէջ անթերի էիր  
ստեղծուած օրէդ մինչեւ այն օրը՝  
երբ քու վրադ անիրաւութիւն գտնուեցաւ:  
Առուտուրիդ ճոխութեան համար՝  
քու մէջդ բռնութեամբ լեցուցին, ու մեղանչեցիր.  
Ես ալ քեզ Աստուծոյ լեռնէն վար նետեցի՝ իբր պիղծ.  
քեզ կրակէ քարերուն մէջէն բնաջնջեցի, ո՛վ ծածկող  
քերովբէ:  
Քու գեղեցկութեանդ համար սիրտդ խրոխտացաւ,  
քու փառահեղութեանդ պատճառով իմաստութիւնդ  
ապականեցիր ...

Աստուած զինք ձեւակերպած էր շքեղութեամբ,  
իմաստութեամբ լեցուն եւ կատարեալ՝ տեսքով եւ գործերով:  
Օր մը անոր պաշտամունքին մակարդակը իջաւ: Թերեւս  
անիկա արժեզրկուեցաւ եւ պարզապէս հիացմունքի  
վերածուեցաւ: Թէ ի՛նչպէս ան օրինազանցութեան  
հասաւ, նշուած չէ, բայց գիտենք, որ այս հոյակապ եւ  
իմաստուն արարածը սկսաւ տեսնել իր Ստեղծիչը իբրեւ  
մրցակից: Պաշտամունքի շարժաբանութեան մէջ կայ այն  
հասկացողութիւնը, թէ առանց Աստուծոյ մարդը ոչինչ է: Եսայի  
հետեւեալ ձեւով կը նկարագրէ անոր անկումը.

Ի՛նչպէս երկինքէն ինկար,  
ո՛վ առտուն ծագող Արուսեակ.  
մինչեւ գետին կործանեցար,  
դո՛ւն որ ազգերը կը յաղթահարէիր:  
Դու՛ն սիրտիդ մէջ ըսած էիր.  
“Երկինք պիտի ելլեմ,  
իմ գահս Աստուծոյ աստղերէն վեր պիտի բարձրացնեմ,

ու համայնքի լեռը պիտի բազմիմ՝ հիսիսին ծայրերը.  
թանձր ամպերու բարձունքներուն վրայ պիտի ելլեմ,  
Ամենաբարձրին պիտի նմանիմ”։ (Եսայի 14.12-14)

Ան չէր կրնար Ամենաբարձրին նմանիլ ... ան միայն կրնար հրաժարիլ իր ինքնությունէն, եւ Արուսեակը՝ առաւօտեան աստղը, դարձաւ Սատանան՝ ստախօսը։ Այս անկումը սկսաւ անոր սիրտին մէջ։ Անոր սկիզբը կատարեալ էր, բայց վերջաւորութեան ան ինքզինք արատաւորեց։ Մենք արատաւորուած եւ անկատար ենք մեր ծնունդէն, բայց Քրիստոսով մենք կը բժշկուինք, կ’առողջանանք եւ կատարեալ կը դառնանք՝ վերստին ծնունդի միջոցով։ Հպարտութիւնը կը քաջալերէ մեզ, որ մեր անձը պաշտենք, իսկ խոնարհութիւնը գահազուրկ կ’ընէ հպարտութեան բերած եսասիրութիւնը։ Երբ Եսայի տեսաւ Տէրը, ան ինքզինքը կորսնցուց։

Ուստի ըսի. «Վայ ինձի, ահա՛ կը կորսուիմ,  
որովհետեւ ես պիղծ շրթունք ունեցող մարդ մըն եմ,  
ու պղծաշրթին ժողովուրդի մը մէջ կը բնակիմ,  
եւ իմ աչքերս զօրքերու Տէրը՝ Թագաւորը տեսան»։ (Եսայի 6.5)

Եսայիի կորսուած զգալը Աստուծոյ մղեց, որ հոգայ այդ մասին, եւ այն քարերէն մէկը, որոնց վրայ Արուսեակը ժամանակին կը քալէր, բերուեցաւ խոնարհած Եսայիին։

Բայց սերովբէներէն մէկը իմ քովս թռաւ, ձեռքը կայծ մը ունենալով՝ որ զոհասեղանէն ունելիով առած էր։ Բերանիս դպցնելով՝ ըսաւ. «Ահա՛ ասիկա քու շրթունքիդ դպաւ. ուստի անօրէնութիւնդ ջնջուեցաւ եւ մեղքդ քաւուեցաւ»։ (Եսայի 6.6-7)

Երբ զԱստուած կը փնտռենք, կը գտնենք զի՛նք։ Այս յայտնութիւնը ունենալով՝ մենք կը պաշտենք եւ կը հոչակենք, որ միայն ինքն է սուրբը, միայն ինքն է բարին, միայն ինքն է ճամբան,

ճշմարտությունն ու կեանքը: Միայն Ինքն է Բարձրեալ Աստուած:

Մեր Աստուծոյն գոյութիւնն անգամ աննախադէպ է. չկայ զինք նախորդող մէկը կամ Իրմէ առաջ գոյութիւն ունեցող եւ Իրեն մատնանշող ստուգանիշ մը (դիմումի կէտ մը): Իրմէ առաջ ոչ ոք գոյութիւն ունեցած է: Մեր Աստուածը չէ կազմաւորուած կամ աստիճանաբար զարգացած: Մեր Աստուածը էր եւ է եւ պիտի գայ: Մենք իրայատուկ ենք, քանի որ մեր իրայատկութիւնը կը բխի Աստուծմէ:

Իրմէ առաջ ուրիշ աստուած չկար. անոր համար իրմէ զատ ուրիշ աստուածներ պէտք չէ ունենանք: Թէեւ մեր Աստուածը անտեսանելի է, բայց Անոր գոյութիւնը անժխտելի է: Հռոմայեցիներուն դրկուած նամակը կը հաստատէ.

Բայց այն հիմնական իրողութիւնը, թէ Աստուած իրական է եւ գոյութիւն ունի շատ պարզօրէն յայտնուած է: Բաց աչքերդ եւ պիտի տեսնես: Աստուծոյ ստեղծագործութիւնը երկար եւ խոհեմօրէն ուսումնասիրելով՝ մարդիկ միշտ կրցած են տեսնել այն, ինչ որ իրենց աչքերով չեն կրնար տեսնել. օրինակ՝ Անոր յաւերժական զօրութիւնը, եւ Անոր աստուածային էութեան խորհուրդը, որպէսզի մարդիկ որեւէ արդարացում չունենան: (Հռոմայեցիներուն 1.19,20, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

*Ինկլիշ Սթանպորդի Կլըժընին մէջ կ'ըսէ.*

Որովհետեւ ինչ որ կարելի է գիտնալ Աստուծոյ մասին՝ բացայայտ է իրենց մէջ, քանի Աստուած բացայայտեց զայն անոնց: Արդարեւ անոր անտեսանելի բաները, այսինքն՝ իր յաւերժական զօրութիւնը եւ աստուածութիւնը, կը տեսնուին աշխարհի արարչութենէն ի վեր ու կը հասկցուին անոր ստեղծածներով, որպէսզի անարդարանալի ըլլան:

Ամբողջ ստեղծագործութիւնը կը հաստատէ Իր Ստեղծիչին

գոյութիւնը, բայց ատիկա չի նշանակեր, որ անիկա լիովին կը յայտնէ մեր Աստուածը: Յոյսով եմ, որ այս գլուխը պիտի արթնցնէ քու հոգիդ, որ անելի սերտ աստուածային կապ հաստատես Անոր հետ:

Արդէն նշեցինք, որ մենք՝ Աստուծոյ դուստրերս, չունինք մրցակիցներ, քանի որ մեր երկնաւոր Հայրը անզուգական կերպով կը սիրէ մեզ: Մեր աստուածատուր ինքնութեան հետ անելի խոր մակարդակի վրայ կապ հաստատելու համար շատ կարեւոր է, որ անելի լաւ հասկնաս այս աստուածային պարգեւը: Եկէք անելի ընդլայնենք մեր անզուգական Աստուծոյն ինքնութեան մասին մեր հասկացողութիւնը: Անգլերէն Միրիամ Ուեպսթըրի բառարանը կը սահմանէ զԱստուած իբրեւ՝ «այն էակը, որ կատարեալ է իր զօրութեան, իմաստութեան եւ բարութեան մէջ, զոր կը պաշտենք իբրեւ ստեղծիչ եւ տիեզերքի թագաւոր»:

Հաւանաբար կը մտածես, որ այս սահմանումը համապարփակ (ամէն բան իր մէջ կ'ընդգրկէ) եւ վերջնական է, բայց ասիկա միայն սկիզբն է: Մեր մարդկային լեզուին խոչընդոտող բնոյթին եւ մեր նեղ երկրաւոր տեսանկիւնին պատճառով մենք չենք կրնար նկարագրել Անսահմանը՝ առանց սահմանափակումներու: Ինչպէս կրնանք բառեր գտնել, որ նկարագրենք Ան, որուն յայտնութիւնն իսկ կը պապանձեցնէ մեզ:

Աստուած սահմանումներէ վեր է:

Որեւէ բան սահմանելու համար պէտք է հասկնաս անոր էութիւնը եւ զայն քու բառերովդ արտայայտես: Քանի որ Աստուած կը գերազանցէ այն բոլոր բաները, զորս կրնան մեր խօսքերը արտայայտել, Ան կ'արհամարհէ անով արտայայտուած չափանիշները:

Լաւ, մոռցիր զԱյն սահմանելու միտքը: Կարելի՞ է զինք նկարագրել: Դարձեալ, ատիկա անկարելի է: Ինչպէս կրնանք նկարագրել Անոր պատկերը, եթէ Անոր անմերձենալի լոյսով կը կուրնանք եւ ոչինչ կը տեսնենք:

Ան ճիշդ ժամանակին պիտի գայ. Անոր գալուստը երաշխատրուած է Օրինեալէ Անվիճելի Իշխանին՝ Բարձրեալ Թագաւորին, Բարձրեալ Աստուծոյ կողմէ: Ան Միակն է, որուն չի կրնար դպչիլ մահը. Անոր լոյսը այնքան պայծառ է, որ ոչ ոք կրնայ մօտենալ: Մարդոցմէ ո՛չ մէկը տեսեր է զինք, ո՛չ ալ կրնայ տեսնել: Իրեն պատիւ ու զօրութիւն յափտեան: Օ՛, այր: (Ա.Տիմոթէոսի 6.15-16, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Եթէ մեր տեսողութիւնը չի կրնար նոյնիսկ մեր Աստուծոյն կերպարանքը ընկալել, միակ բանը, որ մենք ի զօրու ենք ընելու, Անոր զարմանալի էութեան պատկերը ամենապարզ եւ նախնական կերպով մեր միտքին մէջ կառուցելն է: Մենք բառեր պիտի չգտնենք եւ պիտի կրկնենք Յոբին խօսքերը երբ Աստուած յայտնուեցաւ զարմանալի մրրիկին մէջէն. «Ես քու համբաւդ ականջով լսեր էի, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ: Ուրեմն իմ անձս կ'անարգեմ, հողի ու մոխիրի վրայ կը զղջամ» (Յոբ 42.5-6):

Իրապէս կը սիրեմ ինչպէս Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակը այս համարները կը բանայ:

Կը խոստովանիմ, որ կար ժամանակ մը երբ ես կ'ապրէի Քու մասիդ լսածներովս. հիմա ամէն բան իմ աչքերովս կը տեսնեմ եւ ականջներովս կը լսեմ: Ներողութիւն. ներէ՛ ինձի: Անգամն ալ չեմ ըներ, կը խոստանան: Ես այլեւս պիտի չապրիմ մարդոց խօսքերուն մնացորդներով, իմ լսածներուս փշրանքներով:

Աստուծոյ Անձին այս յայտնութիւնը աւելին ձեռք բերելու անօթութիւն մը արթնցուց Յոբին մէջ: Մեզմէ շատեր կը բաւարարուին Աստուծոյ մասին յայտնութեան այնպիսի մակարդակով մը, որ լաւագոյնս կարելի է անուանել «մնացորդներ եւ փշրանքներ»: Մենք կը բաւարարուինք քարոզներ լսելով, տեսանիւթեր դիտելով, Դիմատետրի



(Ֆէյսպուքի) եւ *Ինսթակրամի* վրայ հրապարակուած նիւթերը հաւնելով եւ *Թուիթըրի* վրայ մարդոց խնճոյքներուն մնացորդները բաժնեկցելով: Այս բոլորը սխալ չեն, բայց եթէ զանոնք բաղդատենք այն խնճոյքին հետ, որ Աստուած պատրաստած է քեզի համար, անոնք պարզապէս մնացորդներ եւ փշրանքներ են: Ճշմարտութիւնը այն է, թէ՛ Աստուած կ'ուզէ, որ Իր հաւատարմութեամբ սնանիս: Ես կ'ուզեմ ախորժակդ գրգռել, քանի որ մեծ տարբերութիւն կայ Աստուծոյ *մասին* խօսելու եւ քեզի *հետք* խօսող Աստուծոյ մը մտիկ ընելու միջեւ:

Գիտեմ, որ ոմանք կ'ըսեն, թէ այն Աստուածը, որուն կը ծառայենք, այլեւս չի խօսիր: Բայց այս պատճառաբանութիւնը Անոր էութեան ուղղուած անարգանք է: Նոյնիսկ եթէ Ան որոշէ լռել, ստեղծագործութեան պատկերը կը դառնայ Անոր ձայնը: Ան Իր Սուրբ Հոգին դրկեց՝ մեզ մխիթարելու եւ խրատելու համար: Երբ Աստուածաշունչ կը կարդանք, Աստուծոյ Սուրբ Հոգին է, որ մեզի կը սորվեցնէ եւ մեզ ամբողջ ճշմարտութեան կ'առաջնորդէ: Աստուած խօլ եւ համր կուռք չէ: Աստուած այնպիսի Հայր մը չէ, որ կը լսէ, բայց չի պատասխաներ: Եթէ չընդունինք Աստուծոյ ինքնութեան խորհուրդը, պիտի չգիտնանք ինչպէս պիտի մօտենանք Անոր: Աստուած կը խօսի բազմաթիւ ձեւերով՝ Իր Խօսքին, Իր ստեղծագործութեան, Իր ծառաներուն, տեսիլքներու, երազներու, եւ Իր մարմինին անդամներուն միջոցով: Կը հաւատամ, որ Ան պիտի խօսի քեզի այս գիրքին էջերուն ընդմէջէն, քանի որ ես աղօթած եմ անոր համար: Աստուած միշտ կը խօսի: Հարցումը հետեւեալն է՝ արդեօք մենք մտիկ կ'ընենք, որ Իր ձայնը լսենք, թէ՛ կը սահմանափակենք զինք: Շատ կարեւոր է, որ մենք ընդունինք անհամեմատելի եւ անսահման սքանչելիքներու այս Աստուածը եւ հաւատանք, որ Ան կ'ուզէ անձամբ հաղորդակցիլ մեզի հետ:

Փայլուն աստուածաբան Թովմաս Աքրօինացին իր կէտնքին մեծ մասը նուիրած է Աստուծոյ մասին գրելու:

Իբրեւ քահանայ եւ փիլիսոփայ, ան կը ձգտէր համադրել գիտական յայտնաբերումները մեր Ստեղծիչին մասին իր ունեցած հասկացողութեան հետ: Սակայն իր մահուրնէ երեք ամիս առաջ Աքուինացին տեսիլքով կը տեսնէ յաւիտենական աշխարհը եւ անոր հանդէպ ունեցած ահը զինք կը մղէ, որ գրէ այս վերջին բառերը, որմէ ետք ան այլեւս չգրեց: Աքուինացին կը յայտարարէ.

Իմ գործերուս վերջը հասած է: Այն, ինչ որ գրած եմ, կը նմանի յարդի, եթէ զայն բաղդատեմ ինծի յայտնուած բաներուն հետ:

Եւ ասիկա այն մարդն է, որ մեծ ուսումնասիրութիւնները րաժ է եւ հատորներ գրած է՝ որոնք կը պատմեն Աստուծոյ փառքը եւ եկեղեցիին սքանչելիութիւնը: Այն ժամանակը երբ ան կ'ապրէր, այսօրուրնէ շատ տարբեր էր: Անոր օրերուն մարդիկ աւելի կարեւորութիւն կու տային խօսքերուն եւ այդ պատճառով մեծ զգուշութեամբ կ'ընտրէին խօսքերը: Կարդալու եւ գրելու առիթը հարուստներուն, արքայազուններուն կամ Աստուծոյ նուիրեալներուն վերապահուած առանձնաշնորհում մըն էր: Թովմաս Աքուինացին խօսքի մեծ վարպետ էր, սակայն ան ընտրեց «յարդ» բառը՝ իր կեանքին աշխատանքը նկարագրելու համար: «Յարդ» բառը յաճախ կը գործածուի՝ անարժէք բան մը նկարագրելու համար: Յարդը պիտանի ցորենահատիկներու կողմնակի արտադրութիւնն է, որ շատ յաճախ կը գործածուի անասուններու տակ փռելու կամ հողը ծածկելու՝ բոյսերուն արմատները պաշտպանելու համար: Մէկ խօսքով՝ ան ըսել կ'ուզէր, թէ իր կեանքին գրաւոր աշխատանքները լաւագոյնս արժանի էին գազաններու եւ մարդոց կողմէ ոտնակոխ ըլլալու:

Ասիկա ամենայարմար նմանութիւնն էր, որ ան կրնար ընել Աստուծոյ մասին իր գործերուն եւ իրական Աստուծոյ միջեւ, որ

իրեն յայտնուեցաւ: Թերեւս այս երկու նախադասութիւնները աւելի բան կ'ըսեն, քան բոլոր այն էջերը, որոնց վրայ ան աշխատած է աւելի քան երկու տասնամեակներ: Այս խօսքերը հիւսուած են խոնարհութեամբ եւ ակնածանքով, քանի որ Աքրոինացին ապրած էր այն բանը, որուն մասին Օգոստինոսը գրած էր անկէ աւելի քան մէկ հազարամեակ առաջ. «Աստուած լաւագոյնս կը ճանչցուի երբ չէ ճանչցուած»:

Աստուծոյ մասին յայտնութիւնը կը սկսի երբ մենք կը ճանչնանք եւ կ'ընդունինք, որ իրականութեան մէջ տակաւին չենք ճանչնար զինք: Բոլոր սահմանումները, զորս ունինք, դասակարգուած են ըստ մարդկային պատկերացումներու եւ հասկացողութեան: Մենք կրնանք նմանցնել Աստուծոյ ինքնութիւնը բառերով արտայայտելու մեր կարողութիւնը նորածինի մը իր մօրը նկարագրելու փորձին, երբ տակաւին ան չի կրնար բառեր կազմել: Կեանքի հսկայական տիեզերքին մէջ մարդիկ կը բնակին ստեղծագործութեան միայն մէկ փոքր հատուածին վրայ: Կարծես մենք կանգնած ենք աւազի հատիկի մը վրայ եւ կը ջանանք նկարագրել ովկիանոսին մեծութիւնը եւ այն բոլոր բաները, զորս անիկա կը բովանդակէ իր խոր մասերուն մէջ:

## **Ո՛վ է Մեր Աստուածը**

Բայց տակաւին մեր Հայրը կը փափաքի, որ մօտենանք Իրեն, որպէսզի աւելի լաւ ճանչնանք զինք, ապրինք Իր ներկայութիւնը եւ սորվինք լսել Իր ձայնը: Ինչպէս կրակին մասին գիտնալը բան մըն է եւ բոլորովին ուրիշ բան է անոր լոյսը, տաքութիւնը եւ այրուածքը զգալը, Աստուած կը հրաւիրէ մեզ, որ ճանչնանք զինք, ոչ թէ պարզապէս Իր մասին գիտնանք: Հետեւեալները կարգ մը բաներ են, զորս շատ վստահ կերպով գիտենք Աստուծոյ մասին, քանի որ Ան այդպէս կը ներկայացնէ Ինքզինք ամբողջ Աստուածաշունչին մէջ.

**Ես... մէկ եմ** (Երկրորդ Օրէնքի 6.4: Մարկոս 12.29: Գաղատացիներուն 3.20: Ա.Տիմոթէոսի 2.5: Յակոբոսի 2.19):

**Ես եմ ... Ալֆան ու Օմեղան** (Յայտնութիւն 1.8, 21.6, 22.13):

**Ես եմ ... Ա՛ն՝ որ Է** (Ելքի 3.14):

**Ես եմ ... դարէ դար** (Մնացորդներուն Ա.Գիրք 16.36):

**Ես եմ ... ձեր հաւատքի ռահվիրան եւ իրագործողը** (Եբրայեցիներուն 12.2):

**Ես եմ ... երկինքն ու երկիրը ստեղծողը** (Ծնունդներու 1.1):

**Ես ... կարող եմ** (Մատթէոս 3.9):

**Ես ... սէր եմ** (Ա.Յովհաննէսի 4.7-8,16):

**Ես ... բարի եմ** (Մարկոս 10.18: Ղուկաս 18.19: Ա.Տիմոթէոսի 4.4):

**Ես ... ձեր մէջն եմ** (Երկրորդ Օրէնքի 6.15: Ղուկաս 17.21: Ա.Կորնթացիներուն 14.25):

**Ես ... ճշմարտութիւնն եմ եւ ճշմարտախօս եմ** (Յովհաննէս 3.33):

**Ես ... քու բժիշկդ եմ** (Ելքի 15.26):

**Ես ... Հոգի եմ** (Յովհաննէս 4.24):

**Ես ... Հայր եմ** (Յովհաննէս 6.46: Փիլիպպեցիներուն 2.11):

**Ես ... Իմ Որդիովս փառաւորուեցայ** (Յովհաննէս 13.31):

**Ես ... քու վկադ եմ** (Հռոմայեցիներուն 1.9: Փիլիպպեցիներուն 1.8: Ա.Թեսաղոնիկեցիներուն 2.5):

**Ես ... յայտնուած եմ** (Հռոմայեցիներուն 1.17):

**Ես ... քու կողմդ եմ** (Հռոմայեցիներուն 8.31):

**Ես ... բոլորին վրայ եմ** (Հռոմայեցիներուն 9.5: Եփեսացիներուն 4.6):

**Ես ... գթած եմ** (Երկրորդ Օրէնքի 4.31: Հռոմայեցիներուն 12.1):

**Ես ... հաւատարիմ եմ** (Ա.Կորնթացիներուն 1.9, 10.13: Բ.Կորնթացիներուն 1.18):

- Ես ... մարդոցմէ անելի իմաստուն եմ** (Ա.Կորնթացիներուն 1.25):
- Ես ... խառնակութեան Աստուած չեմ** (Ա.Կորնթացիներուն 14.33):
- Ես ... խաղաղութեան Աստուած եմ** (Ա.Կորնթացիներուն 14.33):
- Ես ... քու բաւականութիւնդ եմ** (Բ.Կորնթացիներուն 3.5):
- Ես ... գթած եւ առատաձեռն եմ** (Ելքի 34: Նէեմիա 9):
- Ես ... համբերատար եմ** (Յովէլ 2.13: Նաւում 1.3):
- Ես ... մեծապէս բարձրացած եմ** (Փիլիպպեցիներուն 2.9):
- Ես ... քու մէջդ կը ներգործեմ** (Փիլիպպեցիներուն 2.13):
- Ես ... անտեսանելի եմ** (Կողոսացիներուն 1.15):
- Ես ... այն Աստուածն եմ, որ կու գայ** (Կողոսացիներուն 3.6):
- Ես ... արդար դատաւորն եմ** (Բ.Թեսաղոնիկեցիներուն 1.5):
- Ես ... բոլոր մարդոց Փրկիչն եմ** (Ա.Տիմոթէոսի 2.3, 4.10):
- Ես ... կապուած չեմ** (Բ.Տիմոթէոսի 2.9):
- Ես ... բոլոր բաները կառուցանողն եմ** (Եբրայեցիներուն 3.4):
- Ես ... արդար եմ** (Եբրայեցիներուն 6.10):
- Ես ... ողջ եմ** (Եբրայեցիներուն 10.31):
- Ես ... սպառող կրակ եմ** (Երկրորդ Օրէնքի 4.24: Եբրայեցիներուն 12.29):
- Ես ... լոյս եմ** (Ա.Յովհաննէսի 1.5):
- Ես ... անելի մեծ եմ քան քու սիրտդ** (Ա.Յովհաննէսի 3.20):
- Ես եմ ... Աստուածը, որ է, որ էր, եւ որ պիտի գայ** (Յայտնութիւն 1.8):
- Ես ... սուրբ եմ** (Յայտնութիւն 4.8):
- Ես ... Ամենակալ եմ** (Յայտնութիւն 11.17):
- Ես եմ ... քու զօրութիւնդ** (Ելքի 15.2):
- Ես եմ ... քու երգդ** (Ելքի 15.2):

- Ես ... նախանձախնդիր եմ** (Ելքի 34.14: Երկրորդ Օրէնքի 4.24):
- Ես ... մարդ չեմ** (Թիւերու 23.19: Երկրորդ Օրէնքի 4.24):
- Ես ... աստուածներուն Աստուածը եւ տէրերուն Տէրն եմ** (Երկրորդ Օրէնքի 10.17):
- Ես ... մեծ, զօրաւոր ու ահեղ եմ** (Երկրորդ Օրէնքի 10.17):
- Ես ... աչառութիւն չեմ ըներ** (Երկրորդ Օրէնքի 10.17):
- Ես եմ ... քու գովաբանութեանդ առարկան** (Երկրորդ Օրէնքի 10.21):
- Ես ... քեզի հետ եմ պատերազմին մէջ** (Երկրորդ Օրէնքի 20.4):
- Ես ... պատերազմիկ եմ** (Ելքի 15.3):
- Ես եմ ... քու պատսպարանդ** (Երկրորդ Օրէնքի 33.27):
- Ես եմ ... քու վէմդ ու ամրոցդ** (Բ.Թագաւորներու 22.32-33):
- Ես եմ ... միակ Աստուածը** (Երկրորդ Օրէնքի 4.32,35: Գ.Թագաւորներու 8.60):

Անշուշտ այս ցանկը ամբողջական չէ: Կ'առաջարկեմ, որ ուսումնասիրես Անոր ինքնութեան այս բոլոր յատկանիշները, բայց այս գլուխին մէջ ես կ'ուզեմ կեդրոնանալ անոնցմէ երեքին վրայ: Առաջին բանը, որ կ'ուզեմ քննարկել, Աստուծոյ մէկութեան գաղափարն է:

## **Աստուած Մէկ է**

Մտիկ ըրէ, որվ Իսրայէլ. Տէրը՝ մեր Աստուածը միակ Տէրն է: Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ զօրութեամբդ: Այս խօսքերը՝ որ այսօր քեզի պատուիրեցի, քու սիրտիդ մէջ թող ըլլան: (Երկրորդ Օրէնքի 6.4-5)

Այս համարին մէջ նշուած «մէկ» բառը երբեք չի նշանակեր, թէ մեր Աստուածը տիեզերական աստուածային մրցոյթի

մը մէջ առաջին տեղը գրաւած է: «Մէկ» բառը նոյնպէս չի վերաբերիր Աստուծոյ համար թիւ մը նշանակելուն, այլ կը նշանակէ, թէ Աստուած միակ Աստուածն է: «Մէկ» կը նշանակէ, թէ Իրմէ զատ ուրիշը չկայ: Չկայ թիւ երկու, թիւ երեք կամ թիւ չորս Աստուած: Միայն Ան է արժանին, որովհետեւ միայն Ան է Աստուած: Յիսուս գրեթէ նոյն բանը կը կրկնէ երբ կը խօսի առաջին եւ մեծ պատուիրանին մասին.

Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ միտքովդ: Ա՛յս է առաջին ու մեծ պատուիրանը»: (Մատթէոս 22.37-38)

Մեր սէրը Աստուծոյ հանդէպ պէտք է միասնաբար արտայայտուի մեր սիրտով, անձով եւ միտքով: Միայն Աստուած է մեր ամբողջ ուշադրութեան կեդրոնը եւ միայն Ինք արժանի է մեր երկրպագութեան: Աստուած գիտէ, թէ մեր ընթացքը լաւ չ'ըլլար եթէ բաժնուած սիրտ ունինք, եւ Ան չի հանդուրժեր ուրիշ աստուծոյ, որ կը փորձէ մրցիլ Իրեն հետ. ուստի Անոր պատուիրանը բարի է: Աստուած այս պատուիրանը մեզի չէ տուած, քանի որ կը զգայ, որ Իր դիրքը մեր կեանքերուն մէջ վտանգուած է: Նպատակը՝ մեզ պաշտպանելն է, որպէսզի մենք չշեղինք եւ չմոլորինք:

Ասիկա կրնայ շփոթեցնող Աստուածաշնչական հատուած մը ըլլալ մեր օրերուն եւ ժամանակներուն համար, երբ շատեր իրենք զիրենք ուրիշ աստուածներ պաշտողներ չեն սեպեր: Մենք աւելի հաւանական է, որ մարդու կողմէ շինուած կուռքերու երկրպագենք, քան հին անուններ ունեցող աստուածներու: Աստուած սկիզբէն զգուշացուց Իր զաւակները.

Դուք ձեզի չաստուածներ ու կուռքեր մի՛ շինէք, ձեզի արձաններ մի՛ կանգնեցնէք եւ ձեր երկրին մէջ պատկերազարդ կոթող մի՛ դնէք՝ անոր երկրպագելու համար. որովհետեւ ես եմ Տէրը՝ ձեր Աստուածը: (Ղեւտացիներուն 26.1)

Ընդհանրապես բոլորս արձաններ կամ պատկերազարդ կոթողներ չենք կանգնեցուցած մեր տուներուն կամ բակերուն մէջ, բայց ատիկա չի նշանակեր, որ մենք կուռքեր չենք կրեր մեր սիրտերուն մէջ: Կուռքը որեւէ բան է, որուն կու տաս քու զօրութիւնդ կամ որմէ զօրութիւն կը ստանաս: Կուռքը կրնայ կեանքիդ իմաստ տալ կամ ապաստան ըլլալ քեզի համար: Ասիկա կրնայ ըլլալ կերակուրի պէս անշուք բանէ մը մինչեւ ընկերային ցանցերու մասնակցիլդ: Եթէ վերանայիս Աստուծոյ ինքնութեան մասին վերը նշուած ցանկին, պիտի գիտնաս, որ Ան մեր զօրութիւնը, կեանքն ու ամբողջն է: Ոչ մէկ մարդ, յարաբերութիւն, կազմակերպութիւն կամ բան պէտք է իշխանութիւն ունենայ քու կեանքիդ վրայ, բացի Աստուծմէ: \_

Մեզմէ ոմանց համար կուռքը մեր զգացումներն են: Եթէ մենք մեզ գեղեցիկ կը զգանք, կը հաւատանք, որ գեղեցիկ ենք: Եթէ մենք մեզ բարի կը զգանք, կը հաւատանք, որ բարի ենք: Եթէ միայն մեր զգացումներուն համաձայն ապրինք, անոնք պիտի խաբեն մեզ եւ շատ չանցած՝ պիտի մոլորինք:

Ճշմարտութիւնը այն է, որ դուն գեղեցիկ ես, քանի որ մեր Աստուածը հեզերը փրկութեամբ կը փառաւորէ (Սաղմոս 149.4): Դուն գեղեցիկ ես, քանի որ Աստուած ամէն ինչ գեղեցիկ ըրաւ իր ժամանակին (Ժողովողի 3.11): Մի՛ արտօներ, որ անմիտ կուռքերը եւ այն, ինչ որ այս աշխարհը գեղեցկութիւն կը կոչէ, խօսի քու կեանքիդ մէջ երբ Աստուած արդէն իսկ օրհնութիւն խօսած է կեանքիդ վրայ: Դաւիթ, որ պաշտող եւ պատերազմող էր, այսպէս կը նկարագրէ կռապաշտութիւնը.

Անոնց կուռքերը արծաթ ու ոսկի են,  
մարդու ձեռքի գործեր են.  
բերան ունին՝ բայց չեն խօսիր,  
աչքեր ունին՝ բայց չեն տեսներ,  
ականջներ ունին՝ բայց չեն լսեր,  
քիթ ունին բայց չեն հոտոտեր,  
ձեռքեր ունին՝ բայց չեն շօշափեր,



ոտքեր ունին՝ բայց չեն քալեր,  
եւ իրենց կոկորդով չեն գոչեր.  
*անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները,  
ու բոլոր անոնց վստահողները:* (Սաղմոս 115.4-8)

Ինչ կը նշանակէ «անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները» արտայայտութիւնը: Երբ կը մեծարես մարդկայինը, կը սահմանափակուիս մարդկային կարողութեամբ: Կուռքերը չգործող կերպարանքներ են: Անոնք կենդանութեան կերպարանք մը ունին, բայց չեն կրնար կեանք տալ: Ուստի զանոնք պաշտողները կը զիջին իրենց աստուածատուր զգայարանքներէն՝ կորսնցնելով իրենց ձայնը եւ իրենց շարժելու ազատութիւնը: Երբ զԱստուած կը պաշտես, Իր պատկերով կը փոխակերպուիս՝ փառքէ փառք: Քանի որ մեր Աստուծոյն պէս մէկը չկայ, չկայ ատիլ լաւ միջոց՝ քու իւրայատուկ ինքնութիւնդ յայտնաբերելու, քան զԱյն փնտռելը: Դուն կրնաս ուրիշ մարդոց աշակերտ դառնալ, բայց երբեք պէտք չէ մարդ պաշտող մը ըլլաս:

### Աստուած Է Ալֆան եւ Օմեղան

Երկրորդ ճշմարտութիւնը այն է, որ Աստուած դարէ դար է, այսինքն՝ Ան Ալֆան եւ Օմեղան է: Ալֆան եւ Օմեղան յունարէն այբուբենին առաջին եւ վերջին տառերն են: Երբ այս տառերը միասին կը դրուին այս պարունակին մէջ, անոնք կը



**Կուռքը որեւէ  
բան է, որուն  
կու տաս քու  
զօրութիւնդ  
կամ որմէ  
զօրութիւն կը  
ստանաս:**

ներկայացնեն ամէն բան, որ գոյութիւն ունի սկիզբէն մինչեւ վերջ: «Ալֆա» կը նշանակէ «սկիզբ, ծագում, ծնունդ, նոր բանի մը սկիզբը, սկզբնակէտ եւ շեմ»: Իսկ «օմեղա» բառին սահմանումը նոյնքան յստակ չէ, բայց կը նշանակէ «վերջը, վերջնակէտը եւ մինչեւ ծայրագոյն աստիճանը»: Թերեւս «օմեղա» բառին սահմանումը ատիլ անորոշ է, որովհետեւ մենք՝ մարդ արարածներս, ատիլ ծանօթ

Ենք անցեալին եղածին, քան՝ ապագային ըլլալիքին: Ճիշդ այս պատճառով է, որ պէտք է մօտենանք Աստուծոյ, որպէսզի լսենք Անոր խորհուրդը: Միայն Ան եղած է այն բանին վերջաւորութեան, որ մեզի համար յայտնի է իբրեւ ժամանակ: Ո՛չ մէկը մեր Աստուծոյն նման է: Եսայի մարգարէն կ'ըսէ.

*Յիշեցէք հնադարեան նախկին բաները, քանի որ ես Աստուած եմ, եւ ինձմէ ուրիշը չկայ. ես Աստուած եմ, եւ ո՛չ մէկը ինձի նման է. ես սկիզբէն կը յայտնեմ վերջաւորութիւնը, առաջուրնէ կ'իմացնեմ դեռ չկատարուածը, ու կ'ըսեմ. «Իմ որոշումն պիտի հաստատուի, եւ ամբողջ փափաքս պիտի իրագործեմ»:* (Եսայի 46.9-10, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակը կ'ըսէ.

*Յիշեցէք ձեր պատմութիւնը՝ ձեր երկար եւ հարուստ պատմութիւնը: Ես Աստուած եմ՝ միակ Աստուածը, որ դուք ունեցած էք կամ երբեւէ պիտի ունենաք՝ անբաղդաւորելի եւ անփոխարինելի, Ան որ սկիզբէն կ'ըսէ ձեզի, թէ ինչ պիտի պատահի վերջաւորութեան, Ան որ Շարունակ ձեզի կ'արտօնէ, որ տեսնէք, թէ ինչ պիտի պատահի, Ան որ կը Վստահեցնէ ձեզի. «Ես երկար ժամանակէ ի վեր այս բանը կ'ընեմ: Ես ամէն բան կ'ընեմ ճիշդ այնպէս, ինչպէս որոշած եմ ընել»:*

Աստուած սկիզբէն կը յայտնէ բանի մը վերջաւորութիւնը: Ան կը յայտնէ Օմեղան անմիջապէս Ալֆան գրելու պահուն: Այս հատուածը մեզի կ'առաջարկէ, որ յետադարձ ակնարկ մը նետենք եւ տեսնենք Անոր հաւատարմութիւնը: Ան գիտէ, թէ իրաքանչիւր օր ինչպէս պիտի վերջանայ, երբ այդ օրը տակաւին նոր կը լուսնայ:

Երկար ժամանակէ ի վեր ես ձեզի արտօնած եմ տեսնել, թէ ինչպէս կը գործեմ: Ես նախապէս ձեզի կ'ըսէի, թէ ինչ կը պատրաստուի ընել, եւ յետոյ *կ'ընէի այդ բանը, եւ*

*ատրիկա կը կատարուէր, եւ վերջ:* (Եսայի 48.3, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուած Իր գործը իր աւարտին հասցուցած է եւ ատրիկա վերջնական է: Ան ոչինչ անկատար ձգած է: Ան մէկէ մը ազդուելով Իր միտքը պիտի չփոխէ կամ ետ պիտի չքաշուի: Անոր վերջնական պատասխանը Յիսուսն է:

Ուստի գործերս լաւ ձեռով սկսայ եւ քեզի ըսի պատահելիքները նախքան անոնց պատահիլը: Անոր համար չես կրնար ըսել. «Իմ աստուած-կուռքս ըրաւ ասիկա», «Իմ նախասիրած աստուած-քանդակս հրամայեց ասիկա»: Այս բոլոր փաստերը քու սեփական ացքերուդ տեսածով եւ քու ականջներուդ լսածով հաստատուեցան: Արդեօք պէտք չէ՞ խօսիս այդ մասին: Եւ ատրիկա միայն սկիզբն էր: Ես տակաւին շատ բան ունիմ ըսելիք քեզի, բաներ, որոնց գոյութեան մասին երբեք չէիր գիտեր»: (Եսայի 48.5-7, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Մեր Աստուածը սկիզբէն կ'ըսէ մեզի, որպէսզի չվստահինք մարդոց կամ բաներու, որոնք վերջ ի վերջոյ պիտի հիասթափեցնեն կամ յուսախսաբ ընեն մեզ: Արդեօք պէտք չէ՞ աւելի խօսինք Աստուծոյ ըրածներուն մասին, քան թէ՛ մեր ըրածներուն մասին: Պէտք չէ՞ աւելի լաւ գիտնանք Ստեղծիչին, քան թէ Անոր ստեղծածներուն կանխագուշակումները: Աստուած կը շարունակէ ըսելով.

Ասիկա հին բանի մը նոր տարբերակը չէ, այլ՝ նոր, բոլորովին նոր բան է, բան մը, որ երբեք չես կրնար գուշակել կամ յօրինել: Երբ ասիկա լսես, պիտի չկարենաս ըսել. «Արդէն գիտէի ատրիկա»: (Եսայի 48.7, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն)

Ահա ...

Մեր Աստուածը սկիզբէն կը յայտնէ վերջաւորութիւնը: Քրիստոսով, Աստուած սիրեց մեզ՝ նախքան որ մենք սիրենք զինք, բռնեց մեզ՝ նախքան մեր իյնալը, ներեց մեզի՝ նախքան մեր ներում խնդրելը, մեզ արդարութեամբ հագցուց՝ նախքան մեր անդրադառնալը, որ մերկ ենք, եւ մաքրեց մեզ՝ նախքան մեր աղտին մասին իմանալը:

Անոնք որոնք Աստուծոյ թշնամի, խորթ եւ օտարական էին, Աստուած Իր սեփական զաւակները եւ բարեկամները կոչեց: Եւ Ան մեր կեանքին պատմութիւնը գրեց, նախքան մեր առաջին շունչը առնելը:

Կոչ կ'ուղղեմ քեզի, որ սկսիս տեսնել այս անզուգական Աստուածը Իր իսկական ինքնութեամբ եւ իբրեւ շատ սիրելի եւ հիանալի զաւակ, սկսիս ընդօրինակել եւ նմանակել քու Հայրդ:

## **Աստուած «Ես եմ Ա՛ն՝ Որ է»ն է**

Հիմա կ'ուզեմ խօսիլ «Ես եմ Ա՛ն՝ Որ է» անունին մասին: Ելք 3.13-14-ը կ'ըսէ.

Մովսէս Աստուծոյ ըսաւ. «Ահա՛, երբ երթամ Իսրայէլի որդիներուն եւ ըսեմ անոնց. “Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի դրկեց”, ու երբ ըսեն ինձի. “Ի՞նչ է անոր անունը”, ի՞նչ ըսեմ անոնց»: Աստուած Մովսէսի ըսաւ. «Ես եմ Ա՛ն՝ որ է»: Եւ ըսաւ. «Սա՛ ըսէ Իսրայէլի որդիներուն. “Ձիս ‘Ես եմ’ը դրկեց ձեզի»:

Հաւանաբար Մովսէս իր միտքին մէջ ըսաւ. «Այս ի՞նչ տեսակ անուն է»: Պատկերացուր, որ մէկու մը կը ծանօթանաս եւ երբ անունը կը հարցնես, կ'ըսէ. «Անունս Ես եմ է»: Եւ երբ կը խնդրես, որ իր ըսածը ւաւելի պարզաբանէ, պարզապէս կ'ըսէ. «Ես եմ Ա՛ն՝ որ է»: Հաւանաբար պիտի շփոթիս եւ իրաւունք ունիս: Պահ մը պատկերացուր, որ այդպիսի անձի մը հետ զրոյց կ'ունենաս. «Բարեւ, Ես եմ, ի՞նչպէս ես»: Դուն կը խօսիս

անոր հետ, բայց այնպիսի տպավորություն կը ստեղծուի, որ կարծես դուն քեզի հետ կը խօսիս: Մեր շփոթութեան պատասխանը այն է, որ Աստուած միակն է, որ կ'ընդգրկէ ամէն բան Իր մէջ: Ես անկասկած «Ես եմ ան՝ որ է»ն չեմ: Աւելի ճիշդ կ'ըլլայ մեզ կոչել «Ես եմ, որովհետեւ Ան է»:

Աստուած Ան է, որ է: Աստուած գոյութիւն ունի, որովհետեւ Աստուած գոյութիւն ունի: Ես գոյութիւն չունիմ, որովհետեւ ես գոյութիւն ունիմ, ո՛չ ալ՝ որովհետեւ իմ ծնողքս գոյութիւն ունի: Ի վերջոյ, ես գոյութիւն ունիմ, որովհետեւ Աստուած գոյութիւն ունի: Ան է ըլլոր կենդանի հոգիներուն Ստեղծիչը:

Քանի որ Ան է «Ես եմ ան՝ որ է»ն, ես կրնամ ըսել. «*Ես Քրիստոսի մէջ եմ*, որ “Ես եմ”ն է»: Չեմ կարծեր, որ մենք իսկապէս կը հասկնանք, թէ որքան զօրաւոր են այս հինգ բառերը, քանի որ եթէ հասկնայինք, տարբեր արթնութեամբ մը պիտի ապրէինք մեր կեանքը: Աշխարհը պիտի փորձէ մեզի ըսել, թէ ո՛վ է Աստուած, բայց վերջաւորութեան Ան Իր Որդիին միջոցով յայտնուեցաւ: Աստուած կ'ուզէ Ինքզինք յայտնել Իր Որդիին միջոցով, եւ միաժամանակ ցոյց տալ քու ինքնութիւնդ: Օր մը Յիսուս կը փորձէ ասիկա բացատրել Իր աշակերտներուն՝ հանրային կարծիքի մասին հարցումներ հարցնելով անոնց Մատթէոս 16.13-18-ին մէջ.

Երբ Յիսուս կ'երթար Փիլիպպոսի Կեսարիային երկրամասը՝ հարցուց իր աշակերտներուն. «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն, ո՞վ է մարդու Որդին»: Անոնք ըսին. «Ումանք կ'ըսեն, թէ Յովհաննէս Մկրտիչն է, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: Ըսաւ անոնց, «Իսկ դո՛ւք ի՞նչ կ'ըսէք, ո՞վ եմ ես»: Սիմոն Պետրոս պատասխանեց. «Դուն Քրիստո՛սն ես, Մեսիան, ապրող Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ անոր. «Աստուած օրինէ քեզ, Սիմոն, Յովսանի որդի: Դուն այդ պատասխանը գիրքերէն կամ ուսուցիչներէ չիմացար: Իմ Հայրս՝ որ երկինքն է, Աստուած Ինքը քեզի յայտնեց այդ գաղտնիքը, թէ իրականութեան մէջ ո՞վ եմ ես: Եւ հիմա ես քեզի պիտի

ըսեմ, թե *իրականության մէջ* ո՛վ ես դուն: Դուն Պետրոսն ես. դուն ժայռ ես»: (Բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Հասկցա՛ր ասիկա: Երբ յայտնութիւն ստանանք, թե *իրականութեան մէջ* ո՛վ է Յիսուս, Աստուծմէ պիտի լսենք, թե *իրականութեան մէջ* ո՛վ ենք մենք: Սիմոնը *իրականութեան մէջ* Պետրոս էր: Ան միշտ ձկնորս պիտի չմնար եւ միշտ իր զգացումներով պիտի չառաջնորդուէր: Ան Հոգիով առաջնորդուող առաջնորդ եւ ժայռ պիտի ըլլար: Կը զգամ Յիսուսի խանդավառութիւնը երբ Ան կը շարունակէ Իր խօսքը Մատթէոս 16.18-19-ին մէջ.

Այս է այն ժայռը, որուն վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս, եկեղեցի մը, որ այնքան մեծ ուժ պիտի ունենայ, որ նոյնիսկ դժոխքին դռները պիտի չկարենան կեցնել զայն: Եւ տակաւին ասելին կայ: Դուն պիտի ունենաս կատարեալ եւ ազատ մուտք դէպի Աստուծոյ Թագաւորութիւնը, բանալիներ՝ որեւէ դուռ բանալու համար. այլեւս խոչընդոտներ պիտի չըլլան երկինքի եւ երկրի միջեւ, երկրի եւ երկինքի միջեւ: «Այր»ն երկրի վրայ «այր» է երկինքի մէջ: «Ո՛չ»ը երկրի վրայ «ր՛չ» է երկինքի մէջ: (Բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Երբ գիտես, թե դուն ո՛վ ես ... գիտես, թե ինչը հասանելի է քեզի համար: Եկեղեցոյ ինքնութիւնը եւ մուտքը դէպի երկնային մատակարարումը սերտօրէն կապուած են Քրիստոսի մասին յայտնութիւն ունենալու հետ: Երբ մենք գիտենք Խօսքը, կ'աղօթենք Խօսքին համաձայն, եւ Երկինքի պատասխանը «այր՛ եւ ամէն» պիտի ըլլայ:

## **Ո՛վ է Յիսուս Քեզի Համար**

Աստուծոյ մասին քու պատկերացումդ քեզմով կ'արտացոլայ: զԱստուած ընկալելու ձեւդ վերջաւորութեան կ'արտացոլայ

քու ապրած կեանքիդ եւ կայացուցած որոշումներուդ մէջ: Ձեւերէն մէկը, որով Աստուած կը յայտնուի մեր կեանքերուն մէջ, մեր կողմէ Յիսուսի տրուած անունն է: Եթէ Յիսուսը բարի վարդապետ կը կոչենք, Ան պիտի սորվեցնէ մեզի: Եթէ զինք իմաստուն խորհրդատու կը կոչենք, Ան իմաստութիւն պիտի փոխանցէ մեզի: Իսլամութիւնը Յիսուսը թէ մարգարէ եւ թէ բժիշկ կը կոչէ: Առանձին-առանձին այս տիտղոսները պարզապէս տարածայնութիւններ եւ փշրանքներ են: Բայց երբ Յիսուսը կը կոչես *Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին*, ուրեմն Յիսուս Տիրոջ յայտնութիւնը կայ քու մէջդ: Ա.Յովհաննէսի գիրքը կ'ըսէ.

Ո՛վ որ կը դաւանի, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է, Աստուած կը բնակի անոր մէջ, ան ալ՝ Աստուծոյ մէջ: Մենք գիտցանք Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած սէրը, ու հաւատացինք: Աստուած սէր է. ան որ կը բնակի սիրոյ մէջ՝ կը բնակի Աստուծոյ մէջ, եւ Աստուած՝ անոր մէջ: Ինչպէս ինք է, նոյնպէս մե՛նք ենք այս աշխարհի մէջ. ասով մեր սէրը կատարեալ է, որպէսզի համարձակութիւն ունենանք դատաստանին օրը: (Ա.Յովհաննէսի 4.15-17)

Այս դաւանութիւնը յաւիտենական կապ մը կը ստեղծէ եւ Անոր փրկութեան եւ մեր իրականութեան միջեւ գտնուող բացութիւնը կը գոցուի: Երբ Աստուծոյ Խօսքը կը խօսինք, մեր եւ ճշմարտութեան միջեւ գտնուող միջոցը կը կամրջուի: Մենք դիրքաւորուած ենք մենք զմեզ նոյնացնելու Աստուծոյ հետ՝ Անոր ինքնութեան հիման վրայ, եւ ոչ թէ՛ մեր ինքնութեան: Ասիկա կը նշանակէ, թէ ես եմ, այն ինչ որ Ան կ'ըսէ իմ մասին: Յիսուսի տուած անունս է, որ կ'որոշէ, թէ արդեօք ես յայտնութիւն պիտի ստանամ Աստուծոյ բոլոր խոստումներուն մասին եւ պիտի իրականանան այն խոստումները, որոնք ինձի համար հասանելի են Քրիստոսով: Արդեօք Ան Տէր է, բժիշկ է, Խաղաղութեան Իշխան է, մեր հաւատքի ռահվիրան եւ իրագործողն է: Յիսուսը *Աստուած* կը կոչեն, կամ պարզապէս բարի վարդապետ կը կոչեն:

Քանի որ Ան սէր է, ես սիրուած եմ եւ կրնամ սիրել:

Քանի որ Ան կեանք է, ես ողջ եմ:

Քանի որ Ան զօրաւոր է, ես զօրութիւն ունիմ:

Քանի որ Ան իմ Եղբայրս է, ես Աստուծոյ դուստրն եմ:

Քանի որ Ան ամենակարող է, ես հզօր եմ:

Քանի որ Ան բժիշկ է, ես բժշկուած եմ:

Քանի որ Ան իմաստութիւն է, ես իմաստուն եմ:

Քանի որ Ան է, ես եմ:

Քանի որ Ան է, ես եմ այն, ինչ որ Ան կ'ըսէ իմ մասիս:

Ես ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուեցայ:

Կոչ կ'ուղղեմ քեզի, որ հրաւիրես Աստուծոյ Խօսքը քու կեանքի փորձառութեանդ մէջ: Այս գործընթացը հիմա սկսելու համար, պահ մը կանգ առնենք եւ աղօթենք:

*Սիրելի երկնաւոր Հայր,*

*Շնորհակալ եմ, որ ես այն բոլոր բաներն եմ, որ Դուն կ'ըսես իմ մասիս: Ներէ ինձի Քու պատկերդ տրամաբանութիւնը համար եւ իմ շինած կուռքերուս առջեւ խոնարհելուս համար: Ես կը հրաժարիմ երկրպագելէ սահմանափակ պատկերներու, որոնք մարդու ձեռքի գործն են: Սուրբ Հոգի, յայտնէ որեւէ մարդ իմ կեանքիս մէջ, ուր այս կուռքերը դեռ տեղ ունին: Դուն սէր ես, եւ այդ պատճառով ես ոչ միայն սիրուած եմ, այլեւ կրնամ ուրիշները սիրել այնպէս, ինչպէս Դուն կը սիրես: Դուն իմ կեանքիս աղբիւրն ես՝ Միակը, որուն շնորհիւ ես կ'ապրիմ եւ կը շնչեմ:*

*Դուն կրնաս աւարտել այն, ինչ որ սկսած ես իմ կեանքիս մէջ, եւ Դուն զօրութիւն տուած ես ինձի, որ ընեմ այն բոլոր բաները, զորս որոշած ես ինձի համար: Քրիստոսով ես Քու դուստրդ եմ, եւ քանի որ իմ երկնաւոր Հայրս ամենակարող է, ես ունիմ ամէն զօրութիւն, որուն ես պէտք ունիմ, Քու Հոգիովդ: Դուն իմ ճշմարիտ Բժիշկս ես: Ես այլեւս չեմ սպասեր, որ աշխարհը բժշկէ զիս այն վերքերէն, զորս ինք*



*պատճառած է ինձի: Քանի որ Դուն ամբողջ իմաստութեան աղբիւրն ես, ես կ'ապաւինիմ Քու առաջնորդութեանդ:*

*Ներէ՛ ինձի, որ իմ կեանքիս մէջ Քեզ սահմանափակած եմ ուրիշ մարդոց բեկորներով եւ փշրանքներով: Կ'ուզեմ մտերմօրէն եւ խորապէս ճանչնալ Քեզ: Կը հաւատամ, որ Դուն աւելին ես, քան ես երբեւէ պատկերացուցած եմ, եւ կը խնդրեմ, որ առաջնորդես զիս դէպի անզուգական զարմանքի եւ զմայլանքի կեանքը: Քանի որ դուն Աստուած ես, ես այն եմ, ինչ որ դուն կ'ըսես իմ մասին: Անկախ անկէ, թէ ինչ կը զգամ այս պահուն՝ ես ահաւոր ու սքանչելի կերպով ստեղծուած եմ:*

*Յիսուսի անունով, ամէն:*

## **Քննարկումի Հարցումներ**

1. Անցեալին Ամենաբարձրը բաղդատէր ես քու գիտցած կամ ապրած բաներուդ հետ: Օրինակ՝ կը կարծէի՞ր, թէ Ան քու հօրդ պէս է (Թէ՛ լաւ, թէ՛ վատ իմաստով): Ինչպէս կը տեսնես զի՞նք հիմա:
2. Կեանքիդ մէջ կան մարզեր, ուր կ'ապրիս բեկորներով եւ փշրանքներով, կամ ուրիշներուն խօսքերով կամ տարածայնութիւններով:
3. Ըստ քեզի, Օգոստինոս ինչ նկատի ունէր երբ ըսաւ. «Աստուած լաւագոյնս կը ճանչցուի երբ չէ ճանչցուած»:
4. Ո՞ր մարզերուն մէջ պէտք է աւելի լաւ ճանչնաս զԱստուած՝ իբրեւ «Ես եմ»ը:
5. Ակնարկելով այս հաստատումին. «կուռքը որեւէ բան է, որուն կու տաս քու զօրութիւնդ կամ որմէ զօրութիւն կը ստանաս», կեանքիդ ո՞ր մարզերուն մէջ դուն անգիտակցաբար կուռքեր կանգնեցուցած ես:
6. Երբ կը դաւանիս Աստուծոյ մասին ճշմարտութիւնը Անոր ներկայութեան մէջ, Ան ինչ կը յայտնէ քու մասիդ:

## Խոստում՝ Առանց Մրցակցութեան

Եթէ մտածենք վարձատրութիւններու համարձակ խոստումներուն մասին ... որոնք բացայայտ կերպով տրուած են Աւետարաններուն մէջ, այնպէս կը թուի, որ մեր Տիրոջ կարծիքով՝ մեր փափաքները ոչ թէ չափազանց զօրաւոր են, այլ՝ չափազանց տկար: Մենք երեսանց արարածներ ենք, որոնք յիմարաբար իրենց ժամանակն ու դրամը կը վատնեն խմիչքով եւ սեռային յարաբերութեամբ, երբ անսահման ուրախութիւն առաջարկուած է մեզի, ճիշդ անմիտ մանուկի մը պէս, որ կ'ուզէ շարունակ ցեխէ կարկանդակներ շինել, քանի որ ան չի պատկերացներ, թէ ինչ կը նշանակէ ծովեզերքին վրայ արձակուրդի երթալ: Մեզ գոհացնելը չափազանց դիւրին է:

ՍԻ.ԷՍ. ԼՈՒԻՍ

Ան ... ուտու: Շատ դիպուկ էր:

Անմրցելի խոստում մը կայ կեանքիդ համար, եւ ատիկա նաեւ քու գանձդ է: Այս գանձը վեր է ամէն բանէ եւ ժամանակի ենթակայ չէ: Այս գանձը քեզի կը տրուի անշօշափելի կարողականութեան ձեւով: Ոմանց կեանքերուն մէջ այս պարգեւը քնացած է ... անիկա ողջ է, բայց քնացած:

Թերեւս ատելի դիւրին եւ սկիզբը ատելի խանդավառիչ

թուէր եթէ քեզի ըսէի, որ մէկը դրամատան մէջ մէկ միլիառ տողար դրած է քու հաշիւիդ մէջ: Բայց նոյնիսկ եթէ քեզի տրուէր ատելին, քան երբեւէ կրնայիր ծախսել քու ամբողջ կեանքիդ ընթացքին ... ատիկա երբեք իրապէս քուկդ պիտի չըլլար: Քանի որ երկրաւոր գանձի օրէնքը այն է, որ անիկա պէտք է մնայ իր ծագումի միջավայրին մէջ: Երբ մեռնիս, չես կրնար զայն հետդ տանիլ: Բայց այս գանձը, որ ունիս, կը փոխակերպուի մինչ կը հարստացնէ եւ քեզի հետ կը մնայ ամբողջ յաւիտենականութեան ընթացքին:

Այս խոստումը, որուն մասին կը խօսիմ, անզուգական է ոչ միայն իր հարստութեամբ, այլեւ՝ իր ազդեցութեամբ: Այս խոստումին պտուղը քու զաւակներուդ հետ պիտի մնայ այս աշխարհէն հեռանալէդ երկար ժամանակ ետք, ինչպէս նաեւ քեզի պիտի հասնի երկինքի մէջ: Այս խոստումը երբեք չի կրնար գողցուիլ քեզմէ, բայց կարելի է զայն փոխարինել մէկ պնակ ոսպէ ապուրի մը պէս չնչին բանով մը, ինչպէս Եսաւ ըրաւ (Տէն Ծնունդներու 25-ը): Անիկա ապահով է, երբ կը պահուի ծրարուած մեր երազներուն եւ յոյսին մէջ: Որքան ատելի հոգաս քու սիրտիդ հողին, այնքան ատելի կը ծաղկի եւ կ'աւելնայ այս գանձը: Միլիոնաւոր մարդիկ այս խոստումին սերմը կը կրեն իրենց սիրտին մէջ, բայց տակաւին անկախ անկէ, թէ ինչքան մեծ թիւով մարդիկ իրենց բաժինը կ'առնեն անկէ, այս գանձը երբեք չի պակսիր:

Ես կը խօսիմ թագաւորներու Թագաւորին եւ տէրերու Տիրոջ օրհնութեան մասին: Այս գանձը անսահմանօրէն ատելի է բոլոր թղթադրամներէն, եւ նոյնիսկ՝ արծաթէն եւ ոսկիէն: Եթէ դուն ամէն բանէ զրկուիս եւ ոչինչ ունենաս, բացի քու վրայի հագուստէդ, այս գանձը կը մնայ քեզի հետ: Այս հարստութիւնները կապուած չեն մարդոց կողմէ շինուած որեւէ բանի հետ. անոնք յաւիտենական են եւ կրնան փոխանցուիլ ցած ձայնով ըսուած աղօթքով մը: Դուն, բարեկամս, արքայական ծագում ունիս ճիշդ հեքիաթային իշխանուիի մը պէս:

## Արքայական Հրաւեր Մը

Երեւակայէ, որ մէկը դուրս կը գարնէ: Կը վազես, որ դուրս բանաս եւ երբ կը բանաս, կը տեսնես թագաւորին եթերային սուրհանդակներէն մէկը: Կ'ուզեմ, որ Մոխրիկին հեքիաթին ձեռով մտածես, բայց սուրհանդակի փոխարէն քու դրանդ սեմին հրեշտակ մը կեցած է: Այդ հրեշտակը այնքան մեծ եւ լուսաւոր է, որ գրեթէ ոչինչ կը տեսնես անոր ետեւը, բայց գիտես, որ հոն վկաներու մեծ խումբ մը կայ, եւ անոնք կը սպասեն, որ քու պատասխանդ լսեն: Այդ աստուածային պատգամաւորը քեզ անունովդ կը կանչէ եւ բարձրաձայն կը յայտարարէ, որ դուն ժառանգորդ ես, որ դուն երկնային արքայադուստր ես: Անոր ետեւը բուն ծափահարութիւններ կը լսուին: Ապշած՝ դուն հարցումով մը կը պատասխանես անոր յայտարարութեան. «Իսկապէս»: Ան գլուխով նշան կ'ընէ եւ ափիդ մէջ հրաւեր-նամակ մը կը դնէ: Դողդոջուն ձեռքերով դուն կը բանաս անոր տուած ծրարը: Ոչ մէկ սխալմունք կայ. անոր մէջ գրուած է քու անունդ հաստ, ոսկեայ տառերով: Խոր շունչ մը կը քաշես եւ կը բարձրացնես արցունքներով ողողուած աչքերդ, բայց արդէն մինակ կեցած ես քու դրանդ սեմին: Հրեշտակը եւ անոր շքախումբը արդէն անհետացած են: Տանդ մէջէն մէկը կը կանչէ ըսելով.

– Ո՞վ է դրան մօտ:

Դուն փսփսալով կը պատասխանես.

– Ես:

Դուն համակուած ես այն զգացումով, որ ամէն բան փոխուած է, բայց երբ կը նայիս պայմաններուդ, կը տեսնես, որ ամէն բան նոյնն է: Այս այցելութեան նպատակը քեզ շրջապատող պայմանները կամ քու գտնուած վայրդ փոխելը չէր: Այս հրաւերը ներքին անզուգական փոփոխութեան մը համար է:

Դէպի վար կը նայիս: Տակաւին նոյն հազուստները հազած

Ես, զորս հագած էիր երբ դուռը բացիր, բայց չես գիտեր ինչնի, անոնք անելի թեթեւ կը թուին ըլլալ, կարծես այլեւս չունին իշխանութիւն՝ քեզ սահմանափակելու, պիտակելու կամ ինքնութիւնդ որոշելու: Երբ կը դառնաս, որպէսզի դարձեալ տուն մտնես, միտքդ անելի պայծառ է, եւ կ'անդրադառնաս, որ դուն այդտեղ կ'ապրիս, բայց ատիկա այլեւս քու իրական տունդ չէ: Քեզ կը գրաւէ հեռաւոր քաղաք մը, որուն հիմնադիրը քու Աստուածդ եւ Թագաւորդ է: Կ'անցնիս նստասենեակէն՝ քու սիրելիներուդ քովէն, որոնց դէմքերուն վրայ քիչ մը շփոթութիւն կայ, դէպի քու ննջասենեակդ: Քու սենեակիդ լուսութեան եւ առանձնութեան մէջ դուն կը բանաս այդ ծրարը եւ զգուշօրէն դուրս կը հանես հրաւերին ոսկեզօծ նամակը:

*Սիրելի՛ դուստր, այժմ դուն վերածնած ես իբրեւ Սառան՝ Բարձրեալին իշխանուիին:*

*Որքան անելի մտերմօրէն ճանչնաս Յիսուսը, այնքան Անոր շնորհքը եւ խաղաղութիւնը պիտի անելնան քու կեանքիդ մէջ:*

*Այս արքայական նշանակումը կը նշանակէ, թէ դուն պիտի կարենաս ստանալ այն բոլոր բաները, որոնց երբեւէ կարիքը կրնաս ունենալ, եթէ ձգտիս բարեպաշտութեան եւ ընթացքդ աւարտես: Վստահ եղիր, որ երբ կը խորասուզուիս Սուրբ գիրքերուն մէջ, քու երկրասարդութիւնդ եւ միտքդ պիտի նորոգուին եւ դուն պիտի իմանաս քեզի շնորհուած մեծ եւ թանկագին խոստումներուն անսահման զանձաբան մասին: Այդ բոլորը հրաշքով փրուած են քեզի: Սիրելիս, եթէ փակուիս կասկած ունիս, ասիկա լաւագոյն հրաւերն է, որ երբեւէ ստացած ես: Միակ բանը, որ պէտք է ընես հիմա, կոնակ դարձնելն է աշխարհին, որ արդէն իսկ իր կոնակը դարձուցած է քեզի:*

Ես ինձի թոյլ տուի եւ անձնաւորեցի Բ.Պետրոսի 1.2-4-ը: Բայց եկէք նաեւ կարդանք զայն Աստուածաշունչի *Ինկլիշ Սթանտրդր Կըրժընէն*:

Շնորհք եւ խաղաղութիւն թող շատնան ձեր վրայ Աստուծոյ եւ մեր Տիրոջ՝ Յիսուսի ճանաչումով: Արդարեւ իր աստուածային զօրութիւնը պարգեւեց մեզի ամէն ինչ՝ որ կը վերաբերի կեանքի ու բարեպաշտութեան, ճանչցնելով ան՝ որ կանչեց մեզ փառքի եւ առաքինութեան: Ասոնցմով ամենամեծ ու պատուական խոստումներ պարգեւուած են մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակցիք աստուածային բնութեան՝ փախչելով ապականութենէն, որ ցանկութենէն յառաջացած է աշխարհի մէջ:

Եթէ Յիսուս սիրտիս դուռը չզարներ, ես ոչինչ կ'ունենայի: Ինծի համար հրաշք կ'ըլլար եթէ որեւէ բան ժառանգէի: Իմ ընտանիքս չէր աշխատեր, որ ժառանգութիւն ձգէր եղբօրս եւ ինծի: Բայց ինչ կը նախընտրեմ ունենալ, ակեցութեան, թէ՛ ամանդ: Երկար ժամանակ առաջ ես սորվեցայ, որ Աստուծոյ կողմէ տրուած խոստումը ակելի երկար ատեն կը մնայ, քան ստացուածքը:

Եւ ինպէս կը ստանանք այս մեծ խոստումները: Անոնք մեզի կ'ըլլան հաւատքով: Գաղատացիներուն 3.14-ը կ'ըսէ.

Աբրահամի օրհնութիւնը գայ հեթանոսներուն վրայ՝ Քրիստոս Յիսուսի միջոցով. որպէսզի մե՛նք ալ ստանանք Հոգիին խոստումը՝ հաւատքի միջոցով:

## **Ծանօթացիր Աբրամին եւ Սարային**

Այս խոստումներուն մասին ակելին գիտնալու համար, միասին վերլիշենք ծանօթ պատմութիւն մը Աստուածաշունչէն: Աստուած պատմութիւններ գրած է Աստուածաշունչին մէջ, որպէսզի մենք կարենանք մեծ դասեր քաղել ուրիշ մարդոց փորձառութիւններէն: Երբ կը կարդամ այդ պատմութիւնները, բառերը կը կենդանանան ինծի համար: Միտքիս մէջ կը պատկերացնեմ այդ պատմութիւնը

Եւ Սուրբ Հոգիին ծայնին մտիկ կ'ընեմ. այդպիսով ես կը տեսնեմ եւ կը լսեմ այն բաները զորս չեմ նկատեր, երբ պարզապէս էջերուն վրայ գրուած բառերը կը կարդամ: Հարցումներ կը հարցնեմ. «Ինչպէս պիտի զգայի եթէ իրենց տեղը ըլլայի: Ինչը պիտի ըլլար իմ ամենամեծ մարտահրաւերս կամ զիս ամէնէն շատ վախցնող բանը»:

Ասիկա Աստուծոյ Խօսքը ուսումնասիրելու բազմաթիւ միջոցներէն մէկն է:

Ասիկա չի հակասեր Աստուածաշունչին. ասիկա խոկալու ձեւ մըն է, որուն շնորհիւ Աստուածաշունչը կը կենդանանայ մեզի համար: Մեր հաւատքի նախահայրերը եւ նախամայրերը նոյնը կ'ընէին: Այսպէս է իմ *սէլա*<sup>1</sup> ... ես այսպէս կանգ կ'առնեմ եւ կը խոկամ:

Նախ կ'ուզեմ



**Ինչ կը նախընտրեմ ունենալ, ասելուքներ թէ՛ աւանդ:**

քեզի ծանօթացնել Աբրամը: Ան մեր հաւատքի հայրն է: Պատկերացուր հաւատարիմ, թերութիւններ ունեցող, տարեց, բարեպաշտ մարդ մը: Ապա կը ծանօթանանք Սարային: Ան մեր խոստումին մայրն է: Ան շատ գեղեցիկ է եւ նոյնպէս հաւատարիմ, թերութիւններ ունեցող, տարեց եւ բարեպաշտ:

Այս երկուքը բաւական քաջ գտնուեցան, ձգեցին ամէն բան, որ իրենց հարազատ էր, եւ հնազանդեցան Աստուծոյ կանչին: Աստուած խոստացաւ օրհնել եւ շատցնել այս ամուլ զոյգը: Միասին անոնք արկածախնդրութիւն մը սկսան: Անոնք կը փնտռէին բան մը, որ երբեք չէին տեսած՝ Աստուծոյ կողմէ կազմուած ազգ մը: Այն պահուն, երբ մենք կը միանանք անոնց, անոնք արդէն տասնամեակներէ ի վեր շարունակ ճամբորդած են: Աբրամ իր հարիւրամեակին շեմին է, եւ Սարան, իր կինը՝ իննիսունամեակին:

Անոնք շատ ելեւէջներ ունեցան, երբ անապատին մէջ կը

ճամբորդէին: Քեզի շատ կարճ ամփոփում մը տամ: Անոնք տեղի չտուին վիճաբանութիւններու, որոնք սկսան երբ Աստուած օրհնեց զիրենք եւ անոր իբրեւ արդիւնք, Ղովտը՝ Աբրամի եղբորորդին, անկէ բաժնուեցաւ: Սարան տարուեցաւ փարաւոնին հարեմը, եւ յետոյ այդ տեղէն արձակուեցաւ: Իրենց պանդխտութեան մէջ անոնք փոքրիկ պատերազմ մը յաղթեցին, փրկեցին իրենց առեւանգուած եղբորորդին եւ հաւատքով տասանորդ տուին Մելքիսեդեկին՝ Բարձրեալ Աստուծոյ քահանային: Անոնք լուրջ հիասթափութիւն ապրեցան եւ սխալ որոշում կայացուցին, երբ Սարան Հագարը տուաւ իր ամուսինին՝ որդի ծնելու համար, որուն անունը Իսմայէլ դրին: Իր յուսահատութեան պատճառով, Սարան բարկութեան պոռթկում ունեցաւ եւ ընտանեկան բռնութիւն գործադրեց: Չեմ կարծեր, որ այս ամուսին-կին-աղախին եռանկիւնը հաճելի էր:

Ահա քանի մը բան Աբրամին եւ Սարային պատմութենէն, զորս կ'ուզեմ շեշտել, որպէսզի անոնք մեր ուշադրութենէն չվրիպին իմ հակիրճ ամփոփումիս մէջ:

1. *Անոնք ամբողջովին նուիրուած էին:* Աբրամը եւ Սարան հեռացան Ուր քաղաքէն՝ առանց ետ նայելու: Ետդարձ չկար: Աստուած կանչեց եւ անոնք հետեւեցան եւ վերջ: Ծնունդներու 12.1-2-ը կ'ըսէ.

Տէրը Աբրամի ըսաւ. «Քու երկրէդ, ազգականներէդ ու հօրդ տունէն գնա՛ այն երկիրը, որ քեզի պիտի ցուցնեմ: Քեզ մեծ ազգ պիտի ընեմ, եւ քեզ պիտի օրհնեմ. քու անունդ պիտի մեծցնեմ, ու դուն օրհնեալ պիտի ըլլաս»:

Աստուած ճամբայ մը կը պատրաստէր, որպէսզի նոր բան մը ընէր՝ նոր ձեւով մը: Ան առաջնորդեց զանոնք հաւատքով եւ յոյսով: Անոնք սխալներ գործեցին, բայց երբեք ետեւ չնայեցան:

2. *Անոնք վէճերէ հեռացան:* Աբրամը եւ Սարան հեռացան



Ուրէն, բայց իրենց հետ Ղովտը բերին (որ այնքան ալ լաւ միտք չէր): Աբրամին օրհնութիւնը առատութիւն բերաւ նաեւ Ղովտին: Երբ երկիրը բաւական չէր անոնց, որ մէկտեղ բնակին, անոնց հովիւները վիճեցան: Փոխանակ արտօնէր, որ վէճը մեծնար, Աբրամ Ղովտին թոյլ տուաւ, որ ընտրէ իր ուզած տարածքը: Աւելի լաւ էր, որ անոնք բաժնուէին, քան թէ միշտ վիճաբանութիւններու մէջ ըլլային: Իբրեւ նշում՝ եթէ կեանքի ճամբորդութիւնդ կ'ընես այնպիսի մարդոց հետ, որոնց հետ պէտք չէ ըլլաս, կու գայ ժամանակ մը, երբ Աստուած երկուքդ ալ կը մեծցնէ այնքան, որ տեղ մը կը հասնի, որ պէտք է բաժնուիք: Վէճը կը դադրեցնէ Աստուծոյ օրհնութիւնը եւ կեանքի մէջ արդիւնաւէտ չես ըլլար:

3. *Անոնք տուին՝ հաւատքի քայլ առնելով:* Աբրահամ Մեքիսեդեկին տասանորդ տուաւ՝ ակնկալելով Աստուծոյ խոստումները: Փոխանակ առնէր Սոդոմէն եկած աւարը, ան հաւատքով տուաւ, բան մը, որ հաստատութիւն տուաւ անոր յոյսին:

Այս երեք բաները արդէն պատահած էին երբ Աստուած երեւցաւ Աբրամին եւ հռչակեց հետեւեալը Ծնունդներու 17.4-5-ին մէջ.

Ահա՛ իմ ուխտս քեզի հետ է. *ազգերու բազմութեան հայր պիտի ըլլաս*, եւ ա՛լ անունդ Աբրամ պիտի չկոչուի, հապա Աբրահամ պիտի ըլլայ անունդ, որովհետեւ քեզ ազգերու բազմութեան հայր ըրի:

### **Յաւատեանական Ուխտ**

Երբ կը յայտնաբերես, որ դուն ժառանգորդ ես, Աստուած կը փոխէ քու անունդ: Երբ Աստուած փոխեց Աբրամի անունը Աբրահամի, անոր կեանքը ընդլայնեցաւ: Այլեւս ան անազգ մարդ մը պիտի չ'ըլլար ... ան ազգերու հայր պիտի դառնար:

Ծնունդներու 17-րդ գլուխին մէջ Աստուած մանրամասնօրէն կը նկարագրէ, թէ ինչ պիտի ըլլայ այս ուխտին մեծութիւնն ու տարողութիւնը: Աբրահամին կեանքը կը բնութագրուի «սերնդային» եւ «յաւիտենական» բառերով: Այն հողը, որուն վրայ կը բնակէր Աբրահամը՝ իբրեւ դրսեցի եւ օտարական, օր մը իր սերունդներուն ժառանգութիւնը պիտի ըլլար եւ յաւիտեան իրենց պիտի պատկանէր: Աստուած խոստացաւ, որ ինչպէս Աբրահամի հետ էր, նոյնպէս անոր սերունդներուն հետ պիտի ըլլար: Կը պատկերացնեմ, որ Աբրահամ լացաւ Աստուծոյ ներկայութեան մէջ՝ կանխատեսելով անոնց բարի ապագան:

Իմ միտքիս մէջ ես կը տեսնեմ Աբրահամը երեսին վրայ ինկած Աստուծոյ առջեւ երկրպագութիւն կ'ընէ: Յետոյ ան կ'ելլէ իր ծունկերուն վրայ եւ արցունքներով լեցուն երեսը դէպի աստղերը կը բարձրացնէ: Ան իր ձեռքերը երկնցուցած է՝ կարծես դպչելու լոյսի փայլուն կէտերուն, որոնք շարուած են անապատային յստակ երկինքին խաւարին վրայ: Ան շնորհակալութեամբ լեցուած է: Այդ խոստումին իրաքանչիւր բառը կ'արձագանգէր մինչեւ անոր ոսկորներուն ծուծին մէջ: Պահ մը տարիքին վարագոյրը կ'իյնայ եւ Աբրահամ դարձեալ երիտասարդ կը դառնայ. անոր իրաքանչիւր բջիջը հրաշքով ողջ եւ աշխուժ է:

Անոր նոր անունը՝ Աբրահամը, անոր սիրտը կը համակէ ուրախութեամբ եւ յոյսով: Ան Իսմայէլը կը տեսնէ եւ իր միտքին մէջ կ'ըսէ. «Այս բոլորը քուկդ պիտի ըլլայ, որդիս. քու կեանքդ պիտի ընդարձակուի բազմապատկուելով եւ օրհնուած եւ մեծ վախճան մը պիտի ունենայ»:

Տէրը կ'ըսէ Աբրահամին, որ այդ ուխտը նշան մը կը պահանջէր: Ատիկա գեղեցիկ, հանրային նշան մը չէր՝ Նոյին տրուած ծիածանին պէս, այլ՝ ցաւոտ, թաքուն նշան մը: Աբրահամի տան բոլոր արունները պէտք է թլփատուէին: Այս միսի կտորին հեռացումը կը հաստատէր, թէ Աբրահամը եւ իր սերունդը ուխտի մէջ էին Բարձրեալ Աստուծոյ հետ: Անկէ ետք Աստուծոյ հետ զրոյցը ուրիշ ընթացք կը ստանայ.

Աստուած Աբրահամի ըսաւ. «Քու կնոջդ՝ Սարայի անունը Սարա մի՛ կոչեր, հապա անոր անունը Սառա պիտի ըլլայ: Զայն պիտի օրհնեմ, նաեւ անկէ որդի մը պիտի տամ քեզի. *պիտի օրհնեմ զայն, եւ ազգերու մայր պիտի ըլլայ. ժողովուրդներու թագաւորներ պիտի ելլեն անկէ*»: (Ծնունդներու 17.15-16, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Կրնամ երեւակայել Աբրահամին շփոթը: Անոր ճակատը տարակուսանքէն կնճռոտեցաւ: «Սառամն: Այդ ուխտը ինձի հետ է, եւ ես արդէն որդի ունիմ՝ Իսմայէլը: Ան իմ որդիս է՝ Հազարէն»: Դէպքերու այս նոր զարգացումը պատճառ եղաւ, որ Աբրահամ անգամ մը ես իր երեսին վրայ իյնայ:

Աբրահամ երեսի վրայ ինկաւ ու *խնդաց*, եւ իր սիրտին մէջ ըսաւ. «Հարիւր տարեկան մարդուն զաւակ պիտի ըլլայ արդեօք. ու Սառա, որ իննսուն տարեկան է, պիտի ծնանի»: (Ծնունդներու 17.17, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Շատ անգամ լսած ենք, թէ մայր Սառան խնդաց երբ լսեց, թէ որդի մը պիտի ունենայ, բայց Աբրահամը առաջինն էր, որ խնդաց երբ լսեց Աստուծոյ խոստումը: Սակայն Աբրահամ խնդալով չբաւարարուեցաւ: Ան նոյնիսկ այլընտրանք մըն ալ առաջարկեց Աստուծոյ.

Եւ Աբրահամ Աստուծոյ ըսաւ. «Իսմայէլ թող ապրի քու առջեւդ»: (Ծնունդներու 17.18)

Ինձի այնպէս կը թուի, թէ Աբրահամ կը փորձէր Իսմայէլը մտցնել Աստուծոյ ծրագիրին մէջ: Ինչո՞ւ այդ բոլոր նեղութիւնը պիտի քաշէր Սառայի հետ: Նոյնիսկ եթէ ան նոր անուն ստացած էր, անոր արգանդը մեռած էր, եւ անոր ամուսինը ծեր էր: Ես կը հասկնամ, թէ ան ինչպէս կը մտածէր: Բայց Աստուած բնաւ չընդունեց անոր կարծիքը եւ հակաճառեց.

Աստուած ըսաւ. «Անկասկած քրի կինդ՝ Սառա որդի մը պիտի ծնանի քեզի, ու անոր անունը Իսահակ պիտի կոչես: Անոր հետ, եւ անկէ ետք՝ անոր զարմին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը»: (Ծնունդներու 17.19, շեշտադրումը՝ մեր կողմէ)

«Անկասկած քրի կինդ՝ Սառա ...» խօսքը բաւական յստակ է: Կարծես Աստուած անոր միտքը կը կարդար: Երեւակայէ՛: Աստուած կը լսէ Աբրահամի եւ կ'օրհնէ Իսմայէլը, բայց ոչ՝ որպէս Իր յաւիտենական ուխտին մէկ մասը:

Երբ երկու հոգի ամուսնութեամբ մէկ կը դառնան, երկուքն ալ Աստուծոյ հետ եղած ուխտին մաս կը կազմեն: Անշուշտ Աբրահամը կը սիրէր Իսմայէլը, եւ շատ բնական էր, որ Աստուծոյ բոլոր խոստումներուն կատարումը կ'ուզէր անոր համար: Բայց Իսմայէլը ստրուկ կնոջ մը տղան էր, որ կապուած էր մարմնաւոր գործերուն եւ բնութեան: Անզուգական խոստումը պէտք էր տեղի ունենար աննախադէպ նշանի մը եւ հրաշքի մը միջոցով: Շատ ծեր, ամուլ կին մը մանուկ մը պիտի ունենար.

Բայց Իսահակի՛ հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, որ Սառա յաջորդ փարի՛ այս արեւն քեզի պիտի ծնանի: (Ծնունդներու 17.21, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Որքան յաճախ մենք նոյն բանը կ'ընենք:

Աստուած մեզի կ'ըսէ, որ նոր եւ հրաշալի բան մը պիտի ընէ, եւ մենք անհաւատութեամբ կը տատանինք: Ան կ'ըսէ, թէ պիտի ընդարձակէ մեր կեանքը, եւ մենք Իրեն կ'ըսենք՝ պէտք չկայ այդքան նեղութիւն քաշելու ... պարզապէս իմ ունեցածս օրհնէ: Մեր ունեցածը եւ մեր ըրածները բաւարարաչափ ընդարձակ չեն: Աստուած կ'ուզէ մասնակցիլ: Ան սերունդներուն մասին կը մտածէ: Այդ ուխտը պիտի հաստատուէր Իսահակին հետ, որ տակաւին չէր ծնած: Ճիշդ

այն անձը, որուն մասին լսելով՝ Աբրահամ խնդաց ... ոչ թե անոր հետ, զոր ան ծնաւ մարմինով:

Ես շատ կը քաջալերուիմ Աբրահամին մարդկային բնութեամբ: Բոլորս կրնանք դասեր քաղել անկէ: Աստուած, Իր ողորմութեամբ, կ'օրհնէ նոյնիսկ այն, ինչ որ կը շինենք մեր սեփական ուժերով, բայց Անոր յաւիտենական ուխտը կը հաստատուի այնպիսի պայմաններով, որոնք վեր են մարդկային կարողութենէն:

## **Նոր Անուն = Նոր Վախճան**

Ըստ հրեական ասանդութեան՝ անունը իր մէջ կը բովանդակէ անհատին կարողականութիւնն ու կոչումը կամ վախճանը: Հետեւաբար անունին փոփոխութիւնը կրնայ փոխել բնութիւնդ, որ իր կարգին, ճամբան կը պատրաստէ քու ապագայիդ համար: Օրինակ՝ մենք դիտումնաւոր կերպով ընտրեցինք մեր չորս տղոց անունները, յուսալով, որ երբ մեծնան անոնք իրենց անուններուն նման մարդիկ կը դառնան: Ես ասիկա սորվեցայ իմ Հայր Աստուծմէս, քանի որ ամէն անգամ, որ անոնց անունը կու տամ, անոնց անուններուն իմաստը հոջակած կ'ըլլամ անոնց կեանքերուն վրայ:

Աստուած յաճախ մէկու մը անունը կը փոխէ, երբ այդ անձին անունը այլեւս չ'արտայայտեր անոր բնութիւնը: Հալածող Սողոսը Պօղոս կոչուեցաւ, իսկ ձկնորս Սիմոնը Պետրոս՝ Ժայռ, անունը ստացաւ Յիսուսէն: Իսահակին որդիին՝ Յակոբին անունը Իսրայէլի փոխուեցաւ, որ կը նշանակէ՝ «Աստուծոյ իշխան»: Մեր Աստուածը անուններ կը փոխէ: Երբեմն ատիկա կը նմանցնեմ դատական վկաներու պաշտպանութեան ծրագիրին, ուր բոլորս կը գործենք Յիսուսի անունին ինքնութեան տակ:

Երբ Աստուած ուխտ կնքեց Աբրահամի հետ, ան ատելցուց Աբրահամի կարողութիւնը՝ փոխելով անոր անունը: Ես բացառիկ խելացի բարեկամ մը ունիմ՝ Պրայըն Պիլեչի

անունով, որ Յիսուսի հաւատացող հրեայ մեսիական ռաբբի մըն է: Ան բացատրեց ինծի այս անուններու փոփոխութեան կարեւորութիւնը: Աբրամի անունը ընդարձակելով Աբրահամի վերածելու համար, Աստուած մէկ տառ առաւ Իր անունէն եւ զայն աւելցուց Աբրամի անունին մէջտեղը: «Աբրամ» անունը կը նշանակէ՝ «հայր բարձր»: Ընդլայնուած անունը՝ «Աբրահամ» կը նշանակէ՝ «հայր բազմութեան»:

Այս նոր անունը կը հռչակէր, թէ Աբրահամ նվ պիտի ըլլար: Ասիկա անուն մըն էր, որ երբեք լիովին չիրականացաւ Աբրահամի կեանքին ընթացքին: Քանի որ Աբրամ իր կեանքով մեծարեց զԱստուած, իր ամենդը անսահմանօրէն պիտի բազմապատկուէր: Երբեք մի՛ մոռնար. *քու ինքնութիւնդ սերտօրէն կապուած է քու վախճանիդ կամ ապագայիդ*: Ռաբբի Պրայընը նաեւ նշեց, որ Աստուծոյ խոստումը չիրականացաւ մինչեւ որ Աստուած ընդլայնեց Աբրամի կնոջ անունն ալ: «Սարա» կը նշանակէ՝ «Եհովան իշխան է», որ փոխուեցաւ «Սառա»ի, որ կը նշանակէ «Աստուծոյ իշխանուի»: Աստուած Իր Եհովա անունէն մէկ տառ աւելցուց անոր անունին վրայ:

Այս անունի փոփոխութիւնը ցոյց տուաւ, թէ ո՛վ էր Սառան Աստուծոյ ծրագիրին մէջ: Ատիկա զինք մտերմօրէն կապեց Աստուծոյ հետ, միեւնոյն ատեն հռչակելով, որ անոր բոլոր խոստումի դուստրերն ալ արքայական դիրք պիտի ունենային: Այս նոր անունին շնորհիւ Սառային կեանքը այլեւս պիտի չկառուցուէր իր ուժերով, այլ՝ Աստուծոյ զօրութեամբ:

Երբ Սարային անունին նշանակութիւնը արականէն («Եհովան իշխան է») իգական դերի փոխուեցաւ («Աստուծոյ իշխանուի»), անոր իմաստը մեղմացաւ եւ ընդունող ըլլալու դիրքին մէջ դրուեցաւ: Աբրահամին նոր անունը ընդլայնեց զինք՝ բազմութիւններ ընդգրկելու համար, բայց անոր խոստումի սերմը նոյնպէս խոստում ունեցող հողի պէտք ունէր: Սառային կեանքը դարձաւ անոր հողը եւ անոր սերմին

արգանդը, որ խոստումին շնորհիւ կենդանացաւ:

Սառային վերանուանումը կոտորեց անոր անմշակ հողը եւ զայն պատրաստեց այն ընդլայնման համար, որ վստահուած էր թէ Աբրահամին եւ թէ իրեն: Աստուած Աբրահամին մասին ըսաւ, թէ ան *ազգերու բազմութեան հայր* պիտի ըլլայ եւ Սառային մասին ըսաւ, թէ *ազգերու մայր պիտի ըլլայ եւ ժողովուրդներու թագաւորներ պիտի ելլեն անկէ*: Աստուած բառացիօրէն պատկեր եւ տեսիլք տուաւ երկուքին ալ:

Երբ մարդիկ յարգանքով եւ մեծարանքով կը վարուին իրարու հետ եւ իրենց Աստուծոյն հետ, Աստուած կը միջամտէ եւ անկարելին կ'ընէ: Ամուլ արգանդները կեանքով կը լեցուին եւ կը զօրանան՝ ծնունդ տալու համար, առանց սիրոյ ամուսնութիւնները կը բժշկուին, որդիները եւ դուստրերը դեւերէն կ'ազատագրուին, եւ մանուկները մեռելներէն յարութիւն կ'առնեն: Յոյսը կը վերականգնուի, հաւատքը կը բոցավառի, սէրը կը յաղթէ, եւ թշնամին ետ կը մղուի երբ խաբէութեան ձայները կը լռեցուին:

Անկախ անկէ, թէ անդրադարձամձ ես թէ՛ ոչ, քու անունդ փոխուեցաւ երբ վերստին ծնունդ ստացար: Քու անունդ նաեւ ընդլայնուեցաւ: Յիսուս՝ Աբրահամի խոստացուած սերմը, պարզապէս չփոխեց մեր անունները՝ զանոնք ընդլայնելով, այսինքն՝ Իր անունէն մէկ տառ աւելցնելով, այլ մեզի շնորհեց անսահման մուտք Հօր քով՝ Իր անունը գործածելով: Ինչպէս կը կարդանք Յովհաննէս 16.26-27-ին մէջ.

*Այդ օրը՝ իմ անունովս պիտի խնդրէք: Չեմ ըսեր ձեզի, թէ պիտի թախանձեմ Հօրը՝ ձեզի համար. քանի որ ինք՝ Հայրը կը սիրէ ձեզ, որովհետեւ դուք սիրեցիք զիս ու հաւատացիք, թէ ես Աստուծմէ ելայ: (շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Յիսուս մերկացուեցաւ եւ մեր ամօթով ծածկուեցաւ, երբ մեր տեղը առաւ խաչին վրայ: Ան տուաւ Իր ամբողջ անբիծ

Կեանքը՝ մեր թերութիւններով լեցուն եւ արատաւորուած կեանքերուն փոխարէն: Շնորհիւ Իր բացարձակապէս կատարեալ զոհին՝ Ան կատարելապէս փրկեց իրաքանչիւր խոստումի որդի եւ դուստր եւ բոլորս Իրեն մօտեցուց:

## Կ'երեւի Դուն Կատակ Կ'ընես

Մեր պատմութիւնը կը շարունակուի Ծնունդներու գիրքին 18-րդ գլուխին մէջ, երբ Աստուած դարձեալ կ'այցելէ Աբրահամին: Աբրահամը իր վրանին մուտքը նստած էր, ուր արեւէն պաշտպանուած էր, բայց կրնար զգալ հովուն թեթեւ հոսանքները: Ան իր աչքերը կը վերցնէ եւ կը տեսնէ երեք մարդիկ իր մօտ կայնած՝ Մամբրէի կաղնիներուն քով: Ուսումնասիրողներուն մեծ մասը կը հաւատայ, որ այդ մարդիկը հրեշտակներ էին: Աբրահամ կը վազէ զանոնք դիմաւորելու, գետին խոնարհելով անոնց կ'երկրպագէ եւ կը ստիպէ, որ իր քով մնան.

«Իմ տէրս, եթէ այժմ շնորհք գտայ քու առջեւ, կ'աղերսեմ, ծառայիդ բնակարանէն մի' անցնիր: Կ'աղերսեմ, քիչ մը ջուր թող բերուի, ու ձեր ոտքերը լուացէք եւ ծառին տակ հանգստացէք. ու պատառ մը հաց բերեմ, ձեր սիրտերը կազդուրեցէք, յետոյ անցէք, քանի որ ասոր համար ձեր ծառային քով եկաք»: Անոնք ըսին. «Ինչպէս ըսիր, այնպէս ըրէ»: (Ծնունդներու 18.3-5)

Ինծի համար հաճելի է, թէ ինչպէս ան կեցուց եւ պահեց այդ ճամբորդները՝ պատիւ տալով անոնց: Եւ անկասկած Աբրահամը համեստ խոստումներ տուաւ եւ իր խոստացածէն շատ ւաւելին ըրաւ: Նախ ան վազելով Սառային մօտ գնաց եւ ըսաւ, որ իրենց լաւագոյն ալիւրէն շօթէր շինէ: Յետոյ ան վազեց արջառներուն քով, մատղաշ եւ լաւ հորթ մը առաւ ու երիտասարդի մը տուաւ, որ պատրաստէ զայն: Ատիկա ւարտելէ ետք, ան կոզի եւ կաթ մատուցանեց անոնց: Այն



խնճոյքը, որ Աբրահամը պատրաստեց իր հիւրերուն համար, շատ աւելին էր, քան կտոր մը հացը:

Աբրահամը իր հիւրերուն հետ էր, երբ անոնք հարցուցին.

*«Ո՞ր է քու կինդ՝ Սառա»:* Ինք ըսաւ. «Ահա վրանին մէջ է»: Յետոյ անոնցմէ մէկը ըսաւ. «Յաջորդ տարի անշուշտ քեզի պիտի վերադառնամ, եւ ահա՛ քո՛ կինդ՝ Սառա որդի մը պիտի ունենայ»: Սառա *մտրիկ կ'ընէր վրանին մուտքը՝ որ անոր ետեւն էր* (Ծնունդներու 18.9-10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Էն.Էլ.Թի.* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Երբ այս հատուածը կը կարդամ, կարծես այդ վրանին մէջ ըլլայի՝ Սառային հետ: Ուշադրութեամբ հայացքս կը սեւեռեմ վրանին կտորներուն բացուածքէն եւ անոր ուսերուն ետեւէն դէպի դուրս կը նայիմ: Աբրահամ իր հիւրերուն հետ դուրսը նստած է՝ ստուարախիտ ծառի մը շուքին տակ: Չոր անապատային զեփիուրը, որ անցնելով ովասիսին ծառերուն եւ վրաններուն մէջէն, կը շարժէր անոնց հագուստները, դիւրութեամբ կը փոխանցէ անոնց ձայները:

Սառան կը լսէր կիսախաւար վրանէն. ան բաւական մօտ էր, որ լսէր, բայց բաժնուած էր անոնց խօսակցութենէն: Սառան կը զգուշանար, որ անձայն մնար, բայց Աստուածաշունչը կը յայտնէ անոր միտքերը.

Աբրահամ ու Սառա ծերացած էին, տարիքով յառաջացած, եւ Սառա դադրած էր կիներու կարգին մէջ ըլլալէ: Ուստի *Սառա ինքնիր մէջ խնդաց՝* ըսելով. «Ես պառաւելէս ետք զուարճութիւն պիտի ունենամ, քանի տէրս՝ ամուսինս ալ ծերացած է»: (Ծնունդներու 18.11-12, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Էն.Էլ.Թի.* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ասիկա կ'արտացոլացնէ Աբրահամին հակազդեցութիւնը,

Եւ ինծի մտածել կու տայ, թէ արդեօք Սառան առաջին անգամ կը լսէր ատիկա: Յստակ է, որ ան յանկարծակիի եկաւ: Երբեմն խոստումը կը մօտենայ, երբ ատիկա բոլորովին անկարելի կը թուի:

Ծնունդներու 17.21-ին մէջ կը կարդանք. «[...] յաջորդ տարի՝ այս ատեն [...]» եւ երբ խոստումը կը կրկնուի Սառայի ներկայութեան, այսպէս կը հնչէ. «[...] յաջորդ տարի՝ մօտաւորապէս այս ատեն [...]»: Յստակ է, որ արդէն որոշ ժամանակ մը անցած էր: Ոչ մէկ ձեւով կրնանք վստահ գիտնալ, թէ որքան ժամանակ անցած էր Աստուծոյ եւ Աբրահամին զրոյցէն մինչեւ հրեշտակներուն յայտնուիլը, բայց շատ ժամանակ անցած չէր կրնար ըլլալ: Կարելի է ենթադրել, որ մէկ ամիսէն պակաս անցած էր: Տէրը որոշած էր, որ Սառան այս խօսակցութեան մաս կազմէր:

*Տէրը Աբրահամի ըսաւ. «Ինչո՞ւ Սառա խնդաց՝ ըսելով. “Միթէ ի՞րապէս պիտի ծնանիմ, ես որ ձերացած եմ”: Միթէ Տիրոջ համար դժուարին բան մը կայ: Յաջորդ տարի՝ մօտաւորապէս այս ատեն, քեզի պիտի վերադառնամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ»: Բայց Սառա ուրացաւ եւ ըսաւ. «Զխնդացի», քանի որ վախցաւ: Իսկ ան ըսաւ. «Ո՛չ, խնդացի»:* (Ծնունդներու 18.13-15, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Էն.Էլ.Թի.* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սառա ոչ միայն խնդաց, այլեւ ստե՛ց: Ան վախցաւ, քանի որ անոր խնդուքը «Կ’երեւի դուն կատակ կ’ընես» իմաստով էր ... ատելի հեզնանք էր:

## **Ո՛ւր է Կինդ՝ Սառա**

Կարդալով նախորդ հատուածէն առաջ եւ ետք գտնուող խօսքերը՝ սկսայ մտածել, թէ որքան բան կ’ենթադրէին այդ խօսքերը, թէեւ այդ բոլորը բացայայտ կերպով ըսուած չէ:

Ես նշեցի կարգ մը բաներ, որոնց կ'ուզեմ անդրադառնալ: Անոնցմէ ոմանք անցեալին իմ ուշադրութենէս վրիպած էին:

Նախ կ'ուզեմ «Ո՞ր է Սառա» հարցումին մասին խօսիլ: Ինչո՞ւ ան իր վրանին մէջ կը պահուըտի: Ինչո՞ւ ան իր ամուսինին քովը չէ եւ այս խօսակցութեան չի մասնակցիր:

Անշուշտ գիտես, թէ այս պատմութիւնը ինչպէս կը վերջանայ, բայց կարեւոր է յիշել, որ Սառան չէր գիտեր ատիկա: Նկատի ունենալով անոր տարիքը՝ ան կրնար մտածել, որ ամէն բան իր կեանքին մէջ վերջացած էր: Թերեւս ան կը կարծէր, որ իր ամուսինին կապը Հագարի հետ եւ իր վատ վերաբերմունքը Հագարի հանդէպ որակագրկեր էին զինք:

Ան չէր անդրադառնար, որ այն ցաւը, որ ան կրած էր եւ այն սխալները, զորս գործած էր կրկնուող հիասթափութիւններու եւ դժուար պայմաններու մէջ խորութիւն ձեւաւորած էին անոր պանդուխտ անձին մէջ: Յղանալու համար խորութիւն անհրաժեշտ չէ: Մակերեսային եւ անհոգ մարդիկ դիրութեամբ կրնան յղանալ: Բայց Սառան պիտի դառնար Իսահակին, ինչպէս նաեւ՝ Իսրայէլի ժողովուրդին մայրը, եւ ան պատրաստ պէտք է ըլլար:

Տասներեք տարի շարունակ ան կը տեսներ, թէ Իսմայէլ ինչպէս կը մեծնար: Ան կը յուսար Հագարի որդին մեծցնել իբրեւ իրը, բայց Իսմայէլ որդիի պէս չէր իրեն համար: Աբրահամը գոհ էր, բայց Սառան՝ կոտորած: Ամէն բան անարդարօրէն անոր դէմ էր: Բայց աւելի ողբերգականը այն էր, որ թէ՛ Սառան եւ թէ՛ Աբրահամը մոռցած էին, թէ ո՞վ էր ինքը՝ Սառան:

Յաջորդ բանը, որ զիս ցնցեց, այս հարցումն էր. «Ո՞ր է կինդ՝ Սառան»:

Երբ մէկը մեր տունը կ'այցելէ եւ զիս կը փնտռէ, ճոնին չի հարցներ. «Ո՞ր է կինդ՝ Լիսան»: Պէտք չկայ այս զանազանութիւնը ընելու: Այս յստակացումը կարելի է ընել

միայն երբ մէկէ աւելի Լիսա անունով կիներ կ'ապրին մեր տան մէջ: Օրինակ՝ եթէ տղաներէս մէկը Լիսա անունով կ'նոջ մը հետ ամուսնանար, պէտք պիտի ըլլար հարցումը հետեւեալ ձեւով հարցնել. «Եկած եմ քու կինդ՝ Լիսան տեսնելու, ոչ թէ քու հարսդ՝ Լիսան»:

Զիս ճանչցողները պարզապէս կը հարցնեն. «Ո՞ր է Լիսան»: Իսկ մէկը, որ զիս չի ճանչնար եւ կ'ուզէ տանտիրուհիին հետ խօսիլ, ճոնին կը հարցնէ. «Ո՞ր է կինդ»:

Ինծի համար շատ հետաքրքրական է, որ այդ այցելուները կը ճանչնային թէ՛ Աբրահամը եւ թէ՛ Սառան, բայց անոր մասին հարցուցին թէ՛ անոր անունը տալով եւ թէ՛ Աբրահամի հետ անոր ունեցած յարաբերութեան ակնարկելով:

Կարելի է, որ այդ այցելու հրեշտակները կ'ուզէին ըսել. «Աբրահամ, մենք եկած ենք քեզի յիշեցնելու, թէ Սառան քու կինդ է: Գիտեմ, որ այս եղանակին ձեր միասնական կեանքը տարբեր երեւոյթ մը առած է եւ որ դուն Հազարէն զաւակ մը ունեցար, բայց Սառան տակաւին քու կինդ է»: Թերեւս ասիկա կ'օգնէ հասկնալու, թէ Սառան ինչո՞ւ բաւարարուեցաւ այդ խօսակցութիւնը *լսելով*, փոխանակ այդ խօսակցութեան *միանար*: Անոնք հազուադէպ այցելուներ կ'ունենային իրենց թափառական կեանքին մէջ: Աբրահամը ցատկեց երբ տեսաւ երեք մարդիկ, որոնք իրենց վրանին մուտքին գտնուող ծառի մը մօտ կեցած էին: Երբ կը կարդանք այս պատմութիւնը Աստուածաշունչէն, այնպէս կը թուի, որ կերակուրը պատրաստելը քանի մը վայրկեան տեւեց, բայց այդպիսի խնճոյք մը կազմակերպելը ժամեր կը տեւէր:

Ինչո՞ւ մեզմէ ոեւէ մէկը պիտի գոհանար Աստուծոյ խոստումներուն մասին միայն լսելով, փոխանակ անձամբ մասնակցէր այդ խօսակցութեան: Թերեւս այդ հարցումը հարցնող այցելուն նայեցաւ իր շուրջը եւ ըսաւ. «Ահա՛ հաւատքի հայրը: Իսկ ո՞ր է հաւատքի մայրը»:

Եթէ յանկարծ հրեշտակներու խումբ մը կամ Տէրը այցելէր

մեր տունը, եւ ճոնը ճաշի հրաւիրէր զիրենք, ճոնը պիտի ստիպուէր ուժով զիս մեր հիւրասենեակէն դուրս հանել, քանի որ ես պիտի չուզէի հոնկէ ելլել: Անկեղծ ըսած, այս հարցը բնաւ պիտի չունենայինք մեր տան մէջ: Ճոնին հիւրերը իմ հիւրերս են եւ իմ հիւրերս ճոնին հիւրերն են: Կրնամ ակեցնել, որ եթէ որեւէ պատճառով ես այդ սենեակին մէջ չըլլայի եւ յանկարծ լսէի, որ անոնք իմ մասիս կը խօսէին, անոնց կը ստիպէի, որ զիս անմիջապէս ներս առնեն:

Ես որեւէ պատճառ չունիմ հաւատալու, որ Սառայէն խնդրեր էին, որ այդ տեղէն հեռանայ, կամ՝ որ Աբրահամը թոյլ չէր տուած անոր, որ իրենց միանայ: Ես ինձի հարց կու տամ, թէ արդեօք Սառան ինք ինքզինք մեկուսացուցած էր բոլորէն: Այս հարցը կը յառաջանայ, երբ մարդիկ այնքան խոր հիասթափութիւն կ'ապրին, որ կը մոռնան, թէ ո՛վ են իրենք: Նոր յոյսը կրնայ ցաւ պատճառել: Ուստի անոնք կը պահուրտին, յետոյ՝ կը խնդան, յետոյ՝ կը ստեն:

Անկախ անկէ, թէ Սառան ինչո՞ւ հեռուէն կը հետեւէր այդ իրադարձութեան, Աստուած վերադարձուց զայն զինք շրջապատող իրականութեան: Կը հաւատամ, որ ատիկա սկսաւ թէ՛ Աբրահամին եւ թէ՛ Սառային յիշեցնելով, որ Սառան տակաւին Աբրահամին կիներ էր: Այս յայտարարութեան նպատակն էր՝ Սառայէն հեռացնել իր մրցակիցը՝ Հագարը, եւ նոյն ատեն բոլորին յիշեցնել, թէ ո՛վ էր Սառան: Սառան իշխանուիին էր:

## **Ինչո՞ւ Պէտք էր Աբրահամին Հարցնել**

Յաջորդ հարցը, որ ուշադրութիւնս գրաւեց այս պատմութեան մէջ, այն էր, որ Սառան էր խնդացողը, բայց Աբրահամին էր, որ այս հարցումը հարցուեցաւ:

*Տէրը Աբրահամի ըսաւ. «Ինչո՞ւ Սառա խնդաց' ըսելով. «Միթէ ի՞րապէս պիտի ծնանիմ, ես որ ծերացած եմ»» (Ծնունդներու 18.13, շեշտադրումը՝ մեր կողմէ):*

Ինչո՞ւ պէտք էր Աբրահամին հարցնել Սառային ըրածին մասին: Երբ ասիկա կը տեսնեմ, ինձի այնպէս կը թուի, որ կարծես Սառան տեղեակ չէր Ծնունդներու 17-րդ գլուխին խօսակցութենէն: Թերեւս Աբրահամը տակաւին կը մտածէր եւ կը փորձէր հասկնալ Աստուծոյ իրեն ըսածը: Թերեւս ան չուզէր Սառային ըսել: Երբեմն ճո՞նը եւ ես կը մոռնանք կարգ մը բաներ իրարու պատմելու: Բայց թերեւս անոնք խօսած էին այդ մասին եւ չէին հաւատացած այդ խոստումին: Բայց մէկ բան յստակ է. Սառան իր ներսիդին չէր սնուցանած որդի ունենալու խոստումը: Պատգամաւորները Աբրահամին հարցուցին.

Միթէ Տիրոջ համար դժուարին բան մը կ'այ: Յաջորդ տարի՝ մօտաւորապէս այս ատեն, քեզի պիտի վերադառնամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ: (Ծնունդներու 18.14)

Մէկ տարիէն Սառան որդի մը պիտի ունենար: Ինձի համար ծիծաղելի է, որ Սառան ստեց՝ ուրանալով, որ ինք խնդացած էր, երբ հարցումը նոյնիսկ իրեն ուղղուած չէր: Հարցումը Աբրահամին ուղղուած էր: Ինձի համար նաեւ շատ մխիթարական է, որ մեր Հայրը՝ յաւիտենական ուխտի Աստուածը, լսեց անոր լուռ խնդուքը, քանի որ ատիկա ինձի կը վստահեցնէ, որ Ան նաեւ կը լսէ լռութեան մէջ լացող սիրտը:

Շատ մեծ տարբերութիւն կայ գաղափարի մը վրայ խնդալուն եւ ուրախութեան խնդուքին միջեւ: Սառային կեանքը խնդութէ զուրկ էր, բայց Իսահակին ծնունդը ամէն բան պիտի փոխէր: Աբրահամը եւ Սառան միասին սկսած էին իրենց ճամբորդութիւնը, եւ անոնք ծնունդ պիտի տային խոստումին, երբ սորվէին անգամ մը եւս միասին խնդալ: Խոստումներուն իրականացման համար կը պահանջուի, որ ամուսիններ եւ կիներ, եղբայրներ եւ քոյրեր, տղամարդիկ եւ կանայք իրարու հետ հաղորդակցին: Չափազանց երկար ժամանակէ ի վեր կիները պահուրտած եղած են, բայց Աստուած կ'ուզէ, որ գիտնաս, թէ Ինք կ'ուզէ, որ դուն ալ մասնակցիս այդ

խօսակցութիւններուն: Աստուծոյ համար կարելոր էր Սառային ձգտումը եւ խորութիւնը՝ Իր ուխտի ժողովուրդը ձեւաորելու համար: Գաղատացիներուն 4.22,23-ին մէջ կը կարդանք.

Գրուած է, թէ Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ աղախինէն, միւսը՝ ազատ կնոջմէն: Բայց ան որ աղախինէն էր՝ մարմինին համեմատ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն էր՝ խոստումով:

### Ո՞վ կը Պաշտպանէ Սառան

Նախքան Իսահակը իր ձեռքերուն մէջ առնելը, տեղի ունեցաւ զրոյց մը եւս, որուն Սառան նոյնպէս որոշեց չմասնակցիլ: Ասիկա կատարեալ առեղծուած մըն է ինծի համար, բայց այս անգամ, երբ ան լուռ մնաց եւ ստեց, Աստուած միջամտեց.

Աբրահամ իր կնոջ՝ Սառայի մասին ըսաւ. «Ան քոյրս է»:  
Գերարայի թագաւորն ալ՝ Աբիմելէք՝ մարդ զրկեց եւ առաւ Սառան:

Աստուած գիշերը՝ երազի մէջ՝ Աբիմելէքի եկաւ ու անոր ըսաւ. «Ահա՛ այդ կնոջ համար՝ որ դուն առիր, պիտի մեռնիս. քանի որ ան ամուսին ունի» (Ծնունդներու 20.2-3):

Ուրախ եմ, որ Աստուած խօսեցաւ անոր փոխարէն, քանի որ այնպէս կը թուի, որ երկուքն ալ գոհ էին լուռ մնալով: Անոնց ըրածը սխալ էր: Աստուած *նոր* բան մը կ'ընէր, բայց անոնք տակաւին *հին* ձեւով կը վարուէին իրարու հետ: Այս եղբօր եւ քրոջ տարբերակը երբեք ճիշդ չէր, բայց հիմա աւելի սխալ էր, քան առաջ: Սառային անունը փոխուած էր, եւ հիմա ան Իսահակով յղանալու շեմին էր:

Յստակ է, որ Սառան անզուգական գեղեցկութիւն ունեցող կին մըն էր ... բայց ան իննիսուն տարեկան էր: Ան կան

չափազանց դադաղ կը ծերանար, կամ Աստուած արմատապէս նորոգած էր անոր երիտասարդութիւնը՝ զայն պատրաստելով Իսահակին համար: Ամէն պարագայի, Աբրահամ, գիտնալով, որ Սառան պիտի յղանար եւ այդ տարուան ընթացքին իրենց մանուկը պիտի կրէր, պէտք էր իր կինը պաշտպանէր Աբիմելէք թագաւորին հետապնդումներէն: Այլապէս Աբրահամ ինչպէս վստահ պիտի ըլլար, որ Սառային կրած մանուկին հայրը ինքն էր: Շատ յաճախ մենք կը կարծենք, որ լռութիւնը ենթարկուիլ է, բայց այդպէս չէ ... անիկա ստել է: Ենթարկուիլ կը նշանակէ գիտնալ ինչպէս եւ երբ խօսիլ: Ասիկա այն դէպքերէն մէկն էր, երբ պէտք էր խօսիլ:

Այդ տարիքին թերեւս Աբրահամը եւ Սառան եղբօր եւ քրոջ պէս կ'ապրէին իրարու հետ, բայց այդ օրերը այլեւս անցած էին: Եթէ Սառային անուան փոփոխութենէն առաջ անոնք մտերիմ յարաբերութիւններ չունէին, յստակ էր, որ այդ յարաբերութիւնները պէտք է սկսէին հրեշտակային այցելութենէն ետք: Սառայի եւ Աբրահամի նորոգուած անունները պէտք է վերածուէին նոր մտերիմ յարաբերութիւններու: Երկուքն ալ հասկցան, որ ան պիտի յղանար եւ մէկ տարիէն առաջ մանուկ մը պիտի ունենար: Սառան լուռ մնաց, երբ այս կէս ճշմարտութիւնը ըսուեցաւ, բայց հետաքրքրական է, թէ անոնք ինչ կը մտածէին:

Եւ Աբիմելէք Աբրահամը կանչեց եւ անոր ըսաւ. «Մեզի ինչ ըրիր. ես քեզի դէմ ինչպէս մեղանչեցի, որ իմ վրաս ու թագաւորութեանս վրայ մեծ մեղք մը բերիր. չկատարուելիք գործեր կատարեցիր ինձի հանդէպ»: (Ծնունդներու 20.9)

Երբ Աբրահամ բացատրեց իր ստելու կասկածելի պատճառները, Աբիմելէք թագաւորը, այդ ամէնով հանդերձ, օրհնեց Աբրահամը եւ զիրենք հրաւիրեց, որ իր երկրին մէջ բնակին: Աբրահամ աղօթեց Աբիմելէքին համար, եւ Աստուած բացաւ անոր տան բոլոր կիներուն արգանդները:



Հեզնական է, որ Աբրահամ աղօթեց ճիշդ այն բանին համար, որ ինք տակաւին պիտի տեսնէր իր սեփական կեանքին մէջ: Աստուած պաշտպանեց Սառան նոյնիսկ երբ անոր ամուսինը իր ապահովութիւնը անոր ապահովութենէն վեր դասեց: Աստուած երազով խօսեցաւ թագաւորի մը հետ, որպէսզի պաշտպանէ զինք, քանի որ ան թանկարժէք գանձ մըն էր Իրեն համար: Մենք կրնանք Աստուծոյ վստահիլ մեր ապահովութիւնը եւ հաւատալ, որ Ան պիտի իրականացնէ Իր խոստումը մեր կեանքին մէջ, նոյնիսկ եթէ մեզի ամենամօտիկ մարդիկը, նոյնիսկ մեր ամուսինները մեզ հիասթափեցնեն կամ դժբախտութեան ատեն մեզ լքեն:

## Ազատ Կինը եւ Ստրուկ Կինը

Ա.Պետրոսի 3.6-ին մէջ կը կարդանք. «Եւ հիմա դուք անոր ճշմարիտ դուստրերն էք, եթէ բարիք գործէք եւ թոյլ չտաք, որ որեւէ բան սարսափեցնէ ձեզ (տեղի չտաք ջղացնցային վախերու կամ թոյլ չտաք, որ անձկութիւնները տկարացնեն ձեզ)» (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Էյ.Էմ. Փի.Սի* տարբերակէն): Սառան երբեք աղջիկ չունեցաւ, բայց այս համարը կ'ըսէ, թէ մենք կրնանք անոր ճշմարիտ դուստրը ըլլալ: Մենք խոստումի դուստրեր ենք՝ ազատ կնոջ դուստրերը, երբ թոյլ չենք տար, որ վախը կառավարէ մեր արարքները եւ թոյլ չենք տար, որ մտահոգութիւնը գողնայ մեր քաջութիւնը:

Սառան ազատ կինն էր, որ կ'արժեւորէր եւ կը պատուէր զԱստուած եւ իր ամուսինը: Միւս կողմէ, Հագարը ստրուկ կին մըն էր, որ կ'անարգէր իր տիրուհին՝ Սառան: Հագարին որդին՝ Իսմայէլը, իր մօրը օրինակին հետեւեցաւ եւ սկսաւ ծաղրել Իսահակը: Սառան հասկցաւ, որ ստրկութիւնը եւ ազատութիւնը պէտք էր իրարմէ բաժնուէին: Մենք ալ պէտք է հասկնանք ասիկա: Գաղատացիներուն 4.30-ին մէջ կը կարդանք. «Վտարէ՛ այդ աղախինը եւ անոր որդին, քանի որ աղախինին որդին ժառանգորդ պիտի չըլլայ ազատ կնոջ որդիին հետ»:

Աղախինին որդին ժառանգութենէն զրկուեցաւ: Ան կորսնցուց իր հայրը եւ ընտանիքը: Թէ՛ ազատ կնոջ եւ թէ՛ ստրուկ կնոջ ամուսինը նոյն մարդն էր: Երկուքն ալ որդի ունէին: Բայց անոնց յարաբերութիւնները Աբրահամի հետ իրարմէ շատ տարբեր էին: Հազարը կը խորհրդանշէր մարմնաւոր բնոյթը եւ անոր ստրկութիւնը: Սառան կը խորհրդանշէր ազատութիւնը եւ խոստումը: Գաղատացիներուն 4.22-26-ը այսպէս կը նկարագրէ ասիկա.

[Յիշեցէք, որ] Աբրահամ երկու որդի ունէր, մէկը՝ աղախինէն, միւսը՝ ազատ կնոջմէն: Բայց ան որ աղախինէն էր՝ մարմինին համեմատ ծնած էր, իսկ ան որ ազատ կնոջմէն էր՝ Աստուծոյ խոստումով: Ասիկա կը ներկայացնէ այն բանը, որուն մասին կը խօսինք հիմա: Այս երկու ծնունդները կը խորհրդանշեն Աստուծոյ հետ յարաբերութիւն ունենալու երկու ձեւեր: Մէկը Սինա լեռնէն է, որ Արաբիայի մէջ է: Անիկա կը համապատասխանէ այն բոլոր բաներուն, որոնք այժմ տեղի կ'ունենան Երուսաղէմի մէջ՝ ստրկական կեանք, որուն զաւակները ստրկութեան մէջ են: Ասիկա Հազարին ճամբան է: Ի հակադրութիւն՝ կայ անտեսանելի Երուսաղէմ մը, ազատ Երուսաղէմ մը, որ մեր բոլորին մայրն է. ասիկա Սառային ճամբան է (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Կը սիրեմ «ասիկա Սառային ճամբան է» արտայայտութիւնը: Այս անապական գեղեցկութիւն ունեցող կինը կը խորհրդանշէր այն չճերացող, յաւերժական եւ մշտադալար գեղեցկութիւնը, որ Քրիստոսի մէջ է: Դուն խոստումի մը իբրեւ արդիւնք ծնած ես:

Աբրահամը՝ հաւատքի հայրը, եւ իր իշխանուիին՝ Սառան Քրիստոսի եւ Անոր հարսին՝ եկեղեցիին խորհրդապատկերներն են: Մենք կանչուած ենք Քրիստոսէն կախեալ ըլլալու եւ Անոր հետեւելու: Ան մեր զլուխն է, եւ բոլոր հաւատացողները ենթակայ են Անոր տիրութեան,

առաջնորդութեան եւ իշխանութեան: Բայց մենք պատճառ չունինք վախնալու: Ան մեր Ստեղծիչն ու ամուսինն է: Ան Իր սիրով ձեւաւորած է մեզ:

## Կը Բաւէ Պահուըտիս

Եթէ Աստուած փափաք մը դրած է մէջդ, քեզի պիտի տայ զօրութիւնը, որ կրես զայն եւ ծնունդ տաս անոր: Այս զօրութիւնը կու գայ երբ Աստուած կ'այցելէ քեզի Իր խոստումով: Թերեւս այս էջերը կը նմանին Սառային այցելուներուն: Թերեւս այս խօսքերը եկած են քեզի յիշեցնելու, թէ ո՛վ ես դուն:



**Աստուծոյ  
համար  
կարելոր էր  
Սառային  
ձգտումը եւ  
խորութիւնը՝  
Իր ուխտի  
ժողովուրդը  
ձեւաւորելու  
համար:**

Իրականութեան մէջ ոչինչ կրնայ փոխարինել Աստուծոյ քեզի ուղղած խօսքը լսելը: Պէտք է սկսիս Աստուծոյ հետ զրուցել քու կեանքիդ եւ վախճանիդ մասին: Մենք պէտք ունինք քու կեանքիդ մէջ գտնուածին: Այսօր ժամանակը չէ, որ կիները պահուըտին: Ժամանակն է, որ դուրս վազենք, երբ մեր անունները կը տրուին, եւ պոռանք. «Ես հո՛ս եմ: Ես հո՛ս եմ, եւ կ'ուզեմ լսել»:

Եթէ կ'ուզես ապրիլ անզուգական կեանք մը, պէտք է դադրիս պահուըտելէ եւ մասնակցիս այդ գրոյցին:

Մէկ տարուան մէջ շատ բան կրնայ պատահիլ: Սառային համար այդ տարին այնպիսի տարի մը եղաւ, որ նախորդ տարիներէն ոչ մէկուն չէր նմաներ: Ատիկա զարմանալի չէ, քանի որ Աստուած ծրագրած էր ատիկա սկիզբէն մինչեւ վերջ՝ Իր այցելութիւններով:

Գիտե՛ս, որ նոյնը կրնայ պատահիլ քու կեանքիդ մէջ: Այս տարին կրնայ սկսիլ քու պահուըտած տեղիդ մէջ՝ խնդալով եւ

ստելով, եւ վերջանալ Աստուծոյ խոստումը ստանալով:

Կրնայ ըլլալ, որ կը մտածես. «Մէկ վայրկեան, ես պիտի չստեմ»:

Դուն կը ստես, եթէ այս արտայայտութիւններէն որեւէ մէկը կ'ըսես.

Շատ ուշ է:

Ես շատ երիտասարդ եմ:

Ես շատ տարեց եմ:

Ես չեմ կրնար ատիկա ընել:

Ես չափազանց շատ սխալներ գործեր եմ:

Ամէն բան լաւ կ'ընթանայ կեանքիս մէջ:

Ես երազի պէտք չունիմ:

Մի՛ ստեր՝ ըսելով, որ աւելիին չես ձգտիր: Մի՛ ուրանար երազներդ: Եթէ այդպէս ընես, սկիզբը կը խնդաս անոնց վրայ, եւ յետոյ կը ստես՝ փակելով սիրտիդ դուռը: Բանց սիրտդ եւ ընդունէ՛ բոլոր հրաշքները, որոնց համար Աստուած կը կանչէ քեզ: Փոխանակ ծաղրես Անոր հրաւերը՝ ըսելով, որ մենք չենք կրնար ապրիլ հրաշքներով լեցուն աստուածային կեանք մը, եկրոր ուրախանանք այն հրաշքներուն համար, զորս պիտի տեսնենք: Մենք կը նմանինք մոխրիկին, իսկ այս աշխարհը կարելի է նմանցնել մեր չար խորթ քոյրերուն: Դեռ ինչքան ժամանակ մենք պիտի շարունակենք լալ երեկուայ մոխիրներով լեցուն վառարանին կողքին, երբ Իշխանը մեր դրան առջեւ կանգնած է: Դուն ունիս ամէն բան, որուն պէտք ունիս, որպէսզի ապրիս այնպիսի կեանք մը, որ միայն Ան կրնայ երազել քեզի համար: Ինչո՞ւ կ'արտօնես, որ քու փոխարէնդ ուրիշ մէկը կամ նոյնիսկ քու անցեալդ պատասխանէ այդ հրաւերին:

Ուստի ինչէ՛ն կը պահուրտիս:

Ո՞ր երազը կը ծաղրես այսօր: Ո՞ր յոյսը: Գիտե՞ս կոկորդո սեղմող այն ջղային խնդուքը, որ կը սկսի, երբ կը փորձես

ծածկել այն բանը, զոր լուրջի առնելը հիմա շատ ցուրտ պիտի պատճառէ քեզի: Մտիկ ըրէ: Դուն ոչ ատակ ես եւ ոչ ալ անատակ ես այդ խոստումը ստանալու: Դուն այդ խոստումը ստացած ես, որովհետեւ Քրիստոս տուած է զայն քեզի:

Կամ թերեւս այլեւս ցուրտ չկայ քու կեանքիդ մէջ: Քեզ տանջող ցուրտ հեռացած է, եւ միայն թմրութիւն մնացած է: Արդեօք կեանքիդ մէջ կայ մաս մը, որուն եթէ դպչի Աստուած, կու լաս: Շատ-շատերու կեանքը պարապ է, ուստի անոնք կը խնդան՝ փորձելով ծաղրել յոյսը:

Թերեւս պատճառը այն է, որ որոշ չափով դուն կը նմանիս քու հօրդ Աբրահամին, երբ կը հաւատաս, որ որոշ բաներ շատ դժուար են Աստուծոյ համար: Արդեօք Անոր համար դժուար է կեանքդ իմաստալից դարձնելը:

Արդեօք արդէն շատ ուշ է, որ Ան կեանքդ սիրով լեցնէ: Ինչ է այն բանը, որ քու կարծիքովդ Աստուծոյ համար շատ դժուար է, որ կարենայ ընել քեզի համար:

Գաղատացիներուն 4.4-7-ին մէջ կը կարդանք.

Բայց երբ հասաւ Հայր Աստուծոյ կողմէ որոշուած ժամանակը, Աստուած զրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ, Օրէնքին պայմաններուն տակ ծնաւ, որպէսզի փրկէ մեզ՝ Օրէնքին կողմէ առեւանգուածներս: Այսպիսով, մենք ազատ արձակուեցանք, որպէսզի ստանանք մեր օրինաւոր ժառանգութիւնը: Կրնաք վստահութեամբ ըսել, որ հիմա դուք լիովին որդեգրուած էք՝ իբրեւ Անոր զաւակները, որովհետեւ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց Իր Որդիին Հոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: Արդեօք Աստուծոյ հետ մտերիմ հաղորդակցութեան պատիւը ցոյց չի տար, որ դուն գերի չես, այլ՝ զաւակ: Եւ եթէ զաւակ ես, ուրեմն նաեւ ժառանգորդ ես, եւ քեզի համար լիովին հասանելի է այդ ժառանգութիւնը (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Դուն առեանգուած ժառանգորդ մըն էիր, որ փրկագինով ազատեցար: Ամէնէն փառաւոր եւ խիզախ բաներէն մէկը, որ կրնաս ընել, հետեւեալն է. ապրիլ այն բոլոր բաներուն լիութիւնովը, որ Յիսուսի մահը գնեց քեզի համար: Դուն կը յայտնաբերես այն բոլոր բաները, որոնք քեզի կը պատկանին, երբ Անոր Խօսքը կը կարդաս, կարծես անիկա անձնական նամակ մը ըլլար, եւ ոչ թէ՛ պատմական տեղեկութիւն մը: Դուն կը հաստատես Անոր Խօսքը քու սիրտիդ մէջ, երբ կը խօսիս այդ Խօսքը: Անկախ անկէ, թէ դուն կը տեսնեն կամ կը զգան ատիկա, դուն ես այն, ինչ որ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, որ ես եւ ունիս այն բոլոր բաները, որ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ քու մասիդ: Նոյնիսկ այսօր՝ հիմա, Աստուած նոր անուն մը կու տայ քեզի, Ան կը կատարէ Իր խոստումները եւ կը հաստատէ քու դիրքդ՝ իբրեւ Աստուծոյ զաւակ: Աստուծոյ կոչումն ու նպատակը քու կեանքիդ համար եւ քու մասիդ խօսած խօսքերը չեն սահմանափակուիր քու ներկայ կացութեամբդ: Անոր խոստումը քեզի համար անզուգական է: Մի՛ պահուըտիր անկէ:

Ընդունէ՛ այդ խոստումը:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Գիտէիր, որ Քրիստոսի մէջ գտնուած խոստումներուն միջոցով Աստուած հրաւիրած է մեզ, որ Իր Որդիին աստուածային բնութեան մաս կազմենք հիմա:
2. Կեանքիդ մէջ կայ որեւէ մարզ կամ յարաբերութիւն, որ մշտական կռիւի աղբիւր է, որմէ պէտք է բաժնուիս կամ կարգաւորես զայն, որպէսզի Աստուած կարենայ իրականացնել Իր խոստումը քու կեանքիդ մէջ:
3. Կը պահուըտիս: Եթէ այո, ինչէն:
4. Դուն միայն լսողի՞ դերին մէջ ես այն խօսակցութիւններուն ընթացքին, որոնց մէջ Աստուած կ'ուզէ, որ քու մասնակցութիւնդ բերես: Ինչո՞ն:

5. Երբ լռութիւնը ենթարկուիլ կամ հնազանդութիւն չէ:
6. Կեանքիդ մէջ կայ խոստում մը, որ Աստուծմէ ստացած ես, որուն վրայ կը խնդաս եւ որուն մասին կը ստես:
7. Ինչ քայլեր կրնաս առնել, որպէսզի դադրիս դուրսէն ներս նայելու փորձեր ընելէն, եւ սկսիս գործօն եւ եռանդուն կեանք մը վարել:

## Չհամարձակի՛ս Բաղդատել

Բաղդատությունը ուրախության գողն է:  
ԹԷՆՏՈՐ ՌՈՒԶՎԵԼԹ

**Ա**յս գլուխը, հաւանաբար, պէտք է սկսի զգուշացումով: Ինչ որ պիտի կարդաս, անկեղծ եւ սրտաբաց կերպով պատմուած պատահար մըն է, որ շատ բան պիտի բացայայտէ քեզի համար: Հետեւեալ պատմութիւնը դժբախտաբար իրական է եւ ամօթալի կերպով ծիծաղելի պատմութիւն մըն է իմ մասիս: Յուսամ ձեզմէ ոչ ոք տառապած է այն ժամանակաւոր մտային խանգարումէն, որուն մասին պիտի պատմեմ հոս, բայց եթէ այդպիսի փորձառութիւն մը ունեցած ես ... դուն մինակ չես: Եկուր սկսի՛նք:

Օրս սկսաւ շատ անմեղ ձեւով: Խոհանոց գացի խալաթով (*ռոպով*) փաթթուած, զոր հագած էի գիշերանոցիս վրայէն, որպէսզի անցընէի ցուրտ Յունուարի առաւօտ մը եւս Քոլորատոյի մէջ: Ճոնը արդէն մէկ ժամէն աւելի եղած էր, որ արթուն էր եւ լուռ կը կարդար իր գրասենեակին մէջ: Ես անկանոն կերպով այսդին անդին կը պտըտէի խոհանոցին մէջ իմ *էսփրեսոյի* մեքենայիս առջեւ՝ մինչ երկու որդիներս



Կը պատրաստուէին տունէն դուրս ելլելու: Օսթընը գործի կ'երթար, իսկ Ալեքը՝ դպրոց: Երբ դուրսի դուռը զոցուեցաւ, բազմոցին վրայ տեղաւորուեցայ, որպէսզի երկրորդ անգամ խմէի *էսփրեսոյի* եւ հարած սերի կատարեալ համադրութիւնը՝ մաքուր *քաքաուի* եւ կասիայի տաշեղներով, չգտուած շաքարի փոշիով եւ պտղունց մը Կոյանայի պղպեղի փոշիով (*քայէն*): (Կ'ուզէի այդպիսի սուրճ պատրաստել իմ բոլոր բարեկամներու համար): Ձմրան արեւը նոր կը բարձրանար մեր տան ետեւի բակին կողմէն: Ես կ'ծկուեցայ բազմոցին վրայ, որպէսզի դիտեմ, թէ ինչպէս վարդագոյն ճառագայթները կը հեռացնեն մուգ կապոյտ շուքերը: Այդ օրը չկար թռիչք, որուն պէտք էր հասնէի: Չկային առաւօտեան հանդիպումներ, որոնց համար պէտք էր լոգնայի: Կրնայի հանդարտ կերպով սկսիլ օրս՝ այնպէս, ինչպէս կ'ուզէի: Հառաչեցի եւ ասիերուս մէջ գրկեցի ալիքածե գաւաթը՝ պահպանելու համար այն տաքութիւնը, որ ամբողջ մարմինիս մէջէն կ'անցնէր: Կը զգայի ինչպէս արիւնը կը հոսէր դէպի ուղեղս. կատարելապէս հանդարտ էի:

Ճիշդ այդ պատճառով է, որ ես պէտք էր առնէի Աստուածաշունչս եւ ամենօրեայ ընթերցանութեան նիւթս, կամ պարզապէս այդպէս մնայի եւ վայելէի Աստուծոյ բարութիւնը ինծի հանդէպ:

Պէտք չէր հեռաձայնս բանայի: Հաւատա՛մ ... հիմա ես կը հասկնամ ատիկա: Բայց իմ տկար կողմերէս մէկը նաեւ իմ զօրութիւններէս մէկն է: Ես ընկերային ցանցերը կը տեսնեմ՝ իբրեւ բարեկամներու հետ կապ պահպանելու հնարաւորութիւն: Ընկերային ցանցերուն վրայ գտնուող գրառումները թերթելը կը նմանի սրտակից ընկերուիներու հետ սուրճ խմելուն: Մարդոց հետ կապուելու ձգտումը հիանալի է երբ անիկա կ'ըլլայ ճիշդ ժամանակին եւ ճիշդ տեղին մէջ, բայց ատիկա ո՛չ ճիշդ ժամանակն էր, ո՛չ ալ ճիշդ տեղը: Ես այն մարդոցմէ եմ, որոնք նախ՝ պէտք է հանդիպում ունենան սուրճին հետ, եւ յետոյ՝ Սուրբ Հոգիին հետ, մինչեւ մարդոց հանդիպիլը:

## Ցանկը

Թերթելով իմ *Թուիթթրի* էջս՝ նկատեցի գրառումներու շարք մը, որուն մէջ կ'երեւէին գրեթէ բոլոր բարեկամներուս անունները: Մարդիկ, զորս կը ճանչնայի, կը սիրէի, եւ նոյնիսկ անոնք, որոնց հանդէպ հոգատար եւ պաշտպանողական էի, շնորհակալութիւն կը յայտնէին մէկու մը, որ իրենց անունը այդ ցանկին մէջ դրած էր: Բայց ասիկա պարզ ցանկ մը չէր: Ասիկա ՇԱՏ ԿԱՐԵԻՈՐ ՅԱՆԿ մըն էր. եւ ես շատ կ'ուզէի այդ ցանկին մաս կազմել:

Լաւ, նախքան շարունակեմ, պէտք է քեզի որոշ տեղեկութիւն տամ այդ մասին:

Խօսքս կը վերաբերի ցանկի մը, որ ամէն տարի կը վերակազմուի եւ կը նորոգուի: Վերջին քանի մը տասնամեակներուն ընթացքին տարբեր կազմակերպութիւններ եւ անհատներ այդ «ցանկը» պատրաստած են:

Այդ տարի անհատ մը, եւ ոչ թէ կազմակերպութիւն մը կազմած էր այդ ցանկը: Անոր հեղինակը կին մըն էր ... մէկը, որուն մասին լսած էի, բայց զինք չէի ճանչնար: Բայց ատիկա չէր նշանակեր, որ ես չէի ուզեր անոր ցանկին մէջ ըլլալ:

Անոր մէջ գտնուած անունները աչքէ անցուցի: Քանի որ ցանկը այբբենական կարգով դրուած էր, եւ իմ մականունս «Պի» տառով կը սկսի, ես շատ արագ հասկցայ, որ անունս նորէն ցանկին մէջ չէր:

Իրականութեան մէջ ես երբեք այդ ցանկին վրայ չեմ եղած: Բայց ըստ երեւոյթին, այս անգամ գրեթէ ամէն մարդ, որ կը ճանչնամ, այդ ցանկին վրայ էր: Այդ ցանկին մէջ այնպիսի մարդիկ կային, զորս ես բարձրացուցած եմ ծառայութեան մէջ: Կին մը, որ իմ գիրքերս սպաներէնի կը թարգմանէր, ան ալ այդ ցանկին վրայ էր:

Թերեւս դուն քեզի հարց կու տաս ... ինչ ցանկ էր ատիկա, եւ ինչո՞ւ այդքան կարեւոր էր ինձի համար:

Ատիկա Ամերիկայի հարիւր ամենայայտնի կին-  
ճառայողներուն ցանկն է:

Միրոս սկսաւ արագ տրոփել: Միտքէս ծիծաղելի  
հարցումներ եւ բաղդատութիւններ կ'անցնէին: Ինչո՞ւ ես այդ  
ցանկին մէջ չէի:

Արդեօք որովիետեւ ես բաւարարաչափ նիւթեր չունէի՞ իմ  
անձնական կայքիս (*այլոկիս*) մէջ:

Միտքս սկսաւ պրպտել ...

Ինչո՞ւ մէկ միլիոնէ աւելի ծախուած գիրքերը եւ աւելի  
քան երկու տասնամեակ շարունակ ճամբորդելը եւ կիներու  
ճառայելը զիս չարժանացուցին այդ ցանկին մէջ ըլլալու:

Ես լաւ ընկեր եմ: Արդեօք հաշիւի չ'առնուի՞ր այն  
իրականութիւնը, որ աւելի քան երեսուն տարիէ ի վեր  
ամուսնացած եմ, չորս տղայ մեծցուցած եմ եւ այնպիսի  
ընտանիք մը ունիմ, ուր բոլորը կը սիրեն զիրար:

Ես կարդացի ցանկին կողքին գտնուող յետգրութիւնը: Ըստ  
երեւոյթին, այդ ցանկը կազմող կիները կը խոստովանէր, որ ինք  
թերեւս անտեսած էր որոշ կիներ, որոնց անունները պէտք  
է ըլլային այդ ցանկին մէջ, բայց ... չկային: Ատիկա շտկելու  
համար ան տեղ յատկացուցած էր՝ յաւելումներու համար:

Շարունակեցի կարդալ:

*«Սխալ կ'ըլլայ, եթէ իմ անունս աւելցնեմ»:*

Ի՞նչ կը մտածէի: Անշուշտ սխալ պիտի ըլլար:

*«Թերեւս իմ օգնականէս կը խնդրեմ, որ իմ անունս  
աւելցնէ»:* Հասկնալով, որ ես գրեթէ հասած էի անմտութեան  
աստիճանի մը, որ յատուկ է միջնակարգ դպրոցի  
աշակերտուհիներուն՝ ամուսինիս քով գացի:

Ներխուժեցի անոր գրասենեակէն ներս՝ թանձր փոթորիկ  
մը ստեղծելով, եւ ըսի ողբալի ձայնով մը.

– Ճո՛ւն, ես այդ ցանկին մէջ չեմ ... նորէն:

Սիրելի ամուսինս, որ Աստուածաշունչ կը կարդար,

իր ընթերցանութեան յատուկ ակնոցներուն տակէն ինծի նայեցաւ: Շփոթած էր: Ան ոչինչ գիտէր այդ ցանկին մասին: Ձեռքերս աջ ձախ շարժելով՝ սկսայ բացատրել, թէ ինչ ցանկի մասին կը խօսէի: Ատիկա ոչ մէկ տպաւորութիւն ձգեց անոր վրայ: Ես պատմեցի, թէ որո՞նք կային այդ ցանկին մէջ, եւ յայտնեցի իմ բացայայտ նեղութիւնս՝ այդ ցանկին մէջ չըլլալուս համար: Ան իր աթոռէն չշարժեցաւ: Մէկ կողմ դրաւ իր գրիչը, որով Աստուածաշունչէն բառեր կ'ընդգծէր եւ բարձրացուց իր յօնքերէն մէկը: Երբ զայրոյթով արտասանուած ճառս աւարտեցի, ան հանդարտօրէն ինծի առաջարկեց, որ քանի մը հատուած կարդամ Աստուածաշունչէն:

Ես իրմէ ուրիշ պատասխան մը կը սպասէի: Կ'ուզէի, որ ըսէր. «Լիսս, շատ կը ցափմ քեզի համար: Իրաւունք ունիս, սարսափելի սխալ մը եղած է: Բէր հեռաձայնս եւ ես կ'աւելցնեմ քու անունդ այդ ցանկին վրայ»: Բայց այդպէս չըսաւ:

Ես հակաճառեցի. «Ես պիտի չկարդամ այդ հատուածները: Հիմա ես կրնամ գոց ըսել զանոնք: Հիմա ես ուրիշ բանի պէտք ունիմ քեզմէ: Չե՞ս հասկնար: Ես արդէն յիսուն տարեկանը անց եմ եւ իմ անունս երբեք այդ ցանկին վրայ պիտի չըլլայ»:

Ճոնը հարցուց. «Ո՞վ կազմեց այս ցանկը»: Ես ըսի այդ կնոջ անունը ... բայց ան չճանչցաւ զայն:

«Իսկ դուն կը ճանչնամ այդ կինը»:

Գլխու շարժումով «ո՛չ» պատասխանեցի: Ան դանդաղօրէն գլուխը շարժեց եւ դարձեալ նայեցաւ իր Աստուածաշունչին՝ կրկնելով իր առաջարկած հատուածները եւ անոնց վրայ ուրիշ համար մըն ալ աւելցնելով:

Հասկցայ, որ կարեկցանք պիտի չստանայի իմ ամուսինէս: Դուրս վազեցի անոր գրասենեակէն՝ գոռալով. «Ես պէտք չունիմ այդ աստուածաշնչական համարները կարդալու, որպէսզի գիտնամ, որ ես սխալ եմ: Ես գիտեմ, որ սխալ եմ: Բայց նոյնիսկ երբ գիտեմ, որ սխալ եմ, չեմ զգար, որ ասիկա ճիշդ է»:

Ես կին զրուցակիցի մը պէտք ունէի: Դուրս ելայ մեր

տան առջեւ գտնուող տախտակէ գետինով բացօդեայ տեղը գիշերանոցով՝ զէրոյէն վար ջերմաստիճանին, որպէսզի ամուսինս անգամ մը եւս չլսէր իմ զայրոյթով լեցուն ճառս: Գոնէ հեռաձայնեցի մէկու մը, որ ինծի ճշմարտութիւնը պիտի ըլլեր, ոչ թէ պարզապէս ինծի պիտի կարեկցէր: Պատմութիւնը սկսայ հրաժարումով. «Գիտեմ, որ սխալ եմ ...», եւ ցանկին մասին ամբողջ պատմութիւնը պատմեցի:

- Իսկ իմ անունս կայ ցանկին մէջ, - հարցուց զրուցակիցս:
- Անշուշտ: Ինձմէ զատ ամէն մարդ կայ այդ ցանկին մէջ:
- Որո՞ն հոգը, - ըսաւ ան:
- Ըստ երեւոյթին, իմ հոգս է, եւ անշուշտ քու հոգդ չէ, քանի որ անունդ ցանկին մէջ է,- հակաճառեցի: Յետոյ խոստովանեցայ.
- Չեմ ուզեր այդ մասին հոգ ընել, բայց չեմ կրնար: Գիտեմ, որ ըրածս սխալ է, պարզապէս կ'ուզեմ մէկու մը հետ խօսիլ այդ մասին: Ճոնը արդէն ինծի առաջարկեց Աստուածաշնչական հատուածներ կարդալ ...

Լռութիւն:

Երբեւէ պատահա՞մ է, որ դուն քեզի դուրսէն կը նայիս եւ խելագար կին մը կը տեսնես:

Ես ճիշդ այդ վիճակին մէջ էի: Ինչքան կը շարունակէի, այնքան խօսքերս ւելի ծիծաղելի կը թուէին: Կ'ուզէի արագօրէն վերջացնել այդ հեռաձայնային խօսակցութիւնը, որ երանի՜ թէ երբեք ըրած չըլլայի: Բերնէս հետեւեալ բառերը փախցուցի.

- Կ'ուզեմ այդ բոլորը քեզի խոստովանիլ: Կ'ուզեմ այս վիճակէն ազատիլ:

Ան սրտանց ինծի հետ համաձայնեցաւ (որ ես սխալ էի), եւ մենք աւարտեցինք մեր խօսակցութիւնը:

Ես գիտէի, թէ ինչն էր ճիշդը: Ամուսինս ալ գիտէր, թէ ինչն էր ճիշդը: Ընկերուիս ալ գիտէր, թէ ինչն էր ճիշդը: Բայց տակաւին՝ կը զգայի, որ սխալ էր ատիկա:

Ես բարկացած էի այդ ցանկին ստեղծման գաղափարին պատճառով, եւ զայրոյթ կը զգայի այդ տարուան հեղինակին հանդէպ: Ո՞վ այդպիսի բան մը կ'ընէ: Երբ նորէն կարդացի այդ ցանկը, տեսայ, որ կային ուրիշ շատ կիներ, որոնց անունները պէտք էր ըլլային այդ ցանկին մէջ, բայց հեղինակը հաշուի չէր առած զանոնք ... Թերեւս ես պէտք էր ցանկ մը կազմէի: Կրնայի զանոնք այդ ցանկին մէջ դնել: Վերջապէս շատ աւելի մեծ թիւով մարդիկ ինձի կը հետեւին *Ֆէյսպուքի* եւ *Թուիթթըրի* վրայ, քան այդ ցանկին հեղինակին: Ինչն էր, որ վաւերական կը դարձնէր անոր ցանկը: Մօտաւորապէս տասը երկվայրկեան մտածեցի այդ մասին: Անկարելի էր, որ ատիկա ընէի:

Մարդիկը ցանկագրելու փորձերս լաւագոյն պարագային սահմանափակ պիտի ըլլային, եւ անկախ անկէ, թէ որքան ուշադրութեամբ կը կազմէի այդ ցանկը՝ անպայման մէկը պիտի մոռնայի: Արդեօք պիտի ուզէի՞ անոնց մէջ յառաջացնել այդ նոյն պայքարը, որուն մէջէն կ'անցնէի այդ պահուն: (Թէեւ կը կասկածէի, որ եթէ սխալմամբ մէկու մը անունը դրած չըլլայի այդ ցանկին մէջ, ան նոյնչափ անմիտ պիտի ըլլար, որքան ես էի վերջին կէս ժամուան ընթացքին):

Հեռաձայնս մէկ կողմ դրի, աչքերս գոցեցի, խոր շունչ մը առի, եւ հրաժարեցայ անկէ: Երբ արտաշնչեցի, լսեցի, որ Սուրբ Հոգին մեղմօրէն կը հարցնէր. «Լիսսն, դուն այդքան պիտի բարկանայիր այդ ցանկին համար, եթէ քու անունդ անոր մէջ ըլլար: Պիտի ըսէիր, որ անիկա քանդիչ կամ անվաւեր էր, եթէ քու անունդ անոր մէջ տեսնէիր»:

Ճշմարտութիւնը ըսելու ժամանակն էր: Այդպէս պիտի չվարուէի: Բարկանալու փոխարէն, պիտի գործածէի իմ ընկերային ցանցերու հարթակս, որպէսզի շնորհակալութիւն յայտնէի այդ կնոջ, զոր չէի ճանչնար, եւ հաւանաբար այդ ցանկը պիտի հրապարակէի *Թուիթթըրի* վրայ, որպէսզի աւելի մեծ թիւով մարդիկ գիտնային այդ մասին:

Յանցանքի վրայ բռնուեցայ:

Այո՛: Ես մէկ ամուսինի կին եմ, չորս զաւակներու մայր եւ մեծ մայր, բայց երբ կը մոռնամ իմ ճշմարիտ ինքնութիւնս, տակաւին կրնամ տառապիլ բաղդատութեան դաժան իրականութենէն: Այդ առումով, այդ ցանկը պարգեւ մըն էր ինծի համար, քանի որ անիկա ինծի օգնեց, որ ինքզինքս գտնեմ:

Եթէ կ'ուզես մարդոց հաւանութիւնը ստանալ, միշտ պիտի զգաս, որ դուրսէն դէպի ներս կը նայիս: Անկեղծ ըսելով՝ չկայ մէկը, որ կրնայ լիովին լեցնել քու հաւանութիւն ստանալու կարիքդ (կը ներես, բայց նոյնիսկ եթէ ամուսինդ կատարեալ ըլլար, պիտի չկարենար ատիկա ընել): Գոյութիւն չունի այնպիսի կեանքի իրագործում մը, ցանկ մը կամ մրցանակ մը, որ կրնայ վստահութեամբ գրել այն բառերը, զորս միայն Աստուած կրնայ փորագրել քու սիրտիդ մէջ:

*«Դուն սիրուած, գեղեցիկ, արժեւորուած եւ մկերմաբար ճանչցուած ես ... դուն Իմն ես»:*

## Ուրախութիւն Գողցողը

Անկախ արտաքին տպաւորութենէն՝ միայն Աստուած կը հասկնայ, թէ ինչն է, որ կը ցնցէ կնոջ սիրտը, եւ միայն Աստուած գիտէ ինչպէս հանդարտեցնել գիշերանոցով կիներուն խելագարութիւնը, որոնք կը մոռնան իրենց



**Որեւէ բան,  
որ կ'ընես, որ  
մրցակցութիւն  
կը սնուցանէ,  
պիտի փտեցնէ  
քու զօրութիւնդ:**

անձերը խաղաղեցնել՝ նախքան որ բաղդատութիւնը գայ՝ իրենց խաղաղութիւնը գողնալու: Կրնամ քեզի վստահեցնել, որ որեւէ բան, որ կ'ընես, որ մրցակցութիւնը կը սնուցանէ, պիտի փտեցնէ քու զօրութիւնդ: Ինչպէս Թէոտոր Ռուզվելթը դիպուկ կերպով կը նշէ. «Բաղդատութիւնը ուրախութեան գողն է»:

Անկասկած, այդ առաւօտ ես հասկցայ,

թէ ատիկա ինչպէս ինձմէ գողցուեցաւ: Ես կը կարծէի, թէ վեր էի այդպիսի վարուելակերպէ: Իրականութեան մէջ, տարիներէ ի վեր ես այդպիսի զգացական պոռթկում չէի ունեցած: Բայց այդ առաւօտ ինքզինքս անտեսուած զգալը՝ դաշտանադարին հետ միասին, պայթինամվտանգ արդիւնք ունեցան: Այնպէս կը թուէր, որ կեանքիս աղբիւրներուն մէկ մասը պղտորեր էր, եւ սիրտիս պարտէզը շատ պէտքը կը զգար ուշադրութեան: Այնպէս կը թուէր, որ այգիիս որթերէն քանի մը հատը ապստամբութեամբ լեցուած էին եւ ես անոնց նեցուկ կանգնած էի, երբ անոնք պարզապէս լաւ ձեւով յօտուելու պէտք ունէին:

Բաղդատութիւնը քաշողական ուժ ունի: Եթէ թոյլ տաս, անիկա միշտ կը հեռացնէ քեզ քու իսկական ինքնութենէդ: Բաղդատութիւնը նենգաբար կը փորձէ բարձրացնել քեզ հպարտութեան միջոցով կամ վար գլորել՝ դէպի անապահովութեան ճիրանները: Երկու պարագային ալ դուն անհաւասարակշռուած վիճակի մէջ կ'ըլլաս. դուրսը կ'ըլլաս եւ կը փորձես ներս նայիլ:

Ինձի համար անտանելի է տեսնել, որ մէկը դիտումնաւոր կերպով անտեսուած եւ դուրս մնացած է: Բայց կան ժամանակներ երբ մեր *արտաքին զգացումը* միակ բանն է, որ մեզ կը մղէ, որ դէպի *ներս նայինք*: Ինչ կը վերաբերի այդ ցանկը կազմողին, ան երիտասարդ, խելացի եւ ուշիմ կին մըն է: Անկախ անկէ, թէ ես համաձայն եմ անոր մօտեցումին թէ՛ ոչ, ես շատ շնորհակալ եմ այն բոլոր բաներուն համար, որ այդ ցանկը բացայայտեց իմ մէջս:

Հաղորդագրութիւն մը գրեցի իմ համբերատար ընկերուհիիս, որ թերեւս արդէն կը կասկածէր իմ ողջամտութեանս: Դարձեալ գացի իմ սուրբ ամուսինիս գրասենեակը եւ իրեն փաթթուկ մը տուի: Յետոյ իմ հողաթափերով ոտքերս ուղղուեցան դէպի իմ ննջարանս, գոցեցի դուռը եւ ծունկի եկայ: Ահա հատուած մը իմ աղօթքէս:



*Երկնաւոր Հայր,*

*Շնորհակալ եմ իմ սխալներս բացայայտելուդ համար:*

*Ներէ՛ ինձի: Յոյց տուր այս մղախտորին արմատը:*

*Յիսուսի անունով, ամէն:*

Օրուան ընթացքին ես ետ կը նայէի իմ խելագարութեանս նոպային եւ կը ծիծաղէի յիմարութեանս վրայ: Օրուան վերջատրութեան օգնականիս հետ հանդիպում ունեցայ: Երբ ե-նամականերուս կը նայէիք, տարօրինակ յօդուած մը գտանք: Ըստ երեւոյթին, ես ընտրուած էի քանի մը ուրիշ կիներու հետ միասին՝ իբրեւ կիներու նուիրուած միջոցառումի մը պատուաւոր մասնակիցը, որ վերջերս տեղի ունեցած էր: Թէեւ մենք չէինք կրցած ներկայ գտնուիլ: Մեր բացակայութեան մեզ պատուելու համար անոնք պատրաստած էին երեսուն սանթիմետր բարձրութեամբ *փլաստիքէ* պուպրիկներ՝ իւրաքանչիւրիս պատկերով: Իմ պուպրիկս ճոնին դրկած էին՝ յուսալով, որ զանիկա իր գրասենեակին մէջ կը դնէր: Գրկելով այդ պուպրիկը՝ բարձրաձայն խնդացի. ես երբեք ճերմակ *ճինզ* չեմ հագնիր բեմին վրայ: Մէկ կողմ դրի զայն եւ ծանօթ ձայն մը լսեցի, որ փսփսաց. «Քեզ պուպրիկի վերածած են: Ուրմիս ես անոր համար»:

Գլուխս շարժեցի *փլաստիքէ* պատկերիս, որ ճերմակ *ճինզ* հագած էր եւ բարձրախօս ունէր իր ձեռքին: Պուպրիկը նոյնքան արհեստական էր, որքան այդ ցանկը: Դարձեալ խնդացի: Փորձեցի աղբը թափել այդ պուպրիկը, բայց ամուսինս գրաւեց զայն, ինձի յիշեցնելով, որ ասիկա իրեն դրկուած էր եւ ոչ ինձի: Կը կարծեմ, որ ան կը պահէր զայն, որպէսզի մօտ ապագային զիս ետ պահէր այդպիսի անմտութեան նոպաներէն:

## **Երեք «Սի»երը (Երեք Բաներ, Զորս Պէտք Չէ Ընենք)**

Եւ ի՞նչ աստուածաշնչական հատուածներ առաջարկեց ինձի ճոնը, զորս արդէն գիտէի: Առաջինը՝ Բ.Կորնթացիներուն 10.12-ն է.

Որովհետև մենք չենք յանդգնիր մենք մեզ դասել կամ բաղդատել լուծանք հետ՝ որ իրենք զիրենք կը յանձնարարեն. անոնք չեն հասկնար, թե իրենք իրենցմով կը չափուին եւ իրարու միջեւ կը բաղդատուին:

Ինձմէ սորվիր: Մի համարձակիր դուն քեզ դասել, բաղդատել կամ յանձնարարել: Ինչո՞ւ: Այդպիսի արարք մը կը բխի հպարտութենէն, նոյնիսկ եթէ քու ըրած բաղդատութիւնդ քու օգուտիդ համար չէ: Բոլորս գիտենք, որ հպարտութիւնը կը նախորդէ կործանումին: Այս երեքին պատճառով դուն կրնաս գտնուիլ այնպիսի վիճակի մը մէջ, որ վտանգաւոր է, եւ երբեմն՝ սարսափելի:

## **Ինչ կը Պատահի Երբ Մենք կը Դասենք**

Իմաստուն մարդիկը ոչ ոք կը դասեն, ո՛չ ալ կ'ուզեն դասուիլ: Մարդիկը դասելը սխալ է: Բան մը դասել կը նշանակէ՝ զայն իր տեղը դնել կամ անոր համար դասակարգում մը նշանակել: «Դասել» բառին համար գործածուած ուրիշ եզրեր են՝ «աստիճանաւորել», «դասաւորել», «ապրանքանիշ դնել», «գրացուցակ կազմել», «կարգաւորել», եւ թերեւս ամենատհաճը՝ «պիտակել»: «Միրիամ-Ուեպթըր» բառարանը այսպէս կը սահմանէ «պիտակել» բառը. «կոկիկ կամ պարզ դասակարգում մը, որ ընդհանրապէս չ'արտացոլացներ անոր իրական բարդութիւնները կամ բազմազանութիւնները»:

Կեանքի մէջ կոկիկ կամ պարզ դասակարգումներ չկան: Կեանքը հիմնականօրէն բարդ եւ քառսային է: Իրականութեան մէջ մարդոց կեանքերը շատ աւելի բարդ են, քան այն, ինչ որ կը տեսնենք: Եւ անշուշտ, ոչ մէկ խելացի մարդ պիտի ուզէր, որ զինք դնեն տուփի մը մէջ, որ աղանիի աղտով լեցուն է: Ընկերային ցանցերը՝ այն բազմաթիւ ժամանակակից միջոցներէն մէկն են, զորս կը վայելենք,

որոնք կրնան սահմանափակել կամ ընդլայնել թե՛ մեր նախապաշարումները, թե՛ մեր ըմբռնումները:

Մեր օրերուն եւ այս ժամանակաշրջանին սխալ չէ յաճախ հարցնել. «Ինչ բանի կառուցման մաս կ'ուզեմ կազմել: Արդեօք կ'ուզեմ դասակարգուիլ, գնահատուիլ եւ ուրիշ մարդոց հետ որոշ շարքի մը մէջ դասուիլ»: Գիտեմ, որ այն ցանկը, որ կը կարդայի, այդ կիներուն իրագործումները միաւորելու փորձ մըն էր ... այդ կիները ճանաչումի հասած էին: Անիկա ստեղծուած էր արժեւորելու բան մը, որ միշտ չէ, որ արժեւորուած է ... ծառայող կիները:

Բայց եթէ ուզենք, որ մեզ դասակարգեն, մենք զմեզ սահմանափակումներու մէջ պիտի գտնենք: Տարիներ առաջ իմաստուն տարեց մարդ մը զգուշացուց ամուսինս. «Թոյլ մի՛ տար, որ մարդիկ դասակարգեն կամ պիտակաւորեն քեզ: Եթէ թոյլ տաս, ապագային անոնք պիտի գործածեն այդ պիտակը՝ օր մը քեզ որակագրկելու համար»:

Մարդոց մեծամասնութիւնը կարելի չէ դնել որեւէ յստակ դասակարգի մէջ: Եւ այն մարդիկը, որոնք կոպիտ վերաբերմունքի ենթարկուած են կամ որեւէ դասակարգի մէջ չեն ընդգրկուած, մեծ հաճոյքով կը պիտակեն քեզ, եթէ հնարաւորութիւն ունենան:

## Ինչ կը Պատահի Երբ կը Բաղդատենք

Քաջ մարդիկ չեն համարձակիր իրենք զիրենք ուրիշներու հետ բաղդատել, նոյնիսկ եթէ այդ բաղդատութիւնը իրենց

օգտին է: Անոնք կ'անդրադառնան, որ իրենց առջեւ տակաւին շատ քայլեր կան: Անոնք ճաշակած են երկնայինը եւ գիտեն, թէ այս աշխարհի մէջ չկայ բան մը, որ կրնայ բաղդատուիլ անոր հետ: Փառաւոր աւելի մը տեսիլքը կը խթանէ զիրենք յառաջ երթալու:



**Չհամարձակիս  
դուն քեզ դասել,  
բաղդատել կամ  
յանձնարարել:**

Բաղդատությունը վախկոտներուն ապաստանն է, որոնք չեն համարձակիր հաւատալ, որ իրենց տեսածէն աւելին կայ:

Ինչ է անունը այն լերան, որ մենք կը մագլցինք: Համբաւ: Յաւիտենականութեան տեսանկիւնէն ատիկա մոխիրի կոյտ մըն է: Կամ եթէ ուզենք աւելի սուրբգրային ըլլալ եւ մէջբերել Պօղոսին խօսքերը Փիլիպպեցիներուն 3.8-էն, անիկա շան աղբի կոյտ է: Ոչ ոք կ'երթայ դէպի շան աղտոտութիւնը. Անիկա բան մըն է, որմէ պէտք է խուսափիլ՝ փորձելով անոր վրայ չկոխել: Հարցը այն է, որ մեզմէ շատերը կը պտըտին մեր ոտքերուն վրայ ունենալով շան աղտոտութիւն՝ մեր ետին գարշահոտ հետք ձգելով: Մենք վարժուած ենք այդ հոտին, բայց ատիկա չի նշանակեր, թէ ատիկա անուշ հոտ կը բուրէ: Փիլիպպեցիներուն 3.7-9-ին մէջ կը կարդանք.

Բայց այն յանձնարարագիրները, զորս այս մարդիկը կը ծածանեն, քանի որ իւրայատուկ կը համարեն զանոնք, ես կը պատռեմ եւ աղբ կը համարեմ այն բոլոր բաներուն հետ, որոնց համար վարկ կը ստանայի: Բայց ինչո՞ւ: Քրիստոսի համար: Այո՛, այն բոլոր բաները, զորս ժամանակ մը շատ կարեւոր կը համարէի, այլեւս չկան իմ կեանքիս մէջ: Քրիստոս Յիսուսը իբրեւ իմ Տէրս ճանչնալու բարձր պատիւին հետ բաղդատելով, այն բոլոր բաները, զորս օգուտ կը համարէի, իմաստ չունին. անոնք շան աղտոտութիւն են: Այդ բոլորը աղբին մէջ նետած եմ, որպէսզի կարենամ ընդունիլ Քրիստոսը եւ Անոր կողմէ ընդունուիմ (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Յիսուսը իբրեւ Տէր ճանչնալը մեր մեծագոյն պատիւն է: Երբ հեռաձայնս վերցուցի, փոխանակ ընտրելի զի՛նք աւելի ճանչնալ, ես անկարեւոր բանը ընտրեցի:  
Շատ աւելի լաւ է զԱստուած ճանչնալ, քան մարդոցմէ ճանչցուիլ:

## **Ինչ կը Պատահի Երբ Մենք Ձմեզ կը Գովենք Կամ կը Յանձնարարենք**

Ինչ կրնանք ըսել մենք զմեզ յանձնարարելու մասին: Ինչ հարց կայ եթէ ժամանակ առ ժամանակ ցուցադրենք եւ տօնենք «մեր» իրագործումները: Այո, ժամանակ կայ մեր աճը տօնելու եւ գովեստներ ստանալու: Բայց սխալ է մենք մեզի վերագրել բան մը, որ ծրիաբար ստացած ենք՝ կարծէք ատիկա մեր անձնական իրագործումը ըլլար: Պտուղը պէտք է աճեցնել, իսկ պարգեւները պարգապէս կը ստանանք, եւ նոյնիսկ այդ պարագային, մենք պարգապէս Աստուծոյ կողմէ մեզի վստահուած պարգեւներուն տնտեսներն ենք:

Ոմանք շլացուցիչ գեղեցկութիւն ունին: Ուրիշներ կը ծնին հսկայական հարստութիւն եւ առանձնաշնորհումներ ունեցող ընտանիքներու մէջ: Հազուագիտ մարդիկ այդ երկուքը կ'ունենան: Եւ կան մարդիկ, որոնք կը ծնին անոնց ճիշդ հակառակ պայմաններու մէջ: Անոնք կ'ապրին սոսկալի աղքատութեան մէջ եւ կը մեծնան կապեր եւ ծանօթութիւններ չունեցող ընտանիքներու մէջ: Կան մարդիկ, որոնք բոլորովին զուրկ են արտաքին գեղեցկութենէ: Մեզմէ շատերը այս ծայրայեղութիւններուն մէջտեղը կը գտնուին: Բայց այդ հանգամանքներէն ոչ մէկը կրնայ վերջնականօրէն որոշել քու կեանքիդ ընթացքը կամ ազդեցութիւն բերել քու ունեցած արժէքիդ վրայ: Աստուած արտաքին երեւոյթին չի նայիր ... Ան սիրտին կը նայի: Սերունդի մը հարստութիւնը կրնայ թեւ առնել եւ յաջորդ սերունդէն հեռանալ:

Երբ ատիկա կը տեսնեմ, կը մտածեմ, որ կեանքը անարդար է, բայց մէկ բան գիտեմ. Աստուած արդար է: Ան գիտէ ինչպէս կշռել ամէն մարդու դժուարութիւններն ու առաւելութիւնները Իր ափին մէջ: Ան միակն է, որ արդարութեամբ կը չափէ: Ասիկա ուրիշ պատճառ մըն է, թէ ինչո՞ւ պէտք չէ բաղդատենք: Քանի որ այն, ինչ որ մենք կը կշռենք այս ժամանակաւոր մարզին մէջ, բոլորովին ուրիշ

ծելով կը տեսնուի յաւիտենականութեան տեսանկիւնէն:

Հոս է, որ մենք դժուար կացութեան կը մատնուինք եւ կը հակինք ընել այն, ինչ որ մարդոց պատիւ կը բերէ, փոխանակ ընելու այն, ինչ որ Աստուծոյ պատիւ կը բերէ, եւ անոր իբրեւ արդիւնք, անտեղի մրցակցութիւն կը ստեղծենք: Եկէք շարունակենք եւ բացատրենք Բ.Կորնթացիներուն 10.12-ին երկրորդ մասը.

Ա՛յնքան անմիտ են, որ իրենք զիրենք իրարու հետ կը չափեն եւ իրարու հետ կը բաղդատեն իրենց անձերը:

Գիտե՛ս, որ ես այսպէս վարուած եմ: Կարծեմ բոլորս ալ այսպէս վարուած ենք: Մենք չափած եւ բաղդատած ենք: Ոմանք ամբարտաւան կերպով իրենք զիրենք կը բաղդատեն ուրիշ մարդոց հետ, եւ ուրիշներ յիմարաբար կ'արտօնեն, որ բաղդատութիւնը նսեմացնէ այն, ինչ որ Աստուած կ'ուզէ ընել իրենց կեանքին մէջ:

Մէկ կողմէն հպարտութիւնը անհաւասարակշռութիւն կը ստեղծէ, իսկ միւս կողմէն անապահովութիւնը կ'անդամալուծէ: Երկու ծայրայեղութիւններն ալ վտանգաւոր են: Գոյութիւն ունի միայն մէկ ճշմարիտ չափանիշ՝ անչափելի Քրիստոսը, մեր օծեալ թագաւորներու Թագաւորը: Միայն Ան սուրբ է, անարատ եւ զօրաւոր: Մենք կը նմանինք մրջիններու՝ մեր հողէ բլուրին մէջ, եւ յիմարաբար կ'երեւակայենք, որ մրջնակերը կը վախնայ մեզի մօտենալու, երբ մրջնակերը միայն կը դողայ այն առիծէն, որուն շուքին տակ կը հանգչինք: Անկախ անկէ, թէ ինչքան ջանասէր ենք եւ որքանով գովեստի արժանի ենք՝ անկարելի է մեզ բաղդատել Անոր հետ, որ մեզի վերստին ծնունդ տուած է:

Ահա ուրիշ համար մը, զոր կրնամ մէջբերել՝ Յովհաննէս 5.44-ը.

Ի՞նչպէս կ'ակնկալէք Աստուծոյ հետ ձեր յարաբերութեան մէջ տեղ մը հասնիլ, երբ ամէն միջոցի կը դիմէք՝

ձեր մրցակիցներէն աւելի լաւ դիրք գրաւելու համար՝ դասակարգելով ձեր մրցակիցները եւ անտեսելով զԱստուած (Բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Ինչո՞ւ պիտի վատնենք մեր ժամանակը՝ մեր մրցակիցները դասակարգելով, երբ մենք հրաւիրուած ենք անզուգական Աստուծոյ ներկայութեան: Երբ թոյլ կու տամ, որ մարդիկ որոշեն իմ կեանքս, կը տեսնեմ, որ իմ երկնաւոր Հօրս հետ իմ կապս վտանգի կ'ենթարկուի: Կարճ ժամանակ ետք իմ անձիս մասին իմ դիրքորոշումս կը խեղաթիւրուի՝ մարդկային կարծիքներու պատճառով, եւ կը մոռնամ Աստուծոյ հոչակումները իմ մասիս, թէ ինչպիսի՞ անձ մը կը դառնամ ես: Երբեմն կը մտածեմ, թէ իմ յիմար արարքներս եւ սահմանափակ հասկացողութիւնս ինչպիսի՞ հետեւանքներ ունին, որոնք վեր են իմ հասկացողութենէս:

Յուսամ դուն կը խնդաս իմ ծիծաղելի առաւօտեան դիպուածիս վրայ եւ կը դարդեցնես քու սեփական բաղդատութեան հակումներդ, ուե՛լ մէկուն հանդէպ: Շատ յոգնեցուցիչ պիտի ըլլար, եթէ ատիկա ոչ թէ մէկանգամայ երեւոյթ ըլլար, այլ ամէն օր տեղի ունենար: Բաղդատութիւնը մշտական տեղ չունի իմ կեանքիս մէջ, քանի որ իմ կողքիս կան այնպիսի մարդիկ, ինչպիսիք են իմ ամուսինս եւ իմ հաւատարիմ ընկերուիս, որոնք ինձմէ կը հեռացնեն այդ տկարութիւնը:

## **Խաճնել եւ Լափել**

Ընկերային ցանցերուն միջոցով բազմաթիւ մարդիկ եւ ձայներ կը հրաւիրես, որ մուտք գործեն կեանքէդ ներս: Ասիկա կրնայ լաւ թուիլ, բայց միաժամանակ, անոր միջոցով կողքիդ կը յայտնուին բազմաթիւ անբարեացակամ մարդիկ: Եթէ չես կրնար սիրել զանոնք, թերեւս աւելի լաւ կ'ըլլայ, որ դարձեալ որոշ սահմաններ դնես կեանքիդ մէջ: Եթէ մէկը

թշնամութեամբ արտայայտուի, նոյն ձեւով մի՛ պատասխաներ. աւելի լաւ է սահմաններ դնես: Շնորհքի տակ ապրիլը մեզի թոյլ չի տար, որ կոպտութեամբ վարուինք իրարու հետ: Ան նաեւ չ'ենթադրեր, որ պէտք է բաղդատուիս ուրիշ մարդոց հետ եւ մէն բան ընես՝ զանոնք գերազանցելու համար:

Պօղոս կը գրէ. «Քանի որ ամբողջ Օրէնքը սա՛ մէկ խօսքին մէջ կը գործադրուի. “Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս”։ Բայց եթէ զիրար խաճնէք եւ լափէք, զգուշացէ՛ք, որ իրարմէ չսպառիք» (Գաղատացիներուն 5.14-15): Այս խօսքին մէջ հաճելի պատկեր մը չենք տեսներ: Երկու հոգիներ իրարմէ կտորներ կը փրցնեն՝ անգիտակից գիշատիչ գազաններու պէս, մինչեւ որ երկուքն ալ սպառին. մենք՝ Քրիստոսի հետեւորդներս, պէտք չէ այդպիսի բաներ ընողներ ըլլանք: Բայց ելեկտրոնային եւ անձնական կայքի (*այլոկիսկ*) հաղորդակցութեան մէկ մասը այդպէս է: Թերեւս այս կոտորածը բացայայտօրէն չ'երեւիր քու հեռաձայնիդ կամ կայքէջի մը մէջ, բայց հոգեւոր աշխարհին մէջ այդ վէճերը արիւնոտ են: Մարդոց հետ շփուիլը երբեք այսքան դիրաւ հասանելի չէ եղած: Հիմա դուն կրնաս «խաճնել եւ լափել» մէկ ակնթարթի մէջ: Դժբախտաբար ես այդ մասին գիտեմ, քանի որ ես ինքս ասիկա ըրած եմ:

Այն բանը, որ ես կը «խաճնեմ եւ կը լափեմ», ընդհանրապէս կը բացայայտէ իմ մէջս գտնուող այն մարզերը, որոնց վրայ դեռ պէտք է աշխատիմ: Եթէ մէկը իմ զգայուն մասիս դաչի, առաջին պատասխանս իմ վէրքս ծածկելը կ'ըլլայ: Ես սորված եմ մէկ կողմ դնել հեռաձայնս եւ հեռանալ անկէ՝ կարծես անիկա փամփուշտով լեցուն գէնք մը ըլլար: Յաճախ մարդիկ պարզապէս վատ օր մը կ'ունենան: Մի՛ աւելցնէր անոնց լարուածութիւնը:

Հսկայական տարբերութիւն կայ մարդիկը ներշնչելու եւ անոնց մէջ նախանձ գրգռելու միջեւ: Նոյնպէս, կայ հսկայական տարբերութիւն մարդիկը ընդունելու եւ դիտումնաւոր կերպով անոնց մէջ մերժուածութեան զգացում



յառաջացնելու միջեւ: Եթէ մէկու մը կը հետեւիս ընկերային ցանցերուն վրայ, եւ ան միշտ վատ զգացումներ կը յառաջացնէ մէջդ, զինք մեղադրելու փոխարէն՝ թերեւս դո՛ւն պէտք է պահ մը կանգ առնես եւ փորձես հասկնալ անոր պատճառը:

Մրցակցութիւնը կը կողոպտէ քեզ, եթէ չսորվիս ինչպէս բարիի փոխել այն, ինչ որ թշնամին նախատեսած է չարիքի համար, եւ թոյլ տալ, որ Աստուած բարիի գործակից ընէ զայն: Հետեւեալ աստուածաշնչական հատուածը ցոյց կու տայ, թէ ինչ երեւոյթ կ'ունենան մրցակցութեամբ լեցուն միջավայրերը.

Բացայայտ է, թէ ինչպիսի կեանք մը կը զարգանայ, երբ կը փորձես շարունակամէն բան քու ուզած ձեւով դնել. կրկնուող աժան սեռային յարաբերութիւններ՝ առանց սիրոյ, մտային եւ զգացական աղբի գարշահոտ կուտակում, կատաղի եւ ուրախութենէ զուրկ երջանկութեան ձգտում, սնտոի աստուածներ, կախարդութիւններով լեցուն ցուցադրական կրօն, սաստիկ անձկութեամբ լեցուն առանձնութիւն, անխնայ եւ մոլեգին մրցակցութիւն, կլանող եւ երբեք չբաւարարուող ցանկութիւններ, դաժան բնաւորութիւն, սիրելու եւ սիրուելու անկարողութիւն, պառակտուած ընտանիքներ եւ կեանքեր, եսամոլ, անհաւասարակշիռ հետապնդումներ, *բոլոր մարդիկը անանձնականացնելով՝ մրցակից դարձնելու արարատը սովորութիւնը*, չկառավարուող եւ անկառավարելի մոլութիւններ, համայնական կեանքի անճոռնի ծաղրերգութիւններ: Եւ այս տեսակի շատ բաներ: Ասիկա առաջին անգամը չէ, որ կը զգուշացնեմ քեզ: *Եթէ ազատութիւնդ այս ձեւով գործածես, Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգես:* (Գաղատացիներուն 5.19-21, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Իրականութեան մէջ միայն կարդալով այս բառերը՝ կ'ուզեմ լալ: Այն բոլոր բաները, զորս Պօղոս կը թուէ այս հատուածին մէջ, վերջերս այնքան շատ տարածուած են: Եւ ես մեր

աշխարհը չէ, որ կը մեղադրեմ. Գաղատացիներուն նամակը եկեղեցիին ուղղուած է: Ինչ կը նշանակէ «անանձնականացնել» մէկը: Կը նշանակէ տուեալ անձը զրկել իր ինքնուրոյնութենէն եւ իր իւրայատուկ անհատականութենէն: Նացիները անանձնականացուցին հրեաները այն աստիճան, որ գերմանացի ժողովուրդը այլեւս զանոնք չէր տեսներ իբրեւ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդիկ ... անոնք կը տեսնէին հաւաքական հարց մը, որ չէր արտացոլացներ իրենց արիական պատկերը: Դժբախտաբար այս ռազմավարութիւնը տակաւին կը կիրարկուի այսօր՝ թէ՛ տարբեր խումբերու, թէ՛ անհատներու համար:

Մարդիկ շատ արագ կը դատեն եւ կը պիտակեն: Մարդիկ սիրտեր ունին եւ անկախ անկէ, թէ դուն կ'անդրադառնաս կամ ոչ, ելեկտրոնային խօսքերը կը վիրաւորեն ինչպէս սովորական խօսքերը կ'ընեն: Եզեմբոսը ըսած է. «Դիւրին է քաջ ըլլալ շատ հեռուէն, ապահով հեռաւորութենէն»: Մեր ընկերային ցանցերէն շատերը «ապահով հեռաւորութիւն» կը ստեղծեն: Ասիկա համարձակութիւն կու տայ վախկոտ կամ քննադատող մարդոց՝ բռնածաղրի ենթարկելու եւ չարախօսելու այն մարդոց մասին, զորս իրենք անանձնականացուցած են: Անոնք երբեք պիտի չհամարձակէին այդ բաները մէկու մը դէմ առ դէմ ըսել: Ինչո՞ւ: Քանի որ դժուար է ձեւացնել, որ դիմացինդ մարդամեքենայ է, երբ անոր աչքերուն մէջ արցունքներ կը տեսնես: Ես տեսած եմ, թէ ինչպէս քրիստոնեաներ զիրար վարկաբեկած են ամէն տեսակ անուններով՝ հերետիկոսէն մինչեւ պոռնիկը ... Եւ այդ ընթացքին Սատանան պարզապէս կը խնդար: Որքան ատելի կ'ընենք անոր գործը, այնքան քիչ բան կը մնայ անոր ընելու:

## **Ինչպէս Սաստել եւ Սրբագրել**

Նոյնիսկ այս պարագային, ձեզմէ ոմանք թերեւս չհամաձայնին ինձի հետ՝ ըսելով. «Բայց չէ՞ որ պէտք է հրապարակաւ յանդիմանել անոնք, որոնք սխալի մէջ են»:

Բարի լուրը այն է, որ Աստուած յատուկ յաւելուած մը ունի ասոր համար:

Աւելի լաւ է յայտնի [բաց] կշտամբանքը, քան ծածուկ սէրը: Բարեկամին տուած վէրքերը հաւատարիմ են, իսկ ոսոխին համբոյրները՝ խաբէական: (Առակներու 27.5-6)

Աստուածշունչը ինչ ըսել կ'ուզէ, երբ կը քաջալերէ յայտնի կշտամբանքը: Ատիկա հասկնալու բանալին յայտնի կամ բաց բառն է: Մարդիկը յանդիմանելու համար պէտք է ունենալ բաց սիրտ, բաց ձեռքեր եւ բաց երես: Բոլորս պէտք է սրբագրենք մարդիկը այնպէս, ինչպէս մենք պիտի ուզէինք սրբագրուիլ: Լաւագոյն տարբերակը այն կ'ըլլայ, որ ինծի յանդիմանեն մարդիկ, որոնք լաւագոյնը դուրս կը հանեն ինձմէ:

Այս աստուածաշնչական համարները յատկապէս կը խօսին ընկերներու միջեւ եղող յանդիմանութեան մասին, բայց նաեւ կրնայ յանդիմանել ղեկավարը, ուսուցիչը կամ գործատէրը: Քանի որ ավելի մեծ հաւանականութիւն կայ, որ յանդիմանութիւնը ընդունուի, եթէ անիկա գայ քեզ ճանչցող եւ քեզի հանդէպ հոգատար մարդոցմէ: Լաւագոյն տարբերակը այն կ'ըլլայ, որ այս խօսակցութիւնը տեղի ունենայ դէմ առ դէմ: Եթէ կարելի չէ տուեալ մարդուն հետ հանդիպիլ, ապա հեռաձայնով խօսիլը երկրորդ լաւագոյն ձեւն է:

(Մէկ բան եւս, չեմ յանձնարարեր մարդիկը յանդիմանել հեռաձայնային հաղորդագրութեան միջոցով: Այդպիսով շատ բան կրնայ կորսուիլ իմաստէն: Հեռաձայնային հաղորդագրութիւնը զուրկ է մարմինի լեզուին ազդանշաններէն եւ խօսքին եղանակէն: Ճոնին եւ իմ միջեւ բազմաթիւ ծիծաղելի թիրըմբոնումներ եղած են, երբ մէկս միսին հեռաձայնային հաղորդագրութիւններ ղրկած ենք: Մեզմէ մէկը, ընդհանրապէս ես, որոշ բառեր գլխագիր կը գրեմ՝ ՇԵՇՏԵԼՈՒ համար, ինչ որ սխալ կերպով կը թարգմանուի իբրեւ ԳՈՌՈ՛Յ):

Բոլորիս կեանքին մէջ եղած է փակ յանդիմանութիւն, երբ մարդիկ յանդիմանած են մեզ գաղտնի կերպով: Երբ մարդիկ կ'որոշեն յանդիմանել քեզ՝ առանց ներկայութեանդ, պէտք է անոնց յանդիմանութեան անկեղծութիւնը հարցականի տակ առնես: Թէեւ անոնց ըսածները կրնան ճիշդ ըլլալ, բայց եթէ դուն ընդգրկուած չես, ներկայ չես, ատիկա քու աճիդ չի նպաստեր:

Իրականութեան մէջ, այդպիսի յանդիմանութիւնը ընդհանրապէս կը վսասէ քու աճիդ, քանի որ երբ մարդիկ գաղտնօրէն կը խօսին քու մասիդ, քեզ կը դրդեն, որ պաշտպանողական ըլլաս: Անկեղծ ընկերոջ «բաց կամ յայտնի յանդիմանութիւնը», որ դէմ առ դէմ կը կատարուի, երկու անձերուն հաղորդակցութեան առիթ կու տայ եւ թոյլ կու տայ, որ երկուքն ալ աճին յանդիմանութեան ընթացքին:

Ընկերային ցանցերու վրայ մէկը յանդիմանելը բաց յանդիմանութիւն չէ պարզապէս որովհետեւ ատիկա բացայայտ է հանրութեան համար: Ես հիանալի, զօրաւոր բարեկամներ ունիմ, զորս կը սիրեմ եւ կը յարգեմ: Բաւական մօտ եմ անոնց՝ գիտնալու համար, թէ անոնք ինչպէս կ'ապրին: Տեսած եմ, որ այդ բարեպաշտ մարդոց մասին բացայայտ կերպով չարախօսած են մարդիկ, որոնք նոյնիսկ չեն ուզած անոնց քով գալ եւ յայտնել իրենց մտահոգութիւնները: Փոխարէնը՝ անոնք հրապարակաւ խեղաթիրած են ճշմարտութիւնը իրենց ուզածին պէս, որպէսզի ցաւ պատճառեն իմ բարեկամներուս: Աստուածաշունչը շատ յստակ կերպով կը խօսի այս մասին:

Ճշմարտութենէն հեռացած ռեւէ անձ մէկ կամ երկու անգամ խրատելէ ետք՝ երբ տեսնես որ անօգուտ է՝ *կապերդ խզէ անոր հետք*, գիտնալով, որ անիկա մոլորած մըն է եւ մեղքի մէջ կը մնայ՝ ինքզինքին դատապարտութեան պատճառ դառնալով: (Տիտոսի 3.10-11, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Մի կարդար անոնց անձնական *պլոկները*, անոնց վէճերուն

մի՛ միանար, մի՛ հետեւիր անոնց *Թուիթըրի* վրայ, անոնց բարեկամ մի՛ ըլլար *Ֆէյսպուքի* վրայ ... ոչ մէկ ձեռով անոնց հետ կապ մի՛ ունենար: Ատիկա առողջարար չէ քեզի համար: Ներշնչում փնտո՞ւ է ոչ թէ՛ պառակտում:

Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակին համաձայն Տիտոսի 3.10-11-ը կ'ըսէ.

Զգուշացի՛ր կոռուզան անձը մէկ կամ երկու անգամ, բայց յետոյ այլեւս գործ մի՛ ունենար անոր հետ: Յստակ է, որ այդպիսի մարդը շեղած է Աստուծոյ դէմ ապստամբած է: Յամառելով իր պառակտիչ բնաւորութեամբ՝ ան ինքզինք կ'անջատէ եւ կը հեռացնէ:

Ժամանակի ընթացքին իմ կեանքիս մէջ մնացած են աւելի քիչ, բայց աւելի հաւատարիմ բարեկամներ: Բարեկամներս ինծի ցոյց կու տան այն անձը, որ ես կ'ուզեմ ըլլալ, մինչ թշնամիներս ցոյց կու տան այն անձը, որ ես չեմ ուզեր ըլլալ: Այն միջավայրը, որ մրցակցութիւն կը սնուցանէ, սկիզբը կրնայ վատագոյնը դուրս հանել մեզմէ: Երբ կը տեսնենք, որ այլեւս չենք կրնար հաստատ մնալ, Աստուած կրնայ միջամտել եւ օգտագործել մեր պայքարը, որպէսզի զօրաւոր նկարագիր կերտէ մեր մէջ:

Յաջորդ համարը՝ Առակներու 27-րդ գլուխէն, աւելի գերազանց ձեւ մը կ'առաջարկէ.

Կուշտ անձը մեղրախորիսխը կը կոխկռտէ, բայց անօթի անձին՝ ամէն լեղի բան քաղցր է (7-րդ համար):

Ես անօթի եմ. կ'ուզեմ աւելի բարեպաշտութեան պտուղ տեսնել իմ կեանքիս մէջ: Կ'ուզեմ աւելի աճ ունենալ: Որքան աւելի կը մօտենամ Աստուծոյ, այնքան աւելի լաւ կը տեսնեմ, թէ ինչն է, որ Աստուծոյ կեանքին համար խոչընդոտ է իմ մէջս: Կեանքիս ամենաքաղցր պահերէն քանի մը հատը եղած են այն դէպքերը, երբ բարեկամներս, որոնք բաւարար կը հոգան

ինձի համար, զիս ցաւցուցած են՝ ինձի ճշմարտութիւնը ըսելով: Թշնամիները կամ կը շողոքորթեն մեզ, կամ սուտերով կը վիրաւորեն: Երբեք չբաւարարուինք մարդկային ցանկերով եւ բաղդատութիւններով: Երբ մրցակցութիւնը ցաւ կը պատճառէ մեզի՝ մեզ անատակ անուանելով, կամ երբ հպարտութիւնը ինքնահաւան կը դարձնէ եւ կը մեկուսացնէ մեզ, եկէք ծունկի գանք: Եթէ դիմենք մեր Հօր, Ան մեժ ուրախութեամբ կը հեռացնէ այն բոլոր բաները, որոնք թոյլ չեն տար մեզի, որ Իրեն աւելի մօտենանք:

### **Քննարկումի Հարցումներ**

1. Երբեք պիտակէր են քեզ (օրինակ՝ սեռային պատկանելիութեան, ցեղային պատկանելիութեան կամ տարիքի պատճառով): Այս պիտակները ինչպէս սահմանափակած են քեզ: Ինչպէս կրնաս յաղթահարել այս դասակարգումին սահմանափակումները:
2. Կեանքի ո՞ր մարզերուն մէջ բաղդատութիւնը կը գողնայ քու ուրախութիւնդ:
3. Երբ մենք կը դասակարգենք, կը բաղդատենք եւ կը յանձնարարենք, ատիկա ինչ աւելի խոր բանի մը նշանն է (յուշում՝ Առակներու 29.25):
4. Ընկերային ցանցերը կը ներշնչեն քեզ, թէ՛ քեզ սխալ բան մը ընելու կը հրահրեն: Ինչ քայլեր կրնաս առնել, որպէսզի անոնց ազդեցութիւնը միշտ շինիչ ըլլայ:
5. Բացատրէ թէ՛ փակ եւ թէ՛ բաց յանդիմանութիւններուն մօտեցումին եւ դրդապատճառներուն տարբերութիւնը:



## Երբ Քեզ Մրցակից կը Սեպեն

Հակառակութիւնը՝ որոշ չափով, մարդուն մեծ օգուտ կը բերէ: Թռուցիկները հովին դէմ կը բարձրանան, ոչ թէ հովին հետ:

ԼՈՒԻՍ ՄԱՄՖՈՐՏ

Կերջերս հեռաձայնով կը խօսէի սիրելի ընկերուիկներէս մէկուն հետ: Անոր ամուսինը տաղանդաւոր երաժիշտ եւ երաժշտութիւն արտադրող է, եւ ինք հզօր ծառայող է եւ պարզապէս հիանալի անձ մըն է: Ես միշտ ճանչցած եմ զիրենք իբրեւ անարատ, խոնարհ եւ գթասիրտ մարդիկ, բայց վերջերս անոնք շատ դժուարութիւններէ անցան: Զանոնք զրպարտեցին, մերժեցին եւ սխալ ձեւով դատեցին:

Ընկերուիկս ըսաւ. «Անոնք չարախօսած են մեր մասին, որ...», եւ ան քանի մը անձերու անունները տուաւ: Մտիկ կ'ընէի: Կը հասկնայի: Բայց շուտով արդէն մտիկ չէի ըներ, թէ ան ինչ կ'ըսէր, քանի որ այլեւս չէի տեսներ, թէ ինչ վիճակի մէջ եղած էին անոնք, եւ նոյնիսկ, թէ ներկայիս ինչ բանի մէջէն կ'անցնէին: Ես կը տեսնէի, թէ անոնք ո՞ր պիտի ըլլային



ապագային: Ատիկա տեսնելով այնքան ոգեւորուեցայ, որ աւամայ ըսի. «Լաւ է: Դուն պէտք է Աստուծոյ շնորհակալութիւն յայտնես անոնց համար: Այսօր դուք էք ինչ որ էք անոնց վատ վերաբերումին շնորհիւ»:

Ճիշդ հասկցիր. ես չէի ուրախանար, որ անոնք այդ բաներէն անցած էին: Բայց տեսնելով այդ զոյգին հակազդեցութիւնը այդ վատ վերաբերումին դիմաց՝ գիտէի, որ փայլուն ապագայ մը կը սպասէր անոնց:

Անշուշտ ինծի համար դիւրին էր ատիկա ըսելը, երբ ես դուրսէն կը դիտէի: Բայց ես անկեղծօրէն ուրախացայ անոնց համար՝ ըսելով. «Ես սորված եմ մեծապէս շնորհակալ ըլլալ թշնամիներու հակառակութիւններուն համար իմ կեանքիս մէջ»:

Պարզուեցաւ, որ ես ինքս պէտք ունէի այդ զրոյցին այդ օրը: Ատիկա քաջալերեց զիս ամբողջ օրուան ընթացքին, որ շատ ծանր էր: Յուսամ ձեզմէ ոչ ոք դաժան կերպով կը դատուի եւ հերետիկոս կը կոչուի: Եթէ քեզ այդպէս կոչեր են, գիտես, որ ատիկա կը ցաւնէ:

Բայց յանձնուելու եւ հիասթափութեան ճահիճին մէջ թաւալելու փոխարէն, ես սորված եմ ետեւ նայիլ եւ տեսնել Աստուծոյ շարունակողական հաւատարմութիւնը: Ան շալկեց զիս ամէն անգամ, որ կը կարծէի, թէ օր մը ես չեմ դիմանար: Աստուծոյ հաւատարմութեան մասին ես աւելի սորված եմ իմ թշնամիներէս, քան իմ բարեկամներէս:

Բարեկամները ապաստանարան կ'առաջարկեն քեզի: Թէեւ ապաստանարանը լաւ բան է, բայց անիկա չ'օգտեր քու աճիդ: Բարեկամները կ'ուզեն քեզ պաշտպանել կեանքին փոթորիկներէն, իսկ թշնամին ամէն ինչ կ'ընէ, որ քեզ դուրսը ձգէ՝ յորդառատ անձրեւին տակ: Բայց թերեւս դուն կեանքի այնպիսի եղանակի մը մէջ ես, երբ Աստուած կ'ուզէ, որ սորվիս, որ Ինքն է քու վերջնական ապաստանարանդ: Ուրեմն ո՞վ աւելի լաւ կը սորվեցնէ քեզի, թշնամի՞ն, թէ՛ բարեկամը:

Մրցակիցները կամ թշնամիները այս կեանքի

իրականությունն են: Գիտեմ: Կը ներես: Ես ալ չեմ սիրեր  
ատիկա, բայց իրականութիւն է: Բայց անոնց ներկայութիւնը  
քու կեանքիդ մէջ յատուկ նպատակ մը ունի: Առանց  
մրցակցութեան կեանք մը կառուցելը չի նշանակեր կեանքէդ  
բոլոր մրցակիցները հեռացնել, այլ՝ հասկնալ, որ ամէն բան  
իրապէս բարիի գործակից կը դառնայ մեզի համար, երբ  
մենք Աստուծոյ նպատակին համաձայն կանչուած ենք: Մենք  
կրնանք օգտագործել մրցակցութիւնը, որպէսզի ասելի մեծ  
աճ եւ իմաստութիւն ունենանք:

Եթէ ճիշդ ձեւով նայինք մեր թշնամիներուն, զանոնք  
կրնանք օգտագործել իբրեւ խթան, որ կը բացայայտէ  
մեր տկար կողմերը եւ մեզ կը մղէ, որ զարգացնենք մեր  
զօրաւոր կողմերը: Թշնամիները կը ստիպեն մեզի, որ մեր  
սահմաններէն անդին երթանք եւ կը դրդեն, որ վեր նայինք,  
երբ մենք մեզ առանձին կը զգանք:

Թերեւս կը մտածես. «Մէկ վայրկեան: Քիչ առաջ դուն  
կ'ըսէիր, որ ես անզուգական դուստր մըն եմ, որ չունի  
մրցակիցներ, որ ես անզուգական խոստումի մը ժառանգորդն  
եմ եւ ստեղծուած եմ անզուգական Աստուած մը պաշտելու  
համար»:

Այդ ամէնը ճիշդ է: Աստուծոյ աչքին դուն անզուգական  
դուստր ես: Դուն քեզ այսպէս պէտք է տեսնես քու Ստեղծիչիդ  
հետ քու յարաբերութեանդ մէջ, եւ պէտք է մարդոց հետ  
հաղորդակցիս այս տեսանկիւնէն մեկնելով: Բայց մենք ասելի  
քան միամիտ կ'ըլլանք, եթէ ձեռացնենք, որ մրցակցութիւն  
գոյութիւն չունի, եւ թէ խոստումները մեզի կու գան առանց  
ճակատամարտի: «Դ՛ուք էք աշխարհի լոյսը» հռչակումը  
(Մատթէոս 5.14) չի ժխտեր խաւարին գոյութիւնը: Անզուգական  
դուստր ըլլալդ չի նշանակեր, որ դուն այլեւս մրցակիցներու  
կամ թշնամիներու պիտի չհանդիպիս, ինչպէս լոյս ըլլալդ չի  
նշանակեր, որ երբեք պիտի չհանդիպիս խաւարին:

«Մրցակից» բառը կրնայ արտայայտուիլ երեք տարբեր

ծեւերով՝ իբրեւ գոյական, ածական եւ բայ:

Քերականականօրէն այս բառը կրնայ նշանակել ուեւ անձ, վայր կամ առարկայ, ըլլալ ուեւ անձի, վայրի կամ առարկայի յատկանիշ, եւ վերջապէս կրնայ գործածուիլ իբրեւ ուեւ անձի, վայրի կամ առարկայի արարքները: Իբրեւ գոյական, «մրցակից» բառը լայն իմաստ ունի՝ սկսելով դրական իմաստներէն, ինչպէս՝ «ընկերակից», «հաւասար», կամ «մրցող» բառերը, մինչեւ աւելի բացասական իմաստները, ինչպէս՝ «հակառակորդ», «թշնամի», կամ «ոսոխ» բառերը: Իբրեւ ածական, «մրցակից» բառին իմաստներն են՝ ընկերոջ հետ մրցելէն մինչեւ թշնամիի դէմ պայքարիլը: Եւ վերջինը, իբրեւ բայ, «մրցակցիլը» կրնայ նշանակել թէ՛ «համապատասխանել», «նմանիլ», կամ «բաղդատել», թէ՛ «տիրապետել», «գերազանցել», «դէմ դնել» եւ «անցնիլ»:

Մրցակիցները իրական են: Շատ հաւանական է, որ հիմա մէկը իր մրցակիցը կը համարէ քեզ, իսկ դուն նոյնիսկ անկէ տեղեակ չես: Շատեր իրենք զիրենք մրցակից չեն համարեր, եթէ մարզախաղի կամ ակադեմական կամ տօնական շքերթի մրցոյթներու մասնակիցներ, գիտական մրցանակներու թեկնածուներ կամ քաղաքական թեկնածուներ չեն: Դուն գործի չես երթար՝ ակնկալելով, որ մրցակիցներու պիտի հանդիպիս, եւ բնաւ չես ակնկալեր, որ մրցակիցներ պիտի գտնես եկեղեցիին մէջ: Բայց մրցակիցներ կան կեանքի բոլոր մարզերուն մէջ, եւ դուն չես կրնար որոշել, թէ վերջաւորութեան մարդիկ ինչպէս պիտի ընտրեն տեսնել քեզ: Կը ներես: Նոյնիսկ եթէ օգտուիս ընկերութեան հետ կապեր ստեղծելով զբաղող լաւագոյն ընկերութեան ծառայութիւններէն, դուն միայն կը փորձես ազդել մարդոց պատկերացումին վրայ: Որքան շուտ ընդունիս ասիկա, այնքան լաւ: Լաւ լուրը այն է, որ դուն կատարեալ ազատութիւն եւ իշխանութիւն ունիս որոշելու, թէ ինչպէս դուն կ'ընտրես տեսնել ուրիշները: Իրականութեան մէջ, երբեմն, երբ մարդոց հանդէպ վերաբերումը կը փոխես, անոնց

վերաբերումը քեզի հանդէպ արմատապէս կը փոխուի: Այդ մասին աւելի երկար պիտի խօսիմ յաջորդ գլուխներուն մէջ:

Անկախ անկէ, թէ ինչ են մրցակիցին շարժառիթները, դուն միշտ կրնաս շրջել մրցակցութիւնը յօգուտ քեզի: Միայն պէտք է յիշես այս երկու կարեւոր սկզբունքները հակակշռելու մասին.

1. Դուն չես կրնար հակակշռել կամ կառավարել ուրիշներուն ըսածները, միտքերը, արարքներն ու զգացումները եւ պատասխանատու չես անոնց համար:
2. Դուն կրնաս հակակշռել քու խօսքերդ, միտքերդ, արարքներդ եւ զգացումներդ, եւ պատասխանատու ես անոնց համար:

Բոլորս գիտենք, թէ ինչպէս մրցակիցները կրնան վնասել մեզի, բայց այս բաժինին մէջ կ'ուզեմ ցոյց տալ, թէ ինչպէս անոնք կրնան օգուտ բերել մեզի:

## **Մրցակիցները Ի Յայտ կը Բերեն Աստուծոյ Զօրութիւնը**

Ծնած պահուն պահուած, թագաւորին աղջկան ձեռքով փրկուած եւ Փարաւոնին տան մէջ մեծցած Մովսէսին կեանքը սկիզբէն խորհրդաւոր եւ զարմանահրաշ էր: Աստուած օգտագործեց այս ամէնը՝ Մովսէսին կեանքը պահպանելու համար: Բայց ինչպէս մենք, Մովսէսը սորվեցաւ, որ կեանքի կոչումը ի յայտ կու գայ ճակատումի եղանակներուն ընթացքին, եւ ոչ թէ՛ հանգիստի եղանակներուն:

Մովսէս դժուար ձեւով սորվեցաւ ասիկա, երբ փորձեց իր լուծումները ընել: Անոր իբրեւ արդիւնք ան աքսորուեցաւ իր երկրէն եւ այն բոլոր բաներէն, որոնց ծանօթ էր: Կը կարծեմ, որ ան կը զգար, որ իր բնակութիւնը անապատին մէջ կը նմանէր երկարատեւ ընդմիջումի մը: Յետոյ յանկարծ Աստուած իր ձեռքը դրաւ Մովսէսի ուսին երբ ան անապատին ետեւի մասն էր, ուր փախստականի պէս կ'ապրէր: Մենք կրնանք դաս քաղել այս պատմութենէն: Պարզապէս որովհետեւ բան

մը լաւ ձեւով չես կառավարած անցեալին, չի նշանակեր, որ դուն այլեւս անոր հետ գործ պիտի չունենաս ապագային: Մովսէս գիտէր, թէ իր կեանքը ինչո՞ւ պահպանուած էր, եւ կը զգար, որ ինչ կոչում ունէր Աստուծմէ, բայց ան փրկիչի նկարագիր չունէր: Աստուած պէտք էր խորութիւն ձեւաւորէր Մովսէսին սիրտին մէջ, բան մը, որ պալատական կեանքը երբեք չէր կրնար զարգացնել: Աստուած գաղտնօրէն կը պատրաստէ մեզ այն բանին համար, որ մենք բացայայտ կերպով պիտի դիմագրաւենք ապագային: Եկաւ այն օրը, երբ փոխուած Մովսէսը վերադարձաւ իր եղբօր՝ Ահարոնին, իր քրոջ՝ Մարիամին եւ Իսրայէլի ժողովուրդին: Ժամանակի լրումին Աստուած օժեց զինք իբրեւ փրկարար եւ դեսպան, որպէսզի հանդիպէր Փարաւոնին:



**Կոչումը ի  
յայտ կու գայ  
ճակատումի  
եղանակներուն  
ընթացքին, եւ ոչ  
թէ՛ հանգիստի  
եղանակներուն:**

Աստուած կը պատրաստուէր համաշխարհային համբաւ տալ Մովսէսին՝ ստիպելով անոր, որ երթայ իր թշնամիին՝ Փարաւոնին քով: Երբ Աստուած կը դրկէ Մովսէսը Փարաւոնին, անոր կը յայտնէ, որ Փարաւոնը իրեն մտիկ պիտի չընէ.

Դուն խօսէ ամէն ինչ, որ քեզի կը պատուիրեմ, եւ քու եղբայրդ՝ Ահարոն

թող ըսէ Փարաւոնի, որպէսզի Իսրայէլի որդիները արձակէ իր երկրէն: Ես Փարաւոնի սիրտը պիտի խստացնեմ, ու իմ նշաններս եւ հրաշքներս Եգիպտոսի երկրին մէջ պիտի բազմապատկեմ: Փարաւոն ձեզի մտիկ պիտի չընէ. ես ալ ձեռքս Եգիպտոսի վրայ պիտի դնեմ, եւ իմ զօրաբաժիններս, իմ ժողովուրդս, Իսրայէլի որդիները, մեծ դատաստաններով պիտի հանեմ Եգիպտոսի երկրէն: Ու երբ իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկարեմ եւ Իսրայէլի որդիները անոնց մէջէն հանեմ, Եգիպտացիները պիտի գիտնան, թէ ես եմ Տէրը: (Ելքի 7.2-5)

Աստուած նպատակ ունէր այդ առաքելութեան մէջ, որ, կը թուէր, թէ ձախողութեան դատապարտուած էր: Փարաւոն իր կարեւոր դիրքը ստացած էր, որպէսզի ամբողջ աշխարհի մարդոց առջեւ զԱստուած մեծարէր.

Արդարեւ հիմա ձեռքս պիտի երկարեմ՝ որպէսզի քեզ ու քու ժողովուրդդ ժանտախտով զարնեմ, ու երկրի վրայէն պիտի անհետանաս: Քեզ նշանակեցի [Փարաւոն], որպէսզի իմ կարողութիւնս քեզմով ցոյց տամ, եւ ամբողջ երկրի վրայ իմ անունս հռչակուի: (Ելքի 9.15-16)

Մրցակիցները ի յայտ կը բերեն Աստուծոյ զօրութիւնը: Եգիպտոսի հետ հակամարտութեան նպատակն էր՝ բարձրացնել եւ զատորոշել ճնշուած ժողովուրդ մը, որ, ապրելով կռապաշտ ազգի մը մէջ, կը պաշտէր ձեւ եւ անուն չունեցող Աստուած մը: Ինչ հակամարտութիւն Աստուած կրնայ գործածել այսօր, որպէսզի ցոյց տայ, որ Իր ձեռքը քու վրադ է, եւ ազատէ ճնշումէ եւ հարստահարումէ թէ՛ քեզ, թէ՛ ուրիշները: Ուշադիր եղիր, թէ ինչը կը պայքարի քու կոչումիդ դէմ. թերեւս քու թշնամիդ կամ մրցակիցդ քու պարգետդ է:

Ո՛վ հռչակաւոր դարձուց Դաւիթ Թագաւորը. մարգարէ՛ մը, հայրը, թէ՛ բարեկամ մը: Ո՛չ, անոր հռչակաւոր դարձնողը թշնամին էր՝ Գողիաթը:

Եթէ չ'ըլլար այդ դէմ առ դէմ ճակատումը փղշտացի հակառակորդին հետ, Դաւիթը պիտի շարունակէր մնալ անյայտութեան անապատին մէջ: Ի վերջոյ ան իր ութը եղբայրներուն ամենակրտսերն էր: Թէեւ Դաւիթը Սամուէլ մարգարէին կողմէ թագաւոր օծուած էր, բայց կային քանի մը հակառակորդներ, որոնք տակաւին պէտք է կանգնէին անոր ճամբուն մէջ մինչեւ անոր թագաւոր դառնալը: Օծութիւնը կը զատէ քեզ, բայց դուն կը բարձրանաս, երբ Գողիաթներու դէմ կը պայքարիս:

Երբ Գողիաթը յայտնուեցաւ ճակատամարտի դաշտին

մէջ, ատիկա հաւանաբար Սաւուղը կոիւի մէջ մտցնելու փորձ մըն էր: Սաւուղը Իսրայէլի պաշտպանն էր եւ հմուտ պատերազմիկ մը, թէեւ ան Գողիաթի պէս բարձրահասակ չէր: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Սաւուղ ամբողջ Իսրայէլի ժողովուրդէն աւելի բարձր էր՝ ուսերէն վեր: Ըստ ուսումնասիրողներուն, Սաւուղին հասակը 1.8-2 մետր էր: Գողիաթին հասակը 2.7 մետրէն աւելի էր:

Պատերազմիկ Գողիաթը շատ աւելի բարձրահասակ էր Սաւուղ թագաւորէն, իսկ Սաւուղ թագաւորը՝ հովիւ Դաւիթէն: Բայց Դաւիթ ունէր բան մը, որ իր ցած հասակին պակասը կը լրացնէր: Դաւիթը «հաստատակամ» էր: Հաստատակամ մարդիկ քաջ, խիզախ, նպատակաուղղուած եւ վճռակամ են: Վերջերս ԱՄՆ-րու «Ուեսթ Փոյնթ» զինուորական ակադեմիային մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ, թէ «հաստատակամութիւնը» աւելի ճշգրտօրէն կ'որոշէ, թէ որ քատէթները (զինուոր ուսանողները) պիտի աւարտեն ակադեմիան, քան անոնց ընդունման քննութիւններուն նիշերը եւ ուսման մէջ յառաջդիմութիւնը:<sup>1</sup> Ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէր ինքնագնահատում մը, որ կը չափէր անձնական հաստատակամութեան գործօնը 1-5 սանդղակով:

Վստահ եմ, որ Դաւիթին հաստատակամութեան չափը 5+ (5-էն աւելի) էր: Առանց մեծ հաստատակամութեան՝ մէկը չի կրնար յարձակիլ արջի եւ առիծի վրայ: Ան այնքան հաստատակամ էր, որ կասկած չունէր հսկայի մը հետ իր պայքարին արդիւնքէն: Սաւուղ աւելի բարձրահասակ էր, բայց վստահ եմ, որ անոր հաստատակամութիւնը շատ աւելի պակաս էր, քան Դաւիթինը: Մարդը չի կրնար առասպել դառնալ՝ առանց հաստատակամութեան: Հաւասար ուժերով կոիւը յաղթելու մէջ առասպելական ոչինչ կայ: Անհաւասարութիւնը պէտք էր այնքան մեծ ըլլար, որ բոլոր տեսնողները յանկարծակիի գային: Բոլորը պէտք է հեռանային այդ տեղէն՝ ըսելով. «Չէի սպասեր, որ այդպէս ըլլար, բայց

ատիկա հրաշալի էր»: Դաւիթին հակառակորդը պէտք էր այնքան վիթխարի ըլլար, որ Դաւիթը անմիջապէս հանրայայտ դառնար: Հոչակաւոր, բայց անվճռական Սաւուղին համբաւը եւ փղշտացիներուն ախոյեանին տարածած սարսափը անզուգական պատերազմիկ դարձուցին Դաւիթը:

«Դաւիթը եւ Գողիաթը» խորագիրով իր գիրքին մէջ հեղինակ Մելքում Կլետուէլը խորաթափանց կերպով կը մատնանշէ.

«Այն բոլոր բաները, զորս արժէքաւոր կը սեպենք այս աշխարհի մէջ, մեծ մասամբ կը ծագին այս տեսակի անհաւասար պայքարներէն, քանի որ սեփական ուժերը մեծապէս գերակշռող պայմաններ դիմագրաւելը, որոնց դիմաց յաջողութիւնը շատ անհաւանական է՝ վեհութիւն եւ գեղեցկութիւն կը ստեղծէ ..... Անհաւասար մրցակից ըլլալը կրնայ այնպիսի փոփոխութիւն յառաջացնել մարդոց մէջ, որ յաճախ չենք գնահատեր. ատիկա կրնայ դռներ բանալ, առիթներ ստեղծել, կրթել, լուսաւորել եւ իրագործելի դարձնել, այն, ինչ որ այլապէս անհաւատալի պիտի թուէր»:<sup>2</sup>

Երբ դիրքաւորուած ես դիմագրաւելու մրցակից մը, որուն անկարելի է յաղթել, դուն ունիս երկու ընտրութիւն՝ յանձնուիլ եւ զիջիլ կամ՝ ամբողջ հասակովդ կանգնիլ եւ արթնցնել քու ներսիդիդ գտնուող հաստատակամութիւնը, որ աւելի մեծ է, քան հակառակորդը:

Դաւիթը թօթափեց իր վրայէն Սաւուղ թագաւորին զրահին սահմանափակումները եւ կանչեց իր Աստուծոյն անունը.

Դաւիթ Փղշտացիին ըսաւ. «Դուն ինձի սուրով, նիզակով ու տէգով կու գաս, բայց *ես զօրքերու Տիրոջ*, քու նախատած *Իսրայէլի զօրասիւններուն Աստուծոյն անունով քեզի կու գամ*: Այսօր Տէրը քեզ իմ ձեռքս պիտի մատնէ. ես քեզ պիտի մեռցնեմ, վրայէդ գլուխդ պիտի առնեմ, եւ



Փղշտացիներու բանակին դիակները այսօր երկինքի թռչուններուն ու երկրի գազաններուն պիտի տամ. որպէսզի ամբողջ երկիրը գիտնայ, թէ Իսրայէլի մէջ Աստուած կայ (Ա.Թագաւորներուն 17.45-46, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Բացի անկէ, որ Գողիաթին շնորհիւ Դաւիթը սկսաւ քալել դէպի իր կոչումը, փղշտացիին դէմ անոր յաղթանակը ցոյց տուաւ ամբողջ աշխարհին, որ Աստուծոյ ձեռքը Իսրայէլի վրայ էր: Գիտեմ, որ դուն ալ, Դաւիթի պէս, զԱստուած հռչակաւոր դարձնելու քաղցը եւ ձգտումը ունիս: Այս աշխարհի մէջ դեռ կան Գողիաթներ: Անոնք մարտահրաւէր կը կարդան մեզի դէմ եւ կը նախատեն Աստուծոյ գոյութեան գաղափարը: Այս հսկաները կը ծպտուին իբրեւ կռուական մարդիկ դպրոցին մէջ եւ գործատեղիին մէջ, կամ ի յայտ կու գան ընկերային կարծիքի դիմակով: Ժամանակն է, որ դադրինք ժայռերու ետեւ պահուլտելէ եւ յառաջ վազենք՝ Աստուծոյ Խօսքը մեր շուրթներուն վրայ ունենալով:

Դուն լեցուած ես նոյն Հոգիով, որ Քրիստոսը գերեզմանէն յարուցանեց: Հակառակորդները կ'ուզեն, որ դուն կռուիս իրենց պայմաններուն համաձայն եւ միայն քու սեփական ուժերովդ: Դուն այդպէս պէտք չէ ընես: Դուն այդ բոլորէն վեր պէտք է ըլլաս: Իբրեւ Աստուծոյ անզուգական զաւակները՝ մենք ճիշդ կը վարուինք, երբ չարը պարտութեան կը մատնենք: Ի վերջոյ, ասիկա ոչ թէ մեր փառքին համար է, այլ՝ Անոր:

Գողիաթը հռչակաւոր դարձուց Դաւիթը: Ընկերային ցանցերը կրնան տուեալ անձ մը հռչակաւոր դարձնել: Բայց համբաւը չէ, որ թագաւոր կը դարձնէ մարդը: Սխալ գործածելու պարագային համբաւը կը դառնայ եսակեդրոն բռնակալներ գոհացնելու միջոց մը, եւ ոչ թէ գործիք՝ ծառաներ պատրաստելու համար: Աստուած պէտք չունէր անապահովութեան զգացում ունեցող ուրիշ մէկ առաջնորդ մը եւս, ինչպիսին Սաուլն էր: Ան պէտք ունէր այնպիսի մարդու մը, որ կը պաշտէր զինք եւ բացայայտ կերպով կը ցուցադրէր

Իր զօրութիւնը: Մենք մեր Աստուծոյն թագաւորները եւ քահանաներն ենք: Մենք նուիրուած ենք մեր Աստուծոյն, ոչ թէ մարդկային համբաւին: Դաւիթը ունէր Աստուծոյ վախը, իսկ Սաւուղը մարդոցմէ կը վախնար:

Հռչակաւոր ըլլալու հակառակ կողմը այն է, որ դուն երկրպագուներ ունիս, եւ ոչ թէ՛ աշակերտներ կամ հետետորդներ: Երկրպագուները անհաստատ են: Այսօր անոնք կը սիրեն քեզ, իսկ վաղը կ'ատեն: Դաւիթ թագաւորը երկրպագուներու պէտք չունէր: Ան պէտք ունէր այնպիսի տղամարդոց եւ կիներու, որոնք պատրաստ էին իրենց կեանքերը նուիրելու: Բարեպաշտ թագաւորները պէտք ունին իմաստուն խորհրդատուներու, հաւատարիմ բանակի եւ հաւատարիմ ծառաներու: Այդպիսի մարդիկ գրաւելու համար Դաւիթը պէտք էր զտուէր: Եւ Աստուած նախատեսած էր ուրիշ մէկ մրցակից մը, որպէսզի Դաւիթը թագաւորութեան համար պատրաստէր:

## **Մրցակիցները ի Յայտ կը Բերեն Քու Կոչումդ**

Մրցակիցները կրնան քեզ դուրս բերել միջակութենէն կամ վար գլորել այն կարեւոր դիրքէն, զոր կը գրաւես: Բարի լուրը այն է, որ դուն ես, որ կ'որոշես, թէ անոնք ինչ պիտի ընեն քու կեանքիդ մէջ: Քու մրցակիցդ կը գերազանցէ քեզ թէ՛ լաւագոյնը դուրս կը հանէ քեզմէ: Այս է պատճառը, որ քու մրցակիցդ կրնայ նաեւ ի յայտ բերել քու կոչումդ:

Դաւիթը զԱստուած ճանչցաւ երբ որդի եւ հովիւ էր: Ան կը պաշտէր զԱստուած Միջին Արեւելքի փայլող աստղերուն լոյսին տակ՝ շրջապատուած իր ոչխարներով: Երբ Դաւիթը ոչխարներ կ'արածէր անապատին մէջ, ան կը կուէր առիծի եւ արջի հետ, եւ կը փրկէր իր ոչխարները: Իսկ հիմա Դաւիթը պիտի սորվէր, թէ ինչ կը նշանակէր հալածուիլ վայրի գազանի մը պէս:

Սաւուղ թագաւորը կատարելապէս պատրաստուած էր հեռացնելու հաստատակամ Դաւիթը մարդոց ներկայութենէն

դէպի Աստուծոյ ներկայութիւնը, ուրկէ Դաւիթ պիտի ստանար իր օծութիւնը, եւ ուր ի յայտ պիտի գար իր թագաւորական կոչումը:

Սաուղին եւ Դաւիթին յարաբերութիւնները չսկսան այնպէս, ինչպէս ասարտեցան: Սկիզբը Սաուղը կը սիրէր Դաւիթը եւ կը տեսնէր Աստուծոյ ձեռքը անոր կեանքին մէջ: Սաուղը մօտեցուց Դաւիթը իրեն, երբ ինքզինք խոցելի կը զգար եւ կը չարչարուէր՝ անոր վստահելով իր թագաւորութեան գործերը: Ա.Թագաւորներուն 18.5-ին մէջ հետեւեալը կը կարդանք.

Ինչ որ ալ Սաուղը կը յանձնարարէր Դաւիթին, ան կը կատարէր եւ լաւ կը կատարէր: Այնքան լաւ, որ Սաուղը գայն նշանակեց՝ իր զինուորական գործողութիւնները ղեկավարելու համար: Բոլորը՝ թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ Սաուղին ծառաները իրենց հաւանութիւնը եւ հիացմունքը կը ցուցաբերէին Դաւիթին ղեկավարութեան հանդէպ (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Սաուղը չէր կրնար աւելի լաւ զօրավար մը խնդրել: Եւ երբ չար ոգի մը կը նեղէր Սաուղը, Դաւիթը տաւիղ կը նուագէր եւ կ'երգէր՝ զինք հանդարտեցնելու համար: Ամէն բան լաւ կ'ընթանար, մինչեւ որ Սաուղ թագաւորը ուրիշ երգ մը լսեց: Հաւանաբար այս պատմութեան ծանօթ ես.

Երբ Դաւիթ Փղշտացին զարնելէն կը վերադառնար եւ զօրքերը կու գային, Իսրայէլի բոլոր քաղաքներէն՝ կիները, երգելով ու պարելով, դուրս ելան Սաուղ թագաւորը դիմաւորելու, թմբուկներով, ուրախութեամբ եւ ծնծղաներով: Իսայտացող կիները կը խմբերգէին ու կ'ըսէին. «Սաուղ իր հազարաւորները զարկաւ, եւ Դաւիթ՝ իր բիւրաւորները»: Ասիկա բարկացուց Սաուղը, շատ բարկացուց: Ան անձնական վիրաւորանք համարեց ատիկա: Ան ըսաւ. «Բիւրաւորները Դաւիթի տուին, իսկ

հազարաւորները ինծի տուին: Շուտով իրեն կու տան թագաւորութիւնն ալ»: Այդ օրէն սկսեալ Սաւուղ ծուռ աչքով կը նայէր Դաւիթի: (Ա.Թագաւորներուն 18.6-9, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նոյնիսկ եթէ երկուքն ալ բառացիօրէն այդքան մարդ չէին սպաննած, Սաւուղը վիրաւորուեցաւ այդ բաղդատութենէն: Կարծես այդ կիներուն երգը բացաւ Սաւուղին աչքերը, որմէ ետք ան բացաւ իր բերանը եւ մարգարէացաւ իր կործանման մասին: Կիները այդ երգը կ'երգէին՝ ամբոխը ոգետրելու համար, բայց Սաւուղին համար ատիկա բնաւ զուարճալի չէր: Ատիկա ցաւոտ յիշողութիւն մը արթնցուց անոր մէջ: Տարիներ անցած էին այն օրուրնէ, երբ մարգարէն Սաւուղին ըսեր էր, որ իր անհնազանդութեան պատճառով ան պիտի կորսնցնէր իր թագաւորութիւնը: Սամուէլ յայտարարած էր, որ Իսրայէլի թագաւորութիւնը պիտի պատռուէր իր վրայէն, եւ պիտի տրուէր իրմէ լաւ եղող ընկերին (Ա.Թագաւորներուն 15.28): Այս երգով Սաւուղին կեանքին հիսուածքը սկսաւ պատռուիլ: Մէկ ակնթարթի մէջ ան չարագուշակութեամբ լեցուեցաւ, երբ հասկցաւ, որ Դաւիթը պիտի փոխարինէր զինք: Բայց Սաւուղը բնաւ մտադիր չէր խաղաղ կերպով յանձնելու գահը:



**Քու մրցակիցդ  
կը գերազանցէ՞  
քեզ թէ՛  
լաւագոյնը դուրս  
կը հանէ քեզմէ:**

Երբ դուն անապահովութեան զգացում ունիս, նոյնիսկ մէկ անբարենպաստ բաղդատութիւն կրնայ մէկ ակնթարթի մէջ քու ընկերդ մրցակիցի վերածել: Սաւուղը դադրեցաւ Դաւիթը տեսնելէ իբրեւ արժէքաւոր օգնական մը, որ փաստած էր իր հաւատարմութիւնը. Դաւիթը սպառնալիք դարձաւ անոր համար: Յանկարծ ամէն ինչ փոխուեցաւ:

Հետեւեալ օրը Աստուծմէ չար ոգի մը Սաւուղը համակեց, ու տան մէջ մարգարէութիւն ըրաւ: Դաւիթ ուրիշ օրերու պէս իր ձեռքով քնար կը նուագէր: (Ա.Թագաւորներուն 18.10)

Այս խօսքը քիչ մը կը շփոթեցնէ մեր աստուածաբանութիւնը եւ իբրեւ յիշեցում կը ծառայէ բոլորիս ... Աստուած կրնայ գործածել ինչ որ կ'ուզէ՝ Իր նպատակին հասնելու համար: Այս պարագային, ատիկա կը նշանակէր՝ դրկել տանջող ոգի մը, որ զայն այնպիսի մտային եւ զգացական վիճակի մը պիտի հասցնէր, որ ան իր հաւասարակշռութիւնը պիտի կորսնցնէր:

Այդ օրը Դաւիթը իր սովորական գործը կ'ընէր՝ քնար կը նուագէր: Բայց հիմա Սաւուղ ուրիշ բան մը ունէր իր ձեռքը, քանի որ բան մը փոխուած էր իր սիրտին մէջ:

Սաւուղի ձեռքը նիզակ մը կար: Սաւուղ նիզակը նետեց՝ ըսելով.  
«Դաւիթը պատին պիտի գամեմ»: Բայց Դաւիթ երկու անգամ անոր առջեւէն խուսափեցաւ: (Ա.Թագաւորներուն 18.10-11)

Պատկերացո՛ւր այս հակադրութիւնը: Սաւուղը իր տան մէջ կը վագէր՝ նիզակը ձեռքին, իսկ Դաւիթը խաղաղ կերպով պաշտամունքի գործիքը կը նուագէր: Ասկէ ատելի մեծ հակադրութիւն կայ: Ո՛վ իր տան մէջ նիզակով կը վագէ: Սաւուղը վերածուեր էր քարայրաբնակ մարդու մը:

Քանի որ սուրերու մասին գիրք գրած եմ, մեր տան տարբեր սենեակներուն մէջ քանի մը սուրեր կան, բայց անոնք շատ հազուադէպ կը յայտնուին իմ ձեռքիս մէջ: Ես չեմ համարձակիր անոնցմէ ոչ մէկը իմ ձեռքս առնել, նոյնիսկ իմ ամենաբուռն հորմոնային խանգարումներու օրերուս, քանի որ, երբ մարդը ճնշումի տակ կը գտնուի, ան պատրաստ է նետելու իր ձեռքին մէջ գտնուող որեւէ բան (ես ասիկա կ'ըսեմ իմ փորձառութենէս): Դաւիթը ստիպուած էր խոյս տալ նոյն մարդէն, որ նախորդ օրը իր կողքին կը ձիավարէր, եւ որուն կեանքը ինքը կը պաշտպանէր կոհի ընթացքին:

Դաւիթին *լաւագոյնը* ի յայտ բերաւ *վարագոյնը* Սաւուղին մէջ: Սաւուղը անհանգստացնող չարագուշակութիւնը սաստկացաւ՝ վերածուելով լիովին ձեւաւորուած վախի ոգիի:

*Ուստի Սաւուղ Դաւիթէն կը վախնար: Յարակ էր, որ Տէրը Դաւիթի հետ էր, բայց Սաւուղէն հեռացեր էր:* Սաւուղ Դաւիթը իր քովէն հեռացուց, եւ զայն հազարապետ նշանակեց: Դաւիթ յաճախ պատերազմներու մէջ էր: Դաւիթի բոլոր ըրածները բարեյաջող վախճան կ'ունենային: Այո՛, Աստուած անոր հետ էր: Սաւուղը, տեսնելով, որ Դաւիթը աւելի յաջողակ կը դառնար՝ աւելի վախով կը լեցուէր: (Ա.Թագաւորներուն 18.12-15, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դաւիթին զինուորական յաջողութիւնները պէտք է համարուէին Սաւուղ թագաւորին յաղթանակները: Բայց Սաւուղը Դաւիթի այս քաջագործութիւնները չէր տեսներ իբրեւ իր թագաւորութիւնը եւ իշխանութիւնը ամրապնդող ազդակներ. անոր կարծիքով՝ իւրաքանչիւր ճակատամարտ իր իշխանութիւնը կը խլէր իրմէ: Սաւուղը այլեւս Դաւիթը իբրեւ որդի չէր տեսներ, ոչ ալ անոր ընկերակցութիւնը կը մխիթարէր զինք: Ան կ'ուզէր, որ Դաւիթը իր աչքէն հեռու ըլլար: Բայց անոր պատճառաբանութիւնը այսքանով չբաւարարուեցաւ: Այս պարագային պարզապէս աչքէն եւ միտքէն հեռու ըլլալը բան մը չէր փոխեր: Սաւուղ թագաւորը պատերազմի դրկեց Դաւիթը՝ յուսալով, որ ան կը մեռնի, բայց ատիկա ալ աւելի ամրապնդեց Դաւիթին դիրքը: Որքան Սաւուղ կը փորձէր ոչնչացնել Դաւիթը, այնքան ան աւելի կը բարձրանար:

Երբ Սաւուղ տեսաւ ու հասկցաւ, թէ Տէրը Դաւիթի հետ է, եւ թէ իր աղջիկը՝ Մեղքող զայն կը սիրէ, *Սաւուղ ալ աւելի վախցաւ Դաւիթէն: Սաւուղ ընդմիջօր Դաւիթի թշնամի եղաւ:* (Ա.Թագաւորներուն 18.28-29, շեշտադրումը՝ մեր

կողմէ)

Շատ կարճ ժամանակամիջոցի մէջ Սաւուղին վերաբերումը Դաւիթին հանդէպ փոխուեցաւ. անոր կասկածը վերածուեցաւ վախի, եւ յետոյ՝ ատելութեան: Դաւիթը այլեւս սիրելի որդի, պատերազմական հերոս եւ համախոհ չէր: Ան իբրեւ օրինազանց պիտակուեցաւ: Բարեհաճութեան կարճատեւ շրջանը Սաւուղին պալատին մէջ աւարտեցաւ: Յանկարծակիի գալով եւ վախնալով այս փոփոխութենէն, զոր ինք ոչ մէկ ձեւով չէր գրգռած՝ Դաւիթը փախուստի դիմեց, որպէսզի փրկէր իր կեանքը:

Թագաւորին պալատէն հեռանալէ ետք, Դաւիթին կեանքին մէջ բոլորովին նոր հանգրուան մը սկսաւ: Ի հակադրութիւն այն կարգավիճակին եւ վարձատրութիւններուն, զորս ան կը վայելէր՝ այս հանգրուանը լեցուն էր շարունակողական մերժումներով, դաժան վերաբերումով, ինչպէս նաեւ՝ անապատային յուսահատութեամբ եւ վտանգներով: Կարգ մը ուսումնասիրողներու կարծիքով՝ ատիկա մօտաւորապէս ութ տարի տեւեց: Աքսորին եւ անջրդի ժայռոտ տեղերուն մէջ էր, որ Դաւիթ սորվեցաւ այն դասերը, որոնք Աստուծոյ սիրտին համեմատ թագաւոր պիտի դարձնէին զինք:

Դաւիթը կը հալածուէր կատաղի գայլի մը կողմէ, որ քարայրէ քարայր կը քշէր զինք: Ան տրտմեցաւ երբ լսեց, որ Սաւուղը քահանաներն ու անոնց ընտանիքները կոտորած էր, պարզապէս որովհետեւ այդ քահանաները անգիտակցաբար իրեն օգներ էին: Այդ տառապանքով լեցուն տարիներուն ընթացքին Սաւուղին թշնամութիւնը օգնեց Դաւիթին հասկնալու, որ թէ՛ պալատին մէջ, թէ՛ քարայրին մէջ կարելորդ այն էր, որ իր ներսիդին բարեպաշտ բնաւորութիւն ձեւաւորուէր: Դաւիթ կը դիմագրաւէր իր երկրորդ Գողիաթը:

Բացատրեմ:

Չեմ կարծեր, որ շատ հեռու կ'երթամ, եթէ ըսեմ, որ թերեւս Դաւիթը իր հօրը հետ կապուած հարցեր ունէր: Ամէն անգամ,

որ Դաւիթը Սաուղ թագաւորին կը հանդիպէր անապատին մէջ, ան կ'աղաղակէր՝ զայն «հայր» կանչելով: Առաջին Թագաւորներուն 24.12-ը ցոյց կու տայ անոր սիրտին ցաւը.

*Տէս, իմ հայրս, այր՛, տէս, քու պարեգօտիդ քղանցքը ձեռքիս մէջ է. քանի ես պարեգօտիդ քղանցքը կտրեցի, բայց քեզ չմեռցուցի, հասկցիր եւ տէս, թէ ձեռքիս մէջ ո՛չ չարութիւն կայ, ո՛չ ալ յանցանք, ու քեզի դէմ մեղանչած չեմ, բայց դուս զիս կը հետապնդես՝ որ բռնես: (շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Մենք ոչ մէկ պատճառ ունինք՝ մտածելու, որ Դաւիթին եւ անոր հօր միջեւ չարակամութիւն կար, բայց իբրեւ ութերորդ որդի՝ ան դիւրութեամբ կրնար անտեսուած ըլլալ: Դաւիթը կարծես կորսուած էր իր եօթը ասագ եղբայրներուն շուքին տակ: Ինչպէս բոլոր որդիները, Դաւիթը կը յուսար հաւանութիւն եւ ճանաչում ստանալ իր հօրմէն, բայց անոր հայրը՝ Յեսսէն, նոյնիսկ չէր կանչած զինք, երբ Սամուէլ մարգարէն եկած էր օծելու իր որդիները:

Երբ Յեսսէ Սամուէլի առջեւէն իր եօթը որդիները անցուց, Սամուէլ Յեսսէի ըսաւ. «Տէրը ասոնցմէ ո՛չ մէկը ընտրեց»: Յետոյ Սամուէլ Յեսսէի ըսաւ. «Բոլոր երիտասարդներդ հո՞ն են»: Ան ըսաւ. «Տակաւին ամենէն պզտիկը կը մնայ. ահա՛ ան ոչխարները կ'արածէ»: Սամուէլ Յեսսէի ըսաւ. «Մանրդ դրկէ եւ զայն բերել տուր. որովհետեւ մինչեւ որ ան հոս չգայ, մենք սեղան պիտի չնստինք»: (Ա.Թագաւորներուն 16.10-11)

Ինչո՞ւ Սամուէլը ստիպուեցաւ հարցնելու, թէ արդեօք Յեսսէն ուրիշ որդի մըն ալ ունէր: Կը մտածես, որ Յեսսէն պէտք էր Դաւիթը կանչած ըլլար երբ Սամուէլը եկաւ: Այնպէս կը թուի, թէ Յեսսէն չէր տեսներ, որ Դաւիթը կրնար ընտրուած ըլլալ: Եթէ Սամուէլ մարգարէն մեր տունը գար, ես ամէն բան



Կ'ընէի, որ իմ ամբողջ ընտանիքս ներկայ ըլլար: Իրենց հետ կը կապուէի «Սքայփ»ով, «Ֆէյս-Թայմ»ով, կը զանգէի անոնց եւ կ'ըսէի, որ եթէ անոնցմէ մէկը չգար այդ օրը, ինծի հետ գործ պիտի ունենար:

Դաւիթը ունէր եօթը մրցակից, որոնք կը պայքարէին իր հօր ուշադրութիւնը գրաւելու համար՝ իր եղբայրները: Սուրբ գիրքին մէջ մենք չենք տեսներ ջերմութիւն եւ աջակցութիւն Դաւիթին եւ իր եղբայրներուն միջեւ: Օրինակ՝ անոր մեծ եղբայրը զինք հպարտութեամբ ամբաստանեց, նսեմացուց անոր դիրքը իր հօր տան մէջ եւ ամբարտաւան եւ չար սիրտ ունեցող կոչեց զինք (տես Ա.Թագաւորներուն 17.28):

Թերեւս այս է պատճառը, որ երբ կը կարդամ Դաւիթի սաղմոսները, չեմ լսեր անոր բառերը ... կը լսեմ անոր սիրտը: Այդ տողերուն մէջ ես կը տեսնեմ անոր ցաւը, որ ծնած էր տարիներ տեւող մեկուսացումէն եւ յոգնածութենէն: Դաւիթ շարունակ կը փաստէր իր անմեղութիւնը Սաւուղին, բայց պայքարը իր դէմ աւելի կը սաստկանար:

Տեղ մը Դաւիթ անդրադարձաւ, որ իր անմեղութիւնը երբեք պիտի չճանչցուի մարդոց դատարաններուն մէջ: Սաւուղը երբեք պիտի չներէր իրեն: Միայն Աստուած պիտի ընէր ատիկա: Փախչելով եւ պահուրտելով Սաւուղէն՝ Դաւիթը սորվեցաւ փախչիլ եւ պահուրտիլ Աստուծոյ մէջ: Շատեր կ'ուզեն օծեալ ըլլալ, բայց կը մոռնան, որ օծութիւնը կու գայ յատուկ նպատակով մը, որ կը ձեւաւորուի իրենց թշնամիներուն ներկայութեան մէջ:

Յետագային երբ Դաւիթը Աբիսողոմէն կը փախչէր, ան աղաղակեց.

Ո՛վ Տէր, հակառակորդներս ճիշտի շատցան.

ինծի դէմ կանգնողները բազմաթիւ են:

Շատերը իմ անձիս համար կ'ըսեն.

«Աստուծմէ փրկութիւն չկայ ասոր»: (Սելա:)

Բայց, ո՛վ Տէր, դո՛ւն ես իմ վահանս,

Իմ փառքս եւ իմ գլուխս բարձրացնողը:  
Իմ ձայնովս Տիրոջ գոչեցի,  
եւ իր սուրբ լեռնէն ինձի պատասխանեց: (Սելա):  
Ես պառկեցայ ու քնացայ.  
արթնցայ, քանի Տէրը ինձի նեցուկ եղաւ:  
Ես պիտի չվախնամ բիւրաւոր ժողովուրդներէն,  
որոնք զիս շրջապատեցին: (Սաղմոս 3.1-6)

Որքան շատցան անոր թշնամիները: Լաւ հարցում է: Ինչո՞ւ Աստուած պարզապէս չհեռացուց զանոնք: Օրինակ՝ անոնց բոլորը թաղէր անապատային փոթորիկի մը տակ:

Դաւիթը չխնդրեց, որ Սամուել մարգարէն թագաւոր օժէ զինք: Ան հաստատակամ էր եւ չէր կրնար քաջաբար չկանգնիլ իր Աստուծոյն համար: Ան իր Հօրը հաւատարիմ որդին էր եւ իր թագաւորին հաւատարիմ զինուորը: Յովնաթանը չէր կրնար աւելի հաւատարիմ ընկեր մը խնդրել: Նայելով Դաւիթին գործերուն՝ ան անմեղ էր, բայց շարունակ նեղութիւններ կը կրէր իր կեանքին ընթացքին: Ինչն էր պատճառը:

Մենք կ'ուզենք պատճառ մը գտնել, որովհետեւ եթէ պատճառ ըլլայ, մեր կեանքին մէջ գտնուող խառնաշփոթութիւնը իմաստ կ'ունենայ: Բայց ամէն բան անիմաստ կը թուի ըլլալ: Դաւիթ ապրեցաւ այս խօսքերը եւ մարգարէացաւ զանոնք, բայց անոր պայքարը կը մատնանշէր ուրիշ անձի մը պայքարը: Անոր խօսքերը սլացան դէպի ապագան՝ յայտնելով, թէ ինչ պիտի պատահէր Յիսուսի: Ինչո՞ւ կը զարմանանք երբ մեր կեանքին մէջ թշնամիներ եւ մրցակիցներ կը յայտնուին: Առաջին Պետրոսի 4.12,13-ը մեզի կը յիշեցնէ.

Սիրելիներ, տարօրինակ մի՛ սեպէք այն փորձութեան հրդեհը, որ կ'ըլայ ձեզ փորձելու համար, որպէս թէ օտար բան մը կը պատահի ձեզի: Հապա ուրախացէ՛ք՝ քանի որ կը հաղորդակցիք Քրիստոսի չարչարանքներուն, որպէսզի

անոր փառքի յայտնութեան ատենն ալ ուրախանաք  
ցնծութեամբ:

Արտաքին ճնշումը ներքին փոխակերպում յառաջ կը բերէ: Մրցակիցները ի յայտ կը բերեն այն կոչումը, որ Աստուած պատրաստած է մեզի համար: Մենք պէտք է պզտիկնանք, որպէսզի Աստուծոյ փառքը մեծնայ մեր կեանքին մէջ: Թշնամին կամ մրցակիցը այն պարգեւն է, որ կը կազմէ մեր սորվելու, մաքրուելու եւ մարզուելու ընթացքին մէկ մասը: Մարդկային բնութիւնը կը խուսափի դժուարութիւններէն: Բայց եւ այնպէս, երբ նեղութիւն կը կրենք, մենք մասնակից կը դառնանք ոչ միայն Յիսուսի չարչարանքին, այլեւ՝ Անոր փառքին, երբ Ան կը յայտնէ մեզի մեր կոչումը:

## **Մրցակիցները Քեզի կը Ստիպեն, որ Սիրող Պաշտպանես**

Երբ քարեղէն սիրող կը կոտրուի, մարմնեղէն սիրտ մը ի յայտ կու գայ: Երբ կը տեսնես, որ անիմաստ մրցակցութեան մը մաս կը կազմես, սիրող կը զգայ, որ ինք յարձակումի տակ է: Քեզ կը ռմբակոծեն հարցումներ, որոնք պատճառ կ'ըլլան, որ դուն քեզ եւ շարժառիթներդ քննես: Հարցում մը կը ծագի մէջդ. «Արդեօք Էս եմ հարցը: Աստուած, ո՞ր ես: Ինչպէս պատահեցաւ ասիկա: Ինչո՞ւ ասիկա շարունակ կը պատահի»:

Յաճախ այս հարցումներուն միակ պատասխանը, որ կը ստանանք, լռութիւնն է: Կը սկսինք հարցնել, թէ արդեօք Աստուած կը լսէ մեզ: Սորված եմ, որ Ան կը լռէ ընդմիջումի ընթացքին: Տեսարանը պիտի փոխուի եւ դերասանները իրենց տեղերը կը գրաւեն բեմին վրայ: Քաջալերուիր: Կեանքիդ ներկայ հանգրուանը պիտի փոխուի: Փոխանակ դուն քեզ չափես կեանքիդ ներկայ պայմաններով, յիշէ, թէ Ան ինչի՞ մէջէն անցուց քեզ:

Երբ կը լսենք լռութեան մէջ, մենք կը պատրաստուինք

անցնելու: Արդեօք կը հաւատանք Աստուծոյ ըսածին, թէ՛ ականջ կը դնենք մեր մրցակիցներուն, որոնք կը մեղադրեն մեզ: Այն Աստուածը, որ սկսաւ այս բարի գործը մեր մէջ, հաւատարիմ պիտի ըլլայ զայն իր աւարտին հասցնելու: Արդեօք մենք պիտի արտօնենք, որ յարձակումները կարծրացնեն մեր սիրտը, թէ՛ թոյլ պիտի տանք, որ Աստուած բժշկէ զայն: Մենք պիտի կեդրոնանանք թշնամիին, թէ՛ մեր Ստեղծիչին խօսքերուն վրայ:

Սիրելի բարեկամ, ուշադիր եղիր իմ խօսքերուս, դարձնուր ականջներդ իմ ձայնիս: Անոնք քու աչքերուդ առջեւէն թող չհեռանան: Կեդրոնացիր: Գոց սորվիր զանոնք: Անոնք որոնք կը գտնեն այս խօսքերը, կ'ապրին, իրապէս կ'ապրին՝ մարմինով եւ շունչով. անոնք առողջութեամբ կը լեցուին: Պահէ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են: (Առակներու 4.20-23, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Մի՛ նայիր անոնց գործերուն: Մտիկ մի՛ ըներ անոնց ըսածներուն: Մի՛ բաղդատեր քու ներկայ վիճակդ անոնց վիճակին հետ: Հսկէ քու սիրտիդ վրայ եւ անձիդ խորքը պահուած իրաքանչիւր խոստումի վրայ, որ Ան փսփսացած է քեզի: Դադրիր անգործունեայ ըլլալէ եւ Աստուծոյ ձայնը զանազանելու կարողութիւնը զարգացուր մէջդ: Ան պիտի չքաջալերէր քեզ, որ ասիկա ընես, եթէ քեզի հետ խօսելու բուն փափաքը չ'ունենար: Անոր ձայնը ամուր կը պահէ քու սիրտդ:

Այս կեանքին մէջ գրեթէ յաճախ ոչինչ կը փոխուի: Այնպէս որ, դուն չես կրնար գտնել այդ կենդանի եւ անզուգական աստուածային կեանքը, որուն կը ձգտիս, եթէ անփութօրէն փնտռես զայն: Անհրաժեշտ է կեդրոնանալ, քանի որ այս աշխարհը ամէն ինչ կ'ընէ՛ քու ուշադրութիւնդ շեղելու համար:

Եթէ նպատակաուղղուած չըլլաս, կը շեղիս այն բազմաթիւ կողմնակի հանգամանքներով, որոնք կը պայքարին՝ քու ուշադրութիւնդ գրաւելու համար:

Մեր ուշադրութեան կեդրոնը պէտք է ըլլայ Քրիստոսի պատգամը: Մեր Ստեղծիչին խօսքերը ունին զօրութիւնը ծնունդ տալու այն բոլոր բաներուն, որոնք որոշուած են մեր կեանքին համար: Կեանքի աղբիւրին այս դիտումնաւոր զուգամերձութիւնը ներդաշնակութիւն կը բերէ մեր մարմինին եւ անձին միջեւ եւ կը դիրքաւորէ մեզ, որ առողջ, նպատակաուղղուած եւ զօրաւոր դառնանք: Երբ մենք կը կեդրոնանանք Անոր խօսքին վրայ, մեր մրցակիցներուն հետ պայքարելու փոխարէն, կը մտնենք այնպիսի մարզի մը մէջ, որ անհասանելի է անոնց համար:

Մենք պէտք է ոչ միայն կեդրոնանանք Աստուծոյ խօսքին վրայ, որ կը նմանի սերմի, այլեւ պէտք է պահպանենք պարտէզը, այսինքն՝ մեր սիրտը:

Մեծ տարբերութիւն կայ սիրտդ պահպանելուն եւ քանտարկուած սիրտ մը ունենալու միջեւ: Առաջինին պարագային դուն արթուն ես, քանի որ մեծ արժէք ունեցող բան մը կը պահպանես, իսկ երկրորդը կարելի է նմանցնել շրջափակման մէջ գտնուող սիրտին:

Շատ-շատեր կ'որոշեն կարծրացնել իրենց սիրտերը՝ յուսալով, որ այդպիսով անիկա աւելի կը պաշտպանուի, մինչեւ այն պահը, երբ կը զգան, որ անիկա կրնայ ապահով կերպով բժշկուիլ: Աճման շրջանիս ես յաճախ կ'ընտրէի այս ռազմավարութիւնը: Սկիզբը մեծ թեթեւութիւն կը զգայի: Ես մարդիկը կը հեռացնէի իմ կեանքէս, երբ անոնք կը վիրաւորէին զիս: Ես այնքան յաճախ ուժգին կերպով կը փակէի սիրտիս դուռը, որ արդէն ապահով կերպով կը փակէի սիրտիս դուռը, որ արդէն ապահով կերպով կը փակուած էի: Ես այնքան երկար ժամանակ փակ պահած էի իմ սիրտս, որ զայն իմ բանտարկեալս դարձուցած էի: Կը կարծէի, թէ անթափանցելի դարձած էի ցաւին համար, բայց

յետագային անդրադարձայ, որ ես նաեւ անզգայ դարձած էի ուրախութեան հանդէպ:

Սիրտդ պահել կը նշանակէ զայն պաշտպանել, ոչ թէ՛ բանտարկել: Եթէ սիրտդ փակած ես, ժամանակ յատկացուր աղօթքի համար: Խնդրէ՛ Աստուծմէ, որ ազատ արձակէ սիրտդ իր քարէ բանտէն եւ զայն փոխարինէ այնպիսի սիրտով մը, որ թէ՛ ուրախութիւն կը զգայ թէ՛ ցաւ:

Գիտեմ, որ այդպիսով դուն ցաւ պիտի զգաս, բայց մի՛ զսպեր քու արցունքներդ: Թոյլ տուր, որ անոնք հոսին եւ ոռոգեն քու սիրտդ, որպէսզի անհկա զգայուն մնայ: Մի՛ խեղդեր քու ցաւդ թմրեցուցիչներու կամ ալքոլի մէջ, որոնք կը խեղաթիւրեն քու զգայարանքներդ եւ պատճառ կ'ըլլան, որ անկումի մէջ ապրիս: Մի՛ խաւարեցներ միտքդ վրիժառութեան մասին միտքերով, որոնք անձդ կը սեցնեն: Դադրիր այդ բոլորին մասին անդադար մտածելէ: Նստիր եւ լաց այնքան, որքան պէտք ունիս: Առանձնացիր եւ թոյլ տուր, որ ցաւը քեզ հարուածէ իր ամբողջ ուժով: Երբ հանդարտիս, երեսդ դէպի երկինք դարձնուր եւ ձայնդ Աստուծոյ բարձրացուր: Հետեւիր Դաւիթին օրինակին եւ ամէն օր քու անձդ, քու դատդ, քու թշնամիներդ Աստուծոյ վստահէ: Այս բոլորը ամփոփուած է Սաղմոս 51.8-12-ին մէջ.

Բերկրանք եւ ուրախութիւն լսել տուր զիս.  
 թող խայտան այն ոսկորները՝ որ ճզմեցիր:  
 Ծածկէ երեսդ իմ մեղքերէս,  
 ու ջնջէ բոլոր անօրէնութիւններս:  
 Մաքրուր սիրտ ստեղծէ իմ մէջս, ո՛վ Աստուած,  
 ուղիղ հոգի վերահաստատէ իմ ներսս:  
 Չիս մի՛ վտարեր ներկայութենէդ,  
 եւ ինձմէ մի՛ առներ քու Սուրբ Հոգիդ:  
 Վերադարձնուր ինձի քու փրկութեանդ բերկրանքը,  
 ու յօժարակամ հոգի մը նեցուկ թող ըլլայ ինձի:

Կարծրացած, գերուած սիրտը կը խուլնայ, իսկ կապուած ոսկորները չեն կրնար պատասխանել: Ուրիշները դատողները միշտ կ'ապրին իրենց սեփական մեղքին ծանրութեան տակ: Միայն Աստուած կրնայ մաքրել այն, ինչ որ կ'աղտոտէ մեր սիրտը, եւ շտկել այն, ինչ որ սխալ է, որպէսզի մենք կրկին բարձր գլուխով կանգնինք Անոր ներկայութեան մէջ:



**Արդեօք  
մենք պիտի  
արտօնենք, որ  
յարձակումները  
կարծրացնեն մեր  
սիրտը, թէ՛ թոյլ  
պիտի տանք, որ  
Աստուած բժշկէ  
զայն:**

Կարծրացած սիրտերը չեն դիմանար Աստուծոյ ներկայութեան: Անոնք կը մեկուսանան կամ կը նախընտրեն ծաղրողներուն ընկերակցութիւնը, որոնք կը ծաղրեն ցաւը այն մարդոց, որոնք ընտրած են բժշկութեան զգայուն ճամբան:

Կրկին կը զգուշացնեմ քեզ, շատեր կը սկսին այս մօտեցումով, բայց յետագային, երբ արդէն ուշ է, կ'անդրադառնան, որ իրենց սիրտերը ոչ թէ պահուած էին, այլ՝ բանտարկուած:

Կարեկցանքը եւ գթասրտութիւնը կը հեռանան՝ տեղի տալով դաժանութեան եւ անտարբերութեան: Մեծ տարբերութիւն կայ սրբազան գանձ մը պահպանելու եւ սիրտդ կղպանքի տակ պահելու միջեւ:

Երբ կը զգանք, որ մեր սիրտը պարապ եւ անպտուղ է, ժամանակն է, որ մեր շուրթները երգով լեցնենք: Սաւուրը այնքան տանջուած էր, որ չէր կրնար երգել ինքն իրեն համար, ուստի, Դաւիթը կ'երգէր Սաւուրին համար՝ անոր տանջանքները զսպելու համար: Մեզ շրջապատող երգերը որոշ բաներ հեռու կը պահեն, բայց մեզի հետ իսկապէս նշանակալի բան մը տեղի կ'ունենայ, երբ մեր ներսիդին երգ կը բարձրանայ: Երբ մենք կ'երգենք, միայն լսելու փոխարէն, մեր սիրտերը կը բացուին եւ մեր եւ մեր Ստեղծիչին միջեւ կապ մը կը ստեղծուի:

Սաւուր թագաւորը թէ՛ կը խօսէր, թէ՛ կը վարուէր առանց

մտածելու: Անոր սիրտին մէջ գտնուող խռովութիւնը կը տեսնուէր իր արարքներուն մէջ: Մենք կրնանք սորվիլ հանդարտեցնել մեր սիրտը այնպէս, ինչպէս Դաւիթը կ'ընէր.

Ուղքերս գետինին վրայ պահած եմ. իմ ներսիդիս հանդարտ սիրտ մշակած եմ: Մանուկի մը պէս, որ գոհունակ է իր մօր գիրկին մէջ, իմ անձս գոհունակ է՝ մանուկի մը պէս: (Սաղմոս 131.2, Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Կրնամ բաժնեկցիլ բան մը, որ քիչ մը ամօթալի է: Իմ անձս մանուկի մը պէս հանդարտեցնելու փոխարէն ես հակում ունիմ վարուելու մանուկի մը պէս: Տասնամեակներ առաջ մեր եկեղեցիին մէջ երգ մը կար՝ Սաղմոս 3-ին բառերով: Երբ այդ երգը կ'երգուէր, ես կու լայի փոքրիկ մանուկի մը պէս: Տան մէջ այդ երգին վրայ կը պարէի: Իմ սուգս կը նմանցնէի այն բանին, որ Դաւիթը կը զգար երբ այդ սաղմոսը կը գրէր: Միակ հարցը այն էր, որ ես կու լայի աննշան հարցերու համար: Այո՛, այդ պահուն անոնք մեծ կը թուէին: Ես համոզուած էի, որ մարդիկ այնքան խոր ձեւով վիրաւորած էին զիս՝ որ իմ անձս պատռած էին:

Ետ նայելով՝ ամէն բան ուրիշ ձեւով կը տեսնեմ: Իմ հարցերս աննշան եւ խեղճուկ էին: Թեթեւ բախում մը, կոպիտ խօսք մը, թերեւս փոքր վէճ մը ամուսինիս հետ: Ես շատ կիներու հանդիպած եմ, որոնք ամէն բան կու տային այդպիսի հարցեր ունենալու համար: Հանդիպած եմ քաջ կիներու ուրիշ երկիրներու մէջ, որոնք ամէն օր մահուան սպառնալիք կը կրեն իրենց հաւատքին համար: Ուր որ երթամ, ես կը տեսնեմ զօրաւոր առանձին մայրեր, որոնք անխոնջ կերպով կ'աշխատին՝ իրենց զաւակներուն պէտքերը հոգալու համար: Իսկ բառեր չկան նկարագրելու այն կիները, որոնք ծեծերու կ'ենթարկուին, կը բռնաբարուին, որոնք կը ծախուին իրենց իսկ ընտանիքին անդամներուն կողմէ եւ կ'առեւանգուին:

Ես չեմ նսեմացներ քու ցաւդ: Գիտեմ, որ անիկա իրական է: Բայց երբ մենք իսկապէս յայտնութիւն կը ստանանք, թէ ինչպէս



մեր Աստուածը նոյնիսկ ամենավատ վիճակը ի նպաստ իրեն կը շրջէ, օրը պիտի գայ երբ Յովսէփի նման պիտի ըսենք.

Թէպէտ դուք ինծի դէմ չարիք մտածեցիք, Աստուած մտածեց գայն բարիքի վերածել: (Ծնունդներու 50.20)

Եթէ փոխես քու տեսակէտդ քու մրցակիցներուդ նկատմամբ, Աստուած ցաւէն կը փրկէ քեզ: Թատերագիր Էսմընտ Պըրքը այս սկզբունքը ձեւակերպած է հետեւեալ ձեւով. «Ով որ կը պայքարի մեզի դէմ, մեր ջիղերը կը զօրացնէ եւ մեր հմտութիւնները կը սրէ: Մեր հակառակորդը մեր օգնականն է»:

Սորված եմ, որ եթէ դռներ փակեմ մարդոց դիմաց, ապագային ես ալ փակ դռներու կը հանդիպիմ: Եթէ փորձենք մարդիկը մեկուսացնել, դուրսը մնալու վտանգը կը սպառնայ նաեւ մեզի: Բաց սիրտերը դռներ կը բանան եւ գրկաբաց կ'ընդունին մարդիկը: Աստուած դրկեց Յիսուսը այն յոյսով, որ ոչ ոք դուրսը կը մնայ: Կատարէ՛ այս դժուար աշխատանքը քու սիրտիդ հետ. ջանասիրութեամբ պահէ՛ քու սիրտդ, փոխանակ պահես այն, ինչ որ քու դիրքդ կը սեպես:

Շատեր կ'ուզեն ղեկավար ըլլալ, բայց ազդեցութիւն ունենալը երկսայրի սուր է, որ երկու կողմէն կը կտրէ: Միշտ ալ պիտի ըլլան մարդիկ, որոնք առանց քեզ ճանչնալու կը սիրեն քեզ: Նոյնպէս պիտի ըլլան մարդիկ, որոնք առանց քեզ ճանչնալու կ'ատեն քեզ: Այսպիսի մարդիկ դիտորդներ են: Անոնք քու մրցակիցներդ չեն. անոնք պարզապէս քու կեանքիդ կը հետեւին: Մովսէսը մեծցաւ Փարաւոնին հետ: Դաւիթը որդիի մը պէս էր Սաուլին համար (Գողիաթը պարզապէս անոր կեանքին հսկաներէն մէկն էր): Ընդհանրապէս մրցակիցը այնպիսի մարդ մըն է, որուն դուն ժամանակ մը շատ լաւ կը ճանչնայիր: Դաւիթ այսպէս նկարագրեց իր մրցակիցը.

Արդարեւ թշնամի մը չէր զիս նախատողը՝ որ հանդուրժէի, կամ ոսոխս չէր ինծի դէմ հպարտացողը՝ որ անկէ պահուըտէի. հապա դո՛ւն, ինծի հաւասար մարդ մը, իմ

մտերիմն ու ճանչուորս. իրարու հետ քաղցր խօսակցութիւն կ'ունենայինք, եւ բազմութեան հետ Աստուծոյ տունը կ'երթայինք: (Սաղմոս 55.12-14)

Այսօր այդպիսի մարդ մը անգլերէնով կը կոչենք *ֆրենըմի*, որ *Ըրայըն* բառարանին համաձայն կը նշանակէ՝ «թշնամի՝ ընկերոջ դիմակով»: Պարզ ըսելով՝ խօսքը մրցակիցի մասին է: Ճշմարիտ ընկերը ոչ ճշմարիտէն զանազանելը շնորհք է, բայց նոյն ատեն յաճախ մեր մրցակիցները կամ թշնամիներն են, որոնք վերջաւորութեան մեզ ճշմարտապէս հաւատարիմ կը դարձնեն: Մենք կրնանք չհաշտուիլ մեր կացութեան հետ, կամ զայն Աստուծոյ առջեւ դնել: Մենք կրնանք Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել, որ Ան կը գործածէ մեր մրցակիցը, որպէսզի մաքրէ կամ վերադիրքաւորէ մեզ, կամ կրնանք լալով զանգատիլ: Մենք կրնանք տրտնջալ, կամ՝ աղօթել եւ երգել: Որոշումը մերն է, եւ ոչ մէկ մրցակից կրնայ ասիկա խլել մեզմէ:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Պատմէ կացութիւն մը, ուր մրցակիցդ ակամայ քու ուսուցիչդ դարձաւ:
2. Մրցակիցդ ինչ բացայայտած է կեանքիդ մէջ:
3. Ո՞ր մարզերուն մէջ դուն հաստատակամ ես:
4. Կան մարզեր, որոնց մէջ դուն այնքան ալ հաստատակամ չես, զորս պէտք է զօրացնես:
5. Յիշէ երեք տարբերութիւններ երկրպագուներու եւ հետեւորդներու միջեւ:
6. Պատահամ է, որ նիզակը բռնած տանդ մէջ վազած ես: Ինչպէս կարելի է նիզակդ վար դնել:
7. Ինչպէս կրնաս պահել սիրտդ՝ առանց զայն բանտարկելու:



## Սեռ՝ Առանց Մրցակցութեան

Ես չեմ կրնար ցեղապաշտութեան դէմ ըլլալ, ուր մարդիկ խտրականութեան կ'ենթարկուին այնպիսի բանի մը համար, որ իրենք անկարող են փոխել՝ իրենց մորթին գոյնը, եւ միաժամանակ պաղարիւն կերպով ընդունիլ ուրիշ մէկ կոպիտ անարդարութիւն մը, երբ մարդոց պատժելի կը սեպեն ուրիշ բանի մը համար, որ իրենք անկարող են փոխել՝ իրենց սեռը:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՍՍՈՆՏ ԹՈՒԹՈՒ

**Ե**ս ունիմ անձնական աղօթքներ, որոնց ընթացքին առանձին կ'աղօթեմ: Իբրեւ կանոն, առանձին ըլլալը ինծի համար կը նշանակէ ըլլալ պանդուկի մը սենեակին մէջ կամ ինքնաշարժիս մէջ: Ես շատ անսովոր աղօթքներ բարձրացուցած եմ ինքնաշարժիս ղեկին ետին: Չկայ ասելի լաւ բան, քան երբ պաշտամունքի բարձր երաժշտութիւն կը դնեմ եւ լիովին կեդրոնացած կ'ըլլամ անոր վրայ: Քանի մը տարի առաջ իմ կեանքս շատ արագ ընթացքի մէջ էր: Երբեմն չէի գիտեր, թէ արդեօք կու գայի՞, թէ՛ կ'երթայի: *Երբ Կին Առիծները Կ'արթննան* վերնագիրով գիրքս լոյս տեսած էր աշնան, երբ ես Յորդանան կը գտնուէի: Տարին կը վերջանար,

Եւ արդէն կը մօտենար Գոհաբանութեան օրը: Իմ անձնական աղօթքս այդ ժամանակ մօտաւորապէս այսպիսին էր.

«Երկնաւոր Հայր, անշուշտ Դուն գիտես, որ ես *Երբ Կին Առիժները Կ'արթննան* վերնագիրով գիրքս հրատարակած եմ հինգ լեզուներով, բայց կ'ուզեմ գիտնալ, թէ արդեօք ատիկա Քու կամքդ է: Թերեւս արդէն ուշ է Քեզի հարցնել այդ մասին, բայց գիտեմ, որ Դուն ժամանակէն կախեալ չես, եւ կ'ուզեմ, որ հաստատես, թէ այդ գիրքը Քու կողմէդ որոշուած էր, Յիսուսի անունով, ամէն»: Այո՛, թերեւս քիչ մը անյարմար է այդպիսի բան մը ըսելը, բայց այդպէս եղաւ: Գիտէի, որ պէտք էր ազատէի այդ միտքէն՝ զայն Անոր ձեռքերուն մէջ յանձնելով:

Իմ խնդրած հաստատումս չուշացաւ: Այդ գիշեր, մօտաւորապէս ժամը ութին, ես անսպասելիօրէն զբաղեցայ կրտսեր տղուս դպրոցական նախագիծով: Ես կտրտած էի անոր մեծ եղբայրներուն դպրոցական նախագիծերը, քանի որ անոնց մէջ կային մասեր, զորս մենք կրնայինք օգտագործել, երբ յանկարծ կրտսեր տղաս ըսաւ, որ յատուկ տեսակի խաւաքարտի մը պէտք ունէր՝ իր նախագիծին համար: Ես վազեցի՝ ճիշդ խաւաքարտը գտնելու համար, բայց մինչ այդ համաձայնեցայ վճարել անոր մեծ եղբայրներուն, որպէսզի օգնեն իրեն, որ վերջացնէ իր նախագիծը: Երբ տուն վերադարձայ, տունը խառնաշփոթ վիճակի մէջ էր: Մեր ընտանեկան սեղանը ծածկուած էր ամսաթերթի կտորներով, գունաւոր մատիտներով եւ կտրուած տառերով: Եղբայրներէն մէկը կը մեքենագրէր Արտընին թելադրածը, իսկ միւսը նկարներ կը կտրտէր, որոնք պիտի փակցուէին: Հագիւ թէ գետինը դրած էի խաւաքարտը, որոնց վրայ պիտի փակցուէին այդ բոլոր կտորները, երբ հեռաձայնը զարկաւ. ճոնն էր:

Անոր ձայնը խանդավառ էր: Իսկ ես շատ յօգնած կը զգայի:

Ան ըսաւ, որ այդ գիշեր հանդիպած էր մարդու մը, որուն հետ

պէտք էր խօսէի: Ամուսինս սովորութիւն մը ունի. ան յաճախ կը հեռաձայնէ ինծի եւ հեռաձայնը կու տայ այնպիսի մարդոց, որոնք բոլորովին անծանօթ են ինծի: Չեմ գիտեր ինչպէս կ'ըլլայ ատիկա, բայց այդպէս կ'ըլլայ, եւ ատիկա շատ յաճախ կը պատահի: Այդ մարդիկը հաւանաբար չեն ուզեր խօսիլ ինծի հետ, բայց ճոնը այդ պահուն շատ խանդավառուած կ'ըլլայ եւ կը զգայ, որ ես պէտք է խօսիմ անոնց հետ:

Սկիզբը ես կը հակառակէի այդ ծանօթութիւններուն: Բայց հիմա կը զգամ, որ անոնք պարզապէս անխուսափելի են: Ես խորհուրդ կու տամ իմաստուն կիներուն. եթէ ձեր ամուսինը նեղացուցիչ սովորութիւն մը ունի, եւ ան այդ սովորութիւնը ունի աւելի քան տասը տարիէ ի վեր, պէտք է որոշէք, որ ատիկա զուարճալի է: Ուստի իմ ամուսինս զիս բոլորովին անծանօթ մարդոց հետ հեռաձայնով ծանօթացնելու զուարճալի սովորութիւնը ունի: Բայց այդ գիշեր ես ընդդիմացայ:

- Ճո՛ն, ժամանակ չունիմ անծանօթ մարդոց հետ խօսելու: Հիմա ես Արտընին դպրոցական նախագիծով զբաղած եմ:
- Հարց չէ: Պէտք չունիս հիմա խօսելու անոր հետ: Այդ մարդը զինուորական սպայ մըն է. հիմա ան զբաղած է, անոր համար ես անոր քու հեռաձայնիդ թիւը տուի: Անպայման անոր պատասխանէ երբ իրիկունը քեզի հեռաձայնէ: Պէտք է երթամ, կը սիրեմ քեզ, - եւ նախքան հակաճառելս, ան գոցեց հեռաձայնը:

Դպրոցական նախագիծը պատրաստելու գործին մէջ մխրճուած էինք: Մէկ ժամ ետք հեռաձայնս զարկաւ: Ես որոշեցի պատասխանել իմ ամենահամոզիչ յոգնած թոնովս.

- Բարե՛ւ,- ըսի միապաղաղ ձայնով:
- Կարծես հեռաձայնողը կը վարանէր:
- Լիսա Պըվի՛րն է:
- Այո՛ ...
- Լիսա՛, այսօր երեկոյեան հաւաքոյթի ընթացքին ձեր

ամուսինը պատմեց ձեր՝ *Երբ Կին Առիծները Կ'արթննան* գիրքին մասին: Ան ըսաւ, որ առիծները լաւագոյն սպաննողներն են, իսկ էգ առիծները՝ լաւագոյն որսորդները:

Ես մտածեցի՝ անշուշտ ան այդպէս պիտի ըսէր: Որովհետեւ ես միայն այդքանը պատմեր եմ իրեն ... վստահ եմ, որ ան տակաւին չէ կարդացած իմ գիրքս: Մարդը շարունակեց.

– Ճիշդ է անոր ըսածը: Իսկապէս էգ առիծները լաւագոյն որսորդներն են:

Չէի հասկնար, թէ ան ինչ ըսել կ'ուզէր ինծի: Ինչո՞ւ ինծի հեռաձայնեց, որպէսզի կրկնէր իմ ամուսինիս խօսքերը, զորս ես արդէն գիտէի, քանի որ ես գրած էի զանոնք: Շուտով պիտի գիտնայի պատասխանը:

– Լիսա՛, գիտե՛ս, թէ ինչո՞ւ մենք չենք կրնար յաղթել պատերազմը Աֆղանիստանի մէջ:

Ես մրմնալով տեսակ մը դրական պատասխան մը տուի: Անշուշտ Քոլորադո Սփրինկզի մէջ ապրիլ կը նշանակէ օդանաւով տուն վերադառնալ այլ երկիրներէ վերադարձող բազմաթիւ զինուորականներու հետ:

– Կ'ուզե՛ս գիտնալ պատճառներէն մէկը, թէ ինչո՞ւ մենք չենք յաղթեր այդ պատերազմը:

– Անշուշտ, – ըսի:

– Մենք չենք կրնար խօսիլ անոնց կիներուն հետ, – շարունակեց ան:

– Եթէ չկարենաս խօսիլ կիներուն հետ, չես կրնար փոխել մշակոյթը, իսկ եթէ չկարենաս փոխել մշակոյթը, չես կրնար յաղթել պատերազմը:

Ան գրաւեց իմ ուշադրութիւնս:

– Բացատրե՛մ, թէ ես ինչ կ'ընեմ այս ռազմակայանին մէջ: Ես կ'աշխատիմ յատուկ գործակալներու հետ: Այդ երկրին մէջ առկայ վտանգներուն պատճառով մենք կ'աշխատինք միայն տղամարդոց յատուկ ջոկատներու հետ, բայց կը

պատրաստուինք այդ ժողովուրդին մէջ դրկել կիներէ բաղկացած խումբեր: Անոնք աֆղան կիներուն պիտի պատմեն, որ իրենք ծայն եւ արժէք ունին: Անոնք պիտի բացատրեն, թէ ինչո՞ւ ժողովրդավարութիւնը օգտակար պիտի ըլլայ իրենց տղոց եւ աղջիկներուն համար: Անոնք պիտի հոգան անոնց բժշկական փոքր պէտքերուն եւ ծննդաբերութիւններուն: Գիտէ՞ս ի՞նչ կը կոչուի կիներու այդ յատուկ խումբը:

Ես անոր վստահեցուցի, որ չեմ գիտեր: Ըսաւ.

– Անոնք կը կոչուին «Կին առիւծներու խումբ», եւ մենք արդէն կը պատրաստուինք զանոնք դրկելու: Կրնամ մէկական օրինակ ստանալ քու գիրքէդ՝ անոնցմէ իւրաքանչիւրին համար:

Անշնորհ, մենք այդ գիրքերը դրկեցինք անոնց:

Այդ կիները արժանի էին մեր աջակցութեան, քանի որ անոնք ձեռք կ'երկարէին եւ կը հասնէին այդ երկրին կիներուն եւ յոյս կու տային, որ անոնց մանուկներուն համար գոյութիւն ունի աւելին, քան պատերազմը եւ սովը: Այդ կին առիւծները պէտք է գիտնային, որ անոնք պարզապէս զինուորական հրամաններու չէին հետեւեր, այլ կը կատարէին յաւիտենական առաքելութիւն մը, որ բժշկութիւն բերել էր իրենց քոյրերուն, որոնք մեկուսացած եւ յաճախ անարգուած էին՝ միայն իրենց սեռին պատճառով: Տղամարդ զինուորականներուն արգիլուած էր խօսիլ աֆղան կիներու հետ. այնպէս որ, այդ պատուէրը ստացան կին զինուորականները:

Հեռաձայնը գոցելէս ետք ես անգամ մը ես հասկցայ, որ գոյութիւն ունին շատ ճակատամարտներ, որոնց անկարելի է յաղթել՝ առանց կիներուն մասնակցութեան:

Եթէ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն բանակը կը հասկնայ, որ առանց կիներուն մասնակցութեան՝ երկիրը կրնայ կռուիլ, բայց չյաղթել պատերազմը, արդեօք ժամանակը չէ՞, որ եկեղեցին զօրացնէ իր դուստրերը՝ տղամարդոց կողքին կանգնելու համար, որպէսզի մենք դադրինք միայն կռուելէ եւ սկսինք յաղթել:



Սեռերու մրցակցութիւնը վնաս հասցուցած է երկու կողմերուն ալ, բայց շատ անելի յաճախ խտրականութեան զոհ դարձած են կիները: Աւելի քան երեք տասնամեակ շարունակ իմ սիրտիս մէջ կրած եմ կիներ, որոնք վէրքեր ստացած են սեռերու մրցակցութեան պատճառով: Ես չեմ կրնար որեւէ գիրք գրել՝ առանց ձեռով մը այս հարցին անդրադառնալու:

Այսօր ընկերութիւնը շատ յառաջդիմած է շատ մը ձեւերով, բայց ամէն շաբաթ ես պատմութիւններ կը լսեմ կիներու մասին, որոնք կը տառապին ամուսնութեան մէջ, ընտանիքին մէջ, գործատեղիին մէջ կամ պաշտամունքի տան մէջ: Ես կանոնաւոր կերպով ատելութեամբ լեցուն դիտողութիւններ կը կարդամ կիներուն հասցէին ընկերային ցանցերու վրայ: Տակաւին ես նոյնիսկ չեմ խօսիր սեռային ապօրինի վաճառականութեան, սեռասպաննութեան կամ պոռնկագրութեան մասին:



**Գոյութիւն  
ունին շատ  
ճակատամարտներ,  
որոնց անկարելի  
է յաղթել՝  
առանց կիներուն  
մասնակցութեան:**

Դժբախտաբար սեռային նախապաշարումը տակաւին կը շարունակէ պղտորել մեր Աւետարանին սահմանները: Այնպէս կը թուի, թէ մենք կը գործածենք Աւետարանը, որպէսզի կատարեալ փրկութիւն եւ ազատութիւն տանք տղամարդոց, իսկ կիներուն սահմանափակ բաժիններ կը յատկացնենք:

**Կրօնական Ղեկավարներուն Սպառնալիքները**

Կ'ուզեմ խօսիլ սեռային նախապաշարումի նիւթին մասին՝ անդրառանալով այն ժամանակուան, երբ եկեղեցին նոր ծնած էր, կենդանի էր եւ կ'աճէր: Այդ ժամանակ՝ յարութենէն ետք, Աստուծոյ Հոգին կը թափէր թէ՛ որդիներուն թէ՛ դուստրերուն վրայ: Աւետարանը կը քարոզուէր թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով երբ Յիսուսի յարութիւնը կը հռչակուէր: Կրօնական ղեկավարները

խուճապի մատնուած էին: Փորձելով հանդարտեցնել ստեղծուած իրարանցումը՝ անոնք ձերբակալեցին Պետրոսն ու Յովհաննէսը, երբ բժշկուեցաւ մարդ մը, որ քառասուն տարիէ կաղ էր:

Անոնք ներս կանչեցին զանոնք եւ ազդարարեցին, որ *բնաւ Յիսուսի անունով չխօսին ու չքարոզեն*: (Առաքեալներուն Գործերը 4.18, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

«Անոնք» այդ օրերու կրօնական ղեկավարներն էին, իսկ զգուշացում ստացողները՝ Պետրոսը եւ Յովհաննէսը: Յիսուսի անունով կատարուած այդ հրաշքը՝ մարդու մը բժշկութիւնը, դուռ բացաւ՝ յարութիւն առած Քրիստոս Փրկիչը քարոզելու: Հրեայ ղեկավարները նեղ կացութեան մատնուեցան, քանի որ այդ կաղ մարդուն բժշկութիւնը անկարելի էր ժխտել: Իրարու ըսին.

Արդէն քաղաքին բոլոր բնակիչներուն բացայայտ է, թէ իսկապէս հրաշք մը կատարուեցաւ ասոնց միջոցով, ու մենք չենք կրնար ուրանալ: Սակայն՝ որպէսզի ժողովուրդին մէջ ալ աւելի չտարածուի՝ *եկէք լռեցնենք զանոնք սպառնալիքներով*, որ այլեւս չհամարձակին գործածել Յիսուսի անունը, երբ ոեւէ մէկուն հետ կը խօսին: (Առաքեալներուն Գործերը 4.16,17, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Բոլորս գիտենք, որ այդ երկու աշակերտներուն սպառնալը սպասուած արդիւնքը չտուաւ: Այդ ռազմավարութիւնը բոլորովին հակառակ արդիւնք տուաւ եւ ալ աւելի վճռական դարձուց աշակերտները:

Բայց Պետրոս ու Յովհաննէս պատասխանեցին անոնց. «Եթէ Աստուծոյ առջեւ իրաւացի է՝ որ Աստուծմէ աւելի ձեզի՛ մտիկ ընենք, դո՛ւք դատեցէք. գալով մեզի, կասկած չկայ. մենք չենք կրնար չխօսիլ մեր տեսածին ու լսածին

մասին: (Առաքելալներուն Գործերը 4.18-20, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Կրօնական ղեկավարները կրնային իրարու հետ վիճիլ որքան որ կ'ուզէին, բայց Պետրոսն ու Յովհաննէսը կանգ պիտի չառնէին: Անոնք անդրադարձան, որ այդ ղեկավարները փորձել համոզելը անիմաստ էր. այնպէս որ, անոնք ուրիշ ելք չունէին, բացի շարունակել սորվեցնելէ եւ քարոզելէ այն ճշմարտութիւնը, որ գիտէին: Այս մարդիկը հասկցան, որ կան դէպքեր, երբ լռութիւնը հաւասար է անհնազանդութեան:

Այս սպառնալիքները կը հնչեն նաեւ այսօր, բայց անոնք ուղղուած են բոլորովին ուրիշ խումբի մը: Ասիկա այլեւս մեկուսացուած հրահանգ մը չէ, կրօնական ղեկավարներու կողմէ տրուած Գալիլիացի անուս ձկնորսներու: Ասիկա վերածուած է մշակութային ճնշումի եւ տարածուած է ամբողջ աշխարհի մէջ: Հիմա այդ հրահանգը տարբեր ձեւով կը հնչէ, բայց նպատակը նոյնն է: Մեր աշխարհիկ աշխարհը կ'արտօնէ քեզի խօսիլ Աստուծոյ մասին եւ ըլլալ այնքան հոգեւոր, որքան որ կ'ուզես, այնքան ատեն որ Յիսուսի անունը չես գործածեր:

Եւ թէեւ պէտք չէ զարմանանք երբ աշխարհիկ մարզերը թոյլ չեն տար, որ քարոզուի եւ ուսուցանուի Յիսուսի անունը, բայց երբ եկեղեցին կ'արգիլէ իր անդամներուն եւ կը լռեցնէ անոնց ձայները ... ասիկա արդէն բոլորովին տարբեր հարց է:

Աւելի քան երկու հազարամեակ կրօնական ղեկավարները սահմանափակած են եւ երբեմն արգիլած են եկեղեցւոյ հազարաւոր դուստրերուն՝ քարոզել եւ սորվեցնել այն սրբազան տարածքներուն մէջ, որոնք կը պատկանէին եկեղեցիին: Կրկին կարդայ Առաքելալներուն Գործերը 4.18-ը.

Ապա կանչելով զանոնք՝ պատուիրեցին անոնց, որ ամենեւին չխօսին եւ չսորվեցնեն Յիսուսի անունով:

Երբ այս համարին մասին կը մտածէի, Սուրբ Հոգին ինձի փսփսաց. «Ես կանչած եմ բազմաթիւ դուատրեր եւ անոնց պարզեւներ տուած եմ ծառայութեան համար՝ Իմ Հոգիովս, բայց եկեղեցին անոնց արգիլած է եւ չէ ընդունած անոնց կոչումը»:

Թերեւս լսած ես, որ կրօնական ղեկավարները կ'ըսեն. «Կիները կրնան սորվեցնել ուրիշ կիներու, բայց ոչ՝ տղամարդոց», «Կիները կրնան խօսիլ Խօսքը, բայց պէտք չէ քարոզեն», նաեւ՝ «Կիները կրնան առաջնորդել, բայց՝ ոչ եկեղեցիին մէջ»: Այս քօղարկուած սպառնալիքները անելի քան ողջամիտ կը թուին ըլլալ, բայց արդիւնքը նոյնն է. Աւետարանը կը սահմանափակուի: Համարձակ հաւատք ունեցող կիները շատ արագ յարձակողական կնոջ պիտակ կը ստանան: Իրենց Աստուծոյն հանդէպ վստահութիւն ունեցող կիները սխալմամբ փառասէր կը կոչուին: Բայց բոլորիս առջեւ դրուած է միեւնոյն հարցումը, որ Պետրոսն ու Յովհաննէսը հարցուցին: Աստուծոյ առջեւ իրաւացի է՝ որ Աստուծմէ անելի մարդոց մտիկ ընենք: Եւ Աստուած ինչ պատուիրեց Իր որդիներուն եւ դուատրերուն: Պատասխանը Յիսուսի խօսքերուն մէջ է, զորս Ան ըսաւ համբարնալէն առաջ.

Գացէք ամբողջ աշխարհը, ու քարոզեցէք անտարանը բոլոր արարածներուն: Ան որ հաւատայ եւ մկրտուի՝ պիտի փրկուի. ան որ չհաւատայ՝ պիտի դատապարտուի: Սա նշանները պիտի հետեւին անոնց՝ որ կը հաւատան. - դեւեր դուրս պիտի հանեն իմ անունովս, նոր լեզուներ պիտի խօսին, օձեր պիտի առնեն իրենց ձեռքերուն մէջ, ու եթէ խմեն մահառիթ դեղ մը՝ պիտի չմտասէ իրենց. ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ, եւ անոնք պիտի առողջանան: Այսպէս՝ անոնց հետ խօսելէն ետք՝ Տէրը համբարձաւ երկինք, ու բազմեցաւ Աստուծոյ աջ կողմը: (Սարկոս 16.15-19)

Այս թելադրանքը տրուեցաւ բոլոր անոնց, որոնք կը հաւատան: Մեծ Յանձնարարութիւնը արտօնութիւն է. անկա

Նոյնիսկ չի պահանջեր որեւէ շէնք կամ կազմակերպութիւն կառուցել, եւ այս պատուէրը կ'ընդգրկէ երկու սեռերն ալ: Քրիստոսով բոլորը կանչուած են, եւ բոլորը ազատ են՝ Աստուծոյ Բարի լուրը հոչակելու: Երբ կը ճանչնանք Աստուծոյ ազատութիւնը եւ ճշմարտութիւնը, պէտք չէ արտօնենք, որ մարդոց սպառնալիքները լռեցնեն մեզ:

## **Հնազանդիի քու Թագաւորիդ**

Աստուած մեր բարձր եւ սուրբ Թագաւորն է: Մեր Թագաւորը յանձնարարած եւ զօրացուցած է քեզ: Ան խնդրած է քեզմէ Իր փոխարէնը խօսիլ Իր ժողովուրդին հետ: Եթէ այդպէս է, ինչպէս կրնաս թոյլ տալ, որ քու Թագաւորիդ ենթակայ եղող ղեկավարները վախցնելով ետ կեցնեն քեզ: Մեզմէ իրաքանչիւրին կեանքը պէտք է ապրող, շնչող հոչակումը ըլլայ Մատթէոս 4.10-ին.

Մենք պիտի երկրպագենք Տիրոջ՝ մեր Աստուծոյն, ու միայն զինք պիտի պաշտենք:

Եթէ Թագաւորին ծառաներուն հնազանդիլը, կը նշանակէ՝ անհնազանդ ըլլալ Թագաւորին, ուրեմն, անոնց հնազանդելով, դուն հարց պիտի ունենաս Թագաւորին հետ: Եսթերի գիրքին մէջ օրինակ մը կայ այս մասին: Պարսկաստանի թագաւորը Եսթերը չէր կանչած, եւ պալատին կանոնները անոր կ'արգիլէին թագաւորին քով գալ: Եսթերը հասկցաւ, որ թագաւորին ընդհանուր սկզբունքները եւ անոր հաստատած սահմանները յարգել կը նշանակէր անհնազանդ ըլլալ Աստուծոյ: Եսթերը աւելի կը վախնար Աստուծմէ, քան մարդիկը չհաճեցնելէն, այնպէս որ, ան գնաց: Ան թագաւորին մօտեցաւ յատուկ ռազմավարութեամբ մը, բայց չհամարձակեցաւ լուռ մնալ երբ բազմաթիւ մարդոց կեանքերը վտանգի տակ էին: Արդեօք մեր աշխարհը այսօր նոյնը չէ:

Բազմաթիւ դուստրեր պահուըտած են ռազմավարական վայրերու եւ պայմաններու մէջ: Անոնցմէ ոմանք նոյնիսկ կ'աղօթեն եւ ծոմ կը պահեն իրենց քոյրերուն հետ՝ արթուն կենալով եւ սպասելով ճիշդ ժամանակին, որպէսզի միջամտեն եւ բարեխօսեն:

Այս ըսելով անշուշտ ես չեմ դրդեր քեզ, որ ապստամբիս ամուսինիդ կամ եկեղեցւոյ ղեկավարին դէմ: Ես կ'ուզեմ քեզի ցոյց տալ, որ գոյութիւն ունի շատ իրական թշնամի մը, որ չի բաւարարուիր պարզապէս քեզ լռեցնելով: Անոր վերջնական նպատակն է՝ խլել քու եւ քու զաւակներուդ կեանքերը:

Եկուր ճիշդը խօսինք. եթէ ամուսինդ քեզի արգիլէ, որ Աւետարանը քարոզես, կը հնազանդիս անոր:

Ես չեմ խօսիր իբրեւ աւագ հովիտ՝ բեմ բարձրանալու եւ հրապարակաւ քարոզելու մասին: Հարցումս հետեւեալն է՝ արդեօք անկեղծօրէն ազմտ ես եւ կրնամ վկայել: Պատրմատ ես մարդոց հարցումներուն պատասխանելու, աղօթելու կամ աւելի երիտասարդ կին մը աշակերտելու:

Վերջերս Ճոնը եւ ես ասոր մասին կը խօսէինք: Ինծի հարցուց, թէ ինչո՞ւ շատ կիներ Յիսուսի դեսպանը չըլլալու համար արդարացումներ կը փնտռեն: Ըսի, որ իմ կարծիքովս՝ անոնց մեծ մասը պարզապէս կը վախնայ բացասական հակադեցութենէն: Նոյն շաբթուան ընթացքին ես նստած էի օդանաւին մէջ տղամարդու մը քով, որ ըսաւ, թէ մէկը ետեւէն արհամարհական խօսք մը ըսաւ իմ մասիս: Պատասխանեցի. «Այդպիսի բան իմ երեսիս ալ ըսած են»:

Ասիկա թուլասիրտներու եւ թուամորթներու ժամանակը չէ: Այս աշխարհին մէջ լայնածաւալ պատերազմ մը կայ Աստուծոյ պատկերը կրող թէ՛ տղամարդոց եւ թէ՛ կիներուն դէմ: Բան մը, որ բնաւ պէտք չէ ընենք, մէկս միւսին հետ կռուիլն է: Կը հաւատամ, որ կարգ մը կիներ պէտք է համբերութեամբ եւ քաջութեամբ դիմագրաւեն այս խօսակցութիւնը: Թերեւս անոնք սորված են, որ հնազանդութիւնը լռութիւն կը նշանակէ,

Եւ չեն գիտեր, որ Աստուած փոխած է իրենց անունները: Աստուած ինչ բան կը մղէ, որ ընես: Թերեւս երիտասարդ մայր մը կայ, որ պէտք ունի, որ զինք աշակերտես: Թերեւս աղօթքի հաւաքոյթ կամ Աստուածաշունչի սերտողութիւն պէտք է ընես տանդ մէջ: Աստուածային հնազանդութիւն կամ ենթարկութիւն կը նշանակէ, թէ մենք կը պատուենք մեր ամուսինները եւ միաժամանակ կը հնազանդինք Աստուծոյ:

Կան նաեւ կիներ, որոնք կը վախնան իրենց զօրաւոր կողմերէն, քանի որ ոչ ոք անոնց սորվեցուցած է, թէ ինչպէս պէտք է կառավարեն զանոնք: Բոլորս ալ տեսած ենք կամ եղած ենք կիներ, որոնք անպատշաճ վարմունք ցուցաբերած են (անձամբ ես որոշ սխալներ գործած եմ): Պատճառը այն չէր, որ ես կ'ուզէի ամէն բան բարդացնել, այլ՝ որ ես չէի գիտեր ինչպէս լսելի դառնալ: Սորվելու ճամբան քարքարոտ է, քանի որ մինչեւ վերջերս գործունեայ կիները այս աշխարհին մէջ շատ քիչ էին եւ գրեթէ կապ չունէին իրարու հետ:

Պատասխանը ոչ թէ կնոջ ձայնը լռեցնելն է, այլ՝ կիներուն կրթութիւն եւ ուսում տալը: Եթէ ինծի աճելու առիթ չտրուի, ես աճ չեմ ունենար: Եթէ աճ չունենամ, ես հող չեմ պատրաստեր ուրիշ կիներու համար:

Արդեօք թոյլ պիտի տանք, որ մեզ բարկացուտ կիներ պիտակեն, թէ՛ իմաստութիւն ձեռք պիտի բերենք, որպէսզի այն դուստրերը, որոնց բերնին մէջ Հօր Խօսքը կայ, կարենան խօսիլ: Արդեօք պէտք է լռեցնել անոնց, որոնք Աստուծոյ պատասխանին մէկ մասը ունին: Քա՛ն լիցի: Մենք պէտք է ջանք չխնայենք, որ մեր դուստրերը կրթենք աստուածապաշտութեան եւ հնազանդութեան մէջ: Եթէ մէկը ինծի հարցնէ իմ կարծիքս Ա.Պետրոս 3-րդ գլուխին մասին, ուր կը շեշտուի, որ կիները պէտք է հեզ եւ հանդարտ հոգի ունենան, ես լիովին համաձայն եմ անոր: Եւ ես կրնամ օրինակներ բերել Յիսուսի եւ Մովսէսի կեանքերէն, թէ ինչպէս պէտք է հեզ ըլլալ:

Մովսէս շատ հեզ մարդ մըն էր՝ երկրագունդի մակերեսին վրայ եղած բոլոր մարդոցմէն աւելի: (Թիւերու 12.3)

Նաեւ՝

Առէք իմ լուծս ձեր վրայ ու սորվեցէք ինձմէ՝ որ հեզ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանգստութիւն պիտի գտնէք ձեր անձերուն: (Մատթէոս 11.29)

Թէ՛ Յիսուս, եւ թէ՛ Մովսէսը ցոյց տուին հեզութեան օրինակը, որուն պէտք է հետեւինք:

Սեռերու հետ կապուած մեր հարցերէն ոմանք պարզապէս անհետքեր են: Ես ճոնին չեմ հարցներ, թէ արդեօք կրնամ տուն հրաւիրել իմ ընկերուիներս, եւ ինք ինձի չի հարցներ, թէ արդեօք կրնայ կոլֆ խաղալու երթալ: Ես ճոնին չեմ հարցներ, թէ արդեօք կրնամ Աստուծոյ Խօսքը բաժնեկցիլ մէկու մը հետ հանրախանութիւն մէջ, կամ թէ արդեօք կրնամ քարոզել մեր տուն եկեղեցին յաճախող երիտասարդներուն: Մենք կը խորհրդակցինք այն հարցերուն շուրջ, որոնք կը վերաբերին մեր երկուքին եւ մեր ընտանիքին, բայց ոչ՝ այն մասին, թէ ինչպէս պէտք է տնօրինենք մեր օրը: Եթէ մենք ամէն բանի համար իրարմէ արտօնութիւն խնդրենք, ատիկա յոգնեցուցիչ կ'ըլլայ: Ան կը վստահի ինձի, ես ալ իրեն կը վստահիմ: Ես կին եմ, ոչ թէ մանուկ:

Մենք կ'ապրինք այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ մեծ թիով մարդիկ վախով բռնուած են: Անոնք պէտք ունին այն փառքի յոյսին, զոր կը կրես քու սիրտիդ մէջ:

Ի վերջոյ, միայն մենք ենք մեղաւորը Յիսուսի յանձնարարութեան չհնազանդելնուս համար: Այո՛, մարդիկ կրնան դրդել մեզ, որ սայթաքինք եւ մեղանչենք (Մատթէոս 18.6: Մարկոս 9.42: Ղուկաս 17.2), բայց մեր Թագաւորին հնազանդիլը մեր ընտրութիւնն է: Մեր եղբայրներուն՝ Պետրոսին եւ Յովհաննէսին պէս, մենք՝ քոյրերս, պէտք



է ապրինք Քրիստոսի զարմանալի լիութեան մէջ, որ կը նշանակէ, թէ մենք ալ չենք կրնար լուռ մնալ այն բոլոր բաներուն վերաբերեալ, զորս տեսած եւ լսած ենք:

## **Բանաւոր Յարձակումներ**

Այսօր այն կիները, որոնք կ'ընտրեն այս ընթացքը, թերեւ չենթարկուին ծեծի եւ բանտարկութեան, ինչպէս Պետրոսն ու Յովհաննէսը, սակայն պատրաստ եղիր, անոնք քեզմէ պիտի զգուշանան, քեզմէ պիտի հեռանան եւ պիտի հակառակին քեզի: Ասիկա կը նշանակէ, որ կրնան քեզ սխալ հասկնալ եւ շատ յաճախ բանաւոր յարձակումներու եւ մեկուսացումի պիտի ենթարկուին:

Ճոնը եւ ես տարբեր տեսակէտներ ունինք այս հարցին վերաբերեալ: Ան ինձի վստահեցուց, որ եկեղեցիներուն մեծ մասը, ուր ինք կը ծառայէ, կ'արտօնեն, որ կիները ամպիոնէն քարոզեն: Ան անունները տուաւ երեք կին ծառայողներու, որոնք հանրաժանօթ եւ սիրուած են թէ՛ մեր երկրին եւ թէ՛ ամբողջ աշխարհի մէջ: Անոնք կ'առաջնորդեն, կը սորվեցնեն եւ կը քարոզեն: Ես ճոնին հետ համաձայն էի, որ ատկա տեսականօրէն ճիշդ է, բայց ոչ՝ գործնականօրէն: Երբ անկէ խնդրեցի, որ անուանէ եկեղեցիներ, որոնց մէջ կիները կանոնաւոր կերպով կը քարոզեն ամպիոնէն, չհաշուելով տարին մէկ անգամ Մայրերու Օրուան առիթով քարոզելը, ան չկրցաւ անուանել նոյնիսկ տասը կիներ:

Երբ կը շարունակէինք մեր քննարկումը, Ճոնը ինձի վստահեցուց, որ ես, իբրեւ կին, չեմ կրնար ըսել որեւէ բան, որ կրնայ փոխել այն աստուածաբաններուն կարծիքը, որոնք դէմ են, որ կիները առաջնորդեն եւ սորվեցնեն: Ան ինձի առաջարկեց դիմել կիներուն եւ անոնց սորվեցնել, որ իրենք կրնան քարոզել: Ան նշեց, որ որեւէ փաստ, քննարկում կամ առարկութիւն, զոր կրնամ առաջարկել այդպիսի ղեկավարներու, պարզապէս զուր կ'ըլլայ:

Ես համաձայնեցայ: Իմ գիրքերս ղեկավարներուն ուղղուած չեն: Ես ահով ու դողով կը գրեմ իմ քոյրերուս, մայրերու եւ դուստրերու համար, որոնց տակաւին պէտք է համոզել: Ըսի, որ չեմ կրնար կիներուն սորվեցնել, որ իրենք պէտք է քարոզեն, քանի դեռ անոնք վստահ չեն, թէ արդեօք ճիշդ է, որ իրենք սորվեցնեն եւ խօսին եկեղեցիին մէջ: Գրաւոր Օրէնքը գործածուած է՝ անոնց սիրտերը խոցելու համար: Աստուծոյ անկեղծ դուստրերէն ոչ մէկը կ'ուզէ խախտել կամ անարգել Հօր կամքը: Անոնք չեն սորվիր այն բաները, զորս անոնց առաջնորդները չեն արտօներ: Եթէ հեղինակաւոր դիրք ունեցող մէկը, որ զԱստուած կը ներկայացնէ, ամբողջ կեանքը քեզի ըսէ, որ դուն ստորադաս ես, կը հաւատաս անոր: Այս սուտը յատկապէս դիւրին է ընդունիլ, եթէ դուն ստուերոտ անցեալ մը ունեցած ես:

Ես ատիկա գիտեմ, քանի որ ես այդպիսի մէկը եղած եմ:

Երբ անվստահ ես, միշտ պիտի քննադատես դուն քեզ եւ քու մասնակցելու իրաւունքդ: Կ'ուզեմ ականջներդ հանել խցանները, վերցնել աչքերդ աչքերու կապոցները եւ հեռացնել օրինապաշտութեան փուշերը քու փափուկ սիրտէդ: Այն ատեն դուն պիտի կարենաս բժշկուիլ եւ անձամբ լսել Աստուծոյ ձայնը: Սուրբ Հոգին կրնայ կանչել քեզ՝ Աւետարանին դեսպանը ըլլալու իրաւաբանութեան, բժշկութեան, գործարքի կամ կառավարութեան մարզին մէջ, ինչպէս նաեւ՝ իբրեւ մայր եւ տանտիկին: Ինչ որ ալ ընենք՝ պէտք է ընենք այնպէս՝ ինչպէս պիտի ընէինք Տիրոջ: Երբ այսպէս կը վարուինք, աշխարհիկը սուրբ կը դառնայ: Բայց սխալ է մէկու մը ըսել, որ Սուրբ Հոգին չէ իրեն հետ խօսողը եթէ ան կը զգայ, որ եկեղեցիին մէջ սորվեցնելու, քարոզելու կամ առաջնորդելու կոչում ունի:

Սեռը գրեթէ ոչ մէկ կապ ունի մէկու մը առաջնորդելու կարողութեան հետ: Մարկարեթ Թաչըրը Մեծն Բրիտանիոյ մեծագոյն ղեկավարներէն մէկն էր ոչ թէ որովհետեւ ան կին էր:

Իրականութեան մէջ հարցը սեռը չէ. մեր հարցը հպարտութեան կեցուածքն է եւ հակումը դէպի նախապաշարում եւ ուրիշները դատելը: Այս յատկանիշները կը կուրցնեն անոնք, որոնք այլապէս լաւ ղեկավարներ պիտի ըլլային: Խոնարհութիւնը, փորձառութիւնը, հաւատարմութիւնը, կրթութիւնը եւ առաքինութիւնը՝ ղեկավարները որակաւորող յատկանիշներէն քանի մը հատն են, բայց միայն սեռը չի կրնար որոշել մէկու մը ղեկավար ըլլալը: Բացի ատկէ՝ առանց Քրիստոսի բոլորս ալ անպիտան ենք: Երկրորդ Կորնթացիներուն 3.4-6-ին մէջ կը կարդանք.

Աստուծոյ վրայ մեր ունեցած վստահութեամբն է, որ կ'ըսենք այս բաները. վստահութիւն՝ որ Քրիստոս կու տայ մեզի: Որովհետեւ բնաւ չենք խորհիր, որ մենք մեր ոյժերով այդպիսի գործ մը կրնանք ընել. այլ՝ Աստուած է որ այդ կարողութիւնը կու տայ մեզի: Դարձեալ ինքն է, որ մեզ արժանի ըրաւ ըլլալու ծառաները նոր Ուխտին, որ կապուած չէ՛ գրաւոր Օրէնքին, այլ՝ Սուրբ Հոգիին. որովհետեւ գրաւոր Օրէնքը մահուան կ'առաջնորդէ, մինչդեռ Հոգին կեանք կու տայ:

Ահա թէ ինչպէս նշանաւոր ղեկավար մը կը մեկնաբանէ Ա.Տիմոթէոսի 2-րդ գլուխը. «Պօղոսը պարզապէս կ'ըսէ, որ կիները յարմար չեն եկեղեցիին մէջ առաջնորդներ ըլլալու, քանի որ անոնք անելի դիրահաւատ են, քան տղամարդիկը եւ անելի դիրութեամբ կը խաբուին, քան տղամարդիկը»:<sup>1</sup>

Շուտով կը խօսինք Տիմոթէոսի առաջին նամակին մէջ գրուած այս հատուածին մասին: Նախ՝ կ'ուզեմ գիտնալ հետեւեալը՝ դուն քեզ ինչպէս զգացիր, երբ կարդացիր այս մէջբերումը: Ամօթահամր, յանցաւոր, բռնաբարուած, թէ՛ թեթեւցած եւ արդարացած:

Անկասկած, մեզմէ՛ ռեւէ մէկը զօրաւոր եւ ընդունուած չզգաց այս խօսքերով: Ես շատ պզտիկ հատուած մը առած եմ այդ մարդուն խօսքէն, բայց ասիկա կ'արտացոլացնէ կիները

անտեսելու ետին գտնուող լայնատարած մտածելակերպը: Այս դեկավարը կը շարունակէ ըսելով. «Բազմաթիւ զայրացած կիներ տարիներ շարունակ համաձայն չեն եղած անոր (այսինքն՝ Պօղոսին) խօսքերուն, եւ ատիկա ցոյց կու տայ, որ այդպիսի կիներ, որոնք չեն վստահիր անոր թելադրանքներուն եւ չեն հետեւիր անոր ուսուցումին, շատ հարցերու մէջ կը նմանին իրենց մօրը՝ Եւային. անոնք ունին լաւ մտադրութիւններ, բայց անհրազել են»:<sup>2</sup>

Արդեօք մենք բարկացած ենք, եթէ բանի մը հետ չենք համաձայնիր: Ես կրնամ ամուսինիս հետ չհամաձայնիլ՝ առանց բարկանալու: Իմ անձնակազմս եւ ես անհամաձայնութիւններ կ'ունենանք՝ առանց բարկանալու: Նոյնը կարելի է ըսել բարեկամներու եւ իմ մասիս:

Այս մէջբերումին համաձայն՝ եթէ մենք համաձայն չենք Ա.Տիմոթէոսի 2-րդ գլուխին այս մեկնաբանութեան հետ, մենք բարկացած եւ անհրազել կամ անգէտ կիներ ենք: Անոր հեղինակը նոյնիսկ չ'ենթադրեր, որ մենք կրնանք բարեպաշտ, խորաթափանց եւ գիտելիքներու ձգտող կիներ ըլլալ, որոնք կը փորձեն իրենց տեղը գրաւել՝ ըստ իրենց սեռին, քանի որ կը ձգտին հնազանդիլ Աստուծոյ: Ան նոյնիսկ նկատի չ'առնէր այն հաւանականութիւնը, որ Պօղոսը թերեւս կը խօսի ուրիշ բանի մը մասին, որ առկայ էր իր մշակոյթին մէջ եւ այսօր չկայ:

Այս մեկնաբանութիւնը նաեւ ինքնութեան սխալ աղբիւր մը կ'առաջարկէ մեզի: Եւան մեր մայրը չէ: Երբ վերստին ծնունդ կ'ունենանք, մենք այլեւս մեր անկում ապրած ծնողներուն՝ Ադամին եւ Եւային զաւակները չենք, այլ՝ Աստուծոյ:

Այս հեղինակին խօսքերուն մէջ կը զգամ, որ լռեցնելու եւ ամչցնելու փափաք մը կայ: Կը զգամ բռնաձաղր, ճնշում եւ խտրականութիւն՝ կնատեացի մը կողմէ: Եւ Սուրբ Հոգիին ձայնը չեմ լսեր: Յիսուս կը սորվեցնէ եւ կը խրատէ՝ սիրելով եւ ընդունելով բոլոր մարդիկը: Ան Իր եկեղեցին նմանցուց հարսի: Այս հեղինակին խօսքերը աւելի կը նմանին կիներուն

հանդէպ օձին ունեցած թշնամութեան:

Տիմոթէոսին ուղղուած իր առաջին նամակին մէջ Պօղոսը կը խօսէր այն հարցերուն մասին, զորս Տիմոթէոսը կը դիմագրաւէր երբ եկեղեցի մը կը սկսէր յունական մշակոյթին պատկանող միջավայրի մը մէջ: Արդեօք ինչ որ անոնց կը վերաբերէր, նաեւ կը վերաբերի մեզի այսօր. չէ՞ որ թէ՛ մեր պաշտամունքի հաւաքոյթներուն մէջ, թէ՛ մեր մշակոյթին մէջ բացարձակապէս ոչինչ չի նմանիր այդ ժամանակուան: Թերեւս ասիկա տակաւին չհամոզեց քեզ: Հաւանաբար, քանի որ դուն կ'ուզես պատուել զԱստուած եւ երբեք հարցականի տակ չառնել ղեկավարներուն խօսքերը, ընդունած ես այդ դերը՝ իբրեւ կեանքի մէջ քու բաժինդ:

Եկէք քիչ մը անելի խօսինք այդ մասին: Կ'արտօնեն, որ մէկը այդպէս խօսի քու աղջկադ հետ: Լուռ կը կենան, եթէ մէկը ըսէ, որ ան անյարմար կամ անհամապատասխան է, դիւրահաւատ է, դիւրութեամբ խաբուող եւ անզէտ է: Արդեօք այսպիսի սրբագրութիւն մը կամ նկարագրութիւն մը կարելի է կեանքով լեցուն կամ Հոգիով ներշնչուած կոչել, անկախ անկէ, թէ ատիկա կը վերաբերի տղամարդո՞ց, թէ՛ կիներուն: Կրնան նոյնիսկ մէկ վայրկեան պատկերացնել, որ Հայր Աստուած կը նայի կեանքիդ որեւէ մարզին եւ քեզ այդպիսի բացասական յատկանիշներով կը պիտակէ:

Ես կը հասկնամ, որ թերեւս դուն անձամբ այս խօսքերը խօսած ես քու հասցէիդ: Եթէ արդէն որոշ ժամանակէ ի վեր քրիստոնէայ ես, թերեւս եղած են ժամանակներ երբ ուսուցիչ մը կամ ղեկավար մը այս գաղափարները խօսած է եկեղեցիիդ մէջ գտնուող կիներուն կեանքերուն վրայ: Վերջերս կին մը, որ տարիներ շարունակ ծառայութեան մէջ եղած է, հեռաձայնեց մեր կազմակերպութեան եւ հարցուց, թէ արդեօք իր ըրածը Աստուածաշունչին կը համապատասխանէ: Ան այդ հարցումը կը հարցնէր, քանի որ մեծ հալածանք կը կրէր իր ծառայութեան պատճառով:

Աղջիկս, քոյրս, բարեկամս, ես կրնամ հետեւեալը խոստանալ քեզի. մեր Փեսան եւ Տէրը՝ Յիսուսը, երբեք այդպիսի ստորնացնող խօսքեր չէ ըսած քու մասիդ: Ան նոյնիսկ մէկ անգամ չէ ըսած ինձի, որ ես գիւնք անարգեր եմ՝ քարոզելով: Ատիկա չի նշանակեր, որ ես պէտք չէ կատարելագործուիմ. իրաքանչիւր ծառայութենէ ետք ես ինքնագնահատում մը կ'ընեմ: Հաւատս, ես կը զգամ Հոգիին սրբագրութիւնը կեանքիս բոլոր մարզերուն մէջ: Բայց երբ խօսքը կը վերաբերի իմ կոչումիս, եւ թէ Ան ինչպէս կը տեսնէ զիս, ես շարունակ քաջալերական փսփսուք կը լսեմ: Ահա թէ Ան ինչ կ'ըսէ քու եւ իմ մասիս. Ան քեզ կը կոչէ գեղեցիկ, յարմար, ատակ եւ մեծ կարողութիւններ ունեցող: Ան քեզի տուած է նոր սիրտ եւ քու հոգիդ կենդանացուցած է՝ քեզ դարձնելով իմաստուն եւ հաւատարիմ: Ան քեզ լեցուցած է Սուրբ Հոգիով եւ քեզի վստահած է Աստուծոյ Խօսքը, ոչ թէ, որպէսզի դուն խաբուած դուստր մը ըլլաս, այլ որպէսզի քու միտքիդ աչքերը լուսաւորուին զանազանութեամբ կամ ճանաչողութեամբ (տես Սաղմոս 45.11: Եզեկիէլի 36.26: Բ.Կորնթացիներուն 3.6: Եփեսացիներուն 1.18):

Անոր հարսը բաղկացած է թէ՛ տղամարդոցմէ, եւ թէ՛ կիներէ: Ան լուաց բոլորիս աղտոտութիւնները Իր Խօսքին ջուրով. Ան երկու սեռերն ալ փրկեց եւ գնեց Իր արիւնով: Բայց երբ Ա.Տիմոթէոսի 2-րդ գլուխին վերը յիշուած մեկնաբանութիւնը կարդացի այն կիներուն, որոնք մեր տունը կը հաւաքուին՝ Աստուածաշունչի սերտողութեան համար, անոնց դէմքերուն արտայայտութենէն նկատեցի, որ ընդունեցին այդ անցանկալի ճշմարտութիւնը՝ զարմանքով եւ սարսափով: Անոնցմէ ոմանք մտածեցին, որ այդ մարդուն խօսքերուն մէջ ճշմարտութեան մաս մը կայ. թերեւս անցեալին անոնք դիրահաւատ եղած են կամ անյարմար եղած են որոշ գործերու համար: Միւսները նոյնիսկ դադրած էին մտածելէ, որ այդ հատուածը կարելի է ուրիշ ձեւով մեկնաբանել:

Երբ ես հարցուցի քու դուստրերուդ մասին, բան մը արթնցան քու ներսիդիդ: Յուսամ քու կատաղի մայրական բնազդդ արթնցաւ քու ներսիդիդ: Հապա դո՞ն ... Դուն բաւարարուած ես այն սահմանափակումներով, որոնք կան քու կեանքիդ մէջ՝ Քրիստոսի գնած ազատութեան ձգտելու փոխարէն: Եթէ չես արտօներ, որ այդ սահմանափակումները դրուին քու աղջկադ կեանքին մէջ, նաեւ պէտք չէ արտօնես, որ անոնք դրուին քու կեանքիդ մէջ: Եփեսացիներուն 2.10-ը կ'ըսէ. «Քանի որ մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար. Աստուած նախապէս պատրաստեց զանոնք, որպէսզի մենք ընթանանք անոնց մէջ»:

Յուսամ եւ կ'աղօթեմ, որ երբեք չես համակերպիր այն գաղափարին հետ, որ դուն անյարմար կամ անհամապատասխան, դիւրահաւատ եւ դիւրութեամբ խաբուող ես: Եթէ մենք անիրազեկ ենք, մենք կրնանք ատիկա փոխել՝ կրթուած եւ իրազեկ դառնալով: Ես որոշած եմ ընդունիլ ասիկա իբրեւ մարտահրաւէր եւ գիտելիք ձեռք բերել այն մարդոցմէ, որոնք ինձմէ աւելի խելացի են: Նախ եկէք քննենք Պօղոսին ցուցմունքները՝ զանոնք իրարու հետ բաղդատելով: Ա.Կորնթացիներուն 14.34,35-ին մէջ կը կարդանք.

Եկեղեցիներուն մէջ՝ ձեր կիները թող լռեն, որովհետեւ անոնց արտօնուած չէ խօսիլ, հապա՝ հպատակիլ, ինչպէս կ'ըսէ Օրէնքն ալ: Իսկ եթէ ուզեն որեւէ բան սորվիլ, թող հարցնեն տան մէջ՝ իրենց ամուսիններուն. քանի որ կիներուն ամօթ է եկեղեցիին մէջ խօսիլ:

Յետոյ Ա.Տիմոթէոսի 2.11-15-ին մէջ կը կարդանք.

Չեմ արտօներ, որ կիները իշխեն եւ տղամարդոց ըսեն, որ անոնք ինչ պէտք է ընեն: Կինը թող սորվի՝ հանդարտ կենալով, բոլորին հետ միասին բոլորովին ենթարկուելով: Նախ Ադամ ստեղծուեցաւ, ու յետոյ՝ Եւա: Սկիզբը կինը խաբուեցաւ (մեր ռահվիրան՝ մեղքի մէջ), որուն

անմիջապես հետեւեցաւ Ադամը: Միա կողմէն անոր որդեծնութիւնը փրկութեան պատճառ դարձաւ՝ շրջելով Եային կատարածը: Սակայն այս փրկութիւնը միայն կու գայ անոնց, որոնք կը յարատեւեն հաւատքի, սիրոյ ու սրբութեան մէջ, այդ բոլորը հասունութեան հասցնելով: Կրնաք վստահ ըլլալ ասկէ (Բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն):

Բոլոր դարձի եկած յոյները միասին կը սորվէին քրիստոնէութեան մասին: Կիները այլեւս պէտք չէ ստանձնէին այն դիրքը, որ ունէին իրենց հեթանոսական միջավայրին մէջ. անոնք այլեւս պատգամախօսներ չէին՝ ինչպէս Արտեմիսի տաճարի պաշտամունքին ընթացքին: Երբ կը կարդանք Պօղոսի Տիմոթէոսին տուած թելադրանքները եկեղեցոյ կարգ-կանոնին մասին, ան Օրէնքը չէր մէջբերեր: Ան չէր մէջբերեր Յիսուսի խօսքերը: Ան Տիմոթէոսին կը սորվեցնէր պատշաճ կերպով հաւաքոյթներ վարել յունական մշակոյթին պատկանող նորահաւատներուն հետ: Այդ ժամանակ եւ այդ մշակոյթին մէջ կիները հեղինակութիւն ունէին հոգեւոր հարցերուն մէջ<sup>3</sup>:

Աստուածաշունչի *Տը Փեշըն Թրանսլէյշըն* տարբերակին մէջ, որ արամերէնէ թարգմանուած է, Պօղոսին խօսքերը Ա.Տիմոթէոսի 2.11,12-ին մէջ հետեւեալն են.

Թող այն կիները, որոնք նորահաւատներ են, կամենան իրենց առաջնորդներէն սորվիլ ամենայն հնազանդութեամբ, եւ ոչ թէ անկարգութեամբ խօսին: Չեմ յանձնարարեր, որ նորադարձ կիները ուսուցիչ ըլլան եկեղեցիին մէջ, եւ այդպիսով տղամարդոց վրայ իշխանութիւն ունենան, հապա ապրին խաղաղութեամբ: Որովհետեւ Աստուած սկիզբը Ադամը կերտեց, եւ յետոյ՝ Եան: Ադամը չմոլորեցուց Եան, այլ Եան մոլորեցուց զայն եւ խախտեց Աստուծոյ պատուիրանը: Սակայն կինը պէտք է ապրի վերականգնուած արժանապատուութեամբ՝ իր զաւակներուն միջոցով, ստանալով այն օրինութիւնը,



որ կու գայ անոնց մեծնալով՝ իբրեւ նուիրուած զաւակներ, որոնք սնանած են հաւատքով ու սիրով եւ իմաստութեամբ կը վարուին:

Որպէսզի պատասխաններ գտնէի այն հարցումին, թէ որքանո՞վ ասիկա կը վերաբերի մեր ժամանակակից կեանքին, ես դիմեցի աստուածաբանի եւ եկեղեցւոյ առաջնորդի մը, որ գործնականօրէն իրականացուցած է քարոզող եւ առաջնորդող կիներու գաղափարը իր ծաղկունք ապրող տեղական եկեղեցիին մէջ: Դոկտոր Կիլպըրթ Պիլեզիքեանը, որ *Ուիթըն* համալսարանին մէջ դասախօս է եւ *Ուիլօ Քրիք* եկեղեցիին մէջ երէց է, ձեռնարկած է տասնութը ամիս տեւող ուսումնասիրութիւն մը՝ կապուած այն հարցերուն հետ, թէ արդեօք կիները կրնան՞ ղեկավար ըլլալ եկեղեցիին մէջ: Ահա քաղուածք մը անոր հետազոտութիւններէն, որոնք առաջին անգամ հրապարակուած են անոր «*Սեռային Դերերէն Անդին*» գիրքին մէջ.

Ամփոփելով կ'եզրակացնենք, թէ Անկումէն առաջ, տղամարդը եւ կինը իրարու հետ կը հաղորդակցէին իբրեւ իշխանակիցներ. երկուքն ալ Աստուծոյ պատկերը կը կրէին եւ կանչուած էին միասնաբար հոգալու այն աշխարհին, որ Ան ստեղծած էր: Թէ՛ տղամարդիկը եւ թէ՛ կիները պատասխանատու են իրականացնելու իրենց ծառայութեան պաշտօնները Աստուծոյ փառքին համար՝ այն ձեւով, որ Աստուած զիրենք օժտած է, եւ իրենց տրուած հաւատքին չափով: Դժբախտաբար, Անկումին պատճառով, այս գործակցական յարաբերութիւնը խորապէս վիրաւորուեցաւ: Կը հաւատանք, որ Աստուծոյ շնորհքով տրուած փրկութեան ծրագիրին իմաստը այն է, որ այն բոլոր բաները, որոնք մեղքին միջոցով կոտորուեցան, ներառեալ՝ տղամարդոց եւ կիներուն միջեւ գտնուող յարաբերութիւնները, կրնան վերականգնուիլ՝ հասնելով այն հրաշալի վիճակին եւ գեղեցկութեան, որ գոյութիւն

ունէր Ստեղծագործութեան առաջին օրերուն: Բազմաթիւ նուիրուած եւ խելացի քրիստոնեաներ համաձայն չեն մեր եզրակացութիւններուն: Պիտի գայ այն օրը, երբ մեզմէ իւրաքանչիւրը պիտի գիտնայ այն չափը, որով շեղած ենք Աստուծոյ կատարեալ իմաստութենէն՝ թէ՛ այս, եւ թէ՛ շատ ուրիշ հարցերու մէջ: Մինչեւ այդ պահը ես կը պահեմ այս դիրքորոշումը՝ խոնարհութեամբ, բայց հաստատուն կերպով: Կ'ուզեմ այս *ռիսքը* առնել՝ քաջալերել կիները, որպէսզի անոնք կատարեն այն, ինչ որ, իմ համոզումովս, Աստուծոյ Խօսքը կը խնդրէ անոնցմէ՝ իրենք զիրենք լիովին տրամադրելի դարձնեն բոլոր հոգեւոր պարզեւններուն համար<sup>4</sup>:

Եթէ կին մը կը զգայ, որ ինք կանչուած է քարոզելու, սորվեցնելու կամ առաջնորդելու, եւ անոր կեանքը կը համապատասխանէ Սուրբ Գիրքին մէջ նշուած առաքինութիւններուն, այդ պարագային կրթութիւն տուէք անոր, մարզեցէ՛ք զինք, որպէսզի կարենայ քարոզել, սորվեցնել եւ առաջնորդել այն կարողութեամբ, որ Աստուած կու տայ: Ինչպէս Դոկտոր Պիլեզիքեանը, ես ալ կ'որդեգրեմ այս դիրքորոշումը՝ խոնարհութեամբ, բայց հաստատուն կերպով:

## **Ռաբբիի մը Տեսութիւնները Եւային մասին**

Ոչ երկար ժամանակ առաջ ես պատիւը ունեցայ երկար խօսակցութիւն մը ունենալու փայլուն մեսիական ռաբբիի մը հետ, որուն անունը Պրայըն Պիլեչի էր: Անոր հետ բաժնեկցեցայ իմ մտահոգութիւնս, թէ Աստուծոյ դուստրերուն մեծ մասը նոյնիսկ գաղափար չունի իր իրական ինքնութեան մասին: Այսօր ատելի եւ ատելի յստակ կը դառնայ, որ Աստուծոյ դուստրերուն ինքնութիւնը եւ արժանապատուութիւնը կատարի յարձակումի կ'ենթարկուի այս աշխարհի հոգիին կողմէ, եւ որ բազմաթիւ պաշտամունքի տուններու մէջ չեն գիտեր, թէ ինչպէս պէտք է աճեցնեն այն պարզեւները, զորս Աստուած տուած է կիներուն:

Կ'ուզէի գիտնալ իրեայ աստուածաբանէ մը, որ իր ամբողջ կեանքին ընթացքին Աստուծոյ Խօսքը սերտած է, թէ Աստուած ինչ կը մտածէ Իր դուստրերուն մասին: Իրմէ խնդրեցի, որ Եայլէն սկսի, եւ յետոյ խօսի Սառային մասին, եւ այդպէս շարունակ՝ մինչեւ Քրիստոսի հարսը: Ռաբբին շատ բաներ պատմեց ինծի, եւ ես կ'ուզեմ քեզի քանի մը գանձ փոխանցել անոր խօսքերէն, քանի որ անոնք քեզի պիտի օգնեն, որ հաստատուիս քու ճշմարիտ ինքնութեանդ մէջ:

Այնպէս չէր, որ Աստուած Ադամը աւելի կը սիրէր, քան Եան: Սկիզբէն Եան միշտ Ադամին հետ էր: Թէեւ Ադամը անունանեց Եան, եւ նոյնիսկ անոր պէտք ունէր, Եան միշտ Աստուծոյ գաղափարը եղած է: Աստուած Եային տուաւ անոր իւրայատուկ իգական տեսակէտը եւ ինքնաարտայայտումը: Կինը միշտ տղամարդուն մէջ եղած է, եւ այդ է պատճառը, որ տղամարդուն քով ամէն բան աւելի լաւ կ'ըլլայ երբ ան կ'նոջ հետ է, քան՝ առանց անոր (տես Ծնունդներու 2.18): Եային յայտնուիլը փոխեց Ադամին «լաւ չէ»-ն՝ զայն դարձնելով «շատ լաւ»-ի:

Աստուծոյ Խօսքէն մենք գիտենք, որ Աստուած խոր քուն տուաւ Ադամին, բացաւ անոր կողը եւ Եան կերտեց (տես Ծնունդներու 2.21): Տղամարդիկը եւ կիները իւրայատուկ են եւ իրարմէ տարբեր են, բայց ատիկա չի նշանակեր, որ անոնք խախտած կամ անկապակից կէսեր են: Անոնք երկու լիարժէք ամբողջութիւն են: Տղամարդիկը եւ կիները այնպէս ստեղծուած են, որ ըլլան անջատ՝ իրենց արտայայտութեամբ, բայց ոչ բաժնուած՝ իրենց նպատակով: Կարելոր է նշել, որ մեղանչումէն առաջ անոնց միջեւ չկար դերերու բաշխում: Այդ իսկ պատճառով, երկուքն ալ կրնային մէկ նպատակ ունենալ, սիրտով միաբան ըլլալ, ինչպէս նաեւ՝ մարմնաւոր մօտեցումի միջոցով մէկ դառնալ:

Ողբերգական օր մը Եան խաբուեցաւ, իսկ Ադամը ապստամբեցաւ: Եային ընտրութիւնը *բոլոր* կիները չդարձուց հակուած դէպի խաբէութիւնը, ինչպէս որ

Ադամին դաւաճանութիւնը *բոլոր* տղամարդիկը չդարձուց նախատրամադրուած դէպի ապստամբութիւնը: Շատ յաճախ մարդիկ կը փորձեն պնդել, որ Ադամին մեղքը *աւելի պզտիկ չարիք* էր, քան Եւայինը: Լսած եմ, որ մարդիկ ատիկա կը կոչեն «զանցառութեան մեղք» (պարտականութեան անտեսումը պատճառով կատարուած մեղք, թերացում): Ռաբբին անոր համաձայն չէր: Ան հաստատեց այն, ինչ որ Սուրբ Գիրքը կը սորվեցնէ այդ մասին.

Որովհետեւ ինչպէս շատեր մեղաւոր եղան մէկ մարդու անհնազանդութեամբ, այնպէս շատեր արդար պիտի ըլլան մէկին հնազանդութեամբ: (Հռոմայեցիներուն 5.19)

Ադամին մեղքը զանցառութիւն չէր: Լաւագոյն պարագային զանիկա կարելի է կոչել «դիտումնաւոր անհնազանդութիւն», բայց կարգ մը ուսումնասիրողներ ատիկա «դաւաճանական ապստամբութիւն» կը կոչեն:

Կը կարծեմ, որ որոշ առումով, Ադամը եւ Եւան նաեւ փորձեցին ինքնութիւն ալ գողնալ. չէ՞ որ անոնք ուզեցին Աստուծոյ նման ըլլալ:

Մեր տան մէջ, երբ մեր զաւակները գիտակցաբար կ'անտեսեն ծնողներուն խօսքերը եւ մտիկ կ'ընեն իրենց ընկերներուն կամ նոյնիսկ մէկը միւսին խօսքերուն, մենք ատիկա զանցառութիւն չենք կոչեր, այլ՝ անհնազանդութիւն: Զինուորական տեսանկիւնէն, հրամանին գիտակցաբար չենթարկուիլը անհնազանդութիւն կը կոչուի եւ ոչ թէ զանցառութիւն: Իսկ հիմա կարդանք, թէ Աստուած ինչպէս կը նկարագրէ Ադամին օրինազանցութիւնը.

Որովհետեւ դուն կնոջդ խօսքը մտիկ ըրիր, ու կերար այն ծառէն՝ որուն մասին քեզի պատուիրեցի. «Անկէ մի՛ ուտեր, գետինը քու պատճառով անիծեալ ըլլայ: Կեանքիդ բոլոր օրերը ցաւով պիտի ուտես անկէ: (Ծնունդներու 3.17)

Պատճառով մը հակում մը կամ նորածեւութիւն մը յառաջ եկած է, որ կը փորձէ Ադամին ըրածին ծանրութիւնը թեթեւցնել: (Չեմ գիտեր ինչո՞ւ մարդիկ կ'ուզեն պաշտպանել Ադամին որոշումները կամ արարքները, երբ արդէն բոլորս փրկուած ենք Քրիստոսով): Այս միտումին համախոհները կոչ կ'ուղղեն տղամարդոց, որ ոտքի ելլեն եւ լաւ դեկավարներ դառնան, որուն անձամբ ես սրտանց «այո՛ր եւ ամէն» կ'ըսեմ: Ես համաձայն եմ, որ մենք շատ պէտք ունինք տղամարդոց, որոնք ուրիշ տղամարդոց համար օրինակ պիտի դառնան: Զիս կը մտահոգէ այն, թէ ոմանք ինչպէս կը պատկերացնեն ասոիկա: Անոնք կը հաւատան, որ եկեղեցւոյ տղամարդիկը լաւագոյնս կ'առաջնորդեն՝ լռեցնելով կիները, եւ իրենց պատճառաբանութիւնը կը հիմնատրեն մեղանշումի պատմութեամբ:

Ես բազմաթիւ թերութիւններ կը գտնեմ այս հիմնատրման եւ մօտեցումին մէջ: Անկասկած, կարելի էր շատ բան կանխել, եթէ Ադամը միջամտէր եւ ճշմարտութիւնը ըսէր: Շնորհիւ իր կանխագիտութեան եւ Աստուծոյ ցուցմունքներուն հնազանդելուն՝ ան արժանի հակահարուած մը կրնար տալ օձին կամ ստախօսին, ոչ թէ՛ Եային: Ադամը պէտք է իր ձայնը գործածէր՝ օձը լռեցնելու համար. չէ՞ որ մեր պատերազմը մարմինի եւ արեան դէմ չէ: Նմանապէս, տղամարդիկ պէտք է գործածեն իրենց ձայները՝ չարը լռեցնելու համար, ոչ թէ կիները, զորս Աստուած ստեղծած է Իր պատկերով եւ զորս բարի կոչած է:

Մարդը ապագայ սխալներէն պաշտպանելու լաւագոյն միջոցը հասկնալի ցուցմունքներ տալն է, ոչ թէ՛ արգիլելը: Այն իրականութիւնը, որ Եան անցեալին մեծ սխալ մը գործեց, պէտք չէ լռեցնէ անոր դուստրերուն ձայնը ապագային՝ այնպէս, ինչպէս Ադամին մեղքը պէտք չէ գերութեան մէջ պահէ իր որդիները: Աւելի քան քսան դար շարունակ տղամարդիկ եւ կիներ կողք կողքի սորված են եկեղեցիին մէջ: Ժամանակն է, որ հասկնանք, թէ ո՞վ ենք մենք Քրիստոսով, եւ առաջնորդենք միասին՝ կողք-կողքի կանգնած, այնպէս, ինչպէս ստեղծուած

էինք գործելու պարտեզին մէջ: Տղամարդիկ պէտք է առաջնորդեն տղամարդու պէս, իսկ կիները՝ կնոջ պէս:

Այսօր մենք ունինք Յիսուսի օրինակը, որ մեզի ցոյց տուաւ, թէ ինչպէս պէտք է յարաբերինք Սատանային հետ.

(Ետե՛ս) գնա, Սատանայ, որովհետեւ գրուած է. «Տիրոջ՝ քու Աստուծոյդ երկրպագէ, ու միայն զինք պաշտէ»: (Մատթէոս 4.10)

Մենք պէտք է կրկնենք Աստուծոյ խօսքերը, ոչ թէ ընկղմինք տրամաբանական փաստերու մրցումին մէջ: Եկէք ծառայենք Աստուծոյ այնքան գերազանց կերպով, որ հաւատքի կեանքով ապրելու կենդանի փաստեր դառնանք: Մեր մեծագոյն օրինակը Յիսուսն է: Պէտք է քալենք՝ ինչպէս որ ինք քալեց: Պէտք է շատ անելի հետեւինք Անոր, քան ռելե մարդու, ներառեալ Պօղոսը: Պօղոսը ինք խորհուրդ տուաւ Տիմոթէոսին հետեւիլ իրեն այն չափով միայն, որով ինքը կը հետեւէր Քրիստոսին. «Ինծի՛ նմանեցէք, ինչպէս ես ալ՝ Քրիստոսի» (Ա.Կորնթացիներուն 11.1):

## **Սատանային Սուտերը եւ Աստուծոյ Բժշկութիւնը**

Սատանան կը կողոպտէ թէ՛ տղամարդիկը, թէ՛ կիները, երբ մենք կը լսենք անոր պառակտիչ խորհուրդները եւ կ'ամրապնդենք մեր սեռին դիրքերը՝ միւս սեռին հաշտոյն: Ժամանակը կ'անցնի: Ժամանակն է, որ հետեւինք Յիսուսի պատուէրին եւ շարունակ կորսուածը փրկելու ետեւէն ըլլանք (տես Ղուկաս 19.10): Արդէն շատոնց ժամանակն է, որ եկեղեցին ապրող եւ շնչող օրինակ դառնայ կոտորած եւ անջատուած աշխարհին համար, եւ ցոյց տայ, թէ ինչպէս պէտք է ապրիլ բազմացեղային, բազմամշակութային եւ բազմասերնդային ընկերութեան մէջ, եւ թէ ինչպէս պէտք է միաբանել երկու սեռերը մէկ նպատակի շուրջ: Սեռերուն



**Տղամարդիկը  
եւ կիները այնպէս  
ստեղծուած  
են, որ ըլլան  
անջատ՝ իրենց  
արտայայտութեամբ,  
բայց ոչ բաժնուած՝  
իրենց նպատակով:**

վերաբերող հարցերուն հետ սխալ վարուելով՝ մենք կոտրած եւ վիրաւորած ենք երկու սեռերն ալ: Երբ վերստանանք մեր աստուածային ինքնութիւնը, սեռերուն բժշկութիւնը կը սկսի:

Երբեմն շփոթութիւնը այնքան մեծ է, որ կիները հարցականի տակ կ'առնեն իրենց սեփական սեռային ինքնութիւնը՝ մտածելով, որ իրենք պէտք է տղամարդ ծնած ըլլային:

Շատերը կը փորձեն իրենք զիրենք «բժշկել»՝ փոխելով իրենց սեռը կամ դրսեւորելով որձեւէգութեան կամ արուէգութեան (թէ՛ արուի եւ թէ՛ էգի երեւոյթ եւ յատկանիշներ որդեգրել) վարքագիծ: Կարդանք Եսայի մարգարէին միջոցով տրուած Աստուծոյ խօսքը.

Ինչպէս դերերը կը շրջէք. միթէ բրուտը կաւ կը սեպուի՞, որ շինուածը զինք շինողին համար ըսէ. «Ան զիս չշինեց», եւ ձեռակերպուածը իր ձեռակերպիչին համար ըսէ. «Ան խելք չունի»: (Եսայի 29.16)

Հարցումը հետեւեալն է՝ արդեօք մենք կը վստահի՞նք Աստուծոյ: Արդեօք կը հաւատամք, որ Ան բարի եւ իմաստուն է եւ Ան չէ սխալած՝ մեզ մեր մայրերուն որովայններուն մէջ իբրեւ աղջիկներ ձեւաւորելով: Կարելի՞ է արդեօք, որ Ան նպատակ մը ունի մեր կեանքին համար մեր հիասթափութեան մէջ, եւ որ մենք կը շրջանցենք Անոր նպատակը, երբ մեր ձեռով լուծումներ կ'ընենք:

Հաւատման, ես կը հասկնամ այդ ցաւը: Ես նոյնպէս կը գիտակցիմ, որ շատերու համար այդ ցաւը ատելի խոր է, քան ես երբեւէ ապրած եմ ... բայց եւ այնպէս, Աստուած կրնայ թափանցել քու սիրտիդ խորը եւ բժշկել այն, ինչը որ

երբեք չեն կրնար ընել մարդուն ձեռքերը: Ես յստակօրէն կը յիշեմ, որ զայրոյթով կը մտածէի այն մասին, որ ես կին եմ: Չեմ գիտեր՝ արդեօք պատճառը մօրս հետ անկայուն փոխարարբերութիւններն էին, թէ՛ թշնամիին կանխարգելիչ յարձակումը, որուն նպատակն էր՝ ոչնչացնել Աստուծոյ ծրագիրը իմ կեանքիս մէջ: Անկախ անկէ, թէ ինչ էր անոր պատճառը՝ որոշ կացութիւններ իմ կեանքիս մէջ, ուրիշ կիներու հետ յարաբերութիւնները կամ եղեղեցիին մէջ փորձառութիւնները, իրականութիւնը այն էր, որ ես չէի սիրեր կանացիութեան խոցելի կողմերը: Երբ փոքր էի, ես տղու վարք ունեցող աղջիկ էի. աւելի յաճախ ընկերութիւն կ'ընէի տղոց հետ, քան՝ աղջիկներու: Տղաները աւելի կը սիրէի: Երբ արբունքի շրջանս հասաւ, կը թուէր, որ ես այլմոլորակային մըն էի, որուն կը ստիպէին ապրիլ վարդագոյնի եւ գեղեցիկի աշխարհին մէջ: Աղջիկները կը խօսէին ակնարկներու եւ փսփսուքներու լեզուով, բան մը, որ ես չէի հասկնար, եւ կը վարուէին այնպիսի շնորհքով եւ գեղեցկութեամբ, որոնց ես՝ անշնորհք աղջիկս, չէի տիրապետած: Բարձր դասարաններուն մէջ ես ճինգ եւ վրայի լայն տաբատ (*ովըրոլ*) կը հագուէի, հիմնականին մէջ, որպէսզի ծածկէի իմ ոչ այնքան կանացի կառուցուածքս, ինչպէս նաեւ պահէի իմ ցաւոտ ինքնագիտակցութիւնս:

Երբ ճոնը եւ ես նշանուեցանք, կը փորձէի անոր բացատրել, որ ունիմ կնոջ մարմին եւ տղամարդու ուղեղ (ճոնը անմիջապէս ինծի ըսաւ, որ ատիկա անընդունելի է): Բայց դրական առումով, ես իրականութեան մէջ կը հաւատամ, որ այդպիսով Աստուած կը պատրաստէր զիս չորս որդիներ ունենալու: Ժամանակի ընթացքին Աստուած բժշկեց զիս: Ան յայտնեց իմ կանացիութեանս արժէքը: Անոր ներկայութեան մէջ ամբողջ ամօթը, որով կրօնը պատեր էր կնոջ պատկերը, փոխարինուեցաւ պերճաշուք հանդերձներով: Ան թափանցեց իմ անձիս խորերը եւ ինծի տուաւ քաջութիւն,



ուժ՝ վախի եւ զոհի մտածելակերպին փոխարէն, զորս մայրս անգիտակցաբար անցնուցած էր իմ կանացիութեանս: Ես սորվեցայ սիրել իմ մարմինս ոչ միայն տեսքի համար, այլեւ կարողութիւններու: Ատիկա ընթացք մըն էր, զոր բաժնեկցած եմ շատ կիներու հետ, որպէսզի անոնք ալ բժշկութիւն գտնեն:

Բայց ինչ կը պատահէր, եթէ ես պայքարէի իմ կանացիութեանս հետ այս ժամանակաշրջանին, երբ սեռային դերերու տարբեր ձեւով բաշխումը կը քաջալերուի եւ նոյնիսկ ողջունելի կը համարուի: Մեր մշակոյթը խորհուրդ կու տայ ինձի, որ իմ ձեւովս լուծումներ ընեմ եւ իրականութեան մէջ տղամարդ դառնամ: Բայց ատիկա ընելով՝ ես կը կեցնէի Աստուծոյ բժշկարար ընթացքը, եւ կը կորսնցնէի այն բոլոր բաները, զորս մինչ այդ սորվեր էի: Երբ դադրինք մենք մեզ ուրիշներու հետ բաղդատելէ, մենք կրնանք մեր անձը ընդունիլ՝ մեր թերութիւններով հանդերձ:

Ուստի, ինչ քայլեր պէտք է առնես, որպէսզի բժշկութեան ընթացքը սկսի քու կեանքիդ մէջ:

1. *Աղօթէ:* Խնդրէ՛ Սուրբ Հոգիէն, որ ամբողջական դարձնէ քու սիրտդ եւ յայտնէ որեւէ սխալ մտածելակերպ կամ այն մարզերը, որոնց մէջ անհնազանդ ես: Սեռային խտրականութիւնը եւ զայրոյթը կրնան սպրդիլ մեր սիրտէն ներս եւ աղաւաղել մեր պատկերացումը մեր եւ մեր շուրջիններուն մասին: Աղօթէ՛, որ հաշտութիւն տարածող ըլլաս, ոչ թէ պառակտում:
2. *Ենթարկէ կամքդ Աստուծոյ:* Թերեւս դուն քեզ զսպած ես կամ մարդկային կանոններու ետեւ պահուլտած ես, փոխանակ հնազանդիս այն բոլոր բաներուն, զորս գիտես եւ տեսած ես Աստուածաշունչին մէջ, ինչպէս նաեւ՝ այն բոլոր բաներուն, որոնք քեզի յայտնուած են աղօթքի մէջ: Թերեւս արտօնած ես, որ մարդկային վախը (կամ՝ կին ըլլալու վախը) քեզ ետ պահէ Աստուծոյ կամքը կատարելէն: Հարցո՛ւր Աստուծոյ, թէ ինչպէս պէտք

է կատարես Մեծ Յանձնարարութիւնը կեանքիդ այս հանգրուանին մէջ՝ հասկնալով, որ յաջորդ հանգրուանին ատիկա կրնաս ուրիշ ձեւով ընել:

3. *Ճանչցիր թշնամիդ:* Մեր պատերազմը մարմինի եւ արեան դէմ չէ: Երբ մենք երկմիտ ենք, երկկողմանի լրտեսի պէս կը վարուինք: Յակոբոսը մեզի կ'ըսէ, որ երբ Աստուծոյ հնազանդինք, պէտք է դէմ դնենք Սատանային, եւ ան հեռու պիտի փախչի մեզմէ:
4. *Քննէ կեանքդ եւ խօսակցութիւններդ:* Քու խօսքերուդ եւ գործերուդ մէջ ինչ բանը կրնայ սեռային նախապաշարում յառաջացնել: Եթէ Սուրբ Հոգին այնպիսի մարզեր յայտնած է քու կեանքիդ մէջ, որոնց մէջ զիջում կատարած ես, շատ հաւանական է, որ ձեւով մը այդ սեռային նախապաշարումները կամ սեռիդ պատճառով ունեցած զայրոյթդ արտայայտած ես:
5. *Հաստատ դիրքորոշում ունեցիր:* Յստակ արժէքներ չունեցող մարդիկ կրնան որեւէ բանով խաբուիլ: Այն մարդիկը, որոնք դէմ են, որ կիները եւ տղամարդիկը միասին գործեն, անգիտակցաբար կը հակառակին Աստուծոյ սկզբնական յանձնարարութեան:
6. *Պայքարիր Քրիստոսի մարմնին միաբանութեան համար:* Տղամարդիկը եւ կիները մրցակիցներ չեն: Մենք եղբայրներ եւ քոյրեր ենք, ինչպէս նաեւ՝ մէկս միւսին պահապանը եւ մտերիմ համախոհներ եւ դաշնակիցներ: Մենք պէտք է քալենք կողք կողքի՝ այն ընկերային յարաբերութեամբ, փոխադարձ յարգանքով եւ սիրով, որ կը գտնուի եղբայրներու եւ քոյրերու միջեւ: Եւ մենք պէտք է քաջալերենք մէկս միւսին կեանքին մէջ գտնուող պարգեւները: Աստուած երբեք ձայն պիտի չտար կիներուն, եթէ ուզէր, որ անոնք լուռ մնան: Աստուած գիտէր, որ թէ Ադամը, թէ այս աշխարհը կնոջ ձայնին եւ ազդեցութեան պէտք պիտի ունենային:

## **Ձիրար Ամբողջացնող և Իրարմէ Կախեալ**

Ես կ'ուզեմ, որ իմ թողնուիներս հնարաւորութիւնը ունենան մտածելու, ուսումնասիրելու և հարցումներ հարցնելու, որպէսզի ճշմարտապէս սորվին և սորվելով գործնականօրէն կիրարկեն իրենց հաւատքը իրենց կեանքին մէջ: Մենք կ'ըսենք, որ կիները կրնան վերստին ծնունդ ստանալ, բայց տակաւին կան ուսուցումներ և վարդապետութիւններ, որոնք կը ժխտեն, որ կիները կրնան ճշմարտապէս և լիովին ազատ ըլլալ: Աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, որ կիներուն մեծ մասը ազատ է եկեղեցիին սահմաններէն ներս գործելու, ոչ թէ՝ Քրիստոսի յանձնարարութեան սահմաններուն մէջ:

Իմաստութենէ զուրկ տղամարդիկ և կիներ վերստին սկսած են զիրար մեղադրել իրենց սխալ ընտրութիւններուն համար, ինչպէս ըրին Եդեմի պարտէզին մէջ: Ոչ ոք երբեք ճշմարիտ օգուտ քաղած է՝ դիմացինը մեղադրելով և ամչցնելով: Մեղադրանքները և ամօթը կը ցեխոտեն և կը մրոտեն թէ՛ որդիներուն և թէ՛ դուստրերուն պատկերը: Այդպիսի վերաբերումը դարձեալ կ'աղտոտէ և անվայել կը դարձնէ այն, ինչ որ Աստուած մաքրած է Քրիստոսով:

Սեռերը ստեղծուած են աստուածային գեղեցկութիւնը արտայայտելու համար: Դժբախտաբար, մենք զրկած ենք զիրար մեր աստուածային արժանապատուութենէն և զօրութենէն՝ փորձելով իրարմէ ստանալ այն հաւանութիւնը և ընդունելութիւնը, զորս միայն Աստուած կրնայ տալ մեզի: Աստուած մեզ ստեղծած է, որպէսզի մէկս միւսին տարբերութիւնները արժեւորենք, ոչ թէ զանոնք նուաստացնենք կամ անարգենք:

Եւ հիմա մեր մերկութիւնը արդարութիւն հազած է Քրիստոսով: Քրիստոսով տղամարդիկը և կիները կը յիշեն, որ իրենք դաշնակիցներ են, ոչ թէ թշնամիներ: Պողոսին խօսքերը Ա.Կորնթացիներուն 11.10-12-ին մէջ կ'օգնեն մեզի, որ ավելի լաւ հասկնանք, թէ մենք ինչպիսին կրնանք ըլլալ և ինչպիսին պէտք է ըլլանք մէկս միւսին համար: Եկէք համար առ համար

մեկնաբանենք այս հատուածը: Կարդանք տասերորդ համարը Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակէն.

Ի միջի այլոց, չափէն աւելի մի՛ խորասուզուիք տղամարդոց եւ կիներուն տարբերութիւններուն մէջ: Ո՛չ տղամարդը, ո՛չ կինը կրնայ առանձին բան մը ընել կամ նախապատուութիւն պահանջել:

Քրիստոսի մէջ տղամարդիկը եւ կիները իրարմէ կախեալ են, ոչ թէ՛ անկախ: Մեր աղբիւրը վերջաւորութեան Աստուած է. բայց այս համարները ուղղուած են այն դարաւոր մրցակցութեան, որ յայտնի է իբրեւ սեռերու պայքար:

Մեր միջեւ գտնուող տարբերութիւններուն նպատակը՝ մէկս միւսը փոխադարձաբար ամբողջացնելն է: Փոխադարձ կախուածութեան եւ ընդունելութեան պայմաններուն մէջ գոյութիւն չունին գերակայութեան եւ դասակարգութեան սկզբունքներ: Աստուածաշունչի *Տը Մատէճ* տարբերակին բանաստեղծական խօսքերը կը շարունակեն քանդել այս մրցակցութիւնը.

Սկիզբը ստեղծուեցաւ տղամարդը՝ իբրեւ Աստուծոյ գեղեցիկ փայլուն արտացոլացումը. ասիկա ճիշդ է: Բայց կնոջ մարմնին գլուխը բացայայտօրէն կը գերազանցէ գեղեցկութեամբ անոր գլխուն «գլուխը»՝ անոր ամուսինը (հմր 11):

Այս հատուածին մէջ Պողոսը կ'անցնի տղամարդէն եւ կիներէն դէպի աւելի յատուկ նիւթի՝ խօսելով կնոջ եւ ամուսինին մասին: Կը սիրեմ այն ձեւը, որով այս հատուածը կ'արժեւորէ երկու սեռերը: Իմ ամուսինս պատճառ կ'ըլլայ, որ ես հիանալի երեւիմ՝ սիրելով զԱստուած, զիս եւ մեր զաւակները. ես նոյնպէս կ'ուզեմ, զինք հիանալի երեւցնել՝ սիրելով զԱստուած, մեր ընտանիքը եւ զինք: Յաջորդ համարին մէջ Պողոսը կը դադրի ամուսնութեան մասին խօսելէ եւ դարձեալ կ'անդրադառնայ սեռերու նիւթին:

Ճիշդ է, որ առաջին կինը այր մարդէն եկաւ, բայց անկէ ետք ամէն այր մարդ աշխարհ կու գայ կնոջ միջոցով (հմր 12):

Կինը կազմուեցաւ տղամարդուն կողէն, բայց արդէն անկէ ետք տղամարդն է, որ կը կազմուի կնոջ որովայնին մէջ: Կինը ծնաւ այր մարդէն՝ Ադամէն, բայց յետագային բոլորս վերածնանք երկրորդ Ադամէն՝ Յիսուսէն: Պողոսը կը շարունակէ.

Եւ քանի որ ամէն բան, ըստ էութեան, Աստուծմէ է, եկէք դադրեցնենք այն խօսակցութիւնները, թէ «ո՛վ է առաջինը» (հմր 12, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Մրցակցութիւնը, որուն պատճառով մարդիկ շարունակ կը քննարկեն, թէ ո՛վ է առաջինը եւ ո՛վ է լաւագոյնը, կը դադրի, երբ մարդիկ Աստուծոյ ինքնութեան մասին յայտնութիւն կը ստանան: Մենք պէտք է վերականգնենք Աստուծոյ մասին ճիշդ պատկերացումը: Մենք պէտք է հասկնանք, որ միայն Աստուած սուրբ է: Ան է առաջինը եւ վերջինը: Ան է մեր Ալֆան եւ Օմեղան: Ոչ ոք կրնայ առաջնորդել եւ սիրել այնպէս, ինչպէս մեր Հայրը կ'առաջնորդէ եւ կը սիրէ:

Ասիկա կը նշանակէ, որ Ան որդիները աւելի շատ չի սիրեր, եւ աղջիկները՝ աւելի քիչ: Ոչ ալ հաւասարապէս կը սիրէ սեռերը: Ան տղամարդիկն ու կիները իւրայատուկ կերպով կը սիրէ: Երբ մէկ սեռը միւսէն աւելի կը բարձրացնենք, Աստուծոյ պատկերէն կը հեռանանք, քանի որ Ան ընտրեց սեռերը՝ Իր էութիւնը արտայայտելու համար:

## **Տղամարդիկը եւ Կիները Առաջին Եկեղեցիին մէջ**

Չունենալով ողջամիտ պատկերացում մեր պատմութեան մասին՝ յաճախ կը թերգնահատենք մեր կոչումը: Բայց կասկած չունիմ, որ Սուրբ Հոգին կը պատռէ այն քօղը, որ թշնամին կը փորձէ դնել մեր միտքին վրայ: Կարդալով Աստուծոյ խօսքը՝ մենք չենք կրնար չհակատել, որ առաջին

եկեղեցին ուժ մըն էր, զոր հաշուի պէտք է առնել: Երբ անոնց մշակոյթը փորձեց սահմանափակել անոնց շարժումը, անոնք ալ աւելի շատցան եւ նոր տարածքներ գրաւեցին: Անոնք չէին վախնար երկրաւոր թագաւորներուն հրամաններէն, քանի որ արդէն ծունկի եկած էին Բարձրեալ Աստուծոյ առջեւ: Անոնք ամէն օր կը տեսնէին նշաններ, սքանչելիքներ եւ հրաշքներ: Անոնք կ'ապրէին այն գիտակցութեամբ, որ իրենց գերագոյն իշխանութիւնը կը գտնուի անտեսանելի մարզին մէջ:

Անոնք Աստուծոյ Հոգիին կողմէ գատուած էին՝ մեծ գործերու համար: Մի՛ պատկերացներ, որ անոնք կը հաւաքուէին սրբարանի մը մէջ, եւ տղամարդիկը կը կենային մէկ կողմը, իսկ կիները՝ միւս կողմը: Անոնք հիմնականօրէն կը հաւաքուէին տուներու մէջ, աշխատավայրերու մէջ, գաղտնի հաւաքոյթներ կ'ունենային գետնափոր տեղերու մէջ, եւ նոյնիսկ նաւերու եւ բանտերու մէջ: Այս հաւատացեալները կանչուած էին ամէն ցեղէ, լեզուէ եւ մշակոյթէ, բայց անոնք միաբան էին նոյն Սուրբ Հոգիով: Երկու սեռերն ալ միաբան կանգնած էին կողք կողքի՝ կազմելով մէկ մարմին, որ Քրիստոսի հարսն է: Երբ մենք մէկ ենք, չկայ ոչ ոքի կողմը՝ բացի Աստուծոյ կողմէն: Անոնք տունէ տուն կը բաժնեկցէին Աւետարանը: Առաքեալներուն Գործերը 2.42-44-ին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս այս մարմինը կ'աճէր բնականոն կերպով.

Անոնք միշտ կը յարատեւէին առաքեալներուն ուսուցումին ու հաղորդութեան, հաց կտրելու եւ աղօթելու մէջ: Վախը համակեց ամէն անձ, եւ շատ սքանչելիքներ ու նշաններ կատարուեցան առաքեալներուն միջոցով: Բոլոր հաւատացեալները միասին էին, եւ բոլոր բաները հասարակաց էին:

«Բոլոր բաները հասարակաց էին» արտայայտութիւնը պէտք չէ սահմանափակել անոնց պէտքերով. անիկա կ'ընդգրկէր անոնց պաշտամունքը, երկիւղը, ընկերութիւնը, կերակուրները, աղօթքները եւ ստացուածքը: «Հասարակաց»

բառը կը նշանակէ՝ փոխադարձ, տարածուած, ամենօրեայ եւ համայնական:

Տղամարդիկը եւ կիները այնքան մօտ էին իրարու, որ կրնային իրարու նուիրուած ըլլալ թէ՛ ընկերութեան եւ թէ՛ ուսուցանելու մարզերուն մէջ: Ուսուցումը առանց ընկերութեան չստեղծեր համայնքային կեանք, ուր մարդիկ իրարու պէտքերուն կը ծառայեն: Ուսուցումը առանց սեղանի շուրջ տեղի ունեցող քննարկումի՝ մարդուն մէջ կը ձեւաւորէ «հոգեւոր ընտրախաւային» մտածելակերպ (այն մտածելակերպը, որուն համաձայն ընկերութիւնը պէտք է առաջնորդուի յատուկ մարդոցմէ կազմուած խումբի մը կողմէ, որուն անդամները իրենց կարողութեամբ եւ յատկութիւններով գերադաս են բոլոր միւս անդամներէն) կամ կ'աղաւաղէ ճշմարտութիւնը անոր միտքին մէջ: Մեր սորվածը կը քննուի անով, թէ ինչպէս մենք կ'ապրինք ճշմարտութիւնը, ոչ թէ անով, թէ որքան ճշմարտութիւն գիտենք: Շատ-շատեր ներքին հակասութեան գերիներ են. անոնք ունին գիտելիք, բայց իրենց գիտցածին համաձայն չեն ապրիր: Մենք պէտք ունինք թէ՛ մեր ընտանիքին, թէ՛ մեր բարեկամներուն, որպէսզի ճիշդ դիրքորոշում ունենանք եւ լիարժէք կերպով կիրարենք ճշմարտութիւնը:

Առաջին եկեղեցիին մէջ կիները ձայն ունէին: Եթէ այդպէս չ'ըլլար, Անանիայի եւ Սափիրայի պատմութիւնը ուրիշ ընթացք կ'առնէր: Առաքեալներուն Գործերը 5.1-11-ին մէջ գրուած է մարդու մը մասին, որ իր կնոջ բացակայութեան ստեց Պետրոսին եւ ինկաւ մեռաւ: Երեք ժամ ետք անոր կինը եկաւ: Ան ոչինչ գիտէր իր ամուսինին մահուան մասին, բայց գիտէր, թէ ինչպէս պէտք է պատասխանէր, եթէ իրեն հարցնէին: Երբ Պետրոսը անոր հարցուց, ան կրկնեց այն սուտը, որ ինքը եւ իր ամուսինը որոշած էին ըսել, եւ նոյնպէս ինկաւ մեռաւ: Ես կ'ուզեմ նշել հետեւեալը՝ ըստ հնազանդութեան մասին այսօրուայ ուսուցումին՝ ան պէտք է ստէր, որպէսզի «ծածկէր կամ պատուէր իր ամուսինին փափաքը»: Բայց երբ Սափիրան որոշեց ստել՝ ճշմարտութիւնը ըսելու փոխարէն, ան իր

կեանքով վճարեց անոր համար: Ան սխալ կերպով գործածեց իր ծայնը: Անոր կեանքը կը պահուէր, եթէ ան ճշմարտութիւնը ըսէր Պետրոսին:

Աստուծոյ անսահման ողորմութեան եւ շնորհքին յայտնութեան մէջ ոչ ոք կրնայ անտեսուած ըլլալ: Թէ՛ կիները, թէ՛ տղամարդիկը կրնային իրենց ներդրումը ունենալ: Անոնցմէ շատերուն կեանքին մէջ ասիկա առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար: Աստուած զանոնք օծած էր, որպէսզի միասին վերականգնէին այն, ինչ որ մեղքը խլեց մարդոցմէ: Տղամարդիկը եւ կիները միասին կը գործէին իրենց քաղաքներուն մէջ եւ մինչեւ աշխարհի ծայրերը՝ շնորհքով եւ զօրութեամբ: Առաքեալներուն Գործերը 2.46,47-ը այսպէս կը նկարագրէ առաջին եկեղեցիին կեանքի ձեւը.

Ամէն օր կը յարատեւէին միաբանութեամբ տաճարը երթալու մէջ, եւ հաց կտրելով իրենց տուներուն մէջ՝ իրենց կերակուրը կ'ուտէին ցնծութեամբ ու պարգամտութեամբ: Աստուած կը գովաբանէին եւ շնորհք կը գտնէին ամբողջ ժողովուրդին առջեւ. ու Տէրը օրէ օր փրկուածները կ'աւելցնէր եկեղեցիին թիւին վրայ:

Այս համարները կը պատկերեն այն ամենօրեայ կեանքի ձեւը, որուն պատճառով առաջին եկեղեցին շնորհք ունէր: Հրեայ հաւատացեալները միասին տաճար կ'երթային, կը հաւաքուէին տուներու մէջ, ուր իրարու հետ ընկերութիւն կ'ընէին եւ միասին սեղան կը նստէին՝ շնորհակալ եւ առատածեռն սիրտերով: Անոնց կեանքը լեցուած էր իրենց Աստուծոյն փառաբանութեամբ, եւ անոնք մարդոց առջեւ շնորհք կը գտնէին:

Ինչո՞ւ պէտք է մտածենք, որ Յիսուսի հարսը՝ Անոր եկեղեցին, պէտք է մերժէ, նուաստացնէ, անարգէ կամ թերագնահատէ կիները: Ինչո՞ւ մենք ընդունեցինք այն սուտը, որ տղամարդոց պէս հերոսներ չենք:

Չափազանց երկար ժամանակ պահուած է այն գաղափարը,



որ տղամարդիկը եւ կիները պէտք է միասնաբար գործեն: Եսասիրութեամբ եւ նախապաշարումներով առանձնացած կեանքին վսասակար հետեւանքները երկու սեռերն ալ վիրաւորեց:

Սակայն մեր պատմութիւնը այդպիսով չի վերջանար: Երկնային ծրագիրին մէջ սեռերուն նպատակը՝ մէկը միւսին վերքեր պատճառել չէ, ո՛չ ալ՝ մրցակցային պայքար մղել է: Մեզ կը միաբանեն մեր տարբերութիւնները, եւ մենք շատ ատելի զօրաւոր ենք, երբ միասին ենք, քան՝ երբ առանձին ենք: Աստուծոյ որդիներուն եւ դուստրերուն միաբանութիւնը թերեւս տակաւին երբեք ի յայտ եկած չէ այս երկրի վրայ՝ իր ամբողջ վեհութեամբ: Եւ մեր միաբանութեան միջոցով ի յայտ կու գայ Աստուծոյ պատկերը, եւ Աստուծոյ փառքը ի վերջոյ կը փայլի շլացուցիչ պայծառութեամբ:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Ինչ են այն կարգ մը պատերազմները, զորս տղամարդիկ ստիպուած կ'ըլլան առանձին մղելու:
2. Իբրեւ կին՝ երբեք լարուածութիւն զգացմ՞ծ ես, երբ գտնուած ես Աստուծոյ կոչումին եւ մարդկային ասանդութիւններէն յառաջացած սահմանափակումներուն միջեւ:
3. Ինչպէս կը կատարես Մեծ Յանձնարարութիւնը քու կեանքիդ մէջ:
4. Ինչպէս զգացիր դուն քեզ երբ կարդացիր «անյարմար կամ անհամապատասխան», «դիրահաւատ», եւ «դիրութեամբ խաբուող» բառերը:
5. Ինչ կրնաս ընել, որպէսզի ատելի հմտօրէն մարդոց փոխանցես Աւետարանը:
6. Ո՞ր մարզերուն մէջ դուն քեզ գտած ես յանցանքի զգացումի ծուղակին մէջ:

## Վախի եւ Սիրոյ Պատերազմը

Աէրը՝ անձին գեղեցկութիւնն է:

ՍՈՒՐԲ ՕԳՈՍԻՆՈՍ

Վերջերս ճոնը եւ ես մեր նախասիրած եկեղեցիներէն մէկուն մէջ ամուսնութեան նիւթին շուրջ հարցազրոյցի մը մասնակցեցանք, որուն ընթացքին մարդոց հարցումներուն կը պատասխանէինք: Այդ Կիրակի երեկոյեան հաւաքոյթի ներկաները իրենք զիրենք մէկ ընտանիքի պէս կը զգային: Ժամանակը արդէն կը վերջանար, երբ մէկը կարեւոր հարցում մը հարցուց. «Աւելի քան երեսուն տարի տեսող ամուսնութենէ ետք կայ արդեօք բան մը, որ դուք ուրիշ ձեռով կ'ընէիք, եթէ հնարաւորութիւն ունենայիք»: Իմ կարգս էր պատասխանելու: Քանի որ քիչ ժամանակ մնացած էր, կ'ուզէի թէ՛ ճիշդ, թէ՛ կարճ պատասխան մը տալ: Իսոր շունչ մը քաշեցի եւ խոստովանեցայ. «Ես ճոնին կ'արտօնէի, որ աւելի շատ սխալներ գործէր, եւ ես աւելի անվախ կերպով կը սիրէի զինք»:

Մարդոց մէջէն կարծես ալիք մը անցաւ: Իմ նստած տեղէս տեսայ, թէ ինչպէս թէ՛ տղամարդիկ, թէ՛ կիներ արագ կերպով սրբեցին իրենց արցունքները. լսեցի բազմաթիւ խոր

հառաչանքներ եւ նկատեցի լուռ գլուխի շարժումներ՝ իբրեւ համաձայնութեան նշան: Վախը՝ սիրոյ մեծագոյն թշնամին է ... հաւասար՝ ուժով, սակայն մահաբեր եւ կործանարար՝ իր էութեամբ:

Այն բոլոր բաներուն մեծ մասը, որոնցմէ կը վախնայի մեր ամուսնութեան մէջ, երբեք չիրականացաւ: Այն հոգերը, որոնք կը տանջէին զիս գիշերը, միայն կնճիռներ աւելցուցին իմ դէմքիս վրայ: Անոնք պարզապէս վրձինի հարուածներ էին իմ կեանքիս կտաւին վրայ: Եւ պատճառը այն չէր, որ ես լաւ գծագրիչ էի, այլ՝ որ Աստուած զարմանալիօրէն հաւատարիմ էր ինձի հանդէպ:

Ես չեմ սիրեր սխալներ գործել, ինչպէս ռեւէ անձ, սակայն ետ նայելով՝ աւելի *ոհսք*եր կ'առնէի: Մինչեւ երկինք երթալս ես պիտի չգիտնամ, թէ վախը ինչքան բաներ գողցած է մեր երկուքէն: Մէկ բան գիտեմ ... վախը սարսափելի խորհրդատու է ամուսնութեան մէջ: Վախը կ'անդամալուծէ եւ կը գերէ այն բոլոր բաները, զորս սէրը կը ձգտի կեանքի կոչել: Հասկնանք, թէ՛ ոչ, սէրը եւ *ոհսք*ը սերտօրէն իրարու կապուած են:

Ես մեծցած եմ ընտանիքի մը մէջ, ուր վախը կ'իշխէր, ոչ թէ՛ սէրը: Վախը միշտ ձայն ունէր ծնողքիս ամուսնութեան մէջ: Անիկա կը թափանցէր անոնց ընկերային յարաբերութիւններէն ներս եւ նոյնիսկ կը սպառէր մեր ընտանիքին ֆինանսները: Մեր ընտանիքին մէջ երբեք չկար բաւարար դրամ կամ բաւարարաչափ սէր. չկային մարդիկ, որոնց կարելի էր վստահիլ: Վախը կործանումի ազդարարութիւն կու տար մեր գեղեցիկ տան սենեակներուն մէջ. անիկա կարծես ետ կը ցատկէր պարապ պատերէն, որոնց վրայ ոչ մէկ նկար կար: Իմ հայրս շինարար էր, բայց վախը այնպէս ըրաւ, որ մեր ապրած տուններուն մէջ չկար ընտանեկան մթնոլորտ: Բազմաթիւ գիշերներ եղբայրս եւ ես պառկած էինք մեր մահճակալներուն մէջ եւ չէինք կրնար քնանալ, քանի որ մեր ծնողները կը կռուէին մինչեւ ուշ գիշեր: Ես գրառումներ կ'ընէի իմ օրագրիիս

մէջ ելեկտրական ջահին լոյսին տակ եւ ես ինծի խոստումներ կու տայի խաւարին մէջ: Կը կարծէի, թէ այդ խանդավառ գրառումները պիտի պաշտպանէին զիս: Ես ինծի խոստացայ, որ ~~երբեք~~ խոցելի պիտի չըլլամ: Իմ ծնողքս ամուսնալուծուեցաւ, այն ալ՝ երկու անգամ եւ, ի վերջոյ, ամէն մէկը գնաց իր ճամբան՝ իբրեւ թշնամիներ, ոչ թէ բարեկամներ:

Երբ ես քրիստոնեայ դարձայ, իմ սիրտս ընտանիք գտաւ, բայց աստիկա չէր նշանակեր, որ ես գիտէի, թէ ինչպէս պիտի վարուիմ ընտանիքի մէջ: Մեր ամուսնութեան առաջին տասը տարիներուն ես պէտք էր դիմագրաւէի բազմաթիւ ապահովութեան ցանցեր, զորս կառուցած էի մանկութեան տարիներուս: Խոցելի ըլլալը մերժելս կը նշանակէր, թէ չէի գիտեր ինչպէս ներել կամ ներում ստանալ: Այդ ցանցերուն պարանները հանգուցած էին զիս եւ քիչ մնաց պիտի կործանէին մեր ամուսնութիւնը: Ամուսինս բնաւ հորս չէր նմաներ, ես ալ իմ մայրս չէի, բայց մեր միջեւ անհամաձայնութիւն կ'ըլլար: Կը յիշէի այն վիրաւորական խօսքերը, զորս լսած էի, թէեւ ծնողներս կը կարծէին, թէ խոր քունի մէջ եմ:

Ես կ'արտօնէի, որ ծնողներուս ձգած վախի ժառանգութիւնը իմ ապագայէս ներս թափանցէր. ես պէտք էր կանգ առնէի, քանի դեռ անիկա իշխանութիւն չէր ստացած իմ ընտանիքիս մէջ: Ճոնին անկատարելութիւնները կը բացայայտէին իմ իսկ թերութիւններս շատ աւելի մեծ չափով, քան ես կը կարծէի, որ կարելի էր: Փոխանակ վարուէի այն ճշմարտութեան համաձայն, որ գիտէի, կը վարուէի այն *սենարիոյ*ին համաձայն, զոր սորված էի մանկութեանս տարիներուն:

Թէեւ ինծի շատ բան ներուած էր, ես կծծիութեամբ կ'ողորմէի Ճոնին: Մեր ամուսնական ուխտը արագօրէն կը վերածուէր պայմանագիրի, եւ այդ ընթացքին մեր սէրը կը նուազէր:

Կը մերժէի Ճոնը անվախօրէն սիրել, քանի որ ես կը վախնայի:..

Փորձելով ինքզինքս պաշտպանել՝ ես սկսայ իմ սիրտս փակել անոր դիմաց: Մեր ամուսնության առաջին քանի մը տարիներուն ընթացքին իմացայ, որ Ճոնը պոռնկագրութեան եւ գիշութեան մոլութիւնները ունէր: (Ճոնը եւ ես հանրութեան առջեւ խօսած ենք այս մասին): Մոռնալով, թէ Ճոնը որքան ողորմած գտնուեցաւ ինծի հանդէպ, երբ իմացաւ իմ անցեալս, ես սկսայ հեռանալ իրմէ: Երբ Ճոնին մեղքը բացայայտուեցաւ, Յիսուսի խրատը, թէ՛ մենք պէտք է ներենք այնպէս, ինչպէս մեզի ներուած է, անյայտացաւ ինծի համար: Ես կ'ապրէի վախի մէջ եւ կ'ամչցնէի զինք, մինչ ան կը փորձէր ազատիլ անկէ՝ ինձմէ ստանալով աննշան կամ ոչ մէկ աջակցութիւն: Ես այդ հարցին հետ չէի վերաբերեր իբրեւ մեք հարցը ... ասիկա իր հարցն էր: Ես չէի օգներ իրեն, մասամբ՝ այն պատճառով, որ կը սկսէի զգալ իմ անցեալիս ճնշումը եւ, հետեւաբար, կը սկսէի հաւատալ, որ արժանի չէի անելի լաւ կեանքի:

Մենք սկսանք անդադար կռուիլ: Ես զգացումներս սառեցուցի իրեն հանդէպ եւ սկսայ հեռուէն հետեւիլ, թէ ինչպէս ան կը պայքարէր այդ հարցին հետ: Որոշ առումով, զինք դատելով՝ ինքզինքս ապահով կը զգայի: Եթէ չփոխուէր, ես ստիպուած պիտի չըլլայի իրեն ներելու: Ասիկա լարուածութիւն յառաջ բերաւ մեր կեանքին ուրիշ մարզերուն մէջ: Անկասկած, այդ պատճառով մեր ամուսնութեան առաջին տարիները անելի ծանր էին, քան ինչ որ պէտք է ըլլային:

Գիշեր մը ամբողջ բարկութեամբս եւ կոտորուած սիրտովս Աստուծոյ աղաղակեցի. «Ես կը ներեմ իրեն, երբ ան փոխուի»:

Այն ատեն Ճոնին եւ իմ միջեւ վստահութիւնը լիովին խախտած էր, եւ ես չէի ուզեր վերստին յուսախաբ ըլլալ: Աստուած պատասխանեց իմ յայտարարութեանս հարցումով մը. «Կը վստահիս Ինծի, Լիսա՛»:

«Այո՛»:

«Լաւ: Կ'ուզեմ, որ Ճոնին ներես, որպէսզի ան կարենայ փոխուիլ»: Ան նոյնիսկ ինծի տուաւ հետեւեալ բառերը, որ

Ճոնին ըսեմ. «Ես կը հաւատամ, որ դուն կ'ուզես փոխուիլ, եւ ես կը ներեմ քեզի»:

Ատիկա բոլորովին հակառակ էր իմ սովորական դարցած *սենարիոյ*իս, որուն մէջ գրուած էր. «Կը հաւատամ, որ դուն գոջացած ես, երբ փոխուիս»:

Այս մտածելակերպը այնքան հեռու էր այն բոլոր բաներէն, որոնք ծանօթ էին ինձի, որ գիտէի, թէ Աստուած էր զիս առաջնորդողը: Երբ առանց պայմանի ողորմութիւն ցուցաբերեցի Ճոնին հանդէպ, երկուքիս կեանքին մէջ բժշկութիւնը սկսաւ: Ան կրցաւ դուրս գալ ամօթի խաւարէն դէպի լոյսը եւ ազատութիւն գտնել իր կապանքէն: Այդ տեսակէտի փոփոխութիւնը անկիւնադարձ մըն էր: Ես կրցայ վստահիլ անփոփոխ Աստուծոյն:

## Անվախ Սէր

Անվախ սէրը հիմնուած չէ մարդուն վարքին վրայ, այլ՝ Աստուծոյ սիրոյն եւ հաւատարմութեան: Երբ մեղքերս եւ դժուարութիւններս կը խոստովանիմ Հօր՝ Յիսուսի անունով, Ան երբեք չ'ամչցնէր զիս: Ան կը հաւատայ, որ ապագաս աւելի լաւ պիտի ըլլայ:

Անսովոր չէ, որ երբ մարդիկ մեզ յուսախաբ ընեն, կը սկսինք կծծիութեամբ բաժնել մեր սէրը՝ իրենց օրինազանցութիւններուն համեմատ, որպէսզի պակսեցնենք անոնց հաւանականութիւնը ապագային: Վախնալով լիովին նուիրուելէն՝ ետ կը քաշուինք: Սի.Էս. Լուիս իմաստուն կերպով կը բացատրէ այս մօտեցումին սխալը իր «*Չորս Սէրեր*» վերնագիրով գիրքին մէջ.

Սիրելը ընդհանրապէս կը նշանակէ խոցելի ըլլալ: Սիրէ որեւէ բան եւ սիրտդ պիտի վիրաւորուի, եւ թերեւս նաեւ կոտորուի: Եթէ կ'ուզես ամբողջ կամ անձնաս պահել սիրտդ, զայն ոչ ոքի մի՛ տար, նոյնիսկ՝ ոչ մէկ կենդանիի: Խնամքով փաթթէ զայն նախասիրութիւններով եւ փոքրիկ ճոխութիւններով.

խուսափիր որեւէ բարդ կացութենէ: Ապահով կերպով փակէ՛ զայն քու անձնասիրութեանդ տուփին կամ դագաղի մէջ: Բայց ապահով, մութ, անշարժ եւ առանց օդի տուփին մէջ անիկա կը փոխուի: Չի կոտորուիր. անիկա կը դառնայ կարծրացած, անթափանցելի եւ անփրկանելի կամ անուղղելի: Սիրել կը նշանակէ՛ խոցելի ըլլալ:<sup>1</sup>

Ահա այս է ճշմարտութիւնը: Սիրել կը նշանակէ՛ խոցելի ըլլալ: Թերեւս մեզի համար հաճելի չըլլայ այս զուգադրումը, բայց սորված եմ, որ պարզապէս անկարելի է խուսափիլ անկէ (եւ հաւատա՛մ, ես փորձած եմ ատիկա ընել): Բայց մի՛ ենթադրե՛ր, որ խոցելի ըլլալը կը նշանակէ, որ քեզ պէտք է ոտնակոխ ընեն: Աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, որ այդպէս վարուելով՝ քու իրաւունքներդ կը պաշտպանուին եւ արդարացում կը ստանաս, քանի որ սէրը երբեք չի ձախողիր:

Քիչ մը ավելի խոր ձեռով ուսումնասիրենք խոցելի ըլլալու վտանգը: «խոցելի» բառին սահմանումներէն մէկը «մերկացուած» բառն է: «խոցելիութիւնը» կարելի է դիւրութեամբ նոյնացնել «մերկութեան» հետ: Մերկ ըլլալը վտանգաւոր է, քանի որ ոչինչ պահուած եւ պաշտպանուած է: Սիրոյ կատարեալ դրսեւորումը այնպիսի ապահով վիճակ մըն է, ուր դուն մերկ ես եւ չես ամչնար:

Մեր մշակոյթին մէջ մերկութիւն ըսելով՝ մարդիկ անմիջապէս կը մտածեն սեռայինի մասին: Կ'ուզեմ քեզի ցոյց տալ, որ մերկ եւ անվախ ըլլալը կը նշանակէ բանալ քու սիրտդ: Մենք ամենազօրաւոր դիրքին մէջ ենք, երբ բաց սիրտով կը կանգնինք մեր Աստուծոյն առջեւ: Ատիկա անտրամաբանական կը թուի ըլլալ, բայց շատ ավելի լաւ է մերկ կանգնիլ Աստուծոյ առջեւ, քան ապարդիւն կերպով ծածկել մեր մարդկային էութիւնը ամօթի ցնցոտիներով կամ ինքնարդարացման հանդերձներով:

Յիսուս մեր փոխարէնը խոցելի դարձաւ երբ Ան ձգեց Իր աստուածային բնութիւնը եւ մեր նմանութիւնը Իր վրայ առաւ,

որպեսզի մենք կարենանք Իրեն պէս ըլլալ: Յիսուս խոցելի դարձաւ, որպէսզի մեզի յայտնէ Աստուծոյ սէրը: Ահա թէ ինչն մենք կրնանք սիրել առանց վախի ... հաւատալ կատաղի կերպով ... յուսալ անասելի բաներու:

Եթէ կ'ուզես առանց վախի սիրել, քայլ մը ես առ եւ հաւատալ այնպիսի բաներու համար, որոնք կը վրդովեցնեն մարդիկը: Խարսխէ յոյսդ սարսափեցնող խորունկ ջուրերուն մէջ:

Հաւատք, յոյս եւ սէր. այս երեքը կը մնան: Այս երեքը իրարու հետ ներդաշնակ են, որպէսզի կանգուն մնալու զօրութիւնը տան մեզի: Այս երեք ուժերուն մեծագոյնը սէրն է: Առանց սիրոյ չկան ճշմարիտ հաւատքի քայլեր, եւ առանց սիրոյ չկայ յոյս:

Աստուած սէր է: Սէրը յաւիտենական է: Սէրը չի ձախողիր. այն, ինչ որ վստահուած է սիրոյն, երբեք չի կորսուիր. այն, ինչ որ սէրէն ծնած է, չի կրնար մեռնիլ: Սակայն կան վայրեր, ուր սէրը չ'աճիր. սէրը չի կրնար ծաղկիլ իր մրցակիցին՝ վախին կողքին: Վախը վերջ ունի. իրականութեան մէջ վախը փակուղի է: Վախը պիղծ ոգի է, որ տանջանք կը բերէ: Վախը խորհուրդներ կու տայ իր գահէն, որ դրուած է կասկածին շուքին տակ, իսկ սէրը իր իմաստութիւնը կը ստանայ հաւատքին լոյսէն: Եթէ չափազանց երկար ժամանակ ականջ տաս վախի խորհուրդներուն ... կը ձախողիս:

Տարիներ առաջ, երբ իմ առաջին գիրքս կը գրէի, յայտնութիւն մը ստացայ, որ վախին հականիշը հաւատքը չէ, եւ ո՛չ ալ՝ քաջութիւնը ... այլ՝ սէրը: Թերեւս յիշեցի իմ մանկութեանս դասը «Օգի Կախարդը» հեքիաթէն, որուն մէջ Վախկոտ Առիւծը քաջ կը դառնայ սիրոյ շնորհիւ: Այս գաղափարը իսկապէս բացուեցաւ ինծի համար, երբ ես դրի վախին բացասական յատկանիշները Ա.Կորնթացիներուն 13-րդ գլուխին հատուածներէն մէկուն մէջ.

Վախը անհամբեր է, դառն է. վախը կը նախանձի, կը գոռոզանայ, կը հպարտանայ. անվայել վարմունք կ'ունենայ,



իրենը կը փնտռէ, կը գրգռուի, չարութիւն կը մտածէ. անիրա-  
տութեան համար կ'ուրախանայ, ճշմարտութեան ուրախակից  
չ'ըլլար: Վախը ոչ մէկ բանի կը հանդուրժէ, ոչ մէկ բանի կը  
հաւատայ, ոչ մէկ բանի կը յուսայ, ոչ մէկ բանի կը տոկայ:  
Վախը պիտի վերջանայ:

Վախին պտուղը եւ դրդապատճառները հակառակ են սիրոյ  
ճամբաներուն: Որեւէ բարի բան, զոր ըրած եմ, եւ որեւէ դաս,  
զոր կեանքի մէջ քաղած եմ, տեղի ունեցած են երբ վախի  
քօղը հեռացուցած եմ եւ յառաջ գացած եմ:

Կան սուր զգացողութիւն փնտռողներ, որոնք կը սիրեն  
շօշափել վտանգը: Անոնք քաջ են, բայց միայն սիրողներն են,  
որ ճշմարտապէս անվախ են:



**Վախին  
հականիշը  
հաւատքը  
չէ, եւ ո՛չ ալ՝  
քաջութիւնը ...  
այլ՝ սէրը:**

Աստուած սէր է: Սէրը անվախ է:  
Աստուած անվախ է: Մենք Աստուծոյ  
կը պատկանինք: Մենք կրնանք սիրել՝  
առանց վախնալու: Մենք կրնանք սիրել՝  
առանց վախնալու, երբ կը ստանանք  
Աստուծոյ սէրը, որուն մէջ վախ չկայ:  
Անոնք, որոնք առանց վախի կը սիրեն,  
առանց վախի կ'ապրին:

Թերեւս այս յաջորդականութիւնը  
յստակ կը թուի ըլլալ, բայց շատ հաւատացեալներ այնպէս կը  
վարուին, կարծես Աստուած յանկարծակիի եկած ըլլար: Մենք  
կը վախնանք կամ կը բարկանանք մեր տեսածին եւ լսածին  
պատճառով եւ կը պատկերացնենք, որ Անոր պատասխանը  
դաժանութեան, չարութեան եւ աղետալի վիճակներուն  
ընթացքին՝ կ'ըլլայ ճիշդ այնպէս, ինչպէս մերն է: Բայց այդպէս չէ:

### Կատարեալ Սէրը

Եթէ քաջ մարդոց շարժառիթը սէրը չէ, անոնք պարզապէս  
կը ցուցադրեն իրենց քաջութիւնը: Այդպիսիներուն շարժառիթը

մարդիկը տպաւորելն է, ոչ թէ օրինակելի սէր ցուցաբերելը: Քաջ թուփը բաւարար չէ, քանի որ ամենահամարձակ քայլը, զոր մարդը կրնայ առնել, ուրիշի մը համար ինքզինք վտանգի ենթարկելն է: Ատիկա կը նշանակէ, թէ կ'ըլլան պահեր, երբ կ'ընծայենք մեր կեանքը, ոչ թէ կը բարձրանանք՝ պատերազմելու համար:

Ո՛չ մէկը ունի ասելի մեծ սէր, քան այն՝ երբ մէկը կ'ընծայէ իր անձը իր բարեկամներուն համար: (Յովհաննէս 15.13)

Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակը կ'ըսէ.

Ահա սիրելու լաւագոյն ձեւը՝ վտանգի ենթարկէ կեանքդ՝ քու բարեկամներուդ համար:

Այս արարքը սեփական անձը ցուցադրելու համար չէ ... այլ՝ բարեկամներու համար: Ա.Կորնթացիներուն 13.3-ը այսպէս կը կշռէ քաջութիւնն ու զոհաբերութիւնը, որոնց մէջ սէր չկայ.

Եթէ սնուցանեմ աղքատները՝ իմ ամբողջ ինչքովս, ու մարմինս այրուելու ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ ունենար:

Աղքատութեան երդումը (Աստուծոյ տրուած խոստում մը, որուն համաձայն անձը կը հրաժարի ժամանակաւոր ինչքերէ եւ իր սեփական ստացուածքներէն՝ Քրիստոսի հետեւելու համար) կամ նահատակութիւնը առանց սիրոյ՝ պարզապէս կրօնական զոհողութիւն է:

Յիսուս խորապէս սիրուած էր Իր Հօր կողմէ, եւ Ան որոշեց սիրել մեզ նոյն խորութեամբ, որով Հայրը սիրեց զինք: Սէրը Անոր ուժ տուաւ, որպէսզի Ան հաւատքով համբերէր Իր յոյսի տեսիլքին, եւ մենք ենք Անոր յոյսի տեսիլքը:

Յիսուս սիրեց զիս՝ անկախ իմ անցեալէս: Ան չէր վախնար, որ ես սխալներ կը գործեմ ապագային, եւ նոյնիսկ գիտէր, որ ատիկա պիտի ըլլար: Թէեւ բոլորս սխալներ կը գործենք,

ատիկա չի նշանակեր, որ դուն սխալմունք մըն ես կամ սխալի մը արդիւնքն ես: Եթէ կը կարծես, որ դուն սխալմունք մըն ես ... ապա կը սխալիս:

Թէեւ ես կը մեղանչեմ, ատիկա չի նշանակեր, որ ես մեղքը կը ներկայացնեմ: Անկախ անկէ, թէ ինքզինքս ինչպէս կը զգամ, Յիսուս արդարացուցած է զիս: Ամէնէն անվախ եւ սիրով լեցուն պատասխանը, որով կրնամ արդարացնել Անոր յոյսերը ինձի հանդէպ, իմ հնազանդ կեանքովս Անոր հաւատքը պատուելն է:

Աստուած մեզի համար մեղաւոր համարեց ան՝ որ մեղք չէր գիտեր, որպէսզի մենք Աստուծոյ արդարութիւնը ըլլանք անով: (Բ.Կորնթացիներուն 5.21)

Յիսուս խոստացաւ ըլլալ այնպիսի պատասխան մը, որ շատ անելի մեծ է, քան մեր բոլոր հարցերը: Կրնաս քու ամբողջ ժամանակդ եւ ուժերդ վատնել՝ քու մեղքիդ վրայ կեդրոնանալով, եւ կարճ ժամանակ ետք այլեւ ոչինչ կը տեսնես՝ բացի մեղքէդ: Դուն կը կլանուիս քու մեղաւորութեամբդ, եւ երբ այլեւս այդ վիճակին չես դիմանար, կը սկսիս նայիլ ուրիշ մարդոց մեղքերուն: Ես չեմ զարմանար երբ կ'իմանամ, որ այն առաջնորդը, որ խստութեամբ կը վարուի մարդոց հետ, ամէնէն անելի խստութեամբ կը վարուի ինքն իր անձին հետ: Երբ ես ինձի կը նայիմ, թերութիւններ կը տեսնեմ, իսկ երբ կը նայիմ Քրիստոսին, իմ անկատարութիւններս կ'անհետանան Անոր պայծառութեան մէջ: Շատ անելի կը սիրեմ այն, ինչ որ Ինք ցոյց կու տայ ինձի:

Անոր նայողները լուսափայլ եղան. անոնց երեսները չշիկնեցան: (Սաղմոս 34.5)

Յիսուս չ'արտօնէր, որ մեր մեղքերը եւ շուքերը մեզմէ ծածկեն Իր սէրը: Երբ մենք զմեզ խոցելի կը զգանք, անիկա լաւագոյն պահն է, որ յոյսով բարձրացնենք մեր նայուածքը, փոխանակ ամօթով պահենք զայն: Անոր կատարեալ սէրը

մեր բոլոր վախերուն դէմ կը դնէ: Ինչո՞ւ թոյլ կու տամ, որ իմ անկատար վախերս դէմ դնեն Անոր անթերի սիրոյն: Ես սորված եմ, որ կրնամ վստահիլ Անոր, նոյնիսկ եթէ ոչինչ կը հասկնամ: Պատճառը այն է, որ Աստուած կը սիրէ անզուգական կերպով: Ան որոշեց սիրել զիս, եւ այդ պատճառով ես որոշեցի յուսալ Անոր: Քիչ մը պիտի փոխեմ Սաղմոս 91-ին համարներէն մէկը, որպէսզի ցոյց տամ Աստուծոյ սէրը կիներուն հանդէպ:

Քանի այս կինը զիս կը հանի՝ զինք պիտի ազատեմ. զինք պիտի պաշտպանեմ, որովհետեւ իմ անունս գիտցաւ (հմր 14):

Եթէ իսկապէս մտածես ... եթէ սէրը ոչ մէկ ատեն եւ ոչ մէկ պարագայի կը ձախողի, ինչո՞ւ երբեմն անիկա վտանգի կ'ենթարկէ մեզ: Պատասխանը այն է, որ սէրը զօրութիւնը ունի բժշկելու որեւէ վէրք, որ կեանքը կրնայ հասցնել մեզի:

Անվախ կերպով սիրելու բազմաթիւ ձեւեր կան:

Կողակիցդ համարձակ կերպով սիրելը այդ մարզերէն մէկն է միայն: Մենք պէտք է առանց վախի սիրենք մեր ծնողները եւ զաւակները: Մեր բարեկամներուն հետ մեր յարաբերութիւնները պէտք է կառուցուին սիրոյ վրայ, ոչ թէ՛ նախանձի, սեփականատիրութեան եւ վախի: Դուն կրնաս սիրել քու գործդ եւ գործատեղիդ: Դուն կրնաս սիրել կազմակերպութեան մը կամ եկեղեցիի մը մաս կազմելը: Դուն կրնաս սիրել կարգալ եւ խնդալ: Ո՛ր մարզին մէջ ալ որ սէր գտնես, ուշ կամ կանուխ, անոր մէջ պիտի գտնես նաեւ դժուարութիւններ, նոյնիսկ՝ յուսախաբութիւն:

Անով կ'անցնինք յաջորդ քայլին՝ մեր թշնամիները սիրելուն: Ինչո՞ւ Յիսուս այդպիսի բան մը պատուիրեց:

Քանի որ ասիկա այն սէրն է, որ ոչխարները այծերէն կը գատէ: Մենք կը զանազանութիւնք կամ աչքի կը զարնենք, երբ կը սիրենք այն մարդիկը, որոնք կը փորձեն վնաս հասցնել մեզի: Երբ կ'ընտրես սիրել անոնք, որոնք կը փորձեն

ստրկացնել քեզ եւ վնասել քեզի, բան մը կը փոխուի: Նոյնիսկ եթէ պայմաններդ չփոխուին, դուն այլեւս բանտարկուած չես. դուն ազատ ես:

Կը յիշեմ, որ կարդացած եմ գերիի մը մասին, որ Քաղաքացիական Պատերազմին ընթացքին որոշում կայացուցած էր բժիշկներուն քով տանիլ իր վիրաւորուած տէրը, որ Դաշնակիցներուն կողմնակից էր, փոխանակ փախչէր եւ զայն պատերազմի դաշտին մէջ լքէր: Ատիկա դիւրին որոշում մը չէր, բայց անոր որոշումը ցոյց կու տար, որ ան արդէն իսկ լիովին ազատ մարդ էր: Այդ մարդուն արարքը ազատ արձակեց զինք շատ աւելի առաջ, քան Միացեալ բանակին ապստամբները պարտութեան մատնելը:

Մէկը կրնայ ամէն օր ազատութիւն հռչակել կեանքիդ վրայ, իսկ դուն կրնաս ընտրել ստրկութիւնը: Կամ կրնաս որոշում կայացնել, որ ազատ պիտի ապրիս, նոյնիսկ եթէ ոմանք յիմարաբար կը կարծեն, որ դուն իրենց սեփականութիւնն ես: Կը հասկնամ, որ թերեւս կեանքիդ մէջ երբեք իրական ստրկութեան չենթարկուիս, բայց այն իրականութիւնը, որ մարդիկ կը կարծեն, թէ դուն իրենց բան մը պարտական ես, նոյնպէս պարտաւորութեան տեսակ մըն է: Կան մարդիկ, որոնք կարծես ազատ են, բայց կ'ապրին գերութեան մէջ: Դուն չես կրնար կառավարել մարդոց խօսքերը կամ անոնց կարծիքը քու մասիդ, բայց կրնաս որոշել, թէ ինչպէս պիտի հակադարձես անոնց:

Սէրը կ'որոշէ: Վախը կը հակազդէ:

Սէրը ազատութիւն է: Վախը՝ գերութիւն:

Կատարեալ սէրը կը վտարէ վախը:

## **Ինչ որ ալ Ըլլայ Պարագան, Սիրէ՛**

Հետեւեալ մէջբերումը Քենթ էմ. Քիթէն յաճախ վերագրուած է Մայր Թերեզային, քանի որ ան միշտ կը պահէր զայն իր առջեւ՝ իբրեւ յիշեցում: Հաւանաբար, այս նիւթն որոշ

հատուածներ լսած ես, բայց ես ասիկա ամբողջութեամբ կը ներկայացնեմ.

### **Յարակարծական Պատուիրաններ**

(Յարակարծութիւն.- Կարծիք կամ դատողութիւն, որ հակառակ է սովորաբար ընդունուածին)

Մարդիկ անտրամաբանական, անխոհեմ եւ եսակեդրոն են:  
*Միեւնոյնն է՝ սիրէ զանոնք:*

Եթէ բարիք գործես, մարդիկ քեզ պիտի մեղադրեն ծածուկ եսասիրական շարժառիթներով:  
*Միեւնոյնն է՝ բարիք գործէ:*

Եթէ յաջողութեան հասնիս, պիտի շահիս կեղծ բարեկամներ եւ իրական թշնամիներ:  
*Միեւնոյնն է՝ յաջողութեան հասիր:*

Այն բարիքը, որ այսօր կը գործես, վաղը պիտի մոռցուի:  
*Միեւնոյնն է՝ բարիք գործէ:*

Պարկեշտութիւնը եւ անկեղծութիւնը խոցելի կը դարձնեն քեզ:  
*Միեւնոյնն է՝ պարկեշտ եւ անկեղծ եղիր:*

Մեծագոյն գաղափարներ ունեցող մեծագոյն տղամարդիկը եւ կիները կրնան սպաննուիլ նեղմիտ, աննշան տղամարդոց եւ կիներու կողմէ:  
*Միեւնոյնն է՝ լայն մտածէ:*

Մարդիկ ներողամտութեամբ կը վարուին տկարներուն հետ, բայց միայն զօրաւորներուն կը հետեւին:  
*Միեւնոյնն է՝ պայքարիր քանի մը տկարներու համար:*

Ինչ որ դուն տարիներ շարունակ շինած ես, կրնայ մէկ օրուան մէջ կործանիլ:  
*Միեւնոյնն է՝ շարունակէ շինել:*

Մարդիկ իրապէս օգնութեան պէտք ունին, բայց անոնք կրնան վրադ յարձակիլ, երբ սկսիս օգնել անոնց:  
*Միեւնոյնն է՝ օգնէ մարդոց:*

Այս աշխարհին տուր քու ունեցած լաւագոյնդ, եւ դուն ապտակ պիտի ստանաս:  
*Միեւնոյնն է՝ Կուր այս աշխարհին քու ունեցած լաւագոյնդ:<sup>2</sup>*

Մարդիկ յուսախաբ պիտի ընեն քեզ ... միեւնոյնն է՝ սիրէ զանոնք: Ես շատ բաներ կը գտնեմ Քիթին խօսքերուն մէջ, որոնք կը վերաբերին մարդոց հետ իմ յարաբերութիւններու: Երբեք մէկը յուսախաբ ըրած ես: Ես ըրած եմ: Թերեւս անոնք իրենց զլուխը շարժած են եւ ինձմէ հեռացած են՝ մրթմրթալով. «Ինչպէս յուսախաբ եղայ իրմէ»: Թշնամիները եւ նոյնիսկ բարեկամները կը վիրաւորեն եւ կը դաւաճանեն քեզ: Բայց դուն գիտես, թէ ինչ պէտք է ընես ... միեւնոյնն է՝ սիրէ զանոնք: Եթէ կ'ուզես կառուցել կեանք մը՝ առանց մրցակցութեան, պէտք է վեր ըլլաս քու մարդկային դատողութենէդ եւ կարողութիւններէդ:

Գիտեմ՝ թերեւս սկիզբը ասիկա անիմաստ թուի, բայց եթէ արժանապատիւ կերպով վարուիս մարդոց հետ՝ թոյլ տալով անոնց, որ սորվին իրենց սխալներէն, դուն պիտի զօրացնես զանոնք, որ ապագային ամէն բան աւելի լաւ ձեռով ընեն:

Դժբախտաբար, կը զգամ, որ պէտք է վերապահում մը ընեմ: Սխալներ ըսելով՝ ես նկատի չունիմ հետեւեալները՝ բռնութիւն, դաւաճանութիւն կամ ապօրինի արարքներ: Խօսքը պարզապէս ձախողութիւններու, թիրիմացութիւններու եւ սխալ կարծիքներու մասին է: Ես չեմ խօսիր այլասերութենէ, դաժանութենէ կամ չարակամութենէ դրդուած արարքներու մասին: Ես կը խօսիմ այն ձախողութիւններուն մասին, որոնք կը պատահին մեզմէ իւրաքանչիւրին հետ՝ երբ ճիշդ ճամբուն մէջ կ'ընթանանք:

Թէ արդարները, թէ անօրէնները կը սայթաքին, կը շփոթին

Եւ կ'իյնան: Միակ տարբերութիւնը այն է, որ սէրը կը մղէ արդարները, որ ուղիքի ելլեն: Անօրէնները ինկած կը մնան եւ յաճախ կը փորձեն իրենց քով իջեցնել ուրիշները, բայց արդարները ուղիքի կ'ելլեն, կը բարձրացնեն ուրիշները եւ կը շարունակեն յառաջ երթալ (տես Առակներու 24.16): Սէրը միշտ կ'որոշէ կրկին ուղիքի ելլել:

*Հապա՛ ճշմարտութիւնը խօսելով սիրոյ մէջ, ամէն բանի մէջ աճինք անձով՝ որ գլուխն է, այսինքն՝ Քրիստոսով: Անով է, որ ամբողջ մարմինը, յարմարութեամբ միասին կազմուած եւ իրարու կցուած ամէն յօդի օժանդակութեամբ՝ ամէն մասի ներգործութեան չափին համեմատ, կ'աճի սիրոյ մէջ՝ իր շինութեան համար: (Եփեսացիներուն 4.15,16, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Ճշմարտութիւնը սիրով խօսիլը կը շինէ մարմինը: Սէրը աճ կը բերէ կեանքի բոլոր մարզերուն մէջ: Ատելութեամբ լեցուն բառերը քայքայում կը յառաջացնեն եւ կ'արգիլեն աճը: Բայց սէրը աւելի զօրաւոր է, քան ատելութիւնն ու վախը:

## **Ի՛նչպէս Յաղթահարել Յուսախաբութիւնը**

Յուսախաբութիւնը յառաջ կու գայ, երբ ակնկալութիւնները չեն կատարուիր: Սէրը կը հաւատայ լաւագոյնին, ոչ թէ կը պահանջէ լաւագոյնը, քանի որ այս երկուքին միջեւ մեծ տարբերութիւն կայ: Ակնկալութիւնները կրնան արագօրէն վերածուիլ պահանջներու, իսկ սէրը աւելնալով՝ կը վերածուի յոյսի:

Ես կը վստահիմ իմ ամուսինիս, բայց իմ վերջնական յոյսս խարսխուած է Աստուծոյ մէջ: Ամուսինս եւ ես կը սիրենք զիրար, բայց ատիկա չի նշանակեր, որ մենք զիրար յուսախաբ չենք ըրած ... ըրած ենք: Բայց յուսախաբութեան քաղաքին մէջ բնակելու փոխարէն, մենք կ'որոշենք հեռանալ անոր ցաւոտ սահմաններէն: Մենք շնորհակալ ենք այն բոլոր բաներուն համար, զորս բացասական փորձառութիւնները կ'աւելցնեն



մեր յարաբերութիւններուն. մենք ոտքի կ'ելլենք, ինչքան կրնանք կը սորվինք մեր սխալներէն, եւ յառաջ կ'երթանք: Մենք յայտնաբերած ենք, որ ասիկա շատ աւելի լաւ մօտեցում է, քան շարունակ մեր յուսախաբութիւններուն շուրջ դառնալը եւ տարբեր անկիւններէ իրարու սխալները մատնանշելը:

Հաւատամ, կար ժամանակ մը, երբ կը կարծէինք (կամ՝ թերեւս միայն ես այդպէս կը կարծէի), թէ ասիկա լաւ միտք էր: Կը կարծէի, թէ եթէ գործուած սխալին բոլոր կողմերը ուսումնասիրէի եւ զանոնք ամօթով ծածկէի, այդպիսի բան այլեւս տեղի չէր ունենար (եւ այդպիսի անգթութեամբ վարուած եմ թէ՛ ճոնին, թէ՛ իմ սխալներուս հետ):

Այս մօտեցումը լաւ արդիւնք չունեցաւ, քանի որ իմ տրամաբանութիւնս սխալ էր: Փոխարէնը՝ այդ սովորութիւնը այն աստիճան արմատացաւ մեր մէջ, որ մենք միայն կը տեսնէինք իրարու թերութիւնները, որոնք հմտօրէն կրնայինք գտնել: Սկսանք իրարմէ սպասել վատագոյնը, փոխանակ հաւատայինք լաւագոյնին: Երկուքս ալ իրարու մէջ կը գտնէինք այն, ինչ որ կը փնտռէինք:

Ես կը սիրեմ իմ բոլոր զաւակներս, բայց ասիկա չի նշանակեր, որ մեր յարաբերութիւններուն մէջ յուսախաբութիւններ չեն եղած: Թէեւ անոնք հազուադէպ եղած են, եւ աւելի յաճախ ես յուսախաբ ըրած եմ զանոնք, այդպիսի բաներ տակաւին տեղի կ'ունենան մեր յարաբերութիւններուն մէջ: Նոյնպէս պատահած է, որ ես յուսախաբ ըրած եմ իմ բարեկամներս:

Յուսախաբութիւնը չի նշանակեր, որ քու սէրդ մեռած է. ասիկա պարզապէս կը նշանակէ, որ ժամանակն է հանդիպում մը ճշդելու Սուրբ Հոգիին հետ եւ խորհրդատուութիւն ստանալու: Սէրը մասնակցութիւն կը պահանջէ եւ իրական մասնակցութեան իբրեւ արդիւնք դուն հարցեր կ'ունենաս եւ խոցելի կը դառնաս:

Վերջաւորութեան, ես չեմ կրնար ակնկալել, որ իմ

ամուսինս, զաւակներս կամ բարեկամներս ինծի համար ըլլան այն, ինչ որ միայն Յիսուս կրնայ ըլլալ: Եթէ այդ սխալը գործեմ եւ զանոնք իմ փրկիչս դարձնեմ, անոնք միայն յուսախաբ պիտի ընեն զիս, քանի որ այդ դիրքին մէջ անոնք չեն կրնար չձախողիլ:

Հարցը ոչ թէ այդ մարդոց թերութիւններն են, այլ՝ իմ սխալ ականկալութիւններս:

Երբ դուն լաւագոյնը կ'ականկալես, իսկ մարդիկ անկէ պակաս կ'ընեն, յուսախաբ կ'ըլլաս: Բայց երբ կը հաւատաս լաւագոյնին, եւ անոնք չկարենան ատիկա ընել, կը հասկնաս, որ անոնք դեռ անցնելու ճամբայ ունին:

Երբ ճնշում կը զգաս, որ դատես կամ քեզմէ հեռացնես այդ մարդիկը, զորս Աստուած կանչած է, որ Իրեն հետ միասին բարձրացնես, ատիկա պատշապանական կեցուածք է: Այո՛, կան մարդիկ, որոնցմէ պէտք է զատուիլ, քանի որ ձեր միջեւ համաձայնութիւն չկայ: Բացի ատկէ՝ կան մարդիկ, որոնք կրնան յանկարծ լքել քեզ: Բայց շատ յաճախ մարդոց հեռանալու պատճառը այն է, որ անգամ մը վիրաւորուելէ ետք, անոնք չեն ուզեր կրկին խոցելի ըլլալ:

Աստուած միշտ աւելի մեծ հաւատք ունի ինծի հանդէպ, քան ես: Ան չի նայիր ինծի՝ իմ անցեալիս համաձայն, քանի որ իմ ապագաս Անոր ձեռքերուն մէջ է: Ան զիս դուրս կը բերէ իմ վախկոտութենէս եւ վախէս, որպէսզի Իր լաւագոյնը դուրս բերէ իմ մէջէս: Պողոսը այդպիսի ներքին պայքարներու մէջ էր, այն ականկալութիւններուն պատճառով, զորս ունէր Կորնթոսի եկեղեցիէն.

Կը խոստովանիմ, որ վախեր ունիմ, որ երբ գամ՝ զիս յուսախաբ կ'ընէք, ու ես ալ ձեզ յուսախաբ կ'ընեմ, եւ զիրար յուսախաբ ընելնուս պատճառով ամէն բան ի յայտ կու գայ՝ հակամարտութիւններ, նախանձներ, զայրոյթներ կամ բռնկուող բնաւորութիւններ, կողմնակալութիւններ, բարկացած խօսքեր, բամբասանքներ, բանսարկութիւններ,

յոխորտանքներ, խառնակություններ: (Բ.Կորնթացիներուն 12.20, բառացիորէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Եկէք դադրինք յուսախաբութիւն ակնկալելէ, քանի որ այն, ինչ որ կը հրաւիրենք, անիկա կ'ունենանք: Եթէ մարդոցմէ ասելին պահանջենք եւ հաւանութիւն չտանք անոնց, մինչեւ որ մեր պահանջածը կատարեն, մենք մեկուսացած եւ բարկացած կը դառնանք՝ ճիշդ ինչպէս երբ կը մերժենք մեր երազը՝ առանց յոյսի կը մնանք: Եկէք հաւատանք մարդոց այնպէս, ինչպէս կ'ուզենք, որ անոնք հաւատան մեզի, որ մեր կեանքին մէջ լաւագոյնը տակաւին մեր առջեւը կը գտնուի: Եկէք հաւատանք, որ անոնց սխալները՝ միայն սայթաքումներ են: Քու սխալներդ իրաւունք չունին որոշելու քու վախճանդ կամ հասնելիք տեղդ:

Դուն կրնաս ընդունիլ Յիսուսի օգնութիւնը, կամ բարկանալ քու անցեալիդ պատճառով: Միայն դին կ'որոշես ատիկա:

Մենք մարդիկը կը հեռացնենք մեր կեանքէն՝ առանց ողորմութիւն ցուցաբերելու, երբ մենք ողորմութեան մասին յայտնութիւն չունինք:

## **Վախի ճամբան կամ Գործելակերպը**

Վախին գինը շատ սուղ կը վճարենք: Ան կը կողոպտէ քեզ մինչեւ վերջին թելը: Անիկա կը գողնայ քու ուժդ, երազներդ, մարդոց հետ յարաբերութիւններդ, դրամդ, հաւատքդ եւ յոյսդ: Վախը կ'ուզէ չարչարել քեզ եւ քեզմէ խլել այն բոլոր բաները, զորս սէրը ձրիաբար կու տայ: Վախը ժամանակ առ ժամանակ չի գար. անիկա անդադար կը յարձակի, քանի որ գիտէ իր ընելիքը:

Վախը չի յարգեր քու հանգիստդ ... ան կը ներխուժէ քու քունէդ ներս՝ աղաւաղելու համար քու երազներդ:

Վախը՝ ուժ մըն է, անիկա հոգեւոր հակապատկերն է Սուրբ

Հոգիին սիրոյն, զօրութեան եւ ողջամտութեան: Կրնաս վստահ ըլլալ, որ վախին նպատակը քեզ անդամալուծել է, ինչպէս որ Աստուծոյ Հոգիին նպատակը քեզի ազատութիւն շնորհել է:

Վախը քեզմէ կը գողնայ մեծնալու բազմաթիւ առիթներ եւ կ'ուզէ խլել ապագային մասին քու տեսիլքդ: Թէ՛ սէրը, թէ՛ վախը ծրագիր մը ունին կեանքիդ համար: Մէկը քու օգտիդ համար է, միւսը՝ վնասիդ:

## Սիրոյ ճամբան կամ Գործելակերպը

Ի տարբերութիւն վախին՝ սէրը անսահմանօրէն առատաձեռն է: Անիկա կը ձգտի վերականգնել մարդոց հետ քու յարաբերութիւններդ, երազներդ եւ յոյսերդ: Մեզմէ իւրաքանչիւրը կրնայ ստանալ այն սէրը, որ Աստուած կը խոստանայ: Բայց մարդիկ կը սխալին՝ մտածելով, թէ սիրոյ նոր խոստումները կարելի է փակցնել վախին հին կտորին վրայ: Աստուած կը փափաքի միացնել *նորը նորոգուածին հետ*:

Ո՛չ ալ նոր գինին կը դնեն հին տիկերու մէջ. այլապէս՝ հին տիկերը ճնշումէն կը պատռին, եւ գինին կը թափի, եւ տիկերը կը կորսուին: Հապա նոր գինին կը դնեն նոր տիկերու մէջ, ու երկուքն ալ կը պահուին: (Մատթէոս 9.17, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Էն.Էլ.Թի.* տարբերակէն)

Քու ներսիդիդ նոր բան մը կայ, որ վախը կ'ուզէ իր մէջ պահել: Թոյլ մի՛ տար, որ ատիկա ընէ: Անվախ մարդոց սէրը լիովին նոր փաթեթաւորում կը պահանջէ: Երբ կ'ընդունիս սիրոյ նոր գինին, ամէն բան ուրիշ ձեւով կը տեսնես: Դուն ծառայելու առիթ կը համարես այն բանը, որ անցեալին պարտականութիւն էր քեզի համար: Դուն կը ձգտիս առատաձեռն ըլլալ՝ կուտակելու փոխարէն: Սիրոյ նպատակը վախը վտարել է:

## Անվախ Կինը

Անցեալ տարի մտերիմ ընկերուհիներէս մէկը շնորհաւորական քարտ մը ղրկեց ինծի ծննդեանս օրուան առիթով: Այդ քարտը այնքան սիրեցի, որ զայն հայելիիս վրայ փակցուցի: Անոր առջեւի կողմը կար երիտասարդ աղջկան մը նկարը՝ որ կարկտան, երփնազարդ կտորով տափատ մը հագած էր, իսկ անոր առջեւ գրուած էր. «Կարելորը միայն հագուստը չէ, այլեւ՝ վերաբերումը»: Այլ խօսքով՝ կարելորը այն չէ, թէ ինչ հագած ես, այլ՝ ինչպէս զայն հագած ես: Սէրը հագուելու լաւագոյն ձեւը համարձակութիւնն է: Սէրը բան մըն է, որ կ'ընես, կը գործադրես:



### **Չկայ աւելի գրաւիչ բան, քան անվախ կինը:**

Անժխտելի ճշմարտութիւն մը պիտի ըսեմ քեզի. չկայ աւելի գրաւիչ բան, քան անվախ կինը:

Ոչ թէ անհոգ կինը, այլ՝ անվախ կինը: Անվախ դուստրերը կը հագուին Աստուծոյ խոստումները կրակոտ հաւատքով: Մարդկայնօրէն մենք կը նայինք միայն մենք մեզի, բայց Աստուծմէ պատուէր ստացած ենք, որ մենք զմեզ քննենք Աստուծոյ խօսքին լոյսին տակ: Բայց մենք ոչ մէկ օգուտ կը ստանանք, եթէ մենք զմեզ անարգենք:

Վախը մեզ կը չափէ մեր անկարողութեան համաձայն. իսկ անվախ սէրը կ'օգտուի Աստուծոյ կարողութենէն:

Վախը վանող է. սէրը գրաւիչ է:

Ինչ կը նշանակէ գրաւիչ ըլլալ:

Հաւատաւ ինծի՝ գրաւչութիւնը աւելին է, քան արտաքինը: Օրինակ՝ ինքնաշարժի արկածները մեծ ուշադրութիւն կը գրաւեն: Ըսածս աւելի լաւ հասկնալու համար նայինք «գրաւիչ» բառին արմատին, որ կը նշանակէ՝ «մօտեցնել կամ փակցնել»: Նաեւ կը նշանակէ՝ «դէպի իրեն քաշել՝ մագնիսի պէս»:

Անիկա նաեւ կը նշանակէ՝ «հետաքրքրութիւն եւ զգացումներ յառաջացնել»:

Կեանքդ մագնիս մըն է կամ անէծքներու, կամ օրհնութիւններու համար: Ուրեմն, դուն քեզի հարցուր.

Ինչէն կը վախնաս:

Սէրը ինչ բան կը դրդէ, որ դիմագրաւես:

Որո՞ն կը մերժես ներել, մինչեւ որ ան փոխուի:

Ո՞ր մարզին մէջ սէրդ բաժնուած է վախով եւ չափուած կերպով:

Վախի յայտարարութիւններով թակարդող ցանց մը հիւսմ՞ծ ես:

Ժամանակն է, որ ամէն ինչ փոխենք: Փոփոխութեան ընթացքը սկսիլը նոյնքան դիւրին է, որքան կեանքիդ վրայ հոչակելը, այն, ինչ որ երկինքը կ'ըսէ անզուգական եւ հրաշալի կեանքի մը մասին: Քեզի օգնելու համար, որ սկսիս այս ընթացքը, աղօթք մը պատրաստած եմ քեզի համար՝ գործածելով այն խօսքերը զորս Պօղոսը ուղղած է Տիմոթէոսին:

Սիրելի աղջիկս, կ'աղօթեմ, որ Աստուծոյ շնորհքը, սէրը եւ լիարժէք բարօրութիւնը ատելի մեծ չափով արձակուին եւ հոսին քու կեանքիդ մէջ եւ լեցնեն քու կեանքդ Աստուծմէ՝ մեր Հօրմէն եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսէն: Քեզի կը գրեմ, որ քաջալերեմ քեզ, որ բորբոքես եւ կրկին արծարծես այն հոգեւոր պարզելին կրակը, որ Աստուած տուաւ քեզի: Որովհետեւ Աստուած երբեք քեզի չի տար երկչոտութեան եւ վախի հոգին՝ այլ Սուրբ Հոգին քեզի կու տայ զօրութեան, սիրոյ եւ խոհեմութեան Հոգին:

Այնպէս որ, երբեք մի՛ ամչնար մեր Տիրոջ վկայութեան համար, այլ յաղթէ՛ ամէն չարիքի՝ այն յայտնութեամբ, որ ունիս Աստուծոյ զօրութեան մասին: Ան յարութեան կեանքը տուաւ մեզի եւ դէպի Իրեն քաշեց մեզ՝ Իր սուրբ կոչումով, որ մեր կեանքին մէջ է: Եւ ասիկա տեղի չունեցաւ որեւէ բարի գործի մը համար, որ մենք ըրած էինք, այլ՝ Իր աստուածային

հաճութեամբ եւ զարմանալի շնորհքով, որոնք հաստատեցին մեր միութիւնը օծեալ Յիսուսի հետ դարերու ժամանակներէն առաջ (Բ.Տիմոթէոսի 1.2, 6-9, պատշաճեցուած):

Համոզուի՛ր ասով: Հաստատէ՛, որ այս խօսքերը Աստուծոյ կամքն են քու կեանքիդ համար: Կ'աղօթե՞ս ինծի հետ:

*Երկնաւոր Հայր,*

*Ես կ'ընդունիմ Քու շնորհքիդ, սիրոյդ եւ բարօրութեանդ արծակուիլը իմ կեանքիս մէջ: Ես կ'արժարժեմ այն հոգեւոր պարգեւը, որ ինծի փոխանցուած է: Աստուած, ես գիտեմ, որ Դուն ինծի վախի հոգին չես տրուած. ուստի ես կը մերժեմ վախի խորհուրդը: Հայր, շնորհակալ եմ, որ Դուն կը վերադարձնես եւ կը վերականգնես այն, ինչ որ այս գողը գողցած է ինձմէ:*

*Դուն ինծի տրուած ես Սուրբ Հոգին, որ կու տայ զօրութիւն, իշխանութիւն, սէր եւ խոհեմութիւն՝ առողջ դատողութեամբ: Այսօր ես կ'որոշեմ սիրել: Ես չեմ ամչնար Աւետարանէն: Ես ետ պիտի չքաշուիմ վախով եւ պիտի սիրեմ՝ առանց վախնալու:*

## **Քննարկումի Հարցումներ**

1. Ի՞նչ կարելի է ընել անվախ կերպով սիրելու համար:
2. Քու ամուսնութեանդ մէջ կայ այնպիսի հարց մը, զոր դուն պիտակած ես որպէս քու կողակիցիդ հարցը, ոչ թէ՛ «ծեր» հարցը:
3. Կեանքիդ մէջ կան մարզեր, որոնց մէջ որոշած ես խոցելի չըլլալ, որուն իբրեւ հետեւեանք քու սէրդ պակասած է: Ի՞նչ քայլեր կրնաս առնել, որպէսզի փոխես այդ կացութիւնը:
4. Կեանքիդ ո՞ր մարզերուն մէջ դուն այնպէս կը համարես, որ քու գործած սխալներդ կը նշանակեն, թէ դուն սխալմունք մըն ես:

5. Կայ արդեօք որեւէ մարդ, ուր դուն ինկած ես եւ կը վախնաս ոտքի ելլելու: Այդ մասին խօսիր քու բարեկամներէդ կամ մտերիմներէդ մէկուն հետ:
6. Ի՞նչ տարբերութիւններ կան անվախ կնոջ եւ անհոգ կնոջ միջեւ:





## Խորունկ Ջրհորներ և Փափաքներու Ջրհորներ

Փորձութիւնները մեզի կը սորվեցնեն, թէ ո՛վ ենք մենք.  
անոնք կը փորեն մեր սիրտին հողը եւ մեզի ցոյց կու  
տան, թէ ի՞նչ անո՞վ հաստատուն ենք մենք:

ՉԱՐԼՁ ՍՓԸՐՃԸՆ

**Կ**, ենթադրեմ, որ դուն կ'ուզես Աստուծոյ  
խորութիւնը ունեցող դուստր ըլլալ: Եթէ կ'ուզես  
խորութիւն ունենալ, պատրաստ եղիր փորելու:

Ես համաձայն եմ Չարզ Սփըրճընին հետ. փորձութիւնները  
իսկապէս որ յայտնութիւն են: Ես կրնամ ըսել ատիկա  
գոնէ իմ փորձութիւններու մասին: Անոնք պէտք է ըլլան  
մեր ուսուցիչները, բայց մենք կ'որոշենք, թէ ինչպիսի՞  
աշակերտներ պիտի ըլլանք: Շատ օրեր եղած են, երբ ես  
«Դ» ստացած եմ, որ ցած նիշ է. իմ գնահատականս ցած  
էր, բայց՝ քննութիւնը անցած էի: Այդպիսի պարագաներուն  
ես նորէն կ'անցընեմ այդ քննութիւնը: Ճշմարտութիւնը այն է,  
որ թէեւ իմ կեանքս կատարեալ չէ, ես կ'ուզեմ, որ լաւ ըլլայ:

Ես ունիմ իշխանությունը որոշելու, թե իմ քննություններս եւ փորձություններս իբրեւ պատգամաւոր պիտի ծառայեն ինձի, թե՛ պարզապէս խառնաշփոթ վիճակի մէջ պիտի ձգեն զիս:

Մենք կամ չափ քիչ բան կամ ուշիւն կրնանք ընել մեզի պատահածին կամ մեր մասին ըսուածին մասին, բայց հարցը կը տարբերի երբ խօսքը մեր արարքներուն մասին է: Մենք ունինք ընտրելու զօրութիւնը, այսինքն՝ մենք կատարեալ իշխանութիւն ունինք մեր պատասխանը կամ հակազդեցութիւնը կառավարելու: Եւ քանի որ մենք կը մէջբերենք Սփըրճընի խօսքերէն, եկէք քիչ մը աւելի խորանանք եւ տեսնենք, թէ ըստ անոր՝ ինչպիսի՞ն պէտք է ըլլայ մեր հակազդեցութիւնը փորձություններուն դիմաց:

«Ես սորված եմ համբուրել այն ալիքը, որ զիս ժայռին զարկած է»:

Ասիկա անսովոր եւ անսպասելի պատասխան մըն է մեզ յանկարծակիի բերող պայմաններուն դիմաց: Վերջերս ես կը հետեւէի իմ թոռնուհիիս՝ Սոֆիային, որ կը խաղար ալիքներուն հետ: Ան կ'ուրախանար՝ իւրաքանչիւր մօտեցող ալիքին հետ զարնուելով: Անկախ անկէ, թէ քանի՞ անգամ ալիքները ետ կը մղէին զինք եւ ջուրով կը ծածկէին ... ասիկա միայն խաղ էր: Խնդալով՝ ան կը շտկէր իր ոտքերը, կը սրբէր իր աչքերը եւ յառաջ կ'երթար՝ պատրաստուելով հանդիպելու յաջորդ ալիքին:

Սփըրճընը չի խօսիր ժայռոտ ափի մը մասին, այլ՝ Քրիստոսի ժայռին: Ամէն օր նոր առիթ է՝ որոշելու, թե ինչպէս պիտի պատասխանենք կեանքի ալիքներուն: Եթէ մենք պաշտպանողական դիրք բռնած ենք, ինչպիսի հարց ալ ի յայտ գայ մեր կեանքին մէջ, անիկա չի լուծուիր: Եթէ խոնարհինք, մեր փորձութիւնը թոյլ կու տայ Սուրբ Հոգիին, որ աւելցնէ մեր խորութիւնը, այսինքն՝ աւելի բարեպաշտ դարձնէ մեզ: Կեանքի դժուարութիւնները ցոյց կու տան, թէ որքանո՞վ մենք հաստատուն ենք՝ առանց նսեմացնելու մեր

**ինքնութիւնը:** Մեր ինքնութիւնը հաստատուած է «Քրիստոսի մէջ» եւ հիմնուած է Անոր գործերուն վրայ, ոչ թէ մեր ներկայ կամ անցեալ գործերուն վրայ: Փորձութիւնները մեզի կ'օգնեն, որ աւելի նմանինք Քրիստոսի, այսինքն՝ աւելի անսասան դառնանք: Քրիստոսը՝ այն առասպելական, առակի կարգ անցած ժայռն է, որ աւելի բարձր է, քան ես: Ան մեր էութիւնն է, այն ժայռը, որուն վրայ մենք հանգիստ կը գտնենք ամէն գիշեր, եւ որուն վրայ կը կանգնինք, երբ ամէն առտու կ'արթննանք: Միայն Յիսուսն է մեր ապահովութիւնն ու կեդրոնը:

## **Հողը Պատրաստել**

Անցնինք ծովէն դէպի ցամաք: Ես կ'ապրիմ գեղեցիկ, երբեմն՝ կանաչ, բայց յաճախ, չոր բնութիւն ունեցող Քոլորատոյի մէջ. այնպէս որ, ես դիւրութեամբ կրնամ բաղդատել իմ կեանքս հողին հետ: Մեր հողը կարծր է՝ խիստ բնութեան պատճառով: Թէեւ տանս բակին հողը կարծր է, ես կ'ուզեմ, որ իմ սիրտս փափուկ ըլլայ: Երբ ես չատ վշտացած եմ վիրաւորանքի մը պատճառով, անկախ անկէ, թէ այդ վիրաւորանքը աննշմն է, թէ՛ իմ վրաս կը ծանրանայ, ես միշտ կը զգամ, որ իմ սիրտիս հողին մէջ օտար բան մը կայ: Գտնելով կոշտացած հողերը՝ ես անոնց մէջ կը տեսնեմ կործանարար որդեր, որոնք կը փորձեն դարձեալ հողին տակ մտնել: Կը տեսնեմ անոնց գործունէութեան հետքերը հողին տակ: Կը նկատեմ, որ մինչ ես անտեղեակ էի, անոնք կը կրծէին իմ ամուսնութեանս արմատները եւ կը տկարացնէին իմ ընկերային յարաբերութիւններուս ծաղիկներուն աճը: Երբ ատիկա տեղի կ'ունենայ (իսկ ատիկա տեղի կ'ունենայ շատ աւելի յաճախ, քան ես պիտի ուզէի), իմ գրոյցս Հօր հետ կրնայ մօտաւորապէս այսպէս ըլլալ.

«Օ՛, ո՛չ, ասիկա սարսափելի է: Ինչպէս ասիկա պատահեցաւ: Երկնատր Հայր, Դուն կը տեսնես ասիկա: Լսեցի՞ր այն, ինչ որ հիմա ըսի կամ նոյնիսկ մտածեցի»:

Ան կը պատասխանէ. «Լիսա՛, ատիկա յայտնութիւն էր քեզի համար, բայց ոչ՝ Ինծի համար: Այդ որդերը արդէն երկար ժամանակէ ի վեր քու հողիդ մէջն են: Հարցումը հետեւեալն է. «Դուն կ'ուզեմ զանոնք պահել քու հողիդ մէջ՝ վտանգելով քու ապագայ հունձքդ»:

Աւելի ուշադրութեամբ նայելով՝ կը սկսիմ նկատել սերմեր, որոնք տակաւին պիտի ծլին, բան մը, որ ժամանակ կը պահանջէ: Անոնք Աստուծոյ խոր խոստումներն են, որոնք տակաւին չեն կատարուած իմ կեանքիս եւ ընտանիքիս մէջ: Կը սկսիմ մտածել՝ արդեօք այդ սերմերը երբեք պիտի աճին: Հայրս համբերութեամբ կը բացատրէ.

Այս տեսակի համաճարակը արագ կը բազմանայ: Ընտրութիւնը միշտ քուկդ է. դուն կրնաս պատրուակներու հողը թափել անոնց վրայ՝ անգամ մը եւ ծածկելով անոնց գործունէութիւնը, բայց անոնք հողին տակ կը մնան: Եթէ կ'ուզես ազատիլ այդ համաճարակէն, պէտք է ուրանաս զանոնք խօսքով եւ գործով, եւ Ինծի թոյլ տաս, որ հեռացնեմ զանոնք:

Տեսնելով անոնց իրական բնոյթը՝ ես կը մերժեմ եւ կը խոստովանիմ նախանձի, կասկածներու եւ մարդու վախի գարշելի համաճարակներուն առկայութիւնը:

Ապրի՛ս, եւ քանի դեռ մենք կը զբաղինք քու հողովդ, կը տեսնեմ այս մոլախոտերը: Եկրոր ասոնք ալ արմատախիլ ընենք: Աւելի դիւրին կ'ըլլայ ատիկա ընելը, քանի դեռ հողը շատ կոշտացած չէ: Եւ եկրոր ցանենք Աստուծոյ Խօսքին սերմերը անոնց փոխարէն:

Մէկ վայրկեան ... հիմա պայքարը իրական կը դառնայ: Անտեսանելի կոշտ հողերը բան մըն են, իսկ տեսանելի կանանչ մոլախոտերու ամէն հետք հեռացնելը այն ժամանակ, երբ ես դեռ Աստուծոյ խոստումները կը սպասէի, բոլորովին ուրիշ բան է: Կանգ կ'առնեմ եւ յիմարաբար կը մտածեմ, որ դեռ որոշ ժամանակ մը կարելի է ձգել այդ մոլախոտերէն քանի մը հատը: Թերեւս կը սպասեմ, որ նոր ծիլերը դճուրս գան հողին տակէն: Առանց այդ մոլախոտերուն՝ ես ամայի հողի կտորի մը պիտի նմանէի: Կ'ընդդիմանամ.

- Բայց Տէր, իմ հողս մերկ եւ անպտուղ պիտի երեւնայ:
- Լիսամ, դուն կ'ուզես պտղաբեր երեւնամ, թէ՛ պտղաբեր ըլլամ:

Եւ այս հարցումը ուղղուած է մեր սերունդին: Արդեօք մենք անելի կարետոր կ'երեւնամք, քան իրականութեան մէջ ենք: Եթէ մենք բաւարարուինք միայն պտղաբեր երեւնալով, ասիկա կրնայ խոչընդոտ դառնալ մեր ապագայ պտղաբերութեան համար: Ինչ որ գաղտնօրէն կը ցանուի, օր մը երեւան պիտի ելլէ: Խոր հառաչանք մը կ'արձակեմ:

- Լաւ, արմատախիլ ըրէ զանոնք:
- Արդէն ըրի:

Եւ ահա ես՝ մերկացած հողով, բայց չեմ ամչնար, քանի որ գիտեմ, թէ հիմա Անոր խոստումները առանց խոչընդոտի պիտի աճին մէջս: Փորձութիւններն ու հալածանքները կը մաքրեն հողը եւ կը հեռացնեն այն, ինչ որ արգելք կը հանդիսանայ ապագայ աճին համար: Անոնց դէմ դնելու նպատակն է՝ մաքրել եւ պատրաստել մեզ ապագային համար: «Փորձութիւններ» բառը կարելի է դիւրութեամբ փոխարինել ուրիշ բառերով, ինչպէս՝ լտումներ, դժուարութիւններ, գնահատումներ, ցաւ եւ տառապանք, փորձեր, քննութիւններ կամ պարզապէս ստուգումներ:

Մեր զօրաւոր եւ տկար կողմերը ի յայտ կու գան այդ փորձութիւններուն պատճառած անհանգստութեան մէջ: Միասնաբար եւ անհատաբար՝ անոնք կ'ազդեն մեր վրայ. փորձութիւնները մեր անձին չոր եւ անպտուղ մասերը կը կտրտեն եւ փխրուն կը դարձնեն՝ պատրաստելով մեզ նոր բաներու եւ մեր կեանքին յաջորդ հանգրուանին համար: Առանց այս նախապատրաստական աշխատանքին՝ մենք չենք կրնար կլլել Աստուծոյ Խօսքին ջուրին մեծ մասը: Մեր սիրտերը կ'ըլլան երաշտէն կոշտացած հողի պէս, որ չի կրնար ջուր ընդունիլ: Եթէ այդ չոր հողը չկակուղցուի, անձրեւները կու գան եւ կ'անցնին, բայց մեր քով երաշտ կ'ըլլայ՝ առատութեան ժամանակ:

Փորձութիւնները նաեւ մեզի կը սորվեցնեն, թէ ո՛վ է Աստուած:

Կար ժամանակ մը, երբ ես կը վիճէի քեզի հետ փորձութիւններուն նպատակին շուրջ: Կ'ըսէի, որ եթէ Աստուծոյ Խօսքին համաձայն կ'ապրիս, ոչ մէկ վատ բան կրնայ պատահիլ քեզի: Ես երիտասարդ էի, անմիտ էի եւ ներշնչուած էի այնպիսի գաղափարներով, որոնք չէին դիմանար ժամանակի փորձութեան: Կը կարծէի, թէ այդ ուսուցումը խոր էր, բայց իրականութեան մէջ անիկա մակերեսային կեանք մը կ'առաջարկէր ինծի:

Այն բոլոր բաները, որոնք կեանքի մէջ մեզի պէտք են եւ որոնց պէտք ունինք՝ բարեպաշտ կեանք մը ապրելու համար, ճշմարտապէս կը գտնուին Աստուծոյ Խօսքին մէջ, բայց փորձութիւններն են, որ մեզ ծունկի կը բերեն, որպէսզի այդ ճշմարտութիւնը ներգործէ մեր կեանքին մէջ: Այդ վիճակին մէջ մենք այլեւ չենք կարողար Աստուծոյ Խօսքը՝ իբրեւ մեր կեանքը լաւագոյն ձեւով ապրելու առաջարկ մը, այլ՝ իբրեւ կեանքի խօսքեր:

## **Պեղէ՛ իմ Կեանքս**

Կեանքիս մէջ կարճ եւ շփոթութեամբ լեցուն շրջան

մը եղած է, որուն պատճառը հիմնականորէն այն էր, որ ես կը գերադասէի դիմակ կրելը եւ հարցերս անտեսելը: Երիտասարդ էի, նոր փրկուած եւ նոր ամուսնացած էի, եւ սիրտիս հողը տակաւին պէտք էր դարձուէր: Անոր մակերեսին տակաւին միայն քանի մը փորուած մասեր կային: Կը յիշեմ, թէ ինչպէս ամէն բան փոխուեցաւ: Ես խոր պաշտամունքի եւ աղօթքի մէջ էի: Անմտօրէն կը մտածէի, որ եթէ եկեղեցիին առաջին շարքին վրայ կը նստէի եւ տակաւին նոր հովիւի մը կինը դարձած էի, կեանքիս մէջ միայն քանի մը բան պէտք էր փոխուէր: Լիովին վստահ ըլլալով՝ Աստուծմէ խնդրեցի, որ պեղէ իմ կեանքս: Դեռ մէկ օր չէր անցած, եւ արդէն կը զղջայի ըսած խօսքերուս համար:

*«Սիրելի երկնաւոր Հայր, ես ըսի՝ պեղել: Կրնամ ետ քաշել խօսքերս: Արիկա պարզապէս կրակոյ պահ մըն էր, եւ ես սխալ բառեր ընտրեցի: Ես նկատի ունէի, որ բարեկարգես եւ գեղեցկացնես իմ կեանքս»:*

Ան չարտօնեց ինծի հրաժարիլ իմ խօսքերէս: «Պեղում»ը բառ մըն էր, որ ես ընտրած էի Հոգիին առաջնորդութեամբ: Ինչպէս քրիստոնեաներուն մեծ մասը, ես կ'ապրէի խոր փափաքներով եւ մակերեսային աղօթքներով: Նախքան պաշտամունքի այս «վտանգաւոր» պահը, պարապօթին կը զգայի իմ աղօթքներէս ետք: Այն խօսքերը, զորս կը փսփսայի, ոչ մէկ առաջընթաց կը բերէին իմ կեանքիս մէջ, որովհետեւ ես դեռ կ'աղօթէի՝ պարտականութենէ մղուած, ոչ թէ նուիրումէ: Կ'աղօթէի այնպէս, ինչպէս ուրիշ մարդոցմէ լսած էի: Այո՛, ինծի ըսած էին, որ աղօթք կը նշանակէ՝ պարզապէս Աստուծոյ հետ խօսիլ, բայց ես անընդհատ ինքզինքս կը պատկերացնէի գահի սենեակին մէջ՝ շրջապատուած հրեշտակներով, որոնց համար իմ խօսքերս անհետեւ եւ ծիծաղելի էին:

Այս մտածելակերպին պատճառով ես չէի գիտեր, թէ ինչպէս պիտի շարադրեմ իմ աղօթքներս, որպէսզի փոխանցեմ իմ



ներսիդիս մոլեգնող յուսահատութիւնը: Նաեւ չէի գիտեր, թէ ինչպէս պէտք է վարուէի իմ ներսիդիս գտնուող յուսահատ հոգեւոր քաղցին հետ, քանի որ աւելին կը փափաքէի: Հիմա գիտեմ, որ Աստուած կ'օգտագործէ փորձութիւնները, որպէսզի աւելի խորացնէ իմ աղօթքներս: Նախքան այդ պահը, երբ ես, թէեւ վախնալով, թոյլ տուի Աստուծոյ, որ պեղէ իմ կեանքս, չէի գիտեր, թէ ինչպէս թոյլ տամ Անոր, որ աւելի խոր կերպով աշխատի ինձի հետ: Ես անմիջապէս կը կապէի որեւէ դժուարութիւն կամ փորձութիւն: Փոխանակ յարձակէի փորձութեան վրայ, իմ հին սովորութիւններուս եւ գերութեանս կապուած կը մնայի: Եթէ փորձութիւնները չհեռանային, ես կը փախչէի: Եթէ փախչիլը չազատէր զիս, կը պահուիլտէի՝ յուսալով, որ անոնք պարզապէս կը հեռանան:

Կեանքիս դժուարութիւնները վախցուցած եւ բարկացուցած էին զիս: Ես խստութեամբ կը վարուէի մարդոց հետ, եւ ւնի աւելի խստութեամբ կը վարուէի իմ անձիս հետ: Սիրելի քոյր, եթէ դուն այսպէս կը վարուիս, լսէ՛ այս կեանքը շատ աւելի կը բարդանայ քեզի համար, եթէ դուն քու անձիդ հանդէպ խիստ ըլլաս: Քանի մը տասնամեակի ընթացքին ես հասկցայ, որ Սփրըճընը ճիշդ էր: Ժամանակի ընթացքին կոփուելէ ետք՝ կը հասկնամ, որ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, թէ մենք որոն կը պատկանինք, եւ թէ մեր փորձութիւններուն դիմաց մեր վարմունքը ցոյց կու տայ, թէ ինչքան հաստատուն ենք մենք: Փորձութիւնները ունին զօրութիւնը մեզ փոխակերպելու՝ մեզ դարձնելով այնպիսին, ինչպիսին մենք կը ձգտինք դառնալ: Բայց մեր հոգեւոր կեանքին մէջ մենք հաւատացած ենք այն սուտին, որ կրնանք հերոսներ ըլլալ առանց որեւէ մէկ ճակատամարտի մասնակցելու:

## Խորունկ Ջրհորներ

Կը սիրեմ երբ մէկը, որուն պիտի հանդիպիմ, խորունկ ջրհոր կը կոչեն: Ատիկա կը նշանակէ, որ այդ մարդուն

Կեանքին մէջ կայ շատ անելին, քան ինչ որ դուրսէն կ'երեւի: Խորունկ ջրհորները խորհրդաւոր են. անոնք պատմելու շատ բան ունին, եւ ես կը սիրեմ պատմութիւններ լսել: Այդպիսի մարդիկ շատ բաներէ անցած են, որոնք կրնային պղտորել կամ աղտոտել այդ ջրհորները, բայց անոնց ջրհորները անարատ մնացած են: Խորունկ ջրհորները աղբիւրներ կը դառնան, քանի որ անոնք թարմութիւն կը բերեն ուրիշներուն: Խորունկ ջրհորները արտացոլացնելու անելի մեծ կարողութիւն ունին: Խօսելով խորունկ ջրհորի մը հետ՝ դուն շատ անելի բան կը գիտնաս դուն քու մասիդ, քան՝ անոր:

Ես կը ճանչնամ քանի մը կիներ, որոնք խորունկ ջրհորներ են: Միշտ կ'ուզեմ անելի լաւ ճանչնալ զանոնք: Երբ անոնց հետ եմ, սկիզբը կ'ամչնամ, քանի որ դեռ շատ հարցումներ ունիմ: Կը նախընտրեմ լսել, քան խօսիլ, երբ խորունկ ջրհորի մը հետ եմ: Լսելով՝ միշտ կարելի է հասկնալ ըսուածէն շատ անելին: Կ'ուզեմ խորունկ ջրհոր ըլլալ, բայց իմ կեանքիս մէջ կան պահեր եւ մարզեր, երբ ես անելի տաշտի կը նմանիմ:

Երբեմն խորունկ ջրհորը ճանչնալու համար ես պէտք է աշխատիմ իմ սիրտիս հետ: Անոնք այնքան ալ հետաքրքրուած չեն իմ գրած գիրքերովս եւ այն խորհրդաժողովներով, որոնց մէջ քարոզած եմ: Անոնցմէ շատերը այդ բոլորը ըրած են: Անոնք անելի հեռու կ'երթան: Անոնք չեն ուզեր, որ ես իմ սիրտս բանամ, այլ կ'ուզեն գիտնալ, թէ ինչով կը լեցնեմ զայն: Անոնք հարցումներ կը հարցնեն իմ ամուսինիս, զաւակներուս, թոռներուս, ինչպէս նաեւ՝ իմ սիրտիս մասին: Անոնք գիտեն ինչպէս մեղմօրէն թափանցել մարդու մը սիրտէն ներս: Նախքան անդրադառնամ, թէ ինչ կը պատահի, ես կը խախտեմ իմ բոլոր անձնական սահմաններս եւ ամէն բան կը պատմեմ անոնց (թէեւ ամուսինս բնաւ չի սիրեր ատիկա):

Իմ սիրտս չեմ բանար սպառնալիքի դիմաց. ես ատիկա կ'ընեմ՝ տեսնելով դիմացինին բարութիւնը:

Այդ խորունկ ջրհորներուն հետ հանդիպելէ ետք ես որոշ

բաներ հասկցած եմ: Խորունկ ջրհոր դառնալու համար անհրաժեշտ է ողջամիտ կերպով ներգրաւուած ըլլալ կեանքի մէջ: Խորութիւնը անկարելի է գնել. պէտք է ձգտիլ անոր: Անիկա կու գայ, երբ մենք բաւարարաչափ քաջութիւն ունինք անկեղծ ըլլալու: Այդ իմաստով՝ խորութիւնը ւելի կը նմանի մկանի մը, որ կը զարգանայ շարունակ գործածուելով:

## Փափաքներու Ջրհորներ

Վերջերս արուեստի աշխարհին մէջ աշխատողներուն գործեր գտնող գործակալ մը մօտեցաւ Ճոնին եւ ինծի: Մեծ ժամանցային ընկերութիւն մը նոր հեռատեսիլի յայտագիր մը կը պատրաստէր. անիկա պիտի անդրադառնար շարք մը խորունկ հարցերու, որոնց դիմաց կը գտնուի այսօր աշխարհը՝ ւելի հոգեւոր տեսանկիւնէն: Առաջին անգամը չէր, որ մեզի կ'առաջարկէին այսպիսի հաղորդումներ վարել: Ստանալով առաջարկներ քանի մը գործակալներէ, որոնք կ'ուզէին *ռիալիթի* շօեր սկսիլ (հեռատեսիլի յայտագիրներ, ուր սովորական մարդոց առօրեայ կեանքը շարունակ կը նկարահանուի), գիտէի, որ չէի ուզեր ներկայացումին մասնակցիլ: Անձնակազմիս ըսի, որ չէի կարծեր, որ ատիկա պէտք էր մեզի: Բայց վերջին գործակալը անձնակազմիս վստահեցուց, որ այդ հաղորդումին մէջ ամէն բան ուրիշ ձեւով պիտի ըլլար: Ֆիլմը արտադրողները կ'ուզէին յիշեցնել ունկընդորդներուն այն ժամանակը, երբ մարդիկ կ'երթային տեղական եկեղեցիները՝ պատասխաններ ստանալու համար: Մենք դժկամութեամբ համաձայնեցանք ւելին լսել անոնց զաղափարին մասին:

Ճոնը եւ ես տարբեր քաղաքներու մէջ կը գտնուէինք, բայց համաձայնեցանք խումբով հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունենալ: Անոնք շարք մը հարցումներ հարցուցին, որոնց մենք անմիջական եւ անկեղծ պատասխաններ տուինք: Ես չէի սպասեր, որ անգամ մը ես մեզի հետ կը կապուին, բայց

անոնք հեռաձայնեցին: Ըսին, որ սիրած են մեր եռանդը, եւ կ'ուզեն անցնիլ հարցազրոյցի յաջորդ հանգրուանին: Անոնք առաջարկեցին մէկ ժամնոց «Սքայփ»-ով կատարուած հաղորդակցութիւն մը արձանագրել: Եւ շարք մը հարցումներ ուղարկեցին մեզի, որոնց մենք պէտք է պատասխանէինք հարցազրոյցին ընթացքին: Առաջին հարցումը մօտաւորապէս այսպէս էր.

«Իմ տասնվեց տարեկան աղջկա սեռային յարաբերութիւն պիտի ունենայ տարիքով իրմէ մեծ եւ սեռային փորձառութիւն ունեցող երիտասարդի մը հետ: Այդ տղան իր կեանքին առաջին տղամարդն է: Իբրեւ մայր՝ արդեօք ես պէտք է բժշկական քննութեան ենթարկեմ զինք, թէ՛ պարզապէս հակաբեղմնաւորիչներ առաջարկեմ անոր: Ինչ խորհուրդ կու տաք»:

Ինծի համար այդ հարցը անմտութիւն էր: Խօսքը անչափահաս աղջկայ մը մասին էր, որ իր ծնողքին տան մէջ կ'ապրէր: Ես վստահ էի իմ պատասխանէս:

Բացատրեցի, որ Աստուածաշունչը կը պատուիրէր փախչիլ պոռնկութենէն, ոչ թէ պայմաններ ստեղծել անոր համար: Առաջարկեցի, որ ամբողջ ընտանիքը նստի սեղանին շուրջ եւ այդ աղջկան բացատրէ, թէ ինչն այդ երիտասարդին հետ այլեւս պէտք չէ հանդիպի:

Նախքան որ կարենայի ասելի բացատրել միտքս, այդ գործակալը ընդմիջեց զիս: Ան նշեց, որ (ա) այդ աղջիկը եւ անոր ընկերը չէին պատրաստուեր իրենց յարաբերութիւնները դադրեցնել, (բ) անոնք չէին ուզեր, որ մենք խօսքեր մէջբերէինք Աստուածաշունչէն: Անոնք պարզապէս կ'ուզէին հոգեւոր խորհրդատուներ ունենալ: Ան շարունակեց ըսելով, որ բոլոր հարցումները ղրկուած էին իրենց ընկերութեան անդամներուն կողմէ, եւ այդ հարցումը ինքը ղրկած էր: Այն աղջիկը, որ սեռային յարաբերութիւն կ'ունենար, իր քոյրն

էր, եւ իր մայրը կը փափաքէր գիտնալ, թէ ինչպէս պէտք է վարուէր: Այդ պահուն մենք հասկցանք, որ մեր հարցազրոյցը այլեւս չէր կրնար շարունակուիլ:

Այդ ընկերութիւնը գիտէր, որ մենք Աստուածաշունչի ուսուցիչներ ենք, բայց անոնք չէին ուզեր մեզմէ լսել, թէ ինչ կ'ըսէ Աստուածաշունչը: Անոնք կ'ուզէին, որ մենք ըլլանք խոր եւ հոգեւոր, բայց՝ ոչ սուրբգրային: Միթէ այդպիսի բան կարելի է: Միթէ գոյութիւն ունի որեւէ ճշմարիտ իմաստութիւն՝ առանց Աստուծոյ խորհուրդին: Մտածեցի, որ եթէ մէջբերէի «Նիւ էյճ» շարժումին առաջնորդներէն մէկուն խօսքերը, հաւանաբար ընդունէին ատիկա: Անոնք կ'ուզէին, որ մենք տայինք խոր թուացող մակերեսային պատասխաններ, որ ես փափաքներու ջրհոր կը կոչեմ:

Անոնք կ'ուզէին խուսափիլ ճակատումէ: Անոնք չէին ուզեր, որ մենք ունէ մէկը վիրաւորենք՝ ցոյց տալով սխալներ մարդոց արարքներուն մէջ: Անոնք կ'ուզէին, որ մենք օրհնենք մեղանչողները եւ ըսենք, որ անոնց գործած չարիքը բարի է: Անոնք այսպէս կը մտածէին. «Միեւնոյնն է՝ այդ մարդիկը պիտի չփոխուին. պարզապէս ըսենք այն, ինչ որ պէտք է ըսենք, որպէսզի արդարացնենք անոնց արարքը: Չիջում ըրէք, բայց այնպէս ձեւակերպեցէք ձեր խօսքը, որ անիկա շատ մօտ ըլլայ ճշմարտութեան»: Նաեւ անոնք չէին ուզեր, որ մենք բացայայտ կերպով խօսէինք քրիստոնէական հաւատքին մասին, այլ մեզ կը քաջալերէին, որ ծածուկ պահէինք զայն: Ըստ անոնց՝ ատիկա կը նշանակէր, որ մենք կրնայինք խօսիլ Աստուծոյ մասին, բայց պէտք չէ խօսէինք Յիսուսի եւ Աստուածաշունչին մասին:

Այլ խօսքով՝ վստահ եմ, որ անոնք կ'ուզէին, որ ես այսպէս բան մը ըսեմ. «Այո՛, սիրող մօր մը պէս վարուի՛ր եւ անմիջապէս բժշկական քննութեան ենթարկէ՛ աղջիկդ՝ սեռային ճամբով փոխանցուող հիւանդութիւններու համար: Բացի ատկէ՛ հակաբեղմնաւորիչներ տուր անոր, որպէսզի երկար ժամանակ

պաշտպանես զինք յղութենէ: Իսկ յաջորդ անգամ, երբ անոր ընկերը աւարտէ իր գործը, դուն եւ ամուսինդ կրնաք անոր ըսել, թէ ձեր աղջիկը որքան արժէքաւոր է ձեզի համար: Անոր ըսէ, որ կը յարգես այն իրականութիւնը, որ ան տարիքով աղջիկէդ ւելի մեծ է, եւ սեռային առումով ւելի փորձառու է: Հարցնուր անոր, թէ արդեօք ձեր ընտանիքէն կ'ընդունի՞ տղամարդու պահպանակ՝ իբրեւ նուէր: Այդ կերպով դուն քու կրցածդ ըրած կ'ըլլաս՝ վստահ ըլլալու համար, որ ան սեռային ճամբով փոխանցուող ոչ մէկ հիւանդութիւն չի փոխանցեր քու աղջկադ»:

Կը տեսնես որքան ծիծաղելի է այս խորհուրդը: Բայց ես հասկցայ, որ այդ հաղորդումը արտադրողները չէին ուզեր լսել Աստուածաշունչին ճշմարտութիւնը. անոնց փափաքներու ջրհոր պէտք էր: Անոնք ճոնին եւ ինծի կ'ըսէին. «Մենք քանի մը սենթ կը նետենք ձեզի, եւ անոր փոխարէն դուք մարդոց կու տաք այն, ինչ որ անոնք կ'ուզեն: Օրհնեցէք անոնց մեղքը եւ այնպէս ըրէք, որ անոնք իրենք զիրենք լաւ զգան»:

Կը վախնամ, որ բազմաթիւ քրիստոնեաներ բաւարարուած են փափաքներու ջրհորով եւ չեն ուզեր լսել, որ իրենք պէտք է խորունկ ջրհոր փորեն: Չափազանց շատ կիներ ունին խոր ձգտումներ, բայց՝ մակերեսային կեանք: Անոնք գիտեն, որ այս աշխարհի խորհուրդները, որոնց կը հետեւին, պարզապէս իրենց ծայներուն դատարկ արծազանքն է, բայց անոնք կը մտածեն, որ բացի ատկէ այլեւս ոչինչ գոյութիւն ունի ... ուստի կը բաւարարուին դատարկ փափաքներու ջրհորով: Անոնք այսպէս կը մտածեն իրենց կեանքին մասին.

- Երանի՛ չըսէի ատիկա:
- Երանի՛ չընէի այդ բանը:
- Երանի՛ չամուսնանայի անոր հետ:
- Երանի՛ ամուսնանայի անոր հետ:
- Երանի՛ ուսում ստանայի:
- Երանի՛ ւելի շատ բարեկամներ ունենայի:
- Երանի՛ այդ կնոջ նմանէի:

Երանի՛ չգնէի այս բանը:

Երանի՛ կարենայի գնել ատիկա:

Երանի՛ աւելի շատ աղօթէի:

Երանի՛ աւելի շատ Աստուածաշունչ կարդայի:

Երանի՛ աւելի կարգապահ կամ կրթուած ըլլայի:

Երանի՛ աւելի համբերատար ըլլայի:

Եթէ միայն երազելը բաւարար ըլլար, բոլորս փայլուն, գեղեցիկ, զօրաւոր եւ քաջ կ'ըլլայինք: Ուրլթ Տիգնին ըսած է. «Երազը այն փափաքն է, որ կը ծնի սիրտիդ մէջ, երբ անիկա խորունկ քունի մէջ է»: Կը հաւատամ, որ ատիկա ճիշդ է, բայց երազը եւ փափաքը կ'իրականանան միայն եթէ արթննալէդ ետք այդ երազին մասին բան մը կ'ընես: Փափաքը կամ ցանկութիւնը երազ կը ծնի, իսկ մենք կը սկսինք գործողութեան: Բաւարար չէ երազել, որ ամէն բան լաւ ըլլայ. դուն պէտք է լաւ աշխատիս: Ահա թէ ուր կը ձեւաւորուի խորութիւնը:

## Խաբկանքին Վտանգները

Ո՛չ մէկը թող խաբէ ինքզինք: Եթէ ձեզմէ մէկը կը կարծէ իմաստուն ըլլալ այս աշխարհի մէջ, թող յիմար դառնայ՝ որպէսզի իմաստուն ըլլայ: Որովհետեւ այս աշխարհի իմաստութիւնը՝ Աստուծոյ քով յիմարութիւն է. քանի որ գրուած է. «Ան իմաստունները կը բռնէ իրենց խորամանկութեան մէջ»: Եւ դարձեալ. «Տէրը գիտէ իմաստուններուն մտածումները՝ որ փուճ են»: (Ա.Կորնթացիներուն 3.18-20)

Հոս կ'ըսէ՛ «ո՛չ մէկը թող խաբէ ինքզինք», բայց բոլորս գիտենք, որ կիները կրնան իրենք զիրենք խաբել նոյնքան դիւրութեամբ, որքան տղամարդիկը: Բայց ինչո՞ւ թէ՛ տղամարդիկը, եւ թէ՛ կիները պիտի ուզեն քօղ քաշել իրենց աչքերուն վրայ եւ մոլորութեան մէջ իյնալ: Պատասխանը այն է,

որ ոչ ոք կ'ուզէ կամովին խաբուիլ: Ինչպէս ամուսինս միշտ կ'ըսէ. «Խաբկանքը միայն մէկ հարց ունի. անիկա անձը կը խաբէ»:

Խաբկանքը ցոյց կու տայ իրավիճակները, մարդիկը, պայմանները եւ մտադրութիւնները ոչ ճշմարիտ լոյսին տակ: Խաբկանքը կրնայ Աստուծոյ հնազանդիլը ներկայացնել իբրեւ օրինապաշտական կապանք կամ ստրկութիւն: Խաբկանքին պատճառով քու անձիդ թշնամին կրնայ ընկեր թուիլ: Խաբկանքը կրնայ այնքան հեռու երթալ, որ ներկայացնէ չարը՝ բարի եւ բարին՝ չար: Խաբկանքին զօրութիւնը այն է, որ անիկա կը պղտորէ սիրտիդ ջուրերը մինչեւ որ ամէն բան այնքան պղտոր ըլլայ, որ չես գիտեր, թէ ինչին պիտի հաւատաս: Աստուած գիտէր, որ մենք այդպիսի վիճակի մէջ պիտի գտնուինք, եւ այդ պատճառով մեզի տուաւ անփոփոխ չափանիշ մը, որ ժամանակի ընթացքին չի տատանիր եւ չի փոխուիր մարդկային մշակոյթի եւ ընկերային կարծիքի ազդեցութենէն: Մեր չափանիշը Աստուծոյ Խօսքն է, եւ բարեպաշտ մարդիկ անոր կը հետեւին:

Ընտրութիւնը մերն է՝ կ'ուզենք այս աշխարհի իմաստութիւնը, թէ՛ անժամանակեայ իմաստութիւնը: Երբ ստեղծուածները կ'երեւակայեն, որ իրենց Ստեղծիչէն աւելի իմաստուն են, անոնք ընկղմած են ինքնախաբէութեան մէջ: Միայն Աստուծոյ Խօսքն է, որ ունի զօրութիւնը պարզելու մեզի ամէն ինչ՝ երբ պայմանները պղտորած են մեր սիրտին ջուրերը: Առանց Աստուծոյ Խօսքին խորհուրդին՝ դուն սխալմամբ յիմարութիւնը իմաստութիւն կը կոչես:

Երբ ասիկա կը պատահի, դուն կրնաս սխալ համոզումներ ձեռք բերել կամ անկեղծ եւ պարկեշտ համարել այն, ինչ որ քողարկուած եւ խորամանկ է: Յիշէ՛, որ օձին իմաստութիւնը քողարկուած եւ խորամանկ է: Քօղարկուած գաղափարները կը համոզեն իրենց յարողները՝ շեղելով անոնց ուշադրութիւնը դէպի որոշ նպատակներ, մինչ ամբողջ այդ ընթացքին անոնք բոլորովին ուրիշ նպատակ կը հետապնդեն: Օձը



Ծպտուեցաւ իբրեւ համախոհ, որ գաղտնի տեղեկութիւն ունէր Ադամին եւ Եային համար: Ձեւացնելով, թէ ինք անկեղծ բարեկամ է, որ անոնց մասին կը հոգայ, ան ակնարկեց, որ երբ անոնք լուսաւորուին՝ ճանչնալով բարին ու չարը, աւելի պիտի նմանին Աստուծոյ: Ան խոստացաւ, որ անոնք պիտի բարձրանան այդ մակարդակին՝ առանց հնազանդելու Աստուծոյ իմաստութեան: Ադամն ու Եան չէին ուզեր խաբուիլ. անոնք կ'ուզէին ստանալ այն, ինչ որ օճը իրենց խոստացաւ: Անոնք որոշեցին հաւատալ, որ Աստուած ստած էր իրենց, փոխանակ մերժէին օճին ըսածը՝ զայն սուտ համարելով: Օճը խոստացաւ, որ անոնք աւելի աստուածանման պիտի դառնան, մինչ իրականութեան մէջ անոնք աւելի անաստուած դարձան: Աստուծոյ Խօսքը կը զգուշացնէ մեզ.

Նոյնիսկ եթէ բոլորը ստախօս են, Աստուած ճշմարտախօս է: (Հռոմայեցիներուն 3.4, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *էն.էլ.Թի.* տարբերակէն)

Խաբկանքէն դուրս գալու միջոցը ապաշխարութիւնն է, երբ մենք յիմարութիւն կը կոչենք մեր իմաստութիւնը եւ կը խոնարհիինք Անոր առջեւ, որուն կը պատկանի յաւիտենական իմաստութիւնը: Ապաշխարութիւնը տեղի կ'ունենայ, երբ սուտէն կը դառնանք դէպի ճշմարտութիւն:

Այսօր Սատանային քողարկուած խոստումները տարածուած են ամբողջ աշխարհի մէջ: Շատոնց օճին առաջարկները աւելի ազնիւ, մեղմ եւ գրկաբաց կը թուէին ըլլալ, քան Աստուծոյ պատուէրը: Ի վերջոյ, ի՞նչ մէկը աւելի լաւ կը թուի քեզի. «Եթէ ուտէք կը մեռնիք»ը, թէ՛ «Եթէ ուտէք, իմաստութիւն կը ստանաք»ը: Օճը մեր մարդկային հպարտութիւնն ու յիմարութիւնը մեզի դէմ կը գործածէ: Ո՛վ չ'ուզեր հաւատալ, որ ինքը աւելի իմաստուն է, քան իրականութեան մէջ է: Ուստի, ան կը շողոքորթէ

մեզ: Ճշմարտությունն այն է, որ առանց Քրիստոսի չկայ ճշմարիտ իմաստություն: Առանց Անոր մենք միայն ժամանակաւոր, երկրաւոր եւ սահմանափակ իմաստություն ունինք:

Հոգին յատկապէս կ'ըսէ, թէ վերջին ատենները՝ ոմանք պիտի հեռանան հաւատքէն, ուշադրութիւն դարձնելով մոլորեցուցիչ ոգիներու եւ դեւերու վարդապետութիւններու: (Ա.Տիմոթէոսի 4.1)

Մոլորեցուցիչ ոգին միշտ քեզի կ'ըսէ, որ դուն կրնաս լուսաւորուիլ առանց Աստուծոյ Խօսքին, որ մենք կ'ապրինք նոր ժամանակաշրջանի մը մէջ, եւ Աստուած այլեւս նկատի չունի այն, ինչ որ ժամանակին ըսած է: Այս ոգիները կը կրկնեն օձին խօսքերը. «Մտիկ մի՛ ըներ Աստուծոյ. դո՛ւն եղիր քու աստուածդ»: Շատ-շատեր չեն հասկնար ասիկա, քանի որ կը մտածեն, որ խաբկանքը միայն կը վերաբերի բացայայտ կախարհութեան եւ սատանայապաշտութեան: Բայց շատ յաճախ մոլորեցուցիչ ոգիները եւ դեւերը կը շեղեն մարդիկը դէպի որոշակի նպատակներ, մինչ անոնք բոլորովին ուրիշ նպատակ կը հետապնդեն: Եթէ դուն քրիստոնեայ ես, անոնք չեն կրնար խլել քու անձդ, բայց ինչ որ կրնան՝ կ'ընեն, որպէսզի քեզ զրկեն իշխանութենէդ եւ ապականեն քու ջրհորդ: Մեր օրերուն բազմաթիւ անաստուած բաներ սովորական դարձած են: Աստուծոյ Խօսքը խստօրէն կը զգուշացնէ մեզ.

Բայց մերժէ սրբապիղծ ու պառաւական առասպելները, եւ դուն քեզ վարժեցուր բարեպաշտութեան. որովհետեւ մարմինին վարժութիւնը օգտակար է քիչ բանի, բայց բարեպաշտութիւնը օգտակար է ամէն բանի, ունենալով թէ՛ ներկայ եւ թէ՛ ապագայ կեանքին խոստումը: (Ա.Տիմոթէոսի 4.7-8, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մի սխալի՜ր՝ մտածելով, որ այս առասպելները անլուրջ, մանկական կամ անվսաս են պարզապէս՝ որովհետեւ մարդիկ պիղծ ու պառուսական կը կոչեն զանոնք: Այդ առասպելները այդպէս չեն: Անոնք հեքիաթներ կամ առակներ չեն, զորս յօրինած են՝ ճշմարտութիւնը սորվեցնելու համար: Անոնք դեւերու վարդապետութիւններ են, որոնք ղրկուած են՝ սպաննելու, գողնալու եւ կորսնցնելու մեզ:

Գոյութիւն չունի ճշմարիտ իմաստութիւն՝ Աստուծոյ խորհուրդէն դուրս:

Յիսուս երբեք կանգ չ'առներ՝ ըսելով այն, ինչ որ մենք կ'ուզենք լսել. Ան անելի խորը կ'երթայ՝ ըսելով այն, ինչ որ մենք պէտք է լսենք:

## Մեր Ջրհորէն Ջուր Քաշել

Մեզմէ իւրաքանչիւրին մէջ իրական ջրհոր մը կայ: Անիկա մեր անձն է, ուրկէ մենք ջուր կը քաշենք: Երեմիան զանիկա հոր կը կոչէ.

Որովհետեւ իմ ժողովուրդս երկու չարիք գործեց. Ձիս՝ կէանքի ջուրին աղբիւրը՝ լքեցին, եւ իրենց հորեր փորեցին, ճեղքուած հորեր, որ չեն կրնար ջուր պահել: (Երեմիայ 2.13)

Մեր անձ-ջրհորները կրնան շատ տարբեր ըլլալ՝ շատ ծանծաղէն մինչեւ շատ խորունկը:



**Կ'ուզենք  
այս աշխարհի՜  
իմաստութիւնը,  
թէ՛ ան-  
ժամանակեայ  
իմաստութիւնը:**

Անոնց մէջ գտնուող ջուրին մակարդակը կրնայ բարձրանալ կամ իջնել՝ ըստ մեր տարողութեան: Կարելոր չէ, թէ որքան խորունկ է ջրհորը ... Եթէ անիկա ճեղքեր ունի, ջուր չի պահեր: Ժամանակի ընթացքին ջրհորը կարելի է խորացնել, ամրացնել եւ նորոգել: Մեր անձը անօթ կամ

աման մըն է, որ իսկական ջրհորի մը կը նմանի. անոր մէջ կը պահենք մեր խոր փափաքները, վախերը եւ ցանկութիւնները:

Երբեմն անձիս ջրհորին ջուրը լճացած կը թուի ըլլալ: Ուրիշ անգամ իսկապէս կը զգամ ջուրին հոսքը, բայց անոր մէջ միշտ ջուր կայ՝ անկախ անկէ, թէ ջրհորը պարմայ է, կէս լեցուն է, թէ՛ ջուրը անկէ դուրս կը յորդի: Հին ժամանակներուն թշնամիները ջրհորները հողով կը լեցնէին, քանի որ գիտէին, որ ջուրը կեանքի աղբիւր է: Մեր կեանքին կարծրացած մարզերը կրնան նոյնը ընել մեր ջրհորին հետ:

Երբ այնպէս կը թուի, թէ մեր ջրհորը ճնշուած է, կրնանք բանալ զայն՝ թոյլ տալով, որ մեր անձին խոր տրտմութիւնները եւ փափաքները ձայն ստանան: Երբեմն, երբ կը զգամ, որ ջրհորս պղտորած եւ ցեխոտած է, նոյնիսկ երբ ներսիդիս թշնամութիւն կը զգամ, միայն մէկ երգի պէտք ունիմ, որպէսզի բանամ զայն եւ թարմացնեմ իմ անձս: Խնդալը, ընտանիքիս եւ բարեպաշտ բարեկամներու հետ ժամանակ անցընելը կը լեցնեն իմ հորս: Աստուածաշունչ կարդալը, օրագիրիս մէջ գրելը եւ աղօթքը կը թարմացնեն զիս՝ տաք եղանակին պաղ աղբիւրէն կուշտ ջուր խմելու պէս:

## **Անցեալ Ունեցող Կիներ**

Բոլորս ալ անցեալ ունինք: Պարզապէս մեզմէ ոմանց անցեալը անելի ճշացող է, քան միւսներունը: Ոմանց անցեալը անելի լաւ եղած է, միւսներունը՝ սարսափելի: Այնքան ալ կարեւոր չէ՝ քու անցեալդ դաժմն էր, թէ՛ բարի էր քեզի հանդէպ: Գոյութիւն ունի անելի մեծ վտանգ՝ երբ մենք կը փորձենք ապրիլ անցեալին մէջ: Մենք չենք ստեղծուած, որ ապրինք փառքի կամ ամօթի շուքին տակ: Մենք ստեղծուած ենք, որ ապրինք ներկային լոյսին մէջ եւ նայինք ապագային անլցող պայծառութեան: Այսպիսին է արդարներուն ուղին:

Ես սորված եմ, որ մարդկային բնութիւնը հակուած է ետ նայելու եւ քննարկելու անցեալը, մինչդեռ Աստուած առջեւ կը

Նայի եւ կը հոչակէ մեր ապագան: Մարդոց պատմութիւնները լսելը լաւ է, բայց յառաջ երթալու համար շատ աւելի կարեւոր է, որ գիտնանք անոնց երազները:

Ճամբորդելով եւ քարոզելով՝ ես հազարաւոր կիներու կեանքին մէջ յոյս հոչակելու արտօնութիւնը ունեցած եմ: Երանի տեսնէիր, թէ ինչպէս կը լուսաւորուէին կիներուն դէմքերը, երբ ես համարձակօրէն կը հոչակէի.

«Ձեր կեանքին յարձակումները աւելի կապուած են այն բանին հետ, թէ ինչպիսի մարդիկ դուք կրնաք դառնալ ապագային, քան՝ այն բանին հետ, թէ ինչպիսի մարդիկ եղած էք անցեալին»:

Յանկարծ անոնք կ'անդրադառնան, որ իրենց կեանքը վերջացած չէ: Անոնք կ'անդրադառնան, որ իրենց կեանքը նպատակ ունի, եւ ճիշդ այդ պատճառով էր, որ թշնամին դիտումնաւոր եւ կանոնաւոր յարձակումներ կը գործէր իրենց վրայ: Այդ պահին անոնք կը հասկնան այն, ինչ որ ես կ'ուզեմ, որ դուն գիտնաս: Ոչ մէկ ատեն կարեւորը քու անցեալդ չէ, այլ միշտ՝ քու ապագադ: Այո՛, մեր որոշումները հետեւանքներ ունին: Ես կը հասկնամ ատիկա: Բայց անկախ անկէ, թէ ինչ ըրած ես, Աստուած արդէն քու առջեւդ գացած է եւ ճամբայ պատրաստած է հոն, ուր կը թուէր, որ ճամբայ չկայ:

Դուն ետ կը նայիս քու կեանքիդ՝ մտածելով, որ քու արարքներդ փակած են միակ դուռը, որ դուն երբեւէ պիտի ունենաս: Բայց գիտես, որ ատիկա սուտ է: Այո՛, այդ դուռը փակ է, բայց եթէ դառնաս, դուն պիտի գտնես ուրիշ դուռ մը, որ քեզի կը սպասէ: Թերեւս այդ դրան տեսքը տարբեր է, թերեւս աւելի դժուար է գայն բանալ, բայց եթէ համագործակցիս Աստուծոյ հետ, Ան միշտ պիտի հասցնէ քեզ հոն, ուր պէտք է ըլլաս: Ան միշտ պիտի տայ քեզի անհրաժեշտ գործիքները՝ խոր եւ ամուր պատերով ջրհոր մը շինելու համար, որմէ դուն կրնաս ջուր քաշել:

Հարցը այն է, որ մեզմէ շատերը կը նստին այդ ճեղքեր ունեցող եւ ծանծաղ փափաքներու ջրհորին քով եւ կու լան: Կ'ըսենք. «Երանի՛ ատիկա չընէի: Ամէ՛ն բան քանդեցի»:

Ատիկա անկարելի է: Հիանալի՛ բարեկամ, դուն չունիս այդպիսի կարողութիւն: Այն իրականութիւնը, որ դուն անցեալ ունեցող կին ես, չի նշանակեր, որ չես կրնար ապագայ ունենալ: Այն իրականութիւնը, որ դուն վատ անցեալ ունեցած ես, մարդոց իրաւունք չի տար, որ կառավարեն քու ապագադ: Աստուած կը կառավարէ քու ապագադ: Սուրբ Օգոստինոսը լաւ խորհուրդ մը կու տայ մեզի, թէ ինչպէս պէտք է խորացնենք մեր ջրհորը.

«Կ'ուզե՛ս վեր բարձրանալ, սկսի՛ր վար իջնել: Դուն այնպիսի աշտարակ մը կը նախագծես, որ պիտի թափանցէ ամպերուն մէջ: Նախ՝ դի՛ր խոնարհութեան հիմը»:

Յիսուս կը տենչայ քեզի հանդիպիլ երբ դուն ամենավատ վիճակիդ մէջ ես, երբ ելք չես տեսներ, եւ կ'ուզէ ատիկա ընել ոչ թէ մէկ անգամ, այլ շատ անգամներ: Շատ յաճախ մենք կը հասկնանք, որ պէտք է Անոր հանդիպինք փրկութեան սկզբնական պահին, բայց կը մտածենք, որ անկէ ետք Ան կը ձգէ, որ մենք առանձին կառուցենք մեր կեանքը: Ատկէ ատելի սխալ պատկերացում չի կրնար ըլլալ: Սկիզբը մենք կը հանդիպինք Անոր՝ իբրեւ փրկութեան Տէրը, իսկ յետոյ, շարունակաբար եւ խոնարհաբար Անոր, որ կը վերականգնէ մեր անձը եւ կը նորոգէ մեր սիրտերուն ճեղքեր ունեցող հորերը:

## **Ծանծաղ Ջուրերուն մէջ Խեղդուիլ**

Երբ կը մարզուէի՝ լողացողներու փրկարար դառնալու համար, իմացայ, որ ամէն տարի խեղդուող մարդոց մեծամասնութիւնը կը մեռնի ապահովութեան գօտիին սահմաններուն մէջ: Երեք ամենաշատ վտանգուած խումբերն

են՝ փոքր մանուկները (հինգ տարեկան եւ վար), անզգոյշ երիտասարդները (քսանէն-քսանհինգ տարեկան տղաները) եւ տարեցները (որոնք վաթսունը անց են): Հետաքրքրական է, որ խեղդուողներուն գրեթէ կէսը կը մեռնի մինչեւ երկու մեթր խորութիւն ունեցող ջուրի մէջ: Անոնք խուճապի կը մատնուին եւ չեն կրնար ճիշդ ձեւով օգտագործել իրենց շուրջ գտնուող բաները: Ճիշդ այդ պատճառով, մարդոց մեծ մասը իրականութեան մէջ կը խեղդուի մէկ մեթր կամ աւելի պակաս խորութիւն ունեցող ջուրի մէջ: Եթէ անոնք իրենց անձին տիրապետեն, իրենց անձին վրայ հակակշիռը չկորսնցնեն, կրնան իրենց ոտքերը ջուրին յատակը իջեցնել եւ պարզապէս կանգնիլ՝ մինչեւ օգնութիւն ստանան կամ կրնան յատակէն դէպի վեր ցատկել, կամ նոյնիսկ՝ քալել ջուրին յատակին վրայ դէպի աւելի անվտանգ խորութիւն: Միշտ չէ, որ խորութիւնն է, որ կը սպաննէ մարդը, այլ՝ ծանծաղ ջուրերուն մէջ խուճապի մատնուիլը, երբ անսպասելին կը պատահի: Անզգոյշ մարդիկ յարգանքով չեն մօտենար ջուրին եւ իրենք զիրենք անպարտելի կը համարեն:

Եկէք չըլլանք այնպիսի կիներու սերունդ մը, որ կը խեղդուի ծանծաղ ջուրերու մէջ: Եկէք թոյլ տանք Սուրբ Հոգիին, որ խորունկ փորէ:

## Առողջ Ապրիլ

Երբ այս երկրաւոր կեանքը աւարտի, բոլորս յոյս ունինք, որ պիտի լսենք «ապրիս» բառը: Անգլերէն *ուէլ*՝ «լաւ» բառը կը նկարագրէ, թէ ինչպէս կ'ընենք այն բանը, որուն համար կանչուած ենք: Ինչ կը վերաբերի մարդկային կեանքին եւ սիրոյն, գոյութիւն չունի «գերազանց» գնահատական: Կան միայն անկատար մարդիկ, որոնք լաւ կը կատարեն իրենց կոչումը: «Լաւ» բառը պարզեւ է մեզմէ իւրաքանչիւրին համար: Անիկա կը նշանակէ՝ առողջ եւ ողջամիտ: Անիկա կը նկարագրէ մարդիկ, որոնք կը ձախողին եւ կ'իյնան, բայց

ամէն անգամ կրկին ոտքի կ'ելլեն: Մենք միշտ պէտք է ոտքի ելլենք՝ ամէն անգամ որ իյնանք:

Այս է այն կեցուածքը, որ պէտք է ունենանք, եթէ կ'ուզենք զարգացնել այնպիսի խորութիւն, որ պիտի պահպանէ մեզ: Կարդանք Առակներու Գիրք 24.16-ը անգլերէն Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն.

Որովհետեւ զԱստուած սիրողները կրնան հակառակութիւն կրել եւ եօթը անգամ իյնալ, բայց անոնք շարունակ պիտի կանգնին՝ դարձեալ եւ դարձեալ:

Հակառակութիւնը կեանքի համալսարանն է: Ամէն դասարանի կրթաթոշակը կարելի է չափել այն բանով, թէ ինչ կը պահանջուի քեզմէ՝ անգամ մը եւս ոտքի կանգնելու համար: Ոտքի կանգնիլը, հայելիին մէջ նայիլը եւ խոստովանիլը, որ սխալ էիր, կրնայ դժուար ըլլալ եւ նոյնիսկ՝ կրնաս անոր գինը սուղ վճարել: Բայց ամբարիշտներուն համար սայթաքումը ճակատագրական կը դառնայ.

Բայց ամբարիշտները

Պիտի իյնան միայն մէկ փորձանքի պատճառով

եւ այլեւս երբեք պիտի չկարենան վեր կանգնիլ:

Կը յիշեմ, որ կը հետեւէի երկու փայլուն եւ շնորհներով լեցուն ծառայողներու, որոնք սայթաքեցան եւ ինկան նոյնանման ձեւերով, բայց անոնք իրարմէ բոլորովին տարբեր հակազդեցութիւն ունեցան իրենց վերականգնման գործընթացին նկատմամբ:

Հովիւներէն մէկը ենթարկուեցաւ այն ծրագիրին, որ անոր եկեղեցոյ տնօրէն խորհուրդը եւ անոր վերականգնման համար ընտրուած խումբը առաջարկեցին իրեն: Այդ ծրագիրը շատ բան կը պահանջէր այդ ղեկավարէն, անոր կնոջմէն եւ ընտանիքէն: Անոնք ձգեցին ամէն բան եւ տեղափոխուեցան այն քաղաքէն, ուր շրջապատուած էին բարեկամներով եւ



կ'ապրէին մինչեւ այդ պահը. անոնք ձգեցին այն եկեղեցին, զոր հիմնած էին: Միացան նոր եկեղեցիի մը, որ անոնց պիտի օգնէր, որ բժշկուին: Անոնք ձգեցին այն բոլոր բաները, զորս գիտէին, քանի որ կը հաւատային, որ այդ մօտեցումը լաւագոյնն էր բոլորին բժշկութեան համար:

Վստահ եմ, որ կային պահեր, երբ անոնք զգացին, որ իրենցմէ չափէն աւելի շատ բան կը պահանջուէր, կամ որ իրենց հանդէպ անարդար կը գտնուէին: Գիտեմ, որ անոնք վիրաւորուած էին այն մարդոց ծաղրանքէն, զորս բարեկամներ կը սեպէին: Ուր որ մարդիկ կան, հոն միշտ սխալելու հաւանականութիւն կայ: Բայց անոնք վիրաւորանքէն հեռու պահեցին իրենց սիրտերը եւ որոշեցին ապրիլ իրենց կեանքը ամէն օր՝ առջեւ նայելով, եւ ոչ թէ՛ ետ:

Ճոնը կը ճաշէր այդ ղեկավարին հետ, երբ ան կ'անցնէր իր վերականգնման ընթացքէն. ան կը հանգստանար, կը ծառայէր, կը սորվէր եւ բժշկութիւն կը ստանար: Ժամանակը անցաւ. այսօր անոնք կը շարունակեն յառաջ երթալ: Անոնք առողջ զոյգ են, անոնց ամուսնութիւնը առողջ է, եւ անոնց զաւակները ծաղկունք կ'ապրին: Անոնք սերտ կապեր ունին մեծ միսիոնարական կազմակերպութեան մը հետ Ամերիկայի մէջ, որ իրենց կ'արտօնէ, որ իրենց կեանքի դասերը կ'իսուին, օգնեն ուրիշ առաջնորդներու, որ բժշկութիւն ստանան եւ թոյլ չտան, որ ուրիշ առաջնորդներ սայթաքին նոյն ձեւով, որ իրենք սայթաքեցան: Մինչեւ այդ դէպքը, ես կը սիրէի զիրենք, բայց անկէ ետք անոնց հանդէպ իմ յարգանքս աւելցաւ: Ես շատ շնորհակալ եմ, որ անոնք ինկած չմնացին եւ շարունակ ոտքի ելան: Թէեւ դժուար էր, բայց անոնք իրենց ընթացքէն չհեռացան:

Միւս ղեկավարը եւ իր կինը բոլորովին ուրիշ մօտեցում ունեցան: Կը յիշեմ, որ անոնց հարցերուն սկիզբները Ճոնը կարճ հաղորդագրութիւններու միջոցով կը հաղորդակցէր այդ ղեկավարին հետ: Ճոնը կը քաջալերէր զինք, որ չհեռանար իր ընթացքէն՝ անկախ տեղի ունեցածէն: Այդ

մարդը համաձայնեցաւ: Բայց երբ հակառակութիւնները սկսան, անոնք չդիմացան եւ որոշեցին ձգել վերականգնման ընթացքը: Անոնց կը թուէր, որ այն, ինչ որ իրենց առաջնորդները կը խնդրէին իրենցմէ, անտրամաբանական էր, եւ որ իրենց հետ անարդար կերպով կը վարուէին: Թերեւս ատիկա չափով մը ճիշդ էր ... միայն Յիսուս գիտէ:

Ողբերգութիւնը այն է, որ անոնց վիրաւորանքը ետ տարաւ զիրենք դէպի այն ճահիճը, որուն մէջէն անոնք արդէն անցած էին: Անոնք մասնագէտներ դարձան այն հարցին մէջ, թէ մարդիկ որքան սխալ ձեւով վարուած էին իրենց հետ: Դժբախտաբար, մենք չկրցանք օգտուիլ այն բաներէն, զորս անոնք սորվեցան իրենց ճամբորդութեան ընթացքին:

Երկրորդ ձեւը, որով իյնալը կրնայ քեզ քանդել այն է, երբ կ'որոշես քու սայթաքումդ տեսնել որպէս ցկեանս բանտարկութիւն, ոչ թէ՛ կեանքի դաս: Այն իրականութիւնը, որ դուն ձախողեցար, ձախորդ անձ չի դարձներ քեզ: Քանի դեռ դուն ողջ ես, դուն պիտի հանդիպիս անբարենպաստ պայմաններու: Մի՛ կարծեր, որ ատիկա որոշ մարդոց համար չէ: Պարզապէս ոմանք անելի ազնուաբար կը կրեն դժբախտութիւնները, քան միւսները: Ես շատ բան տեսած եմ այս կեանքին մէջ՝ հասկնալու համար, որ անկէ անկարելի է խուսափիլ: Մարդիկ ցաւ պիտի պատճառեն եւ յուսախար պիտի ընեն քեզ՝ թէ՛ գիտակցաբար, թէ՛ անգիտակցաբար: Կեանքը ցաւ պիտի պատճառէ քեզի կամ, լաւագոյն պարագային, անյարմարութիւն: Բոլորին կեանքին մէջ հակառակութիւններ կ'ըլլան՝ որոշ ժամանակներ եւ որոշ չափով: Բայց գեղեցիկ լուր մը կայ: Շատ բաներ եղած են, որոնք ժամանակին այնքան ցաւ պատճառած են, որ կը կարծէի, որ երբեք չեմ մոռնար: Բայց եւ այնպէս, այսօր ես հազիւ կրնամ յիշել զանոնք: Ինչո՞ւ: Ես ոտքի ելայ եւ շարունակեցի քալել: Ճամբուն մէջ ինձի կը սպասէին նոր հակառակութիւններ: Անցեալին այնքան շատ կոհիներէ եւ

անհամաձայնություններէ անցած եմ, զորս հիմա մոռցած եմ, եւ այլեւս անկարելոր են ինծի համար, որ այն բաները, որոնք, իմ կարծիքովս, անյաղթահարելի էին ինծի համար, երբ ես երեսուններու մէջ էի, «մագիստրոսի աստիճան» շնորհեցին ինծի կեանքի մէջ հիմա, երբ յիսունը անց եմ:

Մեր իւրաքանչիւր սայթաքումը սորվելու մէկ ուրիշ առիթ է: Մենք կը սկսինք ճանչնալ կեանքի խոչընդոտները եւ վտանգները: Վստահ կ'ըլլանք, որ մեր կօշիկներուն կապերը կապուած են: Մենք կը կարդանք Խօսքը, որպէսզի մեր առջեւ գտնուող ճամբան լուսաւորուի: Ամէն անգամ որ ոտքի կ'ելլենք, մեր կարողութիւնը կ'աւելնայ: Մեր ջրհորները աւելի կը խորանան, եւ Սուրբ Հոգիին կենդանի ջուրերը մեր մէջ կ'աւելնան:

## **Հաւատարիմ՝ Մինչեւ Վերջ**

Հիմա նայինք «ջրհոր» բառին երկրորդ իմաստին: Զրհորը, ինչպէս նաեւ աղբիւրը եւ շատրուանը, թարմ ջուր կը հայթայթեն: Երբ կը ստանանք մեր կեանքը եւ ուժերը կենդանի ջուրի աղբիւրէն, մենք կը դառնանք աղբիւր մը, որ մարդոց թարմութիւն կը բերէ: Կենդանի ջուր ունեցող խորունկ ջրհորները գիտեն, որ իրենց աղբիւրը անսպառ է: Երբ այսպիսին կը դառնանք, մարդիկ, նայելով մեզի, չեն տեսներ մեզ՝ իբրեւ պղինձէ դրամներ՝ նետուած ծանծաղ ջուրի մէջ: Անոնք կը տեսնեն Աստուծոյ անսահման հաւատարմութիւնը:

«Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ» արտայայտութիւնը նաեւ կը խօսի աւարտին մասին: Աստուածաշունչին մէջ կան բազմաթիւ պատմութիւններ եւ առակներ թէ՛ լաւ, թէ՛ վատ աւարտի մասին: Գրուած է Նոյին մասին, որուն մեծ նաւ շինելու ծրագիրը տարիներ տեւեց: Գրուած է Սամսոնի մասին, որ, թէեւ մեծ սխալ գործեց, աւարտեց ընթացքը՝ տպաւորիչ կերպով ցուցադրելով աստուածային զօրութիւնը:

Գրուած է նաեւ Պետրոսի եւ Պօղոսի մասին, որոնց կեանքին մէջ Քրիստոսը ուրանալը եւ հալածելը ճամբան բացաւ զօրաւոր ծառայութիւններու: Ի տարբերութիւն անոնց, գրուած է մարդու մը մասին, որ սկսաւ կառուցել՝ առանց լաւ հաշուելու իր ծախսերը: Ան լաւ սկսաւ, բայց ծաղրանքի արժանացաւ՝ չաւարտելուն պատճառով (Ղուկաս 14.27-29): Եւ նոյնպէս, գրուած է ծառայի մը մասին, որուն մէկ տաղանդ վստահուեցաւ, եւ ան որոշեց թաղել զայն մինչեւ իր տիրոջ վերադարձը: Մետաղադրամները հողին մէջ չեն աճիր. այնպէս որ, անոր քով մնաց այնքան, ինչքանով որ ան սկսած էր: Քանի որ ան աւարտեց այնքանով, որքանով սկսած էր, ան չար կոչուեցաւ, եւ անոր տեղը որոշուեցաւ այն մարդոց հետ, որոնք դուրսն էին եւ ներս կը նայէին (տես Մատթէոս 25.14-30):

Բոլոր այս պատմութիւնները ցոյց կու տան, որ ամէնէն կարեւորը այն չէ, թէ ինչ արագութեամբ յառաջ կ'երթանք, այլ՝ թէ ինչպէս կ'աւարտենք մեր ընթացքը: Յարատեւող, հաւատարիմ եւ կայուն հնազանդութիւնը միշտ գերադասելի է գործունէութեան եւ խանդավառութեան անփոյթ եւ անկանոն պոռթկումներէն: Եւ եթէ ճամբուն մէջ սայթաքինք եւ նոյնիսկ իյնանք, բայց ոտքի ելլենք եւ շարունակենք երթալ ճիշդ ուղղութեամբ, Աստուած տուն կը հասցնէ մեզ:

Այս կեանքին մէջ մեր ընթացքը լաւ կատարելու համար մենք պէտք է փորենք խորունկ եւ ամուր պատերով ջրհորներ, իսկ անոր համար մենք պէտք է նուիրուած ըլլանք, որ հաւատարմօրէն աւարտենք այն, ինչ որ կը սկսինք: Ուեւ մէկը կրնայ փափաքներու ջրհոր փորել, բայց մենք կ'ուզենք փորել խորունկ ջրհորներ՝ կեանքի հորեր, որոնց պատերը զօրացած են Աստուծոյ Խօսքով եւ նորոգուած են Հոգիին թարմացնող աղբիւրներով: Հոն է, որ կը գտնենք Աստուծոյ մեծ վարձատրութիւնը մեզի համար՝ անզուգական կեանք մը եւ խոստում մը:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Կեանքիդ դ՛ր մարզը Աստուած «կը պեղէ» հիմա:
2. Ինչպէս կը նկարագրես այն կիներ, որ խորունկ ջրհոր է:
3. Կարելի՞ է հոգեւոր անձնաւորութիւն մը ըլլալ՝ առանց հետեւելու Աստուածաշունչին:
4. Ինչը կը լեցնէ քու անձիդ ջրհորը: Ինչը կը պարպէ զայն:
5. Ինչպէս կրնաս աւելի լաւ ձեռով հոգ տանիլ քու ջրհորիդ:



# MessengerX

ձեր «Էփիլեյշըն»-ը՝ ամենօրեայ աշակերտության համար

## Բոլորովին անվճար

Պարզապես ներբեռնեցե՛ք ձեր շարժական սարքին վրայ և օգտագործեցե՛ք: Կամ օգտագործեցե՛ք «ուեբ» տարբերակը հետևեալ հասցեով.



[MessengerX.com](https://messengerx.com)



## 125+ լեզուներ, որոնց թիվը կ'աւելւնայ



Դիտեցե՛ք և ներբեռնեցե՛ք բովանդակությունը աւելի քան 125 լեզուներով:



Բաժնեկցեցե՛ք աղբիւրներ ձեր բարեկամներուն հետ կամ սերտողութեան խումբ մը սկսե՛ք:



Մենք մշտապես նորություններ կ'աւելցնենք պարունակութեան:

## Դիտեցէք: Կարդացէք: Լսեցէք:

Յետագօտեցէք բովանդակութեան ընդարձակ գրադարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, ելեկտրոնային գիրքեր, օտօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, եւ ակելին, զորս կրնաք դիտել, կարդալ եւ լսել:




## Աճեցէք Ամենակարելոր Մարգերուն Մեջ

Յետագօտեցէք այնպիսի սիւթեր, ինչպիսիք են՝ ընտանեկան փոխյարաբերութիւններ, առողջ յարաբերութիւններ, գտնել ձեր կեանքին նպատակը , պոռնկագրութենէ ազատագրութիւն, ինչպէս ձեր հաւատքը կառուցել, Աստուծոյ ձայնը լսել, գործարքի ղեկավարութիւն, եւ ակելին:

## Ձեր Աճին Ճամբորդութիւնը

**MessengerX**-ին նպատակն է ձեզի օգնել, որ ձեր յաջորդ քայլը առնէք ձեր կեանքին մեջ: Ուստի մենք ծրագրած ենք աշակերտական ճամբորդութիւն մը, օգտագործելով հզօր միջոցներ, որպէսզի յարատեւելով ճամբորդութեան աւարտին հասնիք:






## Աւելի շատ հնարաւորութիւններ, գորս պիտի սիրէք

- Պարզ եւ դիւրին բաժնեկցելու միջոցներ, որոնք ձեզի պիտի օգնեն, որ խօսքը տարածէք եւ նոյնիսկ սերտողութեան խումբեր սկսիք:
- «Chromecast» եւ «AirPlay»՝ ձեր նախասիրած սմարթ հեռատեսիլներով դիտելու համար:
- Պահպանեցէք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր սարքերուն վրայ: Պահպանեցէք ձեր նախասիրած նիւթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցէք նիւթերը ձեր սարքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Ուժեղ որոնում եւ գտում՝ գտնելու համար այն, ինչ որ կը փնտռէք:
- Ինքնաբերաբար անցնիլ օտիօ-գիրքի մը, Աստուածաշունչերու եւ նոյնիսկ պաշտամունքի երգերու յաջորդական գլուխներուն՝ ձեր լեզուով:



## MessengerX - Նոյնքան դիւրին, որքան՝ 1-2-3ը



- 1 Ներբեռնեցէք **MessengerX** «Էփիլթէյշըն»-ը «App Store»-էն եւ «Google Play»-էն:
- 2 Մասնակցային հաշիւ ստեղծեցէք եւ ձեր լեզուն ընտրեցէք:
- 3 Փնտռեցէք, կարդացէք, դիտեցէք, լսեցէք, ներբեռնեցէք եւ բաժնեկցեցէք ձեր նախասիրած աղբիւրները:



## Դարձէք աշակերտ եւ աշակերտեցէք

Իբրեւ **MessengerX**-ին մէկ մասը, դուք կ'օգնէք թարգմանուած աղբիւրները տրամադրելու աշխարհի շուրջ գտնուող բոլոր մարդոց:

**Որովհետեւ ամէն մարդ արժանի է գիտնալու:**



**MessengerX.com**



## Դուստր՝ Առանց Մրցակիցների

Բռնակալը կը մեռնի, եւ անոր իշխանութիւնը կը վերջանայ. նահատակը կը մեռնի, եւ անոր իշխանութիւնը կը սկսի:

ՍՕՐԷՆ ՔԻՐՔԸԿԱՐՏ

**Ա**յն կինը, որուն մասին կը խօսիմ, նախատեց եւ դէմ դրամ աշխարհի ամենահզօր եւ այլասերած չար ղեկավարին:

Ան համարձակ եւ անզուգական կերպով ներկայացուց Աւետարանը:

Ենթարկուեցաւ ծեծերու, փորձուեցաւ եւ չարչարուեցաւ բոլոր հնարաւոր ձեւերով, բայց հաւատարիմ մնաց Աւետարանին, իր բարեկամներուն եւ Տիրոջ:

Բանտարկուեցաւ, բայց անոր ազդեցութիւնը անկարելի էր սահամանափակել:

Մինակ էր, բայց երբեք առանձին չէր:

Առաքեալներուն շարքին դասուեցաւ, եւ առաջին եկեղեցիին պատմաբանները կ'ըսեն, թէ անոր ծառայութեան հրաշքներն

ու նշանները գրեթե անգերազանցելի էին:

Թերեւս մտածես, թէ ինչո՞ւ դուն ոչինչ գիտես անոր մասին:

Կը հասկնամ քեզ, քանի որ ես ալ միայն վերջերս ծանօթացայ անոր: Ան մէկն էր եկեղեցւոյ բազմաթիւ մայրերէն, որոնց անունները անհետացած են ժամանակի աւազներուն տակ: Ամբողջ կեանքիս ընթացքին միայն փշրանքներ կը հասնէին ինծի անոր մեծ գործերէն: Ես կ'ուզէի ծանօթանալ անոր: Իմ ունեցած քիչ տեղեկութիւններս չէին գոհացներ զիս. ուստի ուսումնասիրեցի եկեղեցւոյ պատմութենէն նիւթեր, որպէսզի զինք գտնեմ. փնտռտուքի մէջ էի: Աստուածաբաններու կը հեռաձայնէի, առցանց փնտռտուքներ կ'ընէի եւ գիրքեր կը գնէի: Երբ անոր անունը գիտցայ, կրցայ բաւարարաչափ նիւթեր հաւաքել՝ անոր ծանօթանալու համար: Եւ երբ աւելին գիտցայ անոր մասին, մտածեցի, որ անշուշտ, դուն ալ պէտք է ծանօթանաս անոր:

Անոր անունը Ֆոթինա է (կամ՝ Ֆոթինի), որ յունարէնով կը նշանակէ «լուսաւորուած»: Ան այդ անունը ընտրեց, երբ մկրտուեցաւ՝ ընդունելով քրիստոնէական հաւատքը: Ինչպէս բոլորիս կեանքին մէջ, Յիսուս ողողեց անոր կեանքը լոյսի յայտնութեամբ: Ան Քրիստոսի նուիրուած հետեւորդներէն էր եւ այն հաւատացեալներուն շարքին էր, որոնք հաւաքուած էին վերնատան մէջ: Երբ Սուրբ Հոգին զօրութեամբ իջաւ անոնց վրայ, ան հոն էր: Կրակէ լեզուներէն մէկը հանգչեցաւ անոր վրայ. ան Սուրբ Հոգիով լեցուեցաւ եւ սկսաւ ուրիշ լեզուներով խօսիլ: Պենտէկոստէի օրը Ֆոթինան յանձնարարութիւն ստացաւ Աւետարանը մինչեւ երկրին ծայրերը քարոզելու:

Մեր քաջ քոյրը հրաժարեցաւ այն բոլոր բաներէն, որոնք կը ներկայացնէին անոր գիտցած կեանքին սահմաններն ու հանգիստը եւ դէպի հեռաւոր Ափրիկէ ուղղուեցաւ: Ան առանձին չգնաց, իրեն հետ տարաւ գրեթե ամբողջ ընտանիքը: Քրիստոսի հետ իր հանդիպումը այնպիսի ազդեցիկ փոփոխութիւն բերաւ անոր կեանքին մէջ, որ թէ՛

անոր երկու որդիները, թե՛ հինգ քայրերը նոյնպես դարձի եկան: Ֆոթինան, անոր տղան՝ Յովսէփը եւ անոր քայրերը գացին մինչեւ աշխարհի ծայրերը՝ ինչպէս Յիսուս պատուիրեց Առաքեալներուն Գործերը Գիրքին 1.8-ին մէջ:

Ափրիկէի մէջ անոնք հաւատարմօրէն գործեցին՝ տարածելով Քրիստոսի Աւետարանը Կարթագէնի մէջ, եւ աներեւակայելի պտուղ ունեցան: Երբ իմացան, որ Ներոնը՝ խելագար կայսրը, կը ձերբակալէր եւ կը հալածէր քրիստոնէաները իր կայսրութեան մէջ, Ֆոթինան խնդրեց Աստուծմէ, որ իմաստութիւն տար իրեն: Յիսուս յայտնուեցաւ անոր երազի մէջ եւ իրեն թելադրեց, որ Հռոմ երթայ եւ ընդդիմանայ անոր: Ուստի Ներոնէն փախչելու փոխարէն՝ անոնք գացին ուղղակի դէպի փոթորիկին կեդրոնը: Անմիջապէս Ֆոթինան, անոր որդին եւ քայրերը Հռոմ գացող նաւ մը նստան՝ բազմաթիւ կարթագէնցի քրիստոնէաներու հետ:

Անոնց զգուշացուցին, որ եթէ որոշեն բացայայտ կերպով խօսիլ իրենց քրիստոնէական հաւատքին մասին, վնաս պիտի կրէին, եւ զիրենք յորդորեցին գաղտնի կերպով պաշտամունք ընել: Ահա հատուած մը, որուն մէջ անոր որդին՝ Վիքթորը, որ հռոմէական սպա էր, կը խօսէր Սեպասթիան անունով պաշտօնեայի մը հետ:

«Վիքթոր, ես գիտեմ, որ դուն, քու մայրդ եւ եղբայրդ Քրիստոսի հետեւորդներ էք: Որպէս բարեկամ՝ խորհուրդ կու տամ քեզի, որ հնազանդիս կայսրին կամքին: Եթէ մեզի յայտնես քրիստոնէաներու մասին, անոնց ունեցուածքը քեզի կը փոխանցուի: Ես կը գրեմ մօրդ եւ եղբորդ՝ խնդրելով անոնցմէ, որ հրապարակաւ չքարոզեն Քրիստոսի մասին: Թող անոնք ծածուկ պահեն իրենց հաւատքը»: Վիքթորը պատասխանեց. «Ես կ'ուզեմ քրիստոնէութիւնը քարոզող ըլլալ՝ ինչպէս իմ մայրս եւ եղբայրս են»: Սեպասթիանը ըսաւ. «Օ՛, Վիքթոր, բոլորս գիտենք, թէ ինչ պատուհասներ կը սպասեն քեզի, քու մօրդ եւ եղբորդ»:<sup>1</sup>

Քանի՞ հոգի բացայայտ կերպով կը դաւանի իր հաւատքը, եթէ գիտնայ, որ իր կեանքին տառապանքներ պիտի հասնին այդ պատճառով: Յետագային անոր որդին՝ Վիքթորը միացաւ իր մօրը, եղբօրը եւ մօրաքոյրներուն: Ահա նոյն պատմական աղբիւրէն հատուած մը եւս, որ կը պատմէ, թէ ինչպէս Ֆոթինան առաջին անգամ հանդիպեցաւ Ներոնին:

Ֆոթինիին (Ֆոթինային) ժամանումը եւ գործունէութիւնը հետաքրքրութիւն յառաջացուցին մայրաքաղաքին մէջ: «Ո՛վ է այս կինը», - կը հարցնէին անոնք: «Ան եկած է հոս հետեւորդներու բազմութեան մը հետ եւ մեծ համարձակութեամբ կը քարոզէ Քրիստոսի մասին»: Զինուորներուն հրամայեցին, որ զինք կայսրին քով տանին, բայց Ֆոթինին անոնցմէ առաջ անցաւ: Նախքան հասնին զինք ձերբակալելու, Ֆոթինին՝ իր որդիին՝ Յովսէփին եւ իր քրիստոնեայ ընկերներուն հետ գնաց Ներոնին քով: Երբ կայսրը տեսաւ զանոնք, հարցուց անոնց գալուստին պատճառը: Ֆոթինին պատասխանեց. «Մենք եկած ենք՝ քեզի սորվեցնելու, որ հաւատաս Քրիստոսի»: Հռոմի կայսրութեան կիսախելագար իշխանը չվախցուց զինք: Ան կ'ուզէր դարձի՛ բերել այդ մարդը:<sup>2</sup>

Բնականաբար, Ներոնը չընդունեց անոր խօսքը: Ան պատուիրեց երկաթէ ձողերով զարնել անոնց ձեռքերուն, որոնք կը պնդէին, որ Յիսուսի ձեռքերուն մէջ կը գտնուին: Պահակները Ֆոթինան եւ անոր հետ եղողները տարին պատժելու՝ իրենց յանդգնութեան համար: Յաջորդ երեք ժամուան ընթացքին անոնց ձեռքերուն դաժանաբար զարկին երկաթէ ձողերով, բայց քրիստոնեաները ոչ մէկ ցաւ կը զգային եւ սաղմոսներ կ'երգէին, մինչ զանոնք չարչարողները ուժասպառ կ'ըլլային: Քրիստոսի հետեւորդներէն ոչ ոքի ձեռքերուն մէջ նոյնիսկ հարուածի հետք մը կար:

Երբ Ներոնը իմացաւ, որ հարուածները արդիւնք չէին տուած, ան բանտարկեց զանոնք եւ ծրագիր մը մշակեց, որ

համոզել Ֆոթինան եւ անոր քոյրերը, որ ուրանան իրենց հաւատքը: Այս անգամ ան որոշեց ազնուութեամբ շահիլ զանոնք: Ան հրամայեց, որ վեց գահ դրուի մեծ խնճոյքի սրահի մը մէջ: Այդ վեց գահերուն առջեւ ան հրամայեց քոյրերուն ցուցադրել ամէն բան Հռոմի հարստութենէն: Ան ոչինչ չխնայեց, որ պատրաստէր հաւաքածոյ մը, որ գրաւիչ պիտի ըլլար կնոջ սիրտին համար: Ոսկիի եւ արծաթի հետ միասին՝ կիներէն ամէն մէկուն առջեւ դրուած էին թանկարժէք զարդեր եւ փառաւոր հանդերձներ: Այդ հարստութիւնները՝ հեշտասէր եւ գեղեցիկ կեանքի հետ միասին իրենցը պիտի ըլլային, եթէ միայն անոնք ուրանային իրենց քրիստոնէական հաւատքը եւ զոհ մատուցանէին հռոմէական աստուածներուն: Քոյրերը համոզելու համար ան պատուիրեց իր աղջկան՝ Տոմինային, որ իրեն փոխարէն անոնց հետ խօսի:

Երբ Տոմինան սրահ մտաւ, ան ջերմօրէն ողջունեց Ֆոթինան, եւ իր ողջոյնին ընթացքին յիշեց Քրիստոսը: Ֆոթինան կարծեց, թէ ան հաւատացեալ է, եւ անոր փաթթուելէ ետք սկսաւ անոր հետ խօսիլ իր Քրիստոսին փոխակերպող սիրոյն եւ սքանչելիքներուն մասին՝ որպէս իր հաւատակից քոյրը: Տոմինան այն աստիճան տպաւորուեցաւ, որ Ֆոթինային դէմ դնելու փոխարէն՝ դարձի եկաւ եւ ընդունեց քրիստոնէութիւնը: Բայց ան առանձին չէր. անոր աղախիները նոյնպէս դարձի եկան՝ մտիկ ընելով քոյրերուն, որոնք համարձակութեամբ կը քարոզէին Աւետարանը: Ֆոթինան թելադրեց Տոմինային եւ անոր աղախիներուն, որ դուրս հանեն այդ սրահին ամբողջ հարստութիւնը եւ բաշխեն այն աղքատներուն, զորս կը գտնէին Հռոմի փողոցներուն մէջ: Տոմինան մկրտուեցաւ եւ նոր անուն ստացաւ:

Ներոնը կատղեցաւ: Ան հրամայեց այրել Ֆոթինան, անոր քոյրերն ու որդիները: Ան մեծ հնոց մը կառուցեց, բայց երբ անոնք կրակին մէջ նետուեցան, չայրեցան: Անկէ ետք Ներոնը հրամայեց թունաւորել զանոնք: Երբ թունաւորողը եկաւ,

Ֆոթինան առաջինն էր, որ յօժարութեամբ ընդունեց թոյնը, բայց անիկա ազդեցութիւն չունեցաւ ո՛չ անոր վրայ, ո՛չ միւս քրիստոնեաներուն: Այն ատեն թունաւորողը, զոր Ներոնը դրկած էր, ընդունեց Քրիստոսը: Անոնք բանտարկուած մնացին իրենց հաւատքին համար: Յաջորդ երեք տարիներուն ընթացքին անոնք ծեծուեցան եւ ենթարկուեցան ամէն տեսակի տանջանքներու, զորս մտային եւ հոգեկան խանգարում ունեցող կայսրը կրնար յօրինել:

Բայց որքան Ներոնը ճնշում կը բանեցնէր անոնց վրայ, այնքան անոնց համբաւը կ'աւելնար: Անոնց հաւատքին եւ զօրութեան լուրը տարածուեցաւ կայսրութեան ամբողջ մայրաքաղաքին մէջ, եւ անոնց բանտարկութեան ընթացքին այդ բանտը պաշտամունքի տուն դարձաւ: Հռոմի քաղաքացիները կանոնաւոր կերպով կու գային հաւատացեալներուն բանտի խուցերը՝ աղօթք ստանալու եւ Աւետարանը լսելու համար: Երեք տարի շարունակ Քրիստոսի մասին պատգամը Հռոմի մէջ տարածուեցաւ բանտէն, եւ շատերը հաւատացին:

Ներոնը կանչեց իր նախկին ծառաներէն մէկը, զոր բանտարկէր էր, եւ ան պատմեց այն բոլոր բաները, որոնք կը կատարուէին բանտին մէջ: Ներոնը հրամայեց անմիջապէս գլխատել բոլոր քրիստոնեաները, զորս բանտարկած էր: Միակ բացառութիւնը Ֆոթինանն էր: Ան կը յուսար, որ կը կտտրէ անոր վճռակամութիւնը տրտմութեան եւ մեկուսացման միջոցով: Ուստի ան հրամայեց բանտէն հանել Ֆոթինանն եւ զայն իջեցնել խորունկ, մութ եւ չոր փոսի մը մէջ: Ըստ որոշ աղբիւրներու՝ անկէ առաջ զայն դաժանաբար մտրակեցին: Ան շաբաթներ շարունակ Ֆոթինանն ձգեց տեղ մը, որ կը նմանէր բաց գերեզմանի: Ան բոլորովին առանձին էր: Ֆոթինային կեանքին այդ մութ օրերուն ան կու լար, բայց՝ ոչ իր սիրելիները կորսնցնելուն համար: Ան գիտէր, որ անոնք ազատած էին ամէն տեսակի երկրաւոր բանտարկութենէ եւ արդէն երկնային ընդունելութեան արժանացած էին: Ան տխուր էր, որ չէր

ստացած մարտիրոսանալու առանձնաշնորհումը իր որդիներուն եւ քոյրերուն հետ եւ զրկուած էր մարտիրոսի պսակէն: Բոլոր աղբիւրներէն, զորս ուսումնասիրած եմ, այնպէս կը թուի, թէ այդ շրջանը ամենադժուարն էր իրեն համար:

Անոր մասին բոլոր պատմական աղբիւրները, զորս կարդացած եմ, կը գրեն այս ժամանակաշրջանին մասին փոսին մէջ: Պատմութիւններէն մէկուն մէջ գրուած է, որ ան մահացաւ այդ չոր փոսին մէջ, բայց ոչ թէ յուսահատութենէն, այլ՝ իր անձնական որոշումով: Ստեփանոսին պէս, ան երազի մէջ տեսաւ իր Փրկիչը եւ Անոր յանձնեց իր հոգին: Ուրիշ աղբիւրներ կ'ըսեն, որ շատ երկար ժամանակ ետք զինք դուրս բերին այդ փոսէն, եւ երազէ մը ետք, ուր Յիսուս երեցաւ անոր, ան մեռաւ բանտին մէջ: Ամէն պարագայի, այդ կնոջ կեանքը՝ կենդանի ջուրի խորունկ ջրիոր մըն էր, որ սնուցանեց եւ թարմութիւն բերաւ բազմաթիւ մարդոց:

## Ներկայ Օրերու Մարտիրոսները

Տոթինան չունեցաւ համակիրներ եւ երկրպագուներ. անոր կեանքին պտուղը վկաներն ու մարտիրոսներն էին: Այդ կինը բան մը ուներ, որ ես ալ կ'ուզեմ: Ան անսասան վճռակամութիւն ուներ, որ կրնայ մեզի պէտք ըլլալ գալիք օրերուն: Երբ աշխարհը բարեհաճութեամբ կը վարուի եկեղեցիին հետ, եկեղեցի յաճախողներուն թիւը կ'աւելնայ: Բայց նուիրուած աշակերտները կը ծնին նեղութիւններու ժամանակ: Հոչակաւոր կաթողիկէ պատմաբան Քրիսթօֆըր Հենրի Տոսընը կը գրէ.

Եկեղեցին կ'աճէր դահիճներու մտրակներուն եւ կացիններուն շուքին տակ, եւ բոլոր քրիստոնեաները կ'ապրէին ֆիզիքական տանջանքներու եւ մահուան սպառնալիքներուն տակ: Մարտիրոսութիւնը առաջին քրիստոնեաներուն ամենացայտուն իրայատկութիւնն էր:



Այնպես չէր, որ մարտիրոսութիւնը միայն վախ կը ներշնչէր. անիկա նաեւ իտէալ՝ կատարելութեան օրինակ էր եւ յոյս էր: Քանի որ մարտիրոսը կատարեալ քրիստոնեան էր, ան յաղթող եւ հերոս էր նոր ընկերութեան մէջ. ան յաղթող եւ հերոս էր նոր ընկերութեան հինին հետ ունեցած պայքարին մէջ: Նոյնիսկ այն քրիստոնեաները՝ նահանջողները, իրենց հաւատքը ուրացողները, որոնք չէին դիմացած փորձութեան պահին, կը նայէին մարտիրոսներուն՝ որպէս իրենց փրկիչները եւ պաշտպանները:<sup>3</sup>

Մենք կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ, ուր աննախադէպ այլասերութիւն, չարութիւն եւ բռնութիւն կայ: Ամէն անգամ, որ կը մտածեմ, որ աւելի վատ չի կրնար ըլլալ ... կ'ըլլայ: Քրիստոնեաները տակաւին կը նահատակուին այսօր, եւ այս աշխարհը անոր կը պատասխանէ ոչ թէ վրդովմով, այլ՝ անտարբերութեամբ: Սիրտս կը կոտորուի, բայց ատիկա չի զարմացներ զիս: Վերջերս Ամերիկեան հողին վրայ խումբ մը քրիստոնեայ ուսանողներ նահատակուեցան իրենց հաւատքին համար: Չինուած մարդասպանը կը կրակէր Քրիստոսը դաւանողներուն գլուխներուն եւ չղաւանդողներուն ոտքերուն: Մեր լրատուամիջոցները այդ արարքը վերածեցին զէնքի վերահսկման հարցի, փոխանակ զայն որակէին որպէս ոճիր՝ կրօնական ատելութիւն:

Եթէ մենք ճիշդ ձեւով կը հասկնանք Աստուածաշունչը, ոչ մէկ առաջնորդ այս աշխարհի մէջ կրնայ դարման եւ փրկութիւն բերել: Բայց ատիկա չի նշանակեր, որ խաւարին դիմաց մենք պէտք է լուռ մնանք. Ֆոթինին նոյնպէս չէր լռեր: Մենք պէտք է ըլլանք Ա.Յովհաննէսի 4.4-ին կենդանի մարմնացումը.

Դուք Աստուծմէ էք, որդեակներ, եւ յաղթեցիք անոնց. որովհետեւ ան որ ձեր մէջ է՝ աւելի մեծ է, քան ան՝ որ աշխարհի մէջ է:

Ուրիշ երկիրներու մէջ քրիստոնեաները կը գլխատուին, եւ այդ վայրագութիւններուն տեսանիւթերը կը ցուցադրուին՝ որպէս համաշխարհային զգուշացում անոնց, որոնք կը համարձակին իրենք զիրենք խաչին մարդիկը կոչել: Այդ անուանումը տեսնելով՝ կը մտածեմ, որ հաւանաբար այդ ոճրագործները կը յիշեն, թէ ո՛վ ենք մենք, իսկ մենք արդէն մոռցած ենք:

Վերջերս իսլամ ծայրայեղականներ ներխուժած են քրիստոնէական հաւաքոյթի մը մէջ, որ տեղի կ'ունենար Քենիայի համալսարաններէն մէկուն մէջ, եւ սպաննած են առաւօտեան աղօթքի համար հաւաքուածները: Անկէ ետք անոնք բոլոր ուսանողները դուրս հանած են իրենց հանրակացարաններուն սենեակներէն եւ մահուան սպառնալիքի տակ՝ անոնց հարցուցած են իրենց հաւատքին մասին: Դարձեալ՝ անոնք որոնք քաջութիւնը ունեցած են ըսելու, որ քրիստոնեայ են, սպաննուած են: Աւելի քան հարիւր յիսուն հոգի սպաննուած է եւ շատեր վիրաւորուած են: Այդ յարձակումը իրականացնող կազմակերպութիւնը իր ընկերային ցանցերուն վրայ պարծանքով ըսած է, թէ ատիկա միայն սկիզբն է, եւ շարունակած է՝ վստահեցնելով խաչին մարդոց, որ տակաւին աւելին կայ<sup>4</sup>:

Ժամանակն է, որ պատրաստուինք Քրիստոսի համար չարչարուելու: Աւելի լաւ է պատրաստենք մեր սիրտերը պատասխան տալու համար եւ պատրաստ ըլլանք չարչարուելու, քան թէ յանկարծակիի գանք եւ ուրանանք զի՛նք: Մենք պէտք է ունենանք նոյն միտքը, որ ունէին աշակերտները Առաքեալներուն Գործերը 5.41,42-ին մէջ.

Իրենք ալ մեկնեցան ատեանին առջեւէն, ուրախանալով, որ արժանացան Տիրոջ անունին համար անպատուուելու: Ու ամէն օր տաճարը եւ տուներուն մէջ չէին դադրեր սորվեցնելէ ու Յիսուս Քրիստոսը աւետելէ (շեշտադրումը՝ մեր կողմէ):

Երբեք հանդիպած ես մարդու մը, որ ծեծ կերած է Քրիստոսին հաւատալուն համար: Երբեք խօսամ՝ ես մէկու մը հետ, որ ցնծացած է, որ արժանի եղած է անարգուելու այդ անունին համար: Ես այդպիսի մարդոց հանդիպած եմ: Այդ սուրբերուն կեանքը կը բնութագրուի փայլուն մաքրութեամբ՝ ոչ թէ որովհետեւ անոնք ծեծ կերած են, այլ քանի որ Յիսուսի հետ հանդիպում ունեցած են անոնք՝ որպէս Անոր չարչարանքներուն մասնակիցները: Անոնք պսակուած են այնպիսի շնորհքով մը, որ ես տակաւին պէտք է ճանչնամ: Մարդիկ, որոնց հետ հանդիպած եմ, կ'աշխատին Աստուծոյ համար այնպիսի դաշտերու մէջ, ուր քրիստոնեայ ըլլալը վտանգաւոր է իրենց կեանքին համար: Անոնց կեանքը վտանգուած է գրեթէ ամէն օր: Խօսքը նաեւ իմ թանկագին եղբայրներուս եւ քոյրերուս մասին է, որոնք կը թարգմանեն մեր գիրքերը: Ճշմարտութիւնը այն է, որ ինչ որ ես կը գրեմ իմ ապահովութեանս մէջ, անոնք կը թարգմանեն վտանգի մէջ: Շատ յաճախ ես նոյնիսկ ինքզինքս արժանի չեմ սեպեր անոնց կողքին ծառայելու: Անոնց կեանքերը ինծի կը յիշեցնեն Պօղոսի խօսքերը Ա.Կորնթացիներուն նամակին մէջ.

Եւ ինչո՞ւ մենք ալ վտանգի մէջ ենք ամէն ժամ: Ես ամէն օր կը մեռնիմ. վկայ կը բերեմ այն պարծանքը՝ որ ունիմ ձեր վրայ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տիրոջմով (15.30-31):

## **Արեւմուտքին Տկարութիւնը**

Կրնամ անկեղծ ըլլալ: Ես կը դողամ երբ կը մտածեմ Արեւմուտքի եկեղեցիին մասին: Դժբախտաբար, մեր օրերուն շատ յաճախ կը հանդիպինք այնպիսի հաւատացեալներու, որոնք կ'անարգեն Անոր անունը: Երբեմն կը զգուիմ իմ իսկ անտարբերութենէս եւ եսասիրութենէս:

Վերջերս Ճոնը եւ ես ընթրիքի սեղանին շուրջ կը գրուցէինք քանի մը հովիւներու հետ: Անոնք կը պատմէին, որ իրենց եկեղեցական համայնքներուն մէջ՝ միշտ կը զգուշացնեն այն մարդիկը, որոնք կ'ըսեն, թէ Յիսուս Քրիստոսը Տէր կը դաւանին, սեռային անբարոյութեան ծուղակներուն դէմ: Ի պատասխան՝ անոնք կը ստանան դատարկ նայուածքներ եւ տկար արդարացումներ: Միասին ապրող զոյգերը կը բացատրեն. «Մենք որոշած ենք օր մը ամուսնանալ. ինչհիւ չենք կրնար միասին ապրիլ եւ սեռային յարաբերութիւն ունենալ հիմա»:

Ուրիշ ծառայող մը իր տրտմութիւնը յայտնեց ըսելով, որ նշանաւոր քրիստոնեայ ղեկավար մը կը պատրաստուի ամուսնալուծուիլ իր կնոջմէն, թէեւ անոր արարքը ոչ մէկ սուրբ գրային հիմ չունի: Ան բացատրեց, թէ այդ մարդը կը հասկնար, որ եթէ ամուսնալուծուէր, հաւանաբար, մօտաւորապէս մէկ տարի չէր կրնար քարոզել, բայց անկէ ետք ան կրկին կը վերադառնար: Դժբախտաբար, այդ մարդը ճիշդ էր: Մարդոցմէ վախնալը այլեւս մեզ մեղքէն ետ չի պահեր. միայն Տիրոջ վախը կրնայ մեզ հեռացնել չարէն:

Եկեղեցւոյ ծառայութեան մը ընթացքին յուզիչ պահէ մը ետք երբ Սուրբ Հոգին հարիւրաւոր կիներու յանձնարարեց, որ վերցնեն իրենց խաչը եւ հետեւին Յիսուսի, եկեղեցւոյ ղեկավարը ամպիոնին քով բարձրացաւ եւ կիներուն ըսաւ, որ որեւէ ճնշում զգալու պէտք չունին. Աստուած չ'ուզեր, որ անոնք բան մը ընեն: Միայն անոնց ներկայ ըլլալը արդէն բաւարար է: Իրաւ:

Ես շատ շնորհակալ եմ, որ Յիսուս կանգ չառաւ Աստուծոյ Որդին ըլլալով, այլ յօժարութեամբ Ինքզինք մերկացուց Իր աստուածային բնութենէն եւ առանձնաշնորհումներէն, որպէսզի կատարէր Աստուծոյ ծառայի գործը մեր փոխարէն: Կը նայիմ եկեղեցիին եւ կը տեսնեմ, որ եկեղեցին այքան խորապէս ընկղմած եւ մտած է աշխարհին մէջ, որ աստիկա կը վախցնէ զիս:

## Անցեալ Ունեցող Կինը

Բայց Ֆոթինային կեանքը այդպէս չսկսաւ: Կար ժամանակ, երբ ինքն ալ խորապէս ընկղմած էր մեղքով լեցուն կեանքի մը մէջ, եւ զինք ոչնչութիւն կը սեպէին, աւելին, քան խայտառակուած վտարանդի մը: Ան անցեալ ունեցող կին մըն էր, որ ենթակայ էր իր ժամանակուան օրէնքներուն եւ ոչ մէկ յոյս ունէր ապագային համար:

Աստուածաշունչը որոշ տեղեկութիւններ կը յայտնէ մեզի այդ կնոջ անցեալին մասին: Երբ մենք կը հանդիպինք անոր առաջին անգամ, ան անանուն, ամուսնալուծուած եւ իր տունէն հեռացուած կին մըն էր: Ան հարցեր ունէր շատ մարզերու մէջ, ուստի ոչ ոք կրնար պատկերացնել, որ ան ծառայող կը դառնար: Ասիկա հասկնալով՝ առաջին անգամ ան Աւետարանին նիւթին անդրադարձաւ հարցումներու եւ ակնարկներու ձեւով: Թերեւս ինչպէս մեր ընկերուհին, դուն ալ զգացած ես մարդոց քննադատութիւնը քու վրայ այն աստիճան, որ խօսքերդ հարցումներ եւ ակնարկներ մնացած են:

Ներէ՛ անոնց:

Մարդիկ, որոնք քեզ քու անցեալիդ կը կապեն, դեռ յայտնութիւն պէտք է ստանան Աստուծոյ ողորմութեան եւ վերստին ծնունդին զօրութեան մասին:

Թերեւս դուն քու անձդ կը քննես՝ դուն քեզի հարցումներ հարցնելով: Իմ անցեալս պատճառ եղած է, որ շատ հարցումներ ունենամ: Բայց իմ կեանքիս ամենամութ եւ ամենաաղտոտ մարզերն էին, որ յետագային փրկագինով փրկուեցան եւ դարձան իմ ամենախորունկ ջրհորներս: Թէեւ ճիշդ է, որ նորեկներուն պէտք չէ շուտով ծառայութեան դիրք վստահիլ, բայց անհրաժեշտ է քաջալերել բոլոր քրիստոնեաները, որ վկայեն Աստուծոյ փրկարար զօրութեան մասին: Բայց ատով հանդերձ, ոչ մէկ պարագայի

արտօնուած չէ չարաշահել Յիսուսի թանկագին շնորհքը, կամ օգտագործել զայն որպէս արդարացում՝ կրկին մեղանչելու համար (տես Հռոմայեցիներուն 6.1,2): Փոխարէնը՝ մենք պէտք է թոյլ տանք, որ Անոր շնորհքը փոխէ մեր կեանքը, աւելցնէ մեր արդարութիւնը եւ մեզի նոր անուն տայ:

Նախքան «Լուսաւորուած» անունը ընտրելը, Ֆոթինան յայտնի էր միայն իր ազգութեամբ: Մենք անոր հանդիպած ենք, երբ ան առանձին կը խօսէր Յիսուսի հետ: Մեր ընկերուհին սամարացի կինն է: Որքան զարմանալի է, որ այն կինը, որ անցեալին հինգ ամուսին ունեցած էր, օր մը պիտի գործէր իր հինգ քոյրերուն հետ: Կը սիրեմ ասիկա, որովհետեւ հինգ թիւը Աստուածաշունչին մէջ կը խորհրդանշէ շնորհքը: Եւ այս կինը շնորհքի վրայ շնորհք ստացաւ:

Ես միշտ սիրած եմ այս կինը: Տարիներ շարունակ ես մեծ կարողութիւն ունեցող կին համարած եմ զայն: Ան խորունկ ջրհոր մըն էր, որ կ'ապրէր մակերեսային կեանք մը: Անոր կրած դժուարութիւնները եւ որոշումներուն հետեւանքները խորունկ, մութ եւ չոր փոս մը փորած էին անոր ներսիդին: Անոր անձին թշնամին որոշած էր, որ անոր ներսիդին միշտ կոտրուած պիտի ըլլար, որ այդ փոսը պիտի մեկուսացնէր զինք եւ հոն պիտի թաղուէին անոր երազները:

Երբ կը կարդամ Յիսուսի եւ այս կնոջ խօսակցութիւնը Յովհաննէսի 4-րդ գլուխին մէջ, միշտ ինքզինքս կը պատկերացնեմ այդ պատմութեան մէջ: Կը կարծեմ, որ աշակերտները կը կարծէին, որ յոգնած Յիսուսը ապահով կ'ըլլար, եթէ առանձին մնար ջրհորին քով: Դեռ ժամանակը չէր, որ հովիւները իրենց հօտերը բերէին՝ ջուր խմցնելու համար, իսկ այդ շրջանի կիները արդէն եկած էին եւ այդ ջրհորէն ջուր քաշած էին իրենց ընտանիքներուն համար: Կը սիրեմ ինչպէս Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակը կը շարադրէ անոնց գրոյցին սկիզբը.

Իր երկար ճամբորդութենէն յոգնած՝ Ան նստեցաւ Յակոբին ջրհորին եզերքը: Ան Իր աշակերտները գիւղը կեց՝ կերակուր գնելու համար, որովհետեւ արդէն կէսօրէ ետք էր: Շուտով սամարացի կին մը եկաւ՝ ջուր քաշելու համար: Յիսուս անոր ըսաւ. «Ինձի ջրւր տուր, որ խմեմ»: (Յովհաննէս 4.6-8, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն)

Յիսուս յոգնած էր թէ՛ երկար քայլէն, թէ՛ Փարիսեցիներէն: Ես կը տեսնեմ զինք՝ նստած Յակոբին հինաւուրց ջրհորին եզերքը: Միջին Արեւելքի անողորմ կէսօրէ ետքի արեւը կ'այրէր զինք, բայց Ան կը զգար ջրհորէն բարձրացող զով օդը: Յիսուս կը նայէր այդ խորունկ ջրհորին մէջ եւ կը մտածէր անոր պատմութեան մասին՝ վերյիշելով այդ օրուան իրադարձութիւնները: Իրենց աւետարանչական հաւաքոյթները Յուդայի մէջ կտրուկ կերպով ընդհատուած էին, եւ իրենք երկար եւ փոշոտ ճամբորդութիւն մը ըրած էին: Ան դադրեցուցած էր մարդիկը մկրտելը, երբ իմացած էր, որ կրօնական առաջնորդները ատիկա կը ներկայացնէին որպէս մրցակցութիւն՝ Իր եւ Յովհաննէսին աշակերտներուն միջեւ (Յովհաննէս 1):

Ինչո՞ւ անոնք չէին հասկնար, թէ իրականութեան մէջ ինչ կը կատարուէր: Յիսուս եւ Յովհաննէս կը համագործակցէին: Այո՛, բազմութիւններ կու գային: Մարդիկ շատ քաղցած էին տարիներ տետող չորութեան պատճառով: Հիմա մարգարէական ծառայութիւնը եւ փրկութեան խոստումը կը պատրաստէին մարդիկը: Անոնց կեանքերը կը վերականգնուէին ապաշխարութեան եւ մկրտութեան հոսող ջուրերով:

Այդ ամէնը շատ սուրբ եւ յուսադրիչ էր, իսկ կրօնական առաջնորդները կը փորձէին այնպէս ներկայացնել տեղի ունեցածը, որ կարծես ատիկա կրկես մը ըլլար: Ահա թէ ինչու Ան հեռացաւ Յորդանանի ջուրերէն եւ եկաւ այդ անջրդի վայրը:

Ան պահ մը փակեց իր աչքերը փոշիէն եւ կիզիչ արեւէն: Ան

պիտի հանգստանար այդ հինաուրց ջրհորին քով՝ սպասելով իր աշակերտներուն վերադարձը: Ան խոր հառաչանք մը արձակեց: Յանկարծ Անոր սիրտին մէջ սպասումի զգացում մը արթնցաւ, եւ զգաց Սուրբ Հոգիին փսփուքը. «Ես նպատակ մը ունիմ այս անջրդի սամարական դաշտին մէջ»: Յիսուս լսեց մէկ բառ՝ հուլնձք: Ան աչքերը բացաւ եւ տեսաւ Սամարիայի մինակ աղջիկը, որ կու գար ջուր քաշելու:

Ան մեծ անօթ մը կը կրէր՝ որ կը նմանէր այն անօթներուն, որոնցմով կիները ջուր կը քաշէին արեւածագին: Անոր անօթը իր սիրտին պէս պարապ էր: Այդ դուստրը այնքան խորունկ անկում մը ապրած էր, որ կը խուսափէր նոյնիսկ կիներուն ընկերակցութենէն: Աստուածաբանները կ'ըսեն, թէ ան ջրհոր կ'երթար օրուան ամենատաք ժամուն, երբ մարդոց հանդիպիլը գրեթէ անհաւանական էր:

Ան կը հետեւէր այդ կնոջ: Նկատեց, որ զինք տեսնելով՝ այդ կինը շուտով հեռացուց իր նայուածքը: Յիսուսի հագուստէն կ'երեւէր, որ Ան հրեայ էր, իսկ հրեաները չէին հաղորդակցեր սամարացիներուն հետ. անոնք կ'անարգէին զանոնք: Այդ կինը առանց անոր ալ շատ հարցեր ունէր եւ նոր հարցեր չէր ուզէր ունենալ:

Ան զգուշանալով մօտեցաւ ջրհորին հակառակ կողմը. իջեցուց իր անօթը՝ պատրաստուելով ջուր քաշելու: Յիսուս կանչեց զինք: Յանկարծակիի եկած՝ կինը բարձրացուց գլուխը եւ դադրեցաւ ջուր քաշելէ: Անոր ձայնին մէջ բան մը կար, որ գրաւեց անոր ուշադրութիւնը: Անոր ջուր խնդրելը ատիկ կը նմանէր հրաւերի, քան պահանջքի: Ան անվստահ հակաճառեց.

Ինչո՞ւ հրեայ մարդը ջուր պիտի խնդրէ սամարացի կնոջմէն:  
Հրեաները նոյնիսկ չեն խմեր սամարացիին գործածած գաւաթէն: (Յովհաննէս 4.9, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն)

Երեւակայէ որքան խոր էր այդ նախապաշարումը, որ



Նոյն ջուրի գաւաթը գործածելը քեզ անմաքուր կը դարձնէ: Ան ոչ միայն սամարացի էր, այլեւ կին: Բայց Յիսուս անոր գաւաթէն խմելու չէր վախնար: Ան պատրաստ էր խմելու այդ կնոջ հասնելիք բարկութեան բաժակը՝ անոր փոխարէն: Բացի ատկէ՝ Յիսուս չէր ուզեր օգտագործել զինք՝ ինչպէս միւս տղամարդիկը, զորս այդ կինը կը ճանչնար: Ան կ'ուզէր Ինքզինք յայտնել անոր: Թերեւս Ան կ'ուզէր մսխթարուիլ այդ գրոյցով: Թերեւս Ան յոգնած էր այն բոլոր սուտերէն, զորս ամբարտաւան կրօնական առաջնորդները կը խօսէին Իր մասին: Թերեւս, ինչպէս մեզմէ շատերը, Ան նոյնպէս կը մսխթարուէր՝ Իր սիրտը անձանօթի մը բանալով:

Յիսուս պատասխանեց. «Եթէ միայն *գիտնայիր, թէ ո՛վ եմ ես եւ այն պարգեւը*, զոր *Աստուած կ'ուզէ տալ քեզի, դո՛ն պիտի խնդրէիր ինձմէ, որ խմէիր, եւ ես կենդանի ջուր պիտի տայի քեզի»: (Յհ 4.10, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Կինը զարմացաւ: Ո՛վ էր այդ մարդը, որ կը խօսէր Աստուծոյ պարգեւին մասին: Ան ջրհորին միւս կողմէն կը դառնայ եւ Յիսուսի քով կու գայ, որ տեսնէ, թէ Ան ի՞նչ ունի, որ այդպիսի համարձակ առաջարկ մը կ'ընէր: Թերեւս Անոր կուժը Իր ոտքերուն տակ դրուած էր: Ան ոչինչ գտաւ, որ կը հաստատէր այդ մարդուն պնդումը: Արդե՛ծք Ան դատարկ խոստում մը տուաւ՝ ինչպէս բոլոր տղամարդիկը, զորս ինք ճանչցած էր: Հետաքրքրութենէ մղուած՝ կինը մտածեց, թէ արդեօք Ան կրնա՞ր հանել այդ կենդանի ջուրը:

Բայց տէր, դուն նոյնիսկ դոյլ չունիս, եւ այս հորը *շար խորունկ է*. ուրեմն ուրկէ՞ պիտի ունենաս այդ *«կենարար ջուրը»*: (Յհ 4.11, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ան կը մտածէր, որ այդպիսի թարմութիւն բերող ջուրը պէտք է դուրս բերուէր ջրհորին խորերէն: Արդեօք այդ հրեան կը հայիոյ՞ր Յակոբին ջրհորին: Այդ ջրհորը հարուստ պատմութիւն ունէր եւ անլի խորունկ էր, քան այդ շրջանի ջրհորներուն մեծամասնութիւնը: Կինը շարունակեց.

Դուն իսկապէս կը կարծես, թէ անլի մեծ ես, քան մեր նախահայրը՝ Յակոբ, որ տուաւ մեզի այս ջրհորը, ու ասկէ խմեցին ինք, իր որդիները եւ իր անասունները: (Յի 4.12, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն)

Հետաքրքրական է, որ այն ջրհորը, որուն մասին կը խօսէին անոնք, Յակոբինն էր: «Յակոբ» անունը կը նշանակէ՝ «Ան, որ տեղէն կը հեռացնէ, կը խաբէ կամ կրունկը կը բռնէ»: Երբ Աստուած մարգարէացաւ, որ կնոջ սերունդին եւ օձին սերունդին միջեւ թշնամութիւն պիտի ըլլայ, Ան ըսաւ, որ օձը պիտի խայթէր կնոջ սերունդին կրունկը: Յետագային Աստուած փոխեց Յակոբին անունը *Իսրայէլի*, որ կը նշանակէ «Աստուծոյ իշխան»: Որքան յատկանշական է, որ այդ կինը, որ բազմաթիւ անգամներ խաբուած էր՝ հաւատալով, որ տղամարդիկ կը յագեցնեն իր ներսիդին գտնուող ծարաւը, Յակոբին ջրհորին քով կը գրուցէր Խաղաղութեան Իշխանին հետ: Թէեւ ան կը սխալէր, բայց Յիսուս հաստատ գիտէր, թէ ինչ տեղի կ'ունենար:

Վերջաւորութեան, այդ խօսակցութիւնը անոր յուսահատութեան հասնող ծարաւին մասին էր, ոչ թէ՛ այդ ջրհորին: Յիսուս ըրաւ այն, ինչ որ Ինք ամենալաւ ձեռով կ'ընէ. Ան անտեսեց այդ կնոջ հարցումները եւ խօսեցաւ անոր ամենախոր փափաքներուն մասին:

*Ո՛վ որ խմէ այս ջուրէն՝ դարձեալ պիտի ծարաւնայ, բայց ո՛վ որ խմէ այն ջուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաիտեան*

պիտի չծարանայ: Հապա այն ջուրը՝ որ ես պիտի փամ անոր, պիտի ըլլայ անոր մէջ ջուրի աղբիւր մը՝ որ կը բխի յաիտենական կեանքի համար: (Յովհաննէս 4.13-14, շեշտադրումը՝ մեր կողմէ)

«Ո՛վ որ» ըսելով՝ Յիսուս նկատի ունի անոնք, որոնք կը փափաքին անելին, քան ինչ որ այս աշխարհը կրնայ տալ: Անով Ան կը միացնէ թէ՛ հրեաները, թէ՛ սամարացիները, ինչպէս նաեւ անոնք, որոնք անցեալին եւ ներկայիս այդ ջրհորէն խմած էին: Իւրաքանչիւր ջրհոր այս աշխարհի մէջ միայն անելի կը բացայայտէ մեր յուսահատ մարդկային ծարաւը: Յովհաննէս 4.13-ը Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակին մէջ այսպէս կ'ըսէ.

Եթէ խմես Յակոբին ջրհորէն, *դուն շարունակ պիտի ծարանաս:*

Հին ջրհորները ամէն անգամ ծարաւ պիտի ձգեն քեզ: Վերջաւորութեան, միայն Աստուած կրնայ լիովին յագեցնել մեր ծարաւը: Հին ջրհորները չեն կրնար մեզ բաւարարել, քանի որ անոնց աղբիւրները կապուած են երկրին պայմաններուն: Որեւէ ժամանակ թշնամին կրնայ գաղտնօրէն գալ որեւէ ջրհորի քով եւ թունաւորել զայն կամ զայն հողով լեցնել. բացի ատկէ՝ երկարատեւ երաշտը կրնայ չորցնել ջրհորը:

Օրէնքը, հին ջրհորին օրինակին պէս, կրնայ դիւրութեամբ թունաւորուիլ մարդկային կանոններով կամ թաղուիլ մարդկային ծէսերու եւ կանոններու հողին տակ: Սամարացիները կ'ընդունէին միայն Օրէնքը՝ Աստուածաշունչին առաջին հինգ գիրքերը, եւ իրենց լեռան վրայ կը պաշտէին: Անոնք կ'ապրէին միայն Օրէնքին շուքին տակ, մինչ հրեաները փաստեցին, որ նոյնիսկ ամբողջական Օրէնքը չի կրնար տալ այն կեանքը, որուն մենք կը ձգտինք: Օրէնքներուն եւ նախահայրերուն հին ջրհորները մեզի տրուած են, որպէսզի ցոյց տան, որ մենք շատ պէտք ունինք Սուրբ Հոգիին կենդանի ջուրին: Օրէնքը

կը պահանջէ պաշտամունքի վայր մը ունենալ: Օրէնքը անհասանելի կը դարձնէ զԱստուած մեզի համար: զԱստուած պաշտելը ծէս մը կ'ըլլայ, ոչ թէ՛ կեանքի աղբիւր: Օրէնքին տակ գոյութիւն ունի այցելութիւն, ոչ թէ՛ բնակութիւն: Օրէնքին տակ զինք կարելի է հեռուէն տեսնել, բայց ոչ՝ Անոր դայչի: Օրէնքը կը պահպանէր Սինա լեռան կանոնները, ըստ որոնց մենք կրնանք զԱստուած տեսնել, բայց ոչ՝ Անոր գիրկին մէջ ըլլալ:

Երբ մեր պաշտամունքի սրբարանը մեր շուրջն է, ոչ թէ մեր մէջը, դրսեցի դառնալու վտանգը կը սպառնայ մեզի: Սամարացի կնոջ եւ Յիսուսի հանդիպումը օրէնքի բազմաթիւ չափանիշներ խախտեց: Այդ կինը օրէնքը խախտած էր եւ տղամարդու մը հետ կ'ապրէր: Նոյնիսկ մեր օրերու աւելի ազատամիտ եկեղեցիին մէջ ան «մեղքի մէջ ապրող» կը սեպուի: Բայց Յիսուս տեսաւ աւելին, քան ինչ որ անոր կեանքը ցոյց կու տար, որ ամօթով պատուած էր, եւ ուղղակի անոր կոտորուած սիրտին խօսեցաւ:

Օրէնքը միշտ քեզմէ կը պահանջէ աւելին, քան ինքը կրնայ տալ: Կենդանի ջուրը անկարելի է պահել յատուկ տեղի մը մէջ կամ նոյնիսկ՝ կշռել, քանի որ անիկա հեղուկ լոյս է: Մեռած ջուրը այդպէս չէ: Եթէ ուզես Յակոբին ջրհորէն մէկ անգամէն աւելի ջուր խմել, պէտք պիտի ունենաս անօթի: Դուն տուն կը տանիս միայն այնքան ջուր, որքան կրնաս գրկել: Մեռած ջուրը թեթեւ չէ. ծանր է: Եթէ օրական երկու լիթր ջուր խմենք, կրնանք հաշուել մէկ անձի համար 1.8 քիլոկրամ ծանրութիւն: Եթէ ճաշ եփելու, լուածքի, լոգնալու եւ չորս հոգինոց ընտանիքի մը համար խմելու համար ջուր պիտի քաշես, միայն ջուրին ծանրութիւնը տասը քիլոկրամը կ'անցնի: Ես չեմ հաշուեր քու անօթիդ ծանրութիւնը եւ տուն տանող ճամբուն հեռաւորութիւնը:

Եւ դուն ստիպուած ես այս ճամբորդութիւնը շարունակ ընել: Յիսուս կը խօսէր յարատեւող եւ անյագ ծարաւին մասին: Ծնելով եւ ապրելով չոր եւ անջրդի Միջին Արեւելքին մէջ՝ այդ կինը իր ամբողջ կեանքը ծարաւ զգացած էր: Գոյութիւն

չունի այնքան խորունկ ջրհոր եւ այնքան պաղ ջուր, որ կրնայ յագեցնել անոր ներսիդին գտնուող սիրոյ, հաւանութեան եւ ընկերութեան ծարաւը: Անոր անձը լիովին ջուրէն զրկուած էր: Ան բազմաթիւ անգամներ խաբուած էր այն բանով, որ, իր կարծիքով, կրնար յագեցնել իր ցանկութիւնները եւ թարմացնել իր անձը: Ան ճիշդ բաներուն կը ձգտէր, բայց ինչպէս մեզմէ շատերը, ան կը փնտռէր ճիշդ բաները սխալ տեղերու մէջ:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես սիրուած ըլլալ:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես կեանքդ կառուցել մտերիմ մէկու մը հետ:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես արժանապատիւ կեանք մը վարել:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես նպատակաուղղուած ըլլալ:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես բարեկամներ ունենալ:

Սխալ չէ, որ դուն կ'ուզես կեանքովդ զԱստուած պաշտել:


Յիսուս չնսեմացուց անոր փափաքը, եւ Ան չի ծաղրեր քու փափաքդ: Ան հաստատեց սամարացի կնոջ ծարաւը, քանի որ խոստացաւ յագեցնել զայն: Ան առաջարկեց անոր անվերջ կեանք՝ փակուղիներով կեանքի փոխարէն: Իր անձին խորերէն եւ յուսահատութենէ դրդուած՝ այդ կինը աւելի մօտեցաւ խնդրելով.

Տէր, տո՛ւր ինձի այդ ջուրը, որպէսզի չծարաւնամ, եւ հոս չգամ՝ ջուր քաշելու: (Յովհաննէս 4.15)

Ես յոյս կը լսեմ անոր վշտահար խնդրանքին մէջ: Ես կը ճանչնամ անոր փափաքը՝ կարծես անիկա իմս ըլլար: «Յիսուս, կը խնդրեմ, մի՛ ստիպեր ինձի վերադառնալ այս վայրը, որ շարունակ ինձի կը յիշեցնէ իմ ձախողութիւններս»: Ինչպէս ինք, ես ալ ճիշդ ձեռով չվարուեցայ իմ երիտասարդութեան տարիներուս: Ան գիտէր, որ չէր կրնար շահիլ ատիկա, եւ որ արժանի չէր անոր. ան կրնար իր խնդրանքը ստանալ՝ միայն որպէս պարգեւ: Ան կը նմանէր թմրամոլի մը, որ արդէն

ծախելու ոչինչ ունէր: Անոր ծարաւը ստրկացուցած էր զինք:

Նախքան այդ կենդանի ջուրը անոր տալը, Յիսուս պէտք է տեսնէր՝ արդե՞՞ծք ան պատրաստ էր իր անձը պարպելու: Ան իսկապէ՛ս պատրաստ էր լիովին ձգելու իր անցեալը: Ան խօսեցաւ այն թերի եւ լճացած ջրհորին մասին, այսինքն՝ այն տղամարդոց, ուրկէ շատ երկար ժամանակէ ի վեր ջուր կը քաշէր:



**Բոլոր  
երկրաւոր  
ջրհորները,  
ի վերջոյ,  
կը ծառայեն  
ընդգծելու մեր  
անյոյս կամ լուրջ  
մարդկային  
ծարաւը:**

Յիսուս ըսաւ անոր. «Գնա՛, կանչէ՛ ամուսինդ ու հո՛ս եկուր»: (Յովհաննէս 4.16)

Մի՛ կարծեր, որ ատիկա ըսելով՝ Յիսուս նկատի ունէր ընտանեկան իշխանութիւնը, որուն միջոցով Ան կրնար խօսիլ այդ կնոջ հետ: Նաեւ Ան անպայմանօրէն անոր մեղքը չէր մատնանշէր անով: Ընդհակառակը, Ան կը հարցնէր անոր ամուսինին մասին, որպէսզի ցոյց տար անոր ցաւը: Մեր քաջ քոյրը ճշմարտութիւնը խօսեցաւ՝ գիտնալով, որ այդ ճշմարտութիւնը կրնար լրջօրէն որակագրկել եւ անարժան դարձնել զինք՝ Ռաբբիէն կենդանի ջուր ստանալու:

Ես ամուսին չունիմ: (Յովհաննէս 4.17)

Հաւանաբար ատիկա խոստովանելով՝ ան ծանրութիւն զգաց. հինգ ձախող ամուսնութիւն: Անոր խոստովանութեան մէջ մեղադրանք չկար, պատրուակներ կամ արդարացումներ չկային. ան ըսաւ մերկ եւ անհրապոյր ճշմարտութիւնը. «Ես ամուսին չունիմ»:

Յիսուս ըսաւ անոր. «Ճիշդ ըսիր. “Ամուսին չունիմ”, որովհետեւ դուն հինգ ամուսին ունեցեր ես, եւ ան որ հիմա ունիս՝ ամուսինդ չէ. ճիշդ ըսիր ատիկա»: (Յովհաննէս 4.17,18)

Յիսուս կրնայ գործել ճշմարտախօս մարդոց եւ քաջ խոտովանութիւններու հետ: Այդ կինը պատմեց իր ներկան, իսկ Յիսուս աւելցուց անոր անցեալի մանրամասնութիւնները: Հինգ տղամարդ կնութեան առած էին զինք, եւ յետոյ հրաժարած էին իրմէ: Երբեմն կը մտածեմ, թէ ինչո՞ւ այդ կնոջ շատ յաճախ մեղաւոր կը կոչեն: Իմ մեծ մայրերէս մէկը չորս անգամ ամուսնացած է երեք տարբեր տղամարդոց հետ, սակայն ան զոհ չէր. ան ատիկա ըրած էր իր որոշումով եւ իր անառակութենէն մղուած: Բայց հաւանաբար այդ կնոջ պարագան այդպէս չէր: Մենք ստոյգ փաստեր չունինք գիտնալու համար, որ սխալը իրմէ էր: Ան Օրէնքին տակ կ'ապրէր, որ կը նշանակէր, թէ ուեւ տղամարդ կրնար որոշել, որ իր կնոջ հետ ամուսնանալը սխալմունք էր, եւ կրնար դիրութեամբ ազատիլ անկէ՝ իր յուսախաբութիւնը հաստատող վկայական մը գրելով: Օրէնքին տակ ան չէր կրնար իր ցանկութեամբ ամուսիններ փոխել: Ան պէտք է ներկայացնէր իր ամուսնալուծութեան վկայականը, որպէսզի կրկին ամուսնանար: Կը պատկերացնենք ... հինգ անգամ ձախողեցաւ: Ան այնքան կոտորուած էր, որ պատրաստ էր իր անկողինը բաժնեկցելու ուեւ տղամարդու հետ՝ առանց անոր անունը կրելու: Անոր կեանքը քանդուած էր մարդոց անյագ ցանկութիւններուն պատճառով: Անոր հոգին կոտորուած էր, բայց ան տակաւին յոյս ունէր: Յովհաննէս 4.19-ին մէջ կը կարդանք.

Կինը ըսաւ անոր. «Տէր, կը նշմարեմ, թէ դուն մարգարէ մըն ես»:

Մինչեւ վերջերս ես չէի հասկնար այս խօսքերուն լրջութիւնը: Ան քայլ առաւ՝ իր ետին ձգելով ամէն բան, որ ինք նախապէս սորված էր, որովհետեւ սամարացիները կը հաւատային, որ միայն Մովսէսը մարգարէ էր: Մատթէոս 10.41-ին համաձայն, Յիսուսը որպէս մարգարէ ընդունիլը կը նշանակէր, որ ան մարգարէի վարձատրութիւն պէտք է ստանար. «Ան որ մարգարէ մը կ'ընդունի՝ մարգարէի անունով, մարգարէի վարձատրութիւն պիտի ստանայ»:

Ինչ է մարգարէի վարձատրութիւնը: Կը հաւատամ, որ այս պարգեւը կրնայ տարբեր ձեւերով արտայայտուիլ, բայց չկայ ւսելի արժէքաւոր բան, քան կենդանի ճշմարտութեան յայտնութիւնը եւ գիտակցութիւնը: Մարգարէները նաեւ կը կոչուին «տեսանողներ»: Յիսուս ո՛ր որ կ'երթար, մարդոց սիրտին աչքերը կը բանար: Երբ այդ կինը որոշեց ընդունիլ Յիսուսը՝ որպէս մարգարէ, ան իր ապագային նայեցաւ եւ Յիսուսի հարցուց, թէ ինք ո՛ր պէտք է երկրպագէր: Կրնամ միայն պատկերացնել, որ ան յոգնած էր իր հին կեանքէն եւ այդ կեանքին հին ձեւերէն: Անոր միտքէն իսկ չէր անցներ, որ իր կեանքին մէջ նոր հանգրուան մը կը սկսէր, որուն մէջ երկրպագութիւնը անոր համար պիտի նշանակէր Անձ, ոչ թէ՛ վայր:

Յիսուս ըսաւ անոր. «Կին, հաւատա՛ ինձի, որ ժամը պիտի գայ, երբ ո՛չ այս լեռան վրայ եւ ո՛չ Երուսաղէմի մէջ պիտի երկրպագէք Հօրը»: (Յովհաննէս 4.21)

Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակին մէջ արամերէնը քիչ մը ւսելի կը բացատրէ այս համարը.

Հաւատա՛ ինձի, թանկագին կին՝ ժամանակը հասած է, երբ դուն Հօրը պիտի չերկրպագես լեռան մը վրայ, եւ ո՛չ ալ Երուսաղէմի մէջ, այլ՝ քու սիրտիդ մէջ:

Ան պատուեց Յիսուսը որպէս մարգարէ, որ Ան



իրականության մէջ էր, եւ ի պատասխան՝ Յիսուս ցոյց տուաւ, թէ իրականության մէջ ինչպիսին էր այդ կինը. ան թանկագին էր: Այս բառը կը նշանակէ՝ «սիրելի, շատ սիրուած, արժէքաւոր եւ կարեւոր, թանկարժէք եւ անգին, արժեւորուած եւ գանձի պէս գուրգուրանքով պահուած»: Հետաքրքրական է՝ երբ էր վերջին անգամը երբ զինք այդ բառերէն որեւէ մէկով կանչեցին: Յիսուս կը վերականգնէր անոր կոտորուած սիրտը եւ վիրաւորուած հոգին՝ անոր ապագային եւ կոչումին մասին խօսելով:

Այս պահուս ես կը լսեմ, որ Յիսուս կը հրաւիրէ Իր դուստրերէն իրաքանչիւրը. «Հաւատա՛ Ինձի, իմ արժեւորուած, գանձի պէս գուրգուրանքով պահուած եւ սիրելի դուստրս, քու ժամանակդ հասած է ...»: Հիմա՛ է ժամանակը, որ հաւատաս: Պահ մը կանգ առ. ինչ կը փսփսայ Ան քեզի:

Մեր Աստուածը աւելի մօտ չէ քեզի լեռան վրայ, քաղաքին մէջ, կամ նոյնիսկ՝ եկեղեցիին մէջ: Ոչ ոք կրնայ քեզ հեռացնել Անոր ներկայութենէն: Փանք Աստուծոյ, ոչ մէկ սխալ կրնայ քեզ բաժնել Անկէ, որ քու մէջդ կը բնակի: Յիսուս կը սպասէ քու երկրպագութիւնդ քու սիրտիդ ջրհորին քով: Սուրբ Գիրքը կը յիշեցնէ մեզի, որ մեր Աստուածը այնքան մօտ է մեզի, որքան մեր փսփսուքը:

Հապա ինչ կ'ըսէ ան. «Խօսքը մօտ է քեզի, բերանիդ եւ սիրտիդ մէջ է» (Հռոմայեցիներուն 10.8):

Յիսուս այս յեղափոխական գաղափարը բաժնեկցեցաւ կնոջ մը հետ, որ իր կեանքին ամենավատ վիճակին մէջ էր: Ո՛վ լսած էր, որ Աստուած ոչ մէկ վայրով կը սահմանափակուի: Արդեօք ան լսած էր, որ Աստուած կ'ուզէր իրեն հանդիպիլ հոն, ուր ինք կը գտնուէր: Պատկերացուր, թէ որքան հրաշալի էր այդ լուրը այդ կնոջ համար: Ան վտարանդի էր իր ժողովուրդին մէջ եւ օտարական՝ հրեաներուն համար, բայց Աստուած տեղ պատրաստած էր

Իրեն համար անոր սիրտին սրբարանին մէջ: Ինչպէս որ կինը անկեղծ եղաւ եւ յայտնեց, թէ ինք ո՛վ էր, այնպէս Աստուծոյ Որդին կը պատրաստուէր Իր անծը յայտնելու անոր: Այդ կնոջ որոշումները դուրս մղած էին զինք դէպի կեանքին վերջին տեղերը, բայց Յիսուս ներս հրաւիրեց զինք: Յիսուս շարունակեց՝ բացատրելով.

*Դուք կ'երկրպագէք անոր՝ որ չէք ճանչնար. մենք կ'երկրպագենք անոր՝ որ կը ճանչնանք. որովհետեւ փրկութիւնը Հրեաներէն է: Բայց ժամը պիտի գայ եւ հիմա ալ է, երբ ճշմարիտ երկրպագողները պիտի երկրպագեն Հօրը՝ հոգիով ու ճշմարտութեամբ, որովհետեւ Հայրն ալ կ'ուզէ այդպիսիներ՝ իրեն երկրպագելու համար: Աստուած Հոգի է, եւ իրեն երկրպագողներն ալ պէտք է, որ երկրպագեն հոգիով ու ճշմարտութեամբ: (Յովհաննէս 4.22-24, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Յիսուս խորտակեց այդ կնոջ ամառանքները ճշմարտութեամբ: Եթէ ինչ որ այս Ռաբբին կ'ըսէ, ճիշդ է, կը նշանակէ՝ ան այդ տեսակի երկրպագողներէն է, զորս Անոր Հայրը կը փնտռէ՝ այնպիսին, որ կ'ուզէ երկրպագել թէ՛ հոգիով, թէ՛ ճշմարտութեամբ:

Մենք չենք նկատեր, թէ ինչ հեզնական վիճակի մէջ կը հնչեն Յիսուսի խօսքերը, քանի որ մենք կ'ընդունինք այն, ինչ որ Յիսուս այդ կնոջ կը բացատրէր՝ որպէս հասկցուած ճշմարտութիւն: Բայց այդ օրերուն այդ գաղափարները ծայրայեղական էին: Աւելի քան հաւանական է, որ ան երբեք չէր լսած Աստուծոյ մասին՝ որպէս Հայր: Յովհաննէս 4.22,23-ը Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն այսպէս կ'ըսէ.

*Այս պահէն Հօր երկրպագելու համար կարելի է ոչ թէ ճիշդ վայրը, այլ՝ ճիշդ սիրտը: Որովհետեւ Աստուած Հոգի է, եւ Ան կը փափաքի անկեղծ երկրպագուներ ունենալ, որոնք*

*Կ'երկրպագեն եւ կը պաշտեն զինք հոգեւոր մարզին մէջ եւ ճշմարտութեամբ (Շեշտադրումը՝ մեր կողմէ):*

Ան կրնար հաղորդակցիլ Աստուծոյ մը հետ, որ կը փափաքէր: Կը հաւատամ, որ այդ պահուն անոր ներսիդին պայքար մը կար. փառաւոր յոյսը կը հակասէր այն, ինչ որ անոր ծանօթ էր որպէս ճնշող կրօն: Ան չէր գիտեր ինչին հաւատար. անոր սիրտը կը դողար յոյսէն, շփոթութենէն եւ զարմանքէն, բայց ան ըսաւ ինչ որ գիտէր.

Կինը ըսաւ անոր. «Գիտեմ, թէ Մեսիան պիտի գայ, (Քրիստոս կոչուածը.) երբ ինք գայ՝ պիտի հաղորդէ մեզի ամէն բան»: (Յովհաննէս 4.25)

Արդեօք անոր մանկական հաւատքը անդիմադրելի էր Յիսուսի համար: Ան այլեւս այդ կնոջմէն չկրցաւ պահել ճշմարտութեան բարի լուրը: Ես կը պատկերացնեմ, որ Յիսուս կը նայէր անոր աչքերուն մէջ, երբ փսփսաց.

Ես՝ որ քեզի հետ կը խօսիմ՝ ան եմ (Յովհաննէս 4.26):

Ան ըրաւ ճիշդ այն, ինչ որ այդ կինը կը սպասէր Մեսիայէն ... Ան պատմեց անոր ամէն ինչ: Երբեմն մեր Աստուածը կը խօսի ամէն ինչի մասին, նոյնիսկ՝ առանց ամէն ինչ ըսելու: Հանդարտի՛ր, ո՛վ իմ սիրտս: Մեր Օծեալ Քրիստոսը յաճախ կը պատասխանէ երկրպագութեան մասին մեր հարցումներուն՝ մեզի ըսելով ճշմարտութիւնը մեր մասին: Ան մէկ ակնթարթի մէջ կը բացայայտէ անմիտ ասանդութիւնները եւ կը կտրէ եւ կը հեռացնէ մարդկային գաղափարները Իր ճշմարտութեան սուրով: Ո՞վ չէր նետեր իր ջուրի անօթը եւ չէր վազեր՝ այդպիսի բան լսելէն ետք: Մեր Յիսուսը այդպիսին է: Ան չ'ամչցներ ամօթահար մարդիկը: Ան կ'ըսէ անոնց Իր գաղտնիքները եւ անոնց հետ կը բաժնեկցի ազնուագոյն ճշմարտութիւնները, զորս Փարիսեցիները (եւ երբեմն՝ նոյնիսկ Իր աշակերտները) կը մերժէին լսել:

Այդ կարեւոր պահը իր աւարտին հասաւ: Աշակերտները վերադարձան եւ մտահոգուեցան՝ տեսնելով, որ Յիսուս կը խօսէր այնպիսի կնոջ մը հետ, որ արժանի էր միայն իրենց անարգանքին: Բայց անոնց վերաբերումը արդէն կարեւոր չէր անոր համար: Եթէ Աստուած ընդունած է քեզ ... արդեօք մարդոցմէ մերժուիլը կարեւոր է քեզի համար: Հետաքրքրական է նշել, որ աշակերտներէն ոչ մէկը հրաւիրեց սամարացիները՝ Յիսուսը տեսնելու: Հարց չէր, որովհետեւ Յիսուս արդէն դրկեր էր Իր պատգամաւորը, եւ այդ ամբողջ ընթացքին ան Իր միտքին մէջ էր:

Ուստի կինը թողուց իր սափորը եւ գնաց քաղաքը, ու ըսաւ քաղաքացիներուն. «Եկէ՛ք, տեսէ՛ք մարդ մը՝ որ ըսաւ ինձի ամէն ինչ, որ գործեր եմ. արդեօք ան է Քրիստոսը»: Անոնք ալ ելան քաղաքէն եւ կու գային անոր: (Յովհաննէս 4.28-30)

Աւելի ուշադրութեամբ ուսումնասիրելով այս հատուածը՝ կը տեսնենք, որ ան զգուշութեամբ ընտրեց իր բառերը: Ան Յիսուսը մարգարէ չկոչեց, ո՛չ ալ նշեց, որ հրեայ է՝ գիտնալով, որ այս երկու բառերուն պատճառով իր համաքաղաքացիները պիտի մերժէին զինք: Ան գործածեց իր վկայութիւնը, որպէսզի ճամբան բանար անոնց համար: Ես կը սիրեմ այն գաղափարը, որ մեր ընկերուիին մարդիկը հրաւիրեց գալու եւ տեսնելու, ոչ թէ անոնց առաջարկեց գալ եւ լսել: «Տեսնել» բառը կը կրէ նաեւ «հաւատալ» իմաստը, իսկ երբ քու աչքերդ բացուին, կ'ուզես, որ ուրիշներն ալ տեսնեն:

Կը սիրեմ այն գաղափարը, որ Յիսուս որոշեց յայտնել այդպիսի գերադասելի, կանխող, թանկարժէք եւ սուրբ ճշմարտութիւն մը կնոջ մը, որ մարդոց կարծիքով՝ պղծուած, հասարակ եւ անմաքուր էր: Յայտնելով Աստուծոյ խորհուրդները այնպիսի մարդու մը, զոր միաները ամենացածր կը համարէին՝ Ան լայն բացաւ դուռը բոլորիս համար: Ահա

թէ ինչու ես այս կնոջ պատմութեան անդրադարձած եմ իմ գիրքերէս քանի մը հատին մէջ: Ես միշտ տարբեր անկիւններէ նայած եմ այս գրոյցին, բայց երբեք անտարբերութեամբ չեմ վարուած անոր հետ:

Տարիներ շարունակ ես սիրած եմ այս մտերիմ գրոյցը, որուն շնորհիւ ամօթահար վտարանդին պատկանելիութիւն եւ արժանապատուութիւն ստացաւ: Որոշ ժամանակ ես նոյնիսկ կը սիրէի անոր անանուն ըլլալը. այդ ձեւով ես դիրութեամբ կրնայի իմ անունս ւեցնել անոր պատմութեան մէջ: Ատիկա տեսց մինչեւ այն օրը երբ իմացայ, որ անոր անունը Ֆոթինա էր՝ լուսաւորուածը: Այդ օրը ան սկսաւ ւետարանել Սամարիայի մէջ, բայց ինչպէս արդէն գիտես, անոր ազդեցութիւնը անոր սահմաններէն շատ ւելի հեռու տարածուեցաւ:

Անոր պատմութիւնը պէտք է քաջալերէ մեզմէ իւրաքանչիւրը, որ խորունկ ջրհոր ըլլալով հանդերձ՝ կ'ապրի մակերեսային կեանք մը: Ուրիշ ինչը կրնայ բացատրել այն փաստը, որ անառակ կինը մարգարէին հետ խօսեցաւ երկրպագութեան մասին: Անոր ջրհորը ոչ միայն խորունկ էր, այլեւ՝ չոր: Ան հինգ ամուսին եւ երկու որդի ունեցած էր, բայց անով հանդերձ՝ անոր ներքին փափաքը չէր յագեցած. այդ մեծ կարողութիւն ունեցող կինը ինքզինք լիովին սպառած էր:

Յանկարծ ամէն ինչ փոխուեցաւ: Ան հասկցաւ, թէ ինչ պարգեւ կ'առաջարկուէր իրեն: Յիսուս հրաւեր ուղղեց անոր, եւ ան համարձակօրէն կենդանի ջուր խնդրեց: Այս փառահեղ Մեսիան լիովին կը ճանչնար եւ անվերապահօրէն կը սիրէր այդ կինը: Անոր հրաւերով այդ աղջիկը, որ մրցակիցներ չունէր, անզուգական էր, խմեց Անոր կենդանի ջուրէն՝ մինչեւ յագեցալը, եւ դարձաւ Ֆոթինան՝ ւետարանիչ եւ առաքեալ, որ անսասան վճռակամութեամբ գնաց դէպի վտանգը:

Անցեալ ունեցող կին, դուն այս կնոջ հետքերուն կը հետեւին:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Կը փափաքիս, որ Աստուծոյ զօրութիւնը ալ աւելի դրսեւորուի քու կեանքիդ մէջ:
2. Ֆոթինային պատմութիւնը ինչ ազդեցութիւն ունեցաւ քու վրայ:
3. Հիանալի չէ՞, որ Ֆոթինան ջրհորին քով գտնուող կիներ է: Ինչ նշանակութիւն ունի անոր պատմութիւնը մեզի համար:
4. Արդեօք կեանքիդ մէջ կան մարզեր, ուր դուն մակերեսային կեանք ունեցող խորունկ ջրհոր մըն ես:



## Կեանք՝ Առանց Մրցակցութեան

Երբեք շատ տարեց չես՝ նոր նպատակ կամ երազ ունենալու համար:

ՍԻ.ԷՍ.ԼՈՒԻՍ

**Կ**'ուզեմ ուրիշ հին պատմութիւն մը եւս պատմել քեզի քաջութեան եւ նուիրումի մասին: Ժամանակին Թեքլա<sup>1</sup> անունով գեղեցիկ կոյս աղջիկ մը կար:՝ Ան պատահմամբ լսեց Աւետարանը, երբ Պօղոս կը քարոզէր իր քովի տուներէն մէկուն մէջ: Ան նստած էր բարձր պատուհանին քով եւ քարացած մտիկ կ'ընէր Պօղոսին, որ կոչ կ'ուղղէր երիտասարդ տղաներուն եւ աղջիկներուն, որ Քրիստոսը պաշտեն սրբութեամբ եւ առաքինութեամբ: Թեքլան նշանուած էր, բայց երբ Պօղոսին խօսքերը լսեց, որոշեց հրաժարիլ իր ամուսնութենէն եւ մինչեւ կեանքին վերջը ապրիլ Աստուծոյ փառքին համար: Պօղոսը ոչինչ գիտէր այն ազդեցութեան մասին, որ ինք ձգած էր Թեքլային վրայ, բայց այդ աղջկան որոշումը հաճելի չէրեւցաւ անոր մօրը եւ նշանածին. անոնք իրենց ազդեցութիւնը գործածեցին, որպէսզի հրահրեն



բարկացած ամբոխը Պողոսի դէմ: Քաղաքացիական խռովութեան պատճառով Պողոսը յայտնուեցաւ Իկոնիոնի կառավարիչներէն մէկուն առջեւ, որ անմիջապէս հրամայեց բանտարկել զինք:

Տրտմած Թեքլան գործածեց իր ոսկեղէնները՝ բանտապահները կաշառելու համար, որպէսզի տեսնէր Պողոսը եւ լսէր Յիսուսի Աւետարանը անձամբ անկէ: Երբ անոր ընտանիքը գտաւ իր կորսուած աղջիկը Պողոսին բանտին խուցին մէջ, ստիպեցին, որ երկուքն ալ կառավարիչին քով տանին: Պողոսը մտրակեցին եւ քաղաքէն վտարեցին: Թեքլային մայրը ուրացաւ զինք, եւ աղջկան մահուան դատապարտեցին: Ան պիտի այրուէր խարոյկի ցիցի մը վրայ՝ որպէս օրինակ այն բոլոր աղջիկներուն, որոնք կրնային մտածել այդպիսի անմիտ ապստամբութիւն ընելու մասին:

Մինչ Թեքլան մահապատիժի կը տանէին, Պողոսը ուրիշ քրիստոնէաներու հետ հաւաքուեցան քաղաքէն դուրս գտնուող գետնափոր տեղերու մէջ եւ թախանձագին աղօթեցին: Թեքլան կապած էին խարոյկի ցիցին, բայց երբ կրակը վառեցին, ան չայրեցաւ: Յանկարծ անսովոր փոթորիկ մը սկսաւ, տեղատարափ անձրեւը մարեց անոր ոտքերուն տակ վարող բոցերը, եւ Թեքլան մահէն ազատեցաւ: Վախնալով, որ ատիկա յունական աստուածներէն նշան մըն էր՝ իշխանութիւնները ազատ արձակեցին զինք եւ քաղաքէն վտարեցին: Թեքլան, զոր բոլորը ուրացած էին, հանդիպեցաւ ուրիշ վտարուած քրիստոնէաներու, որոնք որոշած էին Անտիոք երթալ Պողոսի հետ:

Քաղաք մտնելուն պէս Ալեքսանտր անունով ազդեցիկ եւ մեծ իշխանութեան տէր մարդ մը Թեքլային գեղեցկութեամբ հրապուրուեցաւ եւ փորձեց զինք գնել Պողոսէն: Երբ Պողոս մերժեց, ան որոշեց ուժով խլել զայն: Թեքլան կատաղի կերպով դէմ դրաւ եւ այդ միջոցին անոր գլուխէն հանեց դափնեպսակը՝ զայն հրապարակաւ անարգելով

Եւ հրամայելով Ալեքսանտրին, որ չդպչի Տիրոջ աղախինին:

Բարկացած Ալեքսանտրը զինք քաշելով տարաւ Անտիոքի կառավարիչին քով: Դատավարութեան ընթացքին Թեքլան խոստովանեցաւ, որ պատռած էր Ալեքսանտրին հանդերձները՝ փորձելով փախչիլ անկէ: Դարձեալ, ան մահուան դատապարտուեցաւ: Անոր մահապատիժը որոշուեցաւ յաջորդ օրը. այս անգամ ան պէտք է վայրի գազաններու կողմէ յօշոտուէր եւ ուտուէր:

Անտիոքի կիները խիստ վրդովեցան: Անոնք կը հասկնային, որ Թեքլային դէմ արձակուած վճիռը անարդար էր: Ազնուական հռոմայեցի կին մը առջեւ եկաւ եւ Թեքլան իր տունը պահելու արտօնութիւն խնդրեց՝ զայն բանտ դրկելու փոխարէն, որպէսզի պաշտպանէր անոր կուսութիւնը: Այդ գիշեր տարեց կինը եւ երիտասարդ Թեքլան մտերիմ ընկերուհիներ դարձան:

Յաջորդ առաւօտ այդ ազնուական հռոմայեցի կինը դառնօրէն լացաւ, երբ Թեքլան շղթայուած կը դնէին վանդակի մը մէջ, որուն կողքին կատղած էգ առիծի վանդակ մը կար: Ամբոխը կը գոռար երբ Թեքլան մերկացուցին եւ բռնի ուժով տարին մրցադաշտ, որ լեցուն էր առիծներով եւ արջերով: Առաջին գազանը, որ հասաւ անոր, այդ էգ առիծն էր: Ան վազելով մօտեցաւ Թեքլային, բայց փոխանակ յարձակէր, դարձաւ եւ պաշտպանական դիրք առաւ Թեքլային ոտքերուն քով:

Արջ մը յառաջ նետուեցաւ, բայց մինչեւ Թեքլային հասնիլը, էգ առիծը սպաննեց զայն: Յետոյ արու առիծ մը յարձակեցաւ, բայց դարձեալ էգ առիծը կռուեցաւ՝ Թեքլան պաշտպանելու համար: Այդ պայքարը աւարտեցաւ երկու առիծներուն մահով. անոնց մարմինները՝ իրարու փաթթուած, ինկան Թեքլային ոտքերուն քով: Խաղը կազմակերպողները կը մտրակէին եւ կը խթանէին մնացեալ գազանները դէպի իրենց զոհը, բայց բոլոր գազանները վախէն կը կծկուէին եւ կը մերժէին յարձակիլ: Ամբոխը հանդարտեցաւ. Տիրոջ երկիւղը լռեցուց

աղմկոտ ամփիթատրոնը: Թեքլան բարձրացուց իր ձայնը եւ համարձակօրէն աղօթեց:

Կառավարիչը ոտքի ելաւ եւ կեցուց խաղերը: Ան պահանջեց այդ աղջիկէն, որ ըսէ, թէ ո՛վ է ինք, եւ ի՛նչ է իր զօրութեան աղբիւրը: Ան պատասխանեց. «Ես կենդանի Աստուծոյ աղախինն եմ ... ես կը հաւատամ այն Որդիին, որուն Աստուած հաճեցաւ: Որովհետեւ միայն Ան է փրկութեան ճամբան եւ անմահութեան հաստատութիւնը ... ո՛վ որ Անոր չի հաւատար, պիտի չապրի ...»:

Կառավարիչը հրամայեց, որ անոր հանդերձներ բերեն, եւ պատուիրեց զայն ազատ արձակել: Այդ օրը հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր մարդիկ ընդունեցին Քրիստոսը: Ըստ առաջին եկեղեցիին տարեգրութեան՝ Անտիոքի կիները մէկ ձայնով փառք կու տային Աստուծոյ՝ մինչեւ որ անոնց ձայնէն քաղաքը շարժեցաւ:

Թեքլան ապրեցաւ երկար, լիարժէք կեանք մը եւ մինչեւ կեանքին վերջը աւետարանը քարոզեց: Ան մեռաւ իննիսունը անց տարիքին:

## **Ապրիլ Յանդուզն Համարձակութեամբ**

Ի՛նչն էր, որ այդպիսի զօրութիւն տուաւ Թեքլային: Ան մերկ էր, բայց չէր ամչնար, քանի որ Յիսուսի մասին յայտնութիւն ստանալով՝ հասկցած էր, թէ ո՛վ էր ինք: Նորադարձ ըլլալով հանդերձ՝ ան Աւետարանին անյաղթահարելի դեսպանը դարձաւ: Բարձրաձայն աղօթելով՝ ան ցոյց տուաւ իր քաջութիւնը մահուան դիմաց: Քաջ աղջիկ մը, որուն հաւանաբար թոյլ չտային քարոզել շատ մը ամպիոններէ, երբ ան պատշաճ կերպով հագուած էր, ան դարձի բերաւ բազմաթիւ մարդիկ, երբ մերկ էր եւ շրջապատուած գազաններով՝ դաժանութեամբ լեցուն ամփիթատրոնին մէջ: Երբ այսպիսի պատմութիւններ կը կարդամ, կը կարծեմ, որ Եան կը ժպտայ (վստահ եմ, որ Սառան՝ նոյնպէս): Քանի որ

այն պատերազմը, որ Եւան կորսնցուց գողտրիկ եւ ապահով պարտէզին մէջ, շատ անգամ պասկուեցաւ յաղթութեամբ վերստին ծնունդ ստացած դուստրերուն կողմէ՝ բացայայտ թշնամութեամբ լեցուն ամփիթատրոններու մէջ:

Բազմութիւնը հաւաքուած էր մահապատիժ դիտելու, բայց փոխարէնը՝ ակնատես եղաւ, թէ ինչպէս պայմանը արմատապէս փոխուեցաւ: Թող մենք շարունակենք այս ժառանգութիւնը: Ամէն օր հռչակելով, որ մեր փրկութիւնը եւ հիմը միայն Քրիստոսի մէջ է՝ մենք աւելի կը լեցուինք Անով եւ կը մօտեցնենք Անոր վերադարձը:

Այսօր Աստուածաշունչին մասին գիտութիւնը շատ աւելին է, քան որեւէ ուրիշ ժամանակ՝ մարդկութեան պատմութեան մէջ: Սակայն ո՞ր հասցուցած է մեզ այդ գիտութիւնը: Մենք ունինք տեղեկութեան առատութիւն, բայց փոխակերպումի բացայայտ պակաս: Կը վախնամ, որ բազմաթիւ ձեւերով եւ բազմաթիւ մարզերու մէջ գիտութիւնը եւ ձիրքը փոխարինած են Աստուծոյ Խօսքը եւ Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը:

Ես աւելին կ'ուզեմ: Հոգիս մէջ կը զգամ Հոգիին անզուգական էջքը եւ անզուգական հունձք:

Այս կոտորուած աշխարհը Աստուծոյ զօրութեան պէտք ունի: Թերեւս ժամանակն է կրկնել առաջին եկեղեցիին աղօթքները.

Եւ հիմա, Տէր, լսէ անոնց սպառնալիքները՝ մեզի վնաս հասցնելու մասին, եւ զօրացնուր մեզ՝ քու ծառաներդ, որ ազատօրէն եւ լման համարձակութեամբ քարոզենք Աստուծոյ Խօսքը: Երկարէ՛ քու զօրութեանդ ձեռքը մեր միջոցով, որ բժշկութիւններ, նշաններ եւ սքանչելիքներ կատարուին քու սուրբ Որդիիդ՝ Յիսուսի անունով: (Առաքեալներուն Գործերը 4.29-30, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն)

Եւ ինչ ազդեցութիւն ունեցաւ այս աղօթքը:

Այդ պահուն, երկիրը շարժեցաւ անոնց տակ, եւ այն շէնքը, ուր հաւաքուած էին, դղրդաց: Բոլորը լեցուեցան Սուրբ Հոգիով եւ անխոչընդոտ համարձակութեամբ կը քարոզէին Աստուծոյ խօսքը: (Առաքեալներուն Գործերը 4.31, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Փաշըն* տարբերակէն)

Ժամանակն է, որ Աստուծոյ խօսքը հոչակուի անխոչընդոտ, յանդուգն համարձակութեամբ: Շատ ձեւերով այն մարտահրաւերները, զորս Թերլան դիմագրաւեց, այնքան ալ տարբեր չէին մեր մարտահրաւերներէն: Երբ ան որոշեց անսպասելի ճամբայ մը ընտրել եւ իր կեանքը նուիրել, մեծ վրդովում բարձրացաւ: Անոր ընտանիքին անդամները փորձեցին ետ պահել զինք, իսկ կառավարութիւնը փորձեց օրէնք դնել անոր հաւատքին համար: Տղամարդիկ փորձեցին ուժով առնել զինք եւ նուաճել այն, ինչ որ ապստամբութիւն կը սեպէին: Սակայն այդ ամբողջ ընթացքին միայն ան ճշմարտապէս ազատ էր: Թէ՛ անոր կեանքը, թէ՛ մահը անկարող էին փոխելու այն, ինչ որ ան գիտէր իր ինքնութեան մասին ... Ան Ամենաբարձր Աստուծոյ աղախինն էր:

## **Կեանք՝ Առանց Մրցակցութեան**

Մենք կ'ապրինք այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ ամէն ինչ մեր շուրջը տակն ու վրայ եղած է: Եթէ գիտես, թէ ո՛վ ես եւ որո՞ւ կը պատկանիս, կանգուն կը մնաս: Մենք ընտրած ենք կեանք մը՝ առանց մրցակցութեան, իսկ այդպիսի կեանք մը միայն Սուրբ Հոգին կրնայ կառուցել:

Քանի որ Հոգիին կեանքը՝ այն կեանքն է, որ ընտրած ենք, եկէ՛ք վստահ ըլլանք, որ ատիկա մեզի համար պարզապէս մեր միտքին մէջ *գաղափար մը չէ* կամ մեր սիրտին մէջ զգացում մը, այլ *պիտի գործադրենք այն բոլոր բաները, որոնք կը բխին անկէ, մեր կեանքին բոլոր*

*մարզերուն մէջ: Ատիկա կը նշանակէ, որ մենք մեզ պիտի չբաղդապենք իրարու հետ, կարծես մեզմէ մէկը աւելի լաւ ըլլար, իսկ միւսը՝ աւելի վատ: Մենք կրնանք շատ աւելի հետաքրքրական ձեւով ապրիլ մեր կեանքը: Մեզմէ իւրաքանչիւրը նախապիպար մըն է: (Գաղատացիներուն 5.25,26, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Տը Մասէճ տարբերակէն, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Այսպիսով, մենք կ'աւարտենք ինչով, որ սկսանք:

Երբ կը սկսիս արտայայտել քու հարազատ ինքնութիւնդ, Հոգիին արժանավայել կեանք մը կ'ապրիս: Դուն ստեղծուած չես բաղդատուելու համար ... դուն ստեղծուած ես Աստուծոյ Որդիին համար: Քու երկնաւոր Հայրդ ամբողջ կեանքդ իր մանրամասնութիւններով գրած է Իր գիրքին մէջ աշխարհ գալէդ շատ առաջ: Ան գրած է կեանքիդ մասին կենդանի տառերով: Ուրիշ ոչ ոք կրնայ ապրիլ քու կեանքդ: Ժամանակն է, որ կեանքիդ էջերը կենդանութիւն ստանան: Եթէ ապրիս ուրիշ մարդոց համար գրուածով, այն բոլոր բաները, զորս Հոգին գրած է քու մասիդ, անկատար կը մնան: Մեզմէ իւրաքանչիւրը յատուկ ընթացք եւ կոչում մը ունի: Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը անփոխարինելի է, եթէ կ'ուզես ունենալ առանց մրցակցութեան կեանք մը: Հոգիով առաջնորդուող կեանքը պարզապէս գաղափար մը կամ *ռոմանթիկ* յոյս մը չէ. անիկա հոգեւոր կրթութեան դրսեւորում է: Ատիկա քու անձնական երկրպագութեան արարքդ է: Անիկա նուիրումի կեանք մըն է, եւ ոչ թէ ցրուածութեան: Իւրաքանչիւր հնազանդութեան արարքի հետ՝ թէ՛ անձնական, թէ՛ ընկերային կեանքիդ մէջ, Աստուած աւելի կը յստակացնէ Իր նպատակը քու կեանքիդ համար, եւ դուն աւելի յստակ կը լսես Անոր ձայնը:

Քու կեանքդ՝ իր ամբողջ կարողականութեամբ, Աստուծմէ տրուած աւանդ մըն է: Որքան ցաւալի պիտի ըլլայ եթէ այն բոլոր բաները, որոնք քու մէջդ կը գտնուին, նմանին անթիւ

գանձերու եւ տաղանդներու, որոնք թաղուած են ուրիշ մարդոց կարծիքներուն եւ ակնկալութիւններուն հողին տակ: Դուն աշխարհ չես եկած՝ դիտորդ ըլլալու համար: Դուն կրնաս շատ անելի կարեւոր եւ հետաքրքրական բաներ ընել քու կեանքիդ մէջ: Ժամանակն է, որ այդ մասին գիտնաս:

Քու ապագադ հիմա է:

Այսօրուայ օրը մերն է. վաղուայ օրը ոչ մէկուն խոստացուած է, բայց դուն գիտես, որ այս պահը քուկդ է: Եւ շնորհիւ քու որոշումներուդ՝ դուն կրնաս լիարժէք կեանք ունենալ:

Քու ներսիդիդ ապշեցուցիչ խոստումի մը պատմութիւնը կայ: Քու կեանքիդ գիրքը կրնայ գոց մնալ, կամ դուն կը շարունակես թերթատել անոր էջերը: Լսէ՛ Պօղոսին պատգամը գաղատացիներուն.

«Ձանք թափեցէք, որ յայտնաբերէք, թէ ո՛վ էք դուք, եւ թէ ի՛նչ գործ տրուած է ձեզի, իսկ յետոյ անոր ուղղեցէք ձեր բոլոր ջանքերը: Դուք ձեզմով մի՛ տպաւորուիք: Դուք ձեզ մի՛ բաղդատէք ուրիշներու հետ: Ձեզմէ իւրաքանչիւրը պէտք է պատասխանատուութիւն ստանձնէ իր կեանքը ստեղծագործ կերպով ապրելու եւ լաւագոյնս գործածելու համար»: (Գաղատացիներուն 4.4-6, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Շանտ դժուար պիտի ըլլայ գիտնալը, թէ ո՛վ ես դուն, եթէ միշտ կ'ուզես գիտնալ, թէ ո՛վ չես դուն, եւ թէ որո՞նք են ուրիշները: Եթէ կ'ուզես քալել եւ չյոգնիլ, պէտք է գիտնաս, թէ ո՛վ ես դուն այս ընթացքին մէջ, որ մենք կեանք կը կոչենք:

Ուրեմն զգուշացէք, որ ընթանաք շրջահայեցութեամբ. ո՛չ թէ անխոհեմներու պէս, հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէք ժամանակը, որովհետեւ օրերը չար են: (Եփեսացիներուն 5.15-16)

Եթէ ճիշդ ձեռով չօգտագործես ժամանակդ, օրերդ արագ կ'անցնին, եւ դուն կը սպառիս մարդոց պահանջներուն

եւ ուշադրութիւնդ շեղող բաներուն պատճառով: Երբ մէկ կողմ դնես այս գիրքը, գրիչ մը եւ թուղթ մը առ: Զատէ՛ այն գործերը, որոնք ժամանակի իմաստուն ներդրում կը սեպես այն բոլորէն, զորս պարզապէս ժամանակդ կը վատնեն: Կ'ուզեմ, որ թեթեւցնես քու առօրեադ, որպէսզի դարձեալ կարենաս երազել:

Սորվիր ուշադրութեամբ կապել քու նպատակներդ քու երազներուդ հետ: Ուստի, մրցակիցներ չունեցող դ՛ուստր, ինչի մասին կ'երազես: Թերեւս ինծի պատասխանես ըսելով, որ կեանքդ ծանձրացուցիչ եւ միապաղաղ է: Ես չհարցուցի, թէ ինչ վիճակի մէջ ես դուն հիմա, այլ՝ թէ ինչը կը վառէ քու սիրտդ: Եթէ կրակդ կորսնցուցած ես, վերադարձիր Աստուծոյ ներկայութեան, մինչեւ որ կրկին գտնես զայն: Մաքրէ՛ քու միտքդ եւ սիրտդ: Քալելու գնամ, երկրպագութեան երաժշտութիւն լսէ եւ դարձեալ կապ հաստատէ քու անձիդ ջրհորին հետ:

Քու օրերդ անցած չեն, դուն երբեք չափազանց տարեց չես, երբեք չափազանց աղքատ չես, երբեք չափազանց հարուստ չես, երբեք չափազանց ուսեալ չես եւ երբեք չափազանց անուս չես՝ նպատակներ հաստատելու եւ երազներ երազելու համար: Դուն նաեւ շատ երիտասարդ չես անոր համար:

Երբեմն, նայելով այսօրուայ քրիստոնեայ կիներուն, ես ուրախութեամբ կը զարմանամ՝ տեսնելով, թէ անոնցմէ շատեր հրաշալի կերպով կը կառուցեն իրենց կեանքը եւ ծառայութիւնը: Կան այնքան գեղեցիկ, քաջ եւ բարեպաշտ երիտասարդ կիներ հոգեւոր պատերազմին առաջին կարգերուն վրայ, որ սիրտս յոյսով կը լեցուի: Ես ինծի կը հարցնեմ՝ «Թերեւս դադրիմ մաքըցելէ եւ զիջիմ ճամաբան»: Վերջերս, այդ մասին կը մտածէի երբ լսեցի Սուրբ Հոգիին ձայնը, որ սրբագրեց գիւ. «Անոնց բարձրանալը չի նշանակեր, որ դուն պէտք է նահանջես: Դուն պէտք է շարունակես յառաջ երթալ: Ես ոչ մէկ ատեն չեմ նախատեսած, որ անոնք մէկ կողմ



հրեն քեզ. թոյլ տուր անոնց, որ ալ անելի բարձրացնեն քեզ»:

Իմ վերելքս կրնայ ուրիշ երեւոյթ ունենալ այսօր, քան ինչ որ անցեալին ունեցած է, բայց ես երբեք չեմ լսած, որ Աստուած ինձի կը պատուիրէ վար նայիլ կամ գլուխս վար իջեցնել: Ան կը պատուիրէ, որ գլուխս բարձր պահեմ: Երբ Անոր դուստրերը միաբանութեամբ կը հաւաքուին, ես կը տեսնեմ Անոր փառքը:

Ուստի, սիրելի քոյր, քեզի ըսեմ, թէ ինչ է իմ նպատակս, իմ սիրտիս բուռն փափաքը. իմ նպատակս դուն ես: Կ'աղօթեմ, որ միշտ գործեմ, որ Քրիստոս Օծեալը ձեւաւորուի քու մէջդ: Կ'ուզեմ, որ դուն Անոր մէջ ըլլաս՝ լաւ ձեւով սպառազինուած եւ ճիշդ դիրքին մէջ, որպէսզի գտնես այն, ինչ որ Ան սկիզբէն վստահած է քեզի: Կը փափաքիմ օգնել քեզի ամենակարեւոր փնտռտուքիդ մէջ, որ զի՛նք ճանչնալն է: Այս գիրքը գրելով՝ անդրադարձայ, որ շատ ծաւալուն նիւթի մը մասին կը խօսիմ, քանի որ այսօր շատերը կը մրցին մեր սիրոյն համար: Պօղոսը կ'ապրէր ուրիշ ժամանակաշրջանի մը մէջ, բայց այն եկեղեցին, զոր ան կը սիրէր, նոյն տեսակի դժուարութիւններ ունէր:

Որովհետեւ նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէկ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս: Բայց կը վախնամ, որ ինչպէս օձը խաբեց Եւան իր խորամանկութեամբ, նոյնպէս ձեր միտքերը ապականին Քրիստոսի հանդէպ եղած պարզամտութենէն: Որովհետեւ եթէ մէկը գար եւ քարոզէր ուրիշ Յիսուս մը՝ որ մենք չենք քարոզած, կամ ստանայիք ուրիշ հոգի մը՝ որ չէք ստացած, կամ ուրիշ անետարան՝ որ չէք ընդունած, լաւ կը հանդուրժէիք այդպիսիին: (Բ.Կորնթացիներուն 11.2-4)

Կամ, ինչպէս այս հատուածը թարգմանուած է Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակին մէջ.

Նեղանալուս պատճառը այն է, որ ձեզ շատ կը սիրեմ, ձեզի համար շատ կը հոգամ. Աստուծոյ նախանձախնդրութիւնն է, որ կը վառի իմ մէջս: Ես խոստացած եմ ձեր ձեռքը Քրիստոսին՝ ամուսնութեան համար, ձեզ ներկայացուցած եմ որպէս անարատ կոյս՝ իր ամուսինին համար: Իսկ հիմա կը վախնամ, որ ճիշդ ինչպէս օձը Եւան զայթակղեցուց իր փաղաքշական խօսքերով, նոյնպէս ձեզ կը հեռացնեն Քրիստոսի հանդէպ ձեր սիրոյ պարզ մաքրութենէն: Կը թուի, թէ եթէ մէկը յայտնուի եւ քարոզէ ուրիշ Յիսուսի մը մասին, որ մենք չենք քարոզած, ուրիշ հոգի մը եւ ուրիշ պատգամ մը, դուք շատ լաւ կը հանդուրժէիք անոր:

Ինծի մտիկ ըրէ, ինչպէս մօր մը ... ո՛չ, ինչպէս մեծ մօր. դուն ստեղծուած չես, որ դուն քեզ ուրիշներու հետ բաղդատելու զիջումին ենթարկուիս: Մեր Ստեղծիչը Իր ինքնատիպութիւնը հիւսած է քու *Տի.էն.էյ.*-իդ մէջ: Միայն դուն կրնաս արտայայտել Անոր սէրն ու փառքը այն ձեւով, որ իւրայատուկ է միայն քեզի, եւ քու գործերուդ պտուղներն ու վարձատրութիւնը յաւիտեան քեզի հետ պիտի մնան:

### **Յաւիտենական Պսակներ**

Այս գիրքը սկսայ խօսելով քու ինքնութեանդ եւ Աստուծոյ ինքնութեան մասին եւ կը փորձեմ աւարտել զայն՝ ցոյց տալով, թէ Ան ի՛նչ շնորհած է մեզի: Շատ մեծ եւ թանկագին խոստումներուն կողքին, որոնք մեզի տրուած են, որպէսզի անոնցմով աստուածային բնութեան հաղորդակից դառնանք՝ մենք նաեւ զարդարուած ենք իշխանութեամբ:

Ես կը սիրեմ ոսկեղէնները, բայց ոչ՝ որեւէ ոսկեղէն: Ես կը սիրեմ այն ոսկեղէնները, որոնք պատմութիւն ունին: Իմ ամուսնութեան մատանիներս կը խորհրդանշեն մեր ամուսնութեան ընթացքը: Ես ունիմ մատանիներ, որոնք ինծի նուիրած են իմ տղաներուս ամէն մէկուն ծննդեան օրուան առթիւ: Ես ունիմ սուրէ վիզնոց մը, աղեղէ ապարանջան

մը եւ ուրիշ ոսկեղէններ, որոնք ցոյց կու տան, թէ ինչ կը նշանակէ կռուիլ կնոջ մը պէս: Ես ունիմ ուրիշ ոսկեղէններ, որոնք բարեկամներէս նուէրներ են կամ կապ ունին կեանքիս կարեւոր հանգրուաններուն կամ փոփոխութիւններուն հետ: Ըստ ինծի նուիրուած ոսկեղէններուն նշանակութեան եւ հնութեան՝ ես կ'որոշեմ, թէ անոնք զարդարանք են, թէ՛ աւելորդ, լրացուցիչ պիտոյքներ:

Ես կը սիրեմ Հենա Հըրնըրտին «Եղնիկին Ուղքերը՝ Բարձր Տեղերու Մէջ» պատմուածքը: Ես ծանօթացայ անոր երբ մօտաւորապէս քսանհինգ տարեկան էի, եւ անկէ ետք ան ինծի հետ մնաց: Ես կը կարդայի զայն իմ զաւակներուս երբ անոնք փոքր էին եւ ես ինծի համար ալ կը կարդամ, երբ պէտք է: Այս այլաբանութեան մէջ երիտասարդ աղջիկ մը, որ վախերով լեցուն էր, կը ճամբորդէ իր տունէն դէպի բարձունքները, ուր կատարեալ սէրը կը վտարէ վախը: Ճամբուն ընթացքին ան կը հանդիպի բարդ պայմաններու եւ փորձութիւններու: Ամէն տեղ հերոսուհին, որուն անունը «Շատ Վախցած» է, զոհասեղան մը կը շինէ եւ քար մը կ'առնէ յիշատակի համար, զոր կը կրէ իր պարկին մէջ: Տեղ մը ան այնքան կը յուսալքուի, եւ խոստումը այնքան հեռու կը թուի, որ ան կը գայթակղի եւ կ'ուզէ մէկ կողմ նետել իր յիշատակի քարերը, քանի որ անոնք միայն կը յիշեցնեն իր յուսախաբութիւնը: Դարձեալ մտածելով՝ ան կը պահէ զանոնք, ինչ որ շատ լաւ կ'ըլլայ, քանի որ յետագային անոնք կը վերածուին թանկարժէք քարերու եւ կը դրուին անոր թագին վրայ:

Ըստ աստուածաբաններու՝ Աստուածաշունչին մէջ գրուած է հինգ տեսակի պսակներու կամ թագերու մասին<sup>2</sup>: Առաջինը Արդարութեան Պսակն է, որ կը ստանանք երբ մեր մեղքը եւ ամօթը կը փոխանակենք Քրիստոսի արդարութեամբ, եւ Ան մեզ իր փրկութեամբ կը պսակէ: Յաջորդը Յնճութեան կամ Պարծանքի պսակն է. անիկա պահուած է անոնց համար, որոնք Աստուծոյ կ'երկրպագեն եւ կը փառաբանեն զինք՝

անկախ իրենց պայմաններէն: Երրորդը Փառքի Պսակն է՝ անոնց համար, որոնք կը փափաքին Անոր փառաւոր վերադարձը: Վերջին քանի մը էջերուն մէջ կ'ուզեմ խօսիլ միւս երկու պսակներուն մասին:

## **Անեղծանելի Պսակ**

Անեղծանելի պսակին մասին գրուած է Ա.Կորնթացիներուն 9.24-27-ին մէջ.

Չէք գիտեր, թէ ասպարէզին մէջ վազողները՝ բոլորը կը վազեն, բայց մէկը կը ստանայ մրցանակը: Ուստի այնպէս վազեցէք՝ որ ստանա՞ք: Ո՛վ որ կը մրցի՝ չափաւորութիւն կը պահէ ամէն բանի մէջ. անոնք՝ եղծանելի պսակը ստանալու համար, իսկ մենք՝ անեղծանելին: Ուստի ես այդպէս կը վազեմ, ո՛չ թէ անստուգութեամբ. ես այդպէս կոփամարտ կ'ընեմ, ո՛չ թէ հովը ծեծելով. բայց կը ճնշեմ ու կը նուաճեմ մարմինս, որպէսզի՝ ուրիշներուն քարոզելէ ետք՝ ես ինքս խոտելի չըլլամ:

Այս պսակը կը ստանան վազելով, եւ մեր մարզուելու ձեւը կ'որոշէ, թէ ինչպէս պիտի վազենք: Մարզուիլը հաճելի չէ, բայց որակագրկուիլը եւ մրցումը պարտուիլն ալ հաճելի չեն: Շատ առումներով, Սուրբ Հոգին մեր Մարզիչն է:

Մի տրտմեցնէք զԱստուած: Մի կոտրէք Անոր սիրտը: Անոր Սուրբ Հոգին, որ ձեր մէջ կը բնակի, ձեր կեանքին ամէնէն մտերիմ մասն է. Ան ձեզ յարմար կը դարձնէ Իրեն համար: Թեթեւ մի՛ առնէք այսպիսի պարզեւ մը: (Եփեսացիներուն 4.30, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

Ամէն բան արտօնուած է, բայց ամէն բան չէ, որ կը նպաստէ բարեպաշտութեան եւ մեր ընթացքը յաջող կերպով անցնելուն: Աստուած գիտէ, թէ ինչ կը պահանջուի անոր

համար: Ան գիտէ, թէ երբ մենք պէտք է արագացնենք կամ դանդաղեցնենք մեր ընթացքը: Ան գիտէ, թէ որո՞ւ հետ պէտք է մարզուինք, եւ որմէ՞ պէտք է հեռու մնանք: Մենք ենք, որ պիտի օգտուինք, եթէ հետեւինք Անոր թելադրանքներուն: Մենք չենք մրցիր անցաւոր բաներու համար. մենք կը վազենք դէպի յաւիտենականութիւնը:

Երկրի վրայ գանձեր մի՛ դիզէք ձեզի, ուր ցեցը եւ ժանգը կ'ապականեն, ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան: Հապա երկինքը գանձեր դիզեցէք ձեզի, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն, ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: Որովհետեւ ձեր գանձը ո՞ր որ է, ձեր սիրտն ալ հո՞ն պիտի ըլլայ: (Մատթէոս 6.19-21)

Եթէ սիրտդ երկինքի մէջ է, դուն կը գտնես երկինք տանող ճամբան: Ինչպէս արդէն ըսինք, այս գանձը կը պահուի սիրտիդ մէջ, եւ անոր պահապանը սէրն է: Մենք կ'ապրինք աշխարհի մը մէջ, որ յղի է խօսքերով, գաղափարներով, գիրքերով, միտքերով, ընկերային կապերով, գեղեցկութեամբ, ստեղծագործութեամբ եւ իմաստութեամբ: Անոր մէջ շատ հրաշալի բաներ կան: Բայց այս աշխարհը ունի շատ վտանգաւոր քաշողական ուժ մը, որ կը փորձէ բռնաւորել քեզ, որպէսզի չկարենաս վազել քու ասպարէզիդ մէջ: Աստուծոյ խօսքը կը զգուշացնէ մեզ.

Մի՛ սիրէք աշխարհը, ո՛չ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը կը սիրէ աշխարհը, Հօրը սէրը չկայ իր մէջ. որովհետեւ ամէն ինչ որ աշխարհի մէջ է՝ մարմինի ցանկութիւնը, աչքերու ցանկութիւնը եւ այս կեանքին ամբարտաւանութիւնը՝ Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է: Աշխարհն ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ. բայց ան որ կը գործադրէ Աստուծոյ կամքը՝ կը մնայ յաւիտեան: (Ա. Յովհաննէսի 2.15-17)

Խօսքը այն բաներուն մասին է, որոնք կը գերեն եւ կը

սահմանափակ են մեզ, քանի որ կապուած են այս աշխարհի ճամբաներուն:

Այս աշխարհի ձգտումները կամ բուռն փափաքները կարելի է բաժնել երեք դասակարգումներու.

1. Մարմինի ցանկութիւնը, կամ՝ երբ կ'ուզես, որ ամէն բան քու ուզած ձեւովդ ըլլայ:
2. Աչքերու ցանկութիւնը, կամ՝ երբ կ'ուզես այն բոլոր բաները, զորս կը տեսնես:
3. Այս կեանքին ամբարտաւանութիւնը, կամ՝ երբ կ'ուզես կարելոր երեւիլ:

Իրաքանչիւրս կեանքի տարբեր հանգրուաններուն մէջ կը պայքարի այս երեք թշնամիներէն առնուազն մէկուն հետ, եթէ ոչ՝ միաժամանակ երեքին հետ: Այս երեքէն ամէն մէկը կրնայ արտայայտուիլ անհամար ձեւերով կեանքիդ տարբեր եղանակներուն մէջ: Երբ մենք նոր ամուսնացած էինք եւ տակաին զաւակներ չունէինք, ես շատ եսասէր էի: Կարծեմ արդար կ'ըլլայ ըսելը, որ կ'ուզէի, որ ամէն ինչ իմ ուզած ձեւովս ըլլար: Ամէն տեսածս կ'ուզէի ունենալ: Փա՛ռք Աստուծոյ, մենք այնքան դրամ չունէինք, որ իմ վատ վարքս քաջալերուէր, բայց միեւնոյնն է՝ ես կը տեսնէի եւ կը ցանկայի շատ բաներ: Անկէ ետք, հինգ տարուան ընթացքին, ես երեք զաւակ ունեցայ, եւ իմ միակ փափաքս հանգիստ քնանալն էր: Ինչ կը վերաբերի կարելոր երեւելու ցանկութեան, որքան աւելի կը մեծնամ, այնքան աւելի գոհ եմ, որ կարելոր եմ իմ ընտանիքիս եւ բարեկամներուս համար, ինչպէս նաեւ՝ քանի մը դուստրերու համար, որոնք յայտնուած են կեանքիս մէջ:

Այս մոլեգնող ցանկութիւնները կապուած են այս աշխարհին, որուն սահմանուած է փշրուիլ յաւիտենականութեան ծանրութեան տակ: Ամէն ինչ՝ ընկերային ցանցերէն մինչեւ երաժշտութիւնը, ծանուցումները եւ ժամանցի ձեւերը ալ աւելի կը զօրացնեն այս

ցանկութիւնները: Մարդկութեան պատմութեան մէջ երբեք չէ եղած ժամանակ մը, երբ կարելի ըլլար սերտօրէն թափանցել այն մարդոց կեանքերէն ներս, որոնց հետ որեւէ կապ չունինք: Եթէ մարդիկ դժուարութիւն կ'ունենան կապ հաստատելու անոնց հետ, զորս կը տեսնեն (իրենց բարեկամները եւ ընտանիքի անդամները), զարմանալի չէ, որ անոնց համար դժուար կ'ըլլայ կապ հաստատել Աստուծոյ հետ, զոր չեն տեսներ:

*Բայց ան որ կը գործադրէ Աստուծոյ կամքը՝ կը մնայ յաիփեան: (Ա.Յովհաննէսի 2.17, շեշտադրումը՝ մեր կողմէ)*

Այս աշխարհէն զատուելու համար, մենք պէտք է զոհենք մեր կամքը եւ ընդունինք Աստուծոյ կամքը: Անոր մէջ մենք բժշկութիւն կը գտնենք այս վտանգաւոր կապուածութիւններուն համար:

*Պէտք է սիրես Տէր Աստուածը քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ զգացումներովդ, ամբողջ եռանդովդ, ամբողջ զօրութեամբդ, եւ քու բոլոր միտքերովդ: Եւ պէտք է սիրես քու դրացիդ այնպէս, ինչպէս կը սիրես քու անծոյ: (Ղուկաս 10.27, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի Թի. Փի.Թի. տարբերակէն)*

Երբ Աստուծոյ սէրը կը յորդի քու կեանքիդ մէջ, այս աշխարհի քաշողութիւնը կը տկարանայ: Երբ Աստուծոյ Խօսքին վրայ կը խոկամ եւ թոյլ կու տամ Անոր, որ սիրէ զիս, ես աւելի դիւրութեամբ կը կառավարեմ իմ անձս: Երբ աւելի դիւրութեամբ կը կառավարեմ անձս, ես աւելի սիրով կը վարուիմ մարդոց հետ: Երբ Աստուծոյ վրայ կեդրոնացած եմ եւ կը սիրեմ մարդիկը, հաւանականութիւնը քիչ է, որ ես պարապ բաներու ետեւէն երթամ, որովհետեւ իմ յարաբերութիւններս կը լեցնեն իմ ներսիդիս գտնուող բացը:

Չէ՞ք գիտեր, թե՛ այս աշխարհի բարեկամութիւնը՝ Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուրեմն ո՛վ որ կը փափաքի բարեկամ ըլլալ աշխարհի, ինքզինք թշնամի կ'ընէ Աստուծոյ: (Յակոբոսի 4.4)

Երբեմն ես ինծի կը հարցնեմ՝ արդեօք մենք լրջօրէն կը մօտենանք այս համարին, թե՛ այնպէս կը պատկերացնենք, որ անիկա այլեւս չի վերաբերիր մեր շնորհքի տնօրինումին: Դժուար է պատկերացնել, որ մէկը կրնայ իր Ստեղծիչին ընդդիմանալու որոշում կայացնել: Պօղոսը գործ ունէր շնացող մարդոց հետ, որոնք կ'ուզէին ապրիլ թէ՛ օրէնքին, եւ թէ՛ շնորհքին տակ, իսկ Յակոբոսը կը խօսէր այն մարդոց հետ, որոնք յաւիտենական ուխտ ունէին, բայց, Ղովտին կնօջը պէս, կը պայքարէին այս աշխարհին կապուած ըլլալու հետ:

Ուշադրութիւն ըրէ, որ այս շեղումը կը սկսի պարզապէս այս աշխարհին հետ բարեկամ ըլլալու փափաքէն: Ինչի՞ մասին կը խօսի Յակոբոսը այս համարին մէջ: Աշխարհի մէջ բարեկամներ ունենալը կամ աշխարհիկ ընկերներ ունենալը եւ աշխարհի հետ բարեկամ ըլլալը նոյնը չեն: Մենք պէտք է բարեկամ ըլլանք այս աշխարհին համար, ոչ թէ բարեկամութիւն ընենք այս աշխարհին հետ: Առաջին ձեւը ցոյց կու տայ, թէ ինչպէս պէտք է յարաբերինք այս աշխարհի բնակիչներուն հետ, իսկ երկրորդը՝ բարեկամութիւն է անոր համակարգին հետ: Դուն երբեք իշխանութիւն պիտի չունենաս այն բանին վրայ, որ կը կառավարէ քեզ: Մենք կանչուած ենք գթասիրտ ըլլալու այս աշխարհին հանդէպ, ոչ թէ համակրանք ունենալու անոր հանդէպ: Ասիկա կը նշանակէ, որ.

Մենք պիտի հագցնենք այս աշխարհի մերկերը, ոչ թէ պիտի մերկանանք այս աշխարհին հետ:

Մենք պիտի կերակրենք այս աշխարհի քաղցածները, ոչ թէ քաղց պիտի զգանք այս աշխարհին հանդէպ:

Մենք բժշկութեան միջնորդներ ենք եւ կանչուած ենք նստելու այս տառապեալ աշխարհին անկողիներին եզերքը,



ոչ թե՛ անկողին մտնելու այս աշխարհին հետ:

Նոյնիսկ անհատներու հետ կապուելու ընթացքին մենք պետք է վարուինք որպէս դեսպաններ, որոնք կը ներկայացնեն ուրիշ թագաւորութիւն մը, որուն մէջ մեր Թագաւորին հրամանները կը պատուընդունին: Ասիկա կը նշանակէ, թէ պիտի գայ օր մը, երբ մեր եւ այս աշխարհի մարդոց յարաբերութիւններուն մէջ հարցեր պիտի յառաջանան:

Այս պսակը ստանալու համար մենք պետք է ձգենք այն մրցակցութիւնը, որ կը յառաջանայ վախի պատճառով, եւ ընդունինք Աստուծոյ կանչը, որն է՝ սիրել զԱյն, մարդիկը եւ մենք զմեզ:

### **Կեանքի Պսակը**

Եւ վերջին պսակը Կեանքի Պսակն է: Սովորաբար այս պսակը կարելի է նաեւ կոչել մարտիրոսներու պսակ: Եբրայեցիներուն գիրքին մէջ գտնուող «Հաւատքի Սրահ» կոչուած ցանկին մէջ գտնուող հերոսներէն շատերը ստացան այս պսակը: Անոնց միացան Ստեփանոսը, Պետրոսը եւ Քրիստոսի հետեւորդներէն շատերը, որոնց անունները երբեք պիտի չգիտնանք՝ մինչեւ յաւիտենականութենէն ներս մտնենք: Կան մարդիկ, որոնք ամէն քան կու տան: Այս պսակը կը գնուի առանց մրցակցութեան կեանք մը ապրելու գնով:

Մինչեւ մահ հաւատարիմ եղիր, ու պիտի տամ քեզի կեանքի պսակը: Ա՛ն որ ականջ ունի, թող լսէ, թէ Հոգին ի՞նչ կ'ըսէ եկեղեցիներուն: Ո՛վ որ յաղթէ՝ պիտի չվսասուի երկրորդ մահէն: (Յայտնութիւն 2.10,11)

Կը սիրեմ ի՛նչպէս Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակը կը բացատրէ 10-րդ համարը. «Ես Կեանքի Թագ մը ունիմ՝ ճիշդ քու չափովդ եւ պատրաստ՝ քեզի համար»:

Մենք կ'ապրինք այնպիսի օրերու եւ ժամանակաշրջանի մը

մէջ, երբ անելի եւ անելի շատ սիրտեր վախէն պիտի թուլնան: Բռնութիւնը, հիւանդութիւնները, սովերը եւ պատերազմները մահուան վախը կը ծնին: Չարախօսութիւնները, ամբաստանութիւնները եւ հալածանքը մարդուն հանդէպ վախ կը ծնին: Այնքան յստակ է, որ Սատանան կ'ուզէ մեզ վախով լեցնել, որպէսզի կրաւորական ըլլանք եւ քայլ չ'առնենք կամ մեզ հակազդեցութեան մղէ: Ինչպէս Ներոնը, Սատանան կ'ուզէ շփոթեցնել մեզ դաժանութեամբ ու սարսափով մէկ կողմէն, իսկ միւս կողմէ գայթակղեցնել մեզ հարստութեամբ եւ կիրքով: Ամէն բանէ անելի մեր թշնամին կ'ուզէ, որ մենք մնանք երազներու կամ փափաքներու ջրհորներուն քով՝ մտահոգ եւ անձկութեան մէջ եւ մետաղադրամներ նետելով: Բայց մենք պէտք է խորութիւն ունենանք՝ այս պսակը ստանալու համար:

Վերջերս երեք սարսափելի պատմութիւն լսեցի մէկ օրուան մէջ: Անոնցմէ երկուքը ինծի հասան իմ հոգեւոր աղջիկներէս մէկուն կողմէ՝ յղումներու ձեով: Այդ կինը իր ընտանիքին հետ կը ղեկավարէ կազմակերպութիւն մը, որ կը պայքարի սեռային ապօրինի վաճառականութեան դէմ Իսրայէլի մէջ: Առաջին յղումը դիտելով՝ եւ կարդացի ողբերգական պատմութիւնը 150 երիտասարդ աղջիկներու եւ կիներու անձնասպանութեան մասին, որոնք գերի բռնուած էին *SUCKER*-ի կողմէ եւ կը պահուէին որպէս ստրուկներ՝ սեռային նպատակով օգտագործուելու համար: Կարծես այս սարսափելի կորուստը բաւարար չ'ըլլար, զանոնք գերողները ալ անելի ստորնացուցին զանոնք՝ անոնց մարմինները շուններուն տալով: Աչքերուս չհաւատալով՝ ես քանի մը անգամ կարդացի այդ պատմութիւնը: Կարելի է, որ իրականութեան մէջ այդ աստիճան չարիք գոյութիւն ունենայ: Նոյնիսկ այս տողերը տպելու ընթացքին՝ միտքիս մէջ կը տեսնեմ այդ շուները, որոնք կատաղութեամբ կը պատռտեն այդ աղջիկներուն մարմինները: Սարսափէն կծկուելով այդ մտաւոր պատկերէն՝ կը յիշեմ Յայտնութիւն 12.17-ին մէջ գրուած խօսքերը.

Վիշապն ալ բարկացաւ կնոջ դէմ, ու գնաց պատերազմելու անոր զարմէն մնացողներուն հետ, որոնք կը պահէին Աստուծոյ պատուիրանները եւ ունէին Յիսուսի վկայութիւնը:

Այսպիսի բան մը չափազանց անգութ է մարդ արարածներուն համար. ատիկա վիշապին զայրոյթն է:

Այս բարկութիւնը ուղղուած է «Կնոջ» եւ «անոր զաւակներուն, որոնք կը պահեն Աստուծոյ պատուիրանները եւ ամուր բռնած են Յիսուսի վկայութիւնը» (Յայտնութիւն 12.17, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն): Վերջին տասնամեակին ընթացքին ես տեսած եմ, թէ ինչպէս այս մութ պատկերը ի յայտ եկած է աւելի մեծ չարութեամբ՝ հասնելով աներեւակայելի չափերու:

Յաջորդ յղումը, որ բացի, կը խօսէր Գուրանէն հատուածներ գոց սորվող տղամարդոց սեռային ստրուկներ նուիրելու մասին: Այդտեղ նոյնպէս գրուած էր անհաւատները բռնաբարելու մասին, որ երկրպագութիւն կը համարուէր: Դժբախտաբար, կը վախճամ, որ մինչեւ այն պահը, երբ այս գիրքը տպագրուի, տեղի պիտի ունենան շատ աւելի սարսափելի վայրագութիւններ, որոնք մոռացութեան պիտի մատնեն այս պատմութիւնները:

Ես ստացայ երրորդ պատմութիւն մը մեր գործի ելեկտրոնային հասցէներէն մէկուն միջոցաւ: Մենք բանալի մարդ մը ունինք, որ կը համադրէ անվճար նիւթերու եւ աղբիւրներու տարածումը այն երկիրներուն մէջ, որոնց մէջ հալածանքի եւ աղքատութեան պատճառով մարդիկ չեն կրնար քրիստոնէական նիւթեր ձեռք բերել: Մեր քաջ բարեկամներէն մէկը Միջին Արեւելքի մէջ՝ Սուրիոյ մէջ, սպաննուած է քրիստոնէաներու դէմ ուղղուած ռմբակոծումի մը ընթացքին: Այդ մարդուն մահուան մանրամասնութիւնները նկարագրելու ընթացքին մեր աշխատակիցը կը գրէ. «Ոմանք կանչուած են, որ շատ բան զոհեն. ուրիշներ կը զոհեն ամէն բան»:

Ես ցնցուած էի: Անկէ ետք պէտք էր հանդիպումի մը երթայի եւ ճամբուն ընթացքին կը փորձէի միտքիս մէջ նամակ մը գրել այդ մարդուն այրիացած կնոջ: Կը զգայի, որ ինչ որ ալ ըսէի, վիրատորական պիտի ըլլար անոր ամուսինին եւ անոր պայմաններուն հանդէպ: «Կը ցաւիմ»ը մակերեսային կը թուէր. «շնորհակալութիւն»ը սխալ պիտի ըլլար: Ես անոր պիտի գրէի իմ ապահով ընտանիքէս, որ երբեք մարտիրոսի մահ չէ ապրած: Ես կրնամ ամէն վայրկեան պաշտամունքի երգեր լսել եւ ունիմ աւելի շատ գիրքեր ու Աստուածաշունչեր, քան երբեւէ կրնամ կարդալ: Իմ մթերանոցիս մէջ շատ կերակուր կայ, իսկ իմ պահարաններուս մէջ՝ շատ հագուստներ: Երեկոյեան, երբ ժամանակ կ'անցընեմ թոռներուս հետ, անոնք պիտի խնդան եւ խաղան՝ անտեղեակ այն բանէն, որ մեր եղբայրներուն եւ քոյրերուն կեանքին մէջ այդպիսի ցաւ կայ:

Ես կ'ամչնայի: Յանկարծ ինծի թուեցաւ, որ իմ կեանքս մեկուսացուած, պարապ պատեան մըն է, եւ այն բոլոր բաները, զորս գիտէի եւ ունէի, նոյնքան վաղանցիկ են, որքան թոռներուս փչած օճառէ պղպջակները: Ես կ'ուզէի հեռաձայնել մէկու մը՝ աւելի տարեց եւ աւելի իմաստուն կնոջ մը, որ պարզապէս կը հասկնար, թէ ինչ կը զգայի, նոյնիսկ եթէ չկարենար պատասխանել մէջս մոլեգնող հարցումներուն:

Միտքիս մէջ այնքան «ինչո՞ւ»ներ կային: Ինչո՞ւ ես այսքան շատ բաներ ունիմ, իսկ ուրիշ երկիրներու մէջ կան կիներ, որոնք այնքան յուսահատ են, որ պատրաստ են իրենց կեանքը խլելու, քան թէ մէկ օր ես ապրին: Ո՞ր է արդարութիւնը: Ես կը փորձէի յաղթահարել այն յուսահատութիւնը, զոր կը զգայի կեանքի անհաւասարութեան պատճառով: Յանկարծ անդրադարձայ, որ ես կը բաղդատէի: Ես ճիշդ կերպով կը հասկնայի մեր միջեւ գտնուող հակադրութիւնը, բայց բաղդատելը անիմաստ էր: Այդ հարցումը պատասխան չունէր: Միակ պատասխանը օճն է, որ վիշապ դարձած է: Վիշապներու ազդեցութեան տակ

տղամարդիկ եւ կիներ սարսափելի կերպով կը վարուին իրարու հետ: Անդրադարձայ, որ ընտրութիւն ունիմ: Կրնամ շարունակել հարցնել՝ բարկութեամբ լեցուած, կամ թոյլ տալ, որ իմ կեանքիս հարցման նշանները վերածուին բացազանչութեան նշաններու: Ես սրբեցի արցունքներս եւ որոշեցի, որ անոնց պատմութիւնները պիտի օգնեն ինձի, որ փոխեմ կեանքիս շեշտադրումները:

Հալածանքի մասին պատմութիւնները նոր չեն. անոնք եղած են բոլոր ժամանակաշրջաններուն: Ես արդէն յիսունհինգ տարեկան եմ, եւ ժամանակն է, որ դադրիմ պայքարելէ այն հարցումներուն հետ, որոնց պատասխանը չեմ կրնար գիտնալ, քանի դեռ մուտք չեմ գործած յաիտենականութիւն: Տարիքն ինքնին չի կրնար իմաստաւորել այն, ինչ որ անիմաստ է: Մեր ընթացքը արագ կ'անցնի, եւ այսօրուայ իրադարձութիւնները ակաւելի հրապուրիչ կը դարձնեն յաիտենականութիւնը: Եւ նաեւ պատճառ կը դառնան, որ արդիւնաւետ ըլլանք, քանի դեռ կրնանք: Այս պատմութեան իմաստը կը բացայայտուի միայն յաիտենականութեան մէջ, բայց հոս եւ հիմա մենք կրնանք աղօթել եւ գիտնալ, որ մեր աղօթքը կը լսուի, եթէ մեր սիրտերը ազատ են մրցակցութենէն, նախանձէն եւ բաղդատութիւններէն:

Բոլորդ կանչուած էք, որ նոյն ճամբուն մէջ ճամբորդէք եւ միեւնոյն ուղղութեամբ, ուստի միասին մնացէք թէ արտաքուստ, թէ ներքուստ: Դուք ունիք մէկ Տէր, մէկ հաւատք, մէկ մկրտութիւն, մէկ Աստուած եւ բոլորին Հայրը, որ կը տիրէ բոլորին, կը գործէ բոլորին միջոցով եւ ներկայ է բոլորին մէջ: Ամէն բան, որ էք եւ կը մտածէք եւ կ'ընէք, Մէկութենէն կը հոսի: Բայց աստիկա չի նշանակեր, որ բոլորդ պէտք է միեւնոյն տեսքը ունենաք եւ միեւնոյն կերպով խօսիք եւ վարուիք: Մեզմէ իւրաքանչիւրը ստացած է իր պարզեւը Քրիստոսի առատութենէն: (Եփեսացիներուն 4.4-7, բառացիօրէն թարգմանուած Աստուածաշունչի *Տը Մասէճ* տարբերակէն)

## Կեանքդ Ապրէ՛

Մեզի այնքան շատ բան տրուած է: Մեր եզակի տեսակէտը կեանքի մասին՝ պարզեւ է: Ինչ որ մենք տեսած եւ ապրած ենք՝ պարզեւ է: Մենք ընտրութիւն ունինք: Մենք կրնանք թոյլ տալ, որ այդ ամէնը բեռնաւոր է եւ կանգնեցնէ մեզ, եւ այլեւս ոչինչ ընենք: Մենք կրնանք հասարակ բանի պէս վերաբերիլ կեանքին հետ եւ թոյլ տալ, որ անիկա անգործութեան մատնէ մեզի, կամ ալ կրնանք մշտապէս զարմանքով լեցուած ըլլալ՝ մտածելով ամէն վայրկեան կատարուող սքանչելիքներուն եւ զօրութեան մասին, եւ յառաջ երթալ:

Վերջին տասնամեակին ընթացքին ես գրած եմ կին եւ աղջիկ առիւծներու մասին՝ սուրերով եւ խաչերով, կնոջ պէս կռուելու մասին եւ այն համբոյրներուն մասին, որոնք անոնց անձերը սնուցանելու փոխարէն՝ պատճառ կ'ըլլան, որ կիները լան: Հիմա ես կը գրեմ՝ յուսալով, որ ակնկալութիւններդ իրականանան: Քանի որ.

Դուն, դուստր, կանչուած ես անզուգական կեանքի մը համար:

Դուն սիրուած ես անզուգական Հօր մը կողմէ:

Դուն կ'ապրիս անզուգական ժամանակի մը մէջ:

Դուն ծնած ես անզուգական երկրի մը մէջ:

Դուն կը ծառայես անզուգական Աստուծոյ մը:

Դուն գնուած ես անզուգական զոհով մը:

Քեզի վստահուած է Անոր անզուգական անունը:

Դուն զօրացած ես Անոր անզուգական Հոգիով:

Դուն կը տիրապետես անզուգական լեզուի մը:

Դուն անզուգական մարմնի մը անդամն ես:

Քեզի անզուգական յանձնարարութիւն մը տրուած է:

Դուն անզուգական զէնքերով սպառազինուած ես:

Դուն մաս կը կազմես անզուգական պատերազմի մը:

Դուն կանչուած ես անզուգական աղօթքներու:

Մեր առջեւ անզուգական հնարաւորութիւններ կան, քանի որ

Մենք դիրքաւորուած ենք՝ անզուգական հունձք մը  
հաւաքելու:

Մենք նախասահմանուած ենք անզուգական  
յաւիտենականութեան համար ...

Ուրեմն, ապրի՛նք անզուգական գեղեցկութեամբ,  
զօրութեամբ, առաքինութեամբ եւ ազդեցութեամբ լեցուն  
կեանք մը ... այնպիսի կեանք մը, որուն ընթացքին ոմանք  
շատ բան կը զոհեն, իսկ ուրիշներ ամէն բան կը զոհեն:

Կեցի՛ր Աստուծոյ առջեւ՝ լեցուն յոյսով, հաւատարիմ եղիր  
ծառայութեան մէջ եւ սիրէ՛ ինչ որ կ'ընես: Որովհետեւ դո՛ւն, ի՛մ  
բարեկամս եւ քոյրս, ունիս անզուգական կոչում մը: Իսկ հիմա  
գնա՛ այն քաջութեամբ, որ կը ծնի սէրէն, եւ ապրի՛ր յանդուգն  
համարձակութեամբ:

## **Քննարկումի Հարցումներ**

1. Ինչ զգացիր Թերլային պատմութենէն:
2. Բացատրէ՛ տարբերութիւնը աշխարհի հետ  
բարեկամութիւն ընելու եւ աշխարհի համար բարեկամ  
ըլլալու միջեւ:
3. Կեանքիդ ո՞ր մարզերուն մէջ պէտք է փոխես  
կէտադրութիւններդ:
4. Ինչ պիտի ըլլայ յաջորդ քայլդ դէպի անզուգական  
կեանքդ, ուր մրցակցութիւն չկայ:

## Նշումներ

### Գլուխ 3. Խոստում՝ Առանց Մրցակցութեան

1. Թէեւ «սելա» բառին իրական իմաստը անյայտ է, շատեր կը մտածեն, որ անիկա ծիսական նշանագիր մըն է: Անգլերէն Աստուածաշունչի *ԱմփոփՖայր* տարբերակը «սելա» բառը կը թարգմանէ որպէս «կանգ առ եւ մտածէ այդ մասին»:

### Գլուխ 5. Երբ Քեզ Մրցակից կը Սեպեն

1. Էյ.Էլ.Տաքուրթ, Սի.Փիթըրսըն, Էմ.Տի.Մեթյուզ, եւ Տի.Առ.Քելի, «Հաստատականութիւն. Յարատեւութիւն եւ Ձգտում Երկարատեւ Նպատակներու համար», *Անհատականութեան եւ Ընկերային Հոգեբանութեան Ամսաթերթ*, 92, թիւ 6, 2007թ., էջ 1087:
2. Մալքոլմ Կլատուէլ, «Դաւիթ եւ Գողիաթ. Վտարանդիներ, Անյաջողակներ եւ Հսկաներու հետ Կռուելու Արուեստը» (Նիւ Եորք. Little, Brown and Co., 2013):



## Գլուխ 6. Սեռ՝ Առանց Մրցակցութեան

1. Մարք Տրիսթրոլ, «Եկեղեցական Ղեկավարութեան Մասին» (Ուիթթըն, Իլինոյս. Crossway, 2008)
2. Նոյնը:
3. Քրիս Վելլըթըն, «Պատրաստուած՝ Թագաւորելու Համար» (Կրենտ Ռեփիսու. Chosen, 2013), գլուխ 7:
4. Կիլպըրթ Պիլեզիքեան, «Սեռային Դերերէն Անդին. Ինչ Կ'ըսէ Աստուածաշունչը Կնոջ Դերին Մասին Եկեղեցիին եւ Ընտանիքին մէջ», 3-րդ հրատարակութիւն (Կրենտ Ռեփիսու. Baker, 2006):

## Գլուխ 7. Վախի եւ Սիրոյ Պատերազմը

1. Սի.Էս.Լուիս, «Չորս Սէրեր» (Նիւ Եորք. Harcourt Brace Jovanovich, 1960):
2. Քենթ Էմ.Քիթ, «Յարակարծական Պատուիրաններ» (Makawao, HI: Inner Ocean, 2001):

## Գլուխ 9. Դուստր՝ Առանց Մրցակիցների

1. <https://oca.org/saints/lives/2015/05/10/39-sunday-of-the-samaritan-woman>
2. <https://orthochristian.com/79178.html>
3. Քրիսթոֆըր Հենրի Տոսըն, «Կրօնքը եւ Համաշխարհային Պատմութիւնը. Ընտրանի Քրիսթոֆըր Հենրի Տոսընի Գործերէն» (Garden City, NJ: Image Books, 1975).
4. Այս պարբերութեան մէջ նշուած փաստերը հետեւեալ աղբիւրներէն առնուած են.
  - ա) Ռուպըրթ Տիքսըն, «Քենիայի Համալսարանին մէջ. Քրիստոնեայ Աշակերտներու Նախագգուշացուած Սպաննութիւնը», *Լոս Անճըլըս Թայմզ*, Ապրիլ 5, 2015,

- բ) «Զինեալ Մարդիկ կը Սպանեն 147 Աշակերտներ Քենիայի Համալսարանին մէջ», *Շիրակո Թրիպուն*, Ապրիլ 3, 2015,
- գ) «Առնուազն 147 Հոգի Սպաննուած է Քենիայի Համալսարանին մէջ Իսլամական Ահաբեկչական Յարձակումին Ընթացքին, որուն Թիրախը Քրիստոնեայ Աշակերտներ էին», KTLA.com, Ապրիլ 2, 2015.

### **Գլուխ 10. Կեանք՝ Առանց Մրցակցութեան**

1. Թեքլային կեանքին մասին աւելին գիտնալու համար այցելեցէք հետեւեալ աղբիւրները.  
<https://www.pbs.org/wgbh/pages/frontline/shows/religion/maps/primary/thecla.html> (the account from the Apocryphal Acts)  
<https://www.antiochian.org/regulararticle/661>  
<https://dce.oca.org/assets/templates/bulletin.cfm?mode=html&id=101>  
<https://www.newadvent.org/cathen/14564a.htm>
2. Հենրի Քլարընս Թիսըն, «Համակարգուած Աստուածաբանութիւն. Դասախօսութիւններ» (Grand Rapids: Eerdmans, 1979), 389:



«Պատկերացուր, թէ ինչպիսին պիտի ըլլար աշխարհը եթէ իրաքանչիւրս հասկնար, թէ որքան սիրուած եւ գնահատուած է ինք: *Կեանքը՝ Առանց Մրցակցութեան* գիրքին մէջ Լիսա Պրվիրը կը քաջալերէ մեզ բացայայտելու եւ հասկնալու, թէ մենք իւրայատուկ ձեռով ստեղծուած եւ սիրուած ենք Աստուծոյ կողմէ: Ասիկա է պատճառը, որ մեզմէ իրաքանչիւրը կարելի է վճռորոշ կոչում մը ստացած է Աստուծոյ ծրագիրին մէջ: Այս գիրքը կը հրաւիրէ քեզ՝ փնտռելու զԱստուած եւ այն առաքելութիւնը, որ Ան որոշած է քեզի համար»:

- **Հոլի Ուակները**, հովիւ եւ հեղինակ

«Մենք կ'ապրինք թափառող մարդոց մշակոյթի մը մէջ, որոնք կը փնտռեն իրենց ինքնութիւնը սխալ տեղերու մէջ: Այս գիրքը՝ յստակ կողմնացոյց է, որ կ'առաջնորդէ դէպի մեր հոգեւոր ինքնութեան ճշմարիտ աղբիւրը: Մենք կը պատկանինք Աստուծոյ. Ան ընտրած է մեզ եւ իւրայատուկ կերպով կը սիրէ իրաքանչիւրս: Լիսան վարպետութեամբ կեանքի կը կոչէ այս անժամանակեայ ճշմարտութիւնները: Այս գիրքը անպայման պէտք է, որ կարդաս»:

- **Պրետի Պոյտ**, հովիւր Քոլորատո Սփրինկզի *Նիւ Լայֆ Չըրչի*, հեղինակը «Զբաղուածութեան Մոլի» գիրքին

«Կեանք՝ *Առանց Մրցակցութեան* գիրքին մէջ Լիսա Պրվիրը խորաթափանց ճշմարտութեամբ կը խօսի, թէ Աստուած ինչպիսի՞ ինքնութեամբ մը ստեղծած է մեզ եւ որ Ան իւրայատուկ կերպով կը սիրէ իրաքանչիւրս: Այս գիրքը կարդալէ ետք երբեք չեմ կասկածիր, որ Աստուած կը սիրէ մարդիկը»:

- **Քրիս Հաճըս**, երէց հովիւր *Հայլենյոզ Չըրչի*, հեղինակը «Մաքուր Օդ» եւ «Չորս Գաւաթ» գիրքերուն

«Եթէ երբեք հարցեր ունեցած ես ինքնութեանդ հետ, այս գիրքը ամէն բան պիտի փոխէ: Քրիստոսով մեր ունեցած եզակի ինքնութիւնը հասկնալը կը փոխակերպէ մեզ. մենք կը դադրինք ապահովութիւն փնտռելէ եւ կը գրաւենք մեր տեղը Աստուծոյ փրկութեան մեծ ծրագիրին մէջ»:

- **Շէյլա Ուոլշ**, հեղինակ «Աստուած կը Սիրէ Կոտրուած Մարդիկը» գիրքին եւ *Հաւատքի Կիներ* ծառայութեան ղեկավար

«Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքը կը բացայայտէ կարեւոր ճշմարտութիւններ. կը հաւատամ, որ անիկա մեծ ազդեցութիւն պիտի ձգէ մեր սերունդին վրայ: Լիսա Պըվիըրը կը փոխանցէ Աստուծոյ սէրը այնքան գեղեցիկ, վառ եւ նոր ձեւով, որ անիկա անպայման պիտի գրաւէ իւրաքանչիւր ընթերցող: Խորասուզուելով այս հիանալի գիրքին մէջ՝ ընթերցողը աւելի եւ աւելի կը հասկնայ, թէ Աստուած որքան կը սիրէ զինք, ինչպէս նաեւ՝ թէ որքան կարեւոր է գտնել մեր ինքնութիւնը Անոր մէջ»:

- **Մէթու Պարնէթ**, *Տը Տրիմ Սենթըր* եկեղեցոյ համահիմնադիր

«Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքը հիանալի յիշեցում մըն է, թէ Աստուած բոլոր մարդիկը կը սիրէ: Լիսան այս նիւթին կը մօտենայ թարմ յայտնութեամբ մը եւ իր միտքերը կ'արտայայտէ նրբաճաշակ եւ հակիրճ կերպով: Ասիկա իսկապէս գեղեցիկ գիրք մըն է, որ պիտի ներշնչէ իւրաքանչիւր ընթերցող»:

- **Քարոլայն Պարնէթ**, *Տը Տրիմ Սենթըր* եկեղեցոյ հովիւ

«Այս մրցակցութեամբ եւ բաղդատութեամբ կլանուած աշխարհին մէջ ամէն կին, որ մայր է, դուստր է, ղեկավար է եւ բարեկամ է, պէտք է կարդայ այս գիրքը: Ժամանակն է, որ

մենք իրարու ձեռքը բռնենք՝ մէկս միսին հետ բաղդատուելու փոխարէն: Ժամանակն է, որ մէկս միսով ուրախանանք, ոչ թէ զիրար հանդուրժենք: Մենք մրցակիցներ չունինք, ուստի, եկէք թոյլ տանք, որ իւրաքանչիւրը ծաղկի եւ բարգաւաճի»:

- **Շարլոթ Կամպիլ**, *Լայֆ Չըրչ եկեղեցոյ* հովիւ, Պրետֆորտ, Անգլիա

«Եթէ կը պայքարիս անպիտան ըլլալու զգացումին հետ եւ կեանքիդ մէջ նպատակ չունիս, դուն պէտք ունիս *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքին՝ քու ներսիդիդ գտնուող քննադատը լռեցնելու համար: Աստուած այնպէս ստեղծած է քեզ, որ դուն կրնաս գոհունակութիւն ստանալ որեւէ պայմանի մէջ եւ ապրիլ առանց մրցակցութեան կեանք մը»:

- **Սթիվըն եւ Հոլի Ֆըրթիք**, *Էլըվէյշըն Չըրչի* հովիւներ

«Լիսան քեզի պիտի օգնէ, որ ապրիս այն ազատութիւնը եւ վստահութիւնը, որոնք կու գան, երբ կը գիտակցիս, որ դուն Աստուծոյ եզակի գլուխ գործոցն ես՝ անզուգական եւ առանց մրցակիցներու, եւ որ դուն ունիս այն բոլոր բաները, որոնք կարելի են քեզի, որպէսզի իրագործես Աստուծոյ կողմէ քեզի տրուած իրայատուկ կոչումը»:

- **Վիքթորիա Օսթին**, համահովիւր Լէյքուուտ Եկեղեցիին, Հիւթըն, Թեքսաս

«Լիսա Պըվիրին *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքը պիտի արթնցնէ քեզ, որ նոր տարածութիւններ յայտնաբերես Քրիստոսով ունեցած քու ինքնութեանդ մէջ: Լիսային գիրքը լեցուն է խորաթափանցութեամբ եւ Աստուծոյ իմաստութեամբ: Անիկա պիտի քաջալերէ, ներշնչէ եւ սպառազինէ քեզ, որ ձգտիս այն իրայատուկ կոչումին, որ Աստուած որոշած է քեզի համար: Եթէ կ'ուզես գիտնալ, թէ ինչ կը խօսի Տէրը

## ԿԵԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՄՐՅԱԿՑՈՒԹԵԱՆ

քու կեանքիդ եւ կոչումիդ համար, այս գիրքը քեզի համար է: Խորհուրդ կու տամ, որ անպայման կարդաս զայն»:

- **Քրիստ Կելլթըն**, գլխավոր հովիտի օգնականը *Պեթըլ Չըրչի* մէջ, Ռետինկ, Քալիֆորնիա

«Լիսա Պըվիլը տարիներ շարունակ մեր մտերիմ բարեկամը եղած է, եւ մենք կը հաւատանք, որ այն իմաստութիւնը, որ ան կը բաժնեկցի *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքին մէջ, շատերուն ազատութիւն պիտի բերէ: Երբ այս գիրքին էջերը կը կարդաս, խնդրէ Աստուծմէ, որ օգնէ քեզի, որ յաղթահարես բաղդատուելու եւ մրկացելու ցանկութիւնը: Թոյլ տուր Անոր, որ քեզի սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է ընդունիս եւ սիրես դուն քեզ այնպէս, ինչպէս դուն ստեղծուած ես»:

-**Ճէյմզ Ռոպիսըն**, *Լայֆ Աութրիչ Ինթըրնաշընըլ* ծառայութեան հիմնադիր նախագահ

«Կը սիրեմ Լիսան: Այն խօսքը, որ ան կը փոխանցէ, շատ արդիական է: Բոլորը պէտք է կարդան այս գիրքը եւ հաւատան անոր պատգամին: Հիանալի է, երբ կը գիտնաս, թէ ո՛վ ես դուն եւ որ մարդիկ պէտք ունին քեզի: Դուն պիտի զօրանաս՝ կարդալով այս գիրքը, եւ պիտի զգաս, թէ Հայրը ինչպէս կը խօսի քու ճշմարիտ, անսասան ինքնութեանդ մասին»:

-**Ճեն Ճոնսըն**, պաշտամունքի ղեկավար եւ երգահան, *Պեթըլ Միզիք* ծառայութիւն

«*Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքը հիանալի արթնութեան կոչ մըն է բոլոր տարիքի կիներուն համար: Լիսային պատգամը, թէ Աստուած իրայատուկ կերպով կը սիրէ իրաքանջիւրս եւ ունի իրայատուկ կոչում մը իրաքանջիւրիս համար, շատ կարեւոր է: Ես կը սիրեմ անոր ջերմեռանդութիւնը եւ բուռն փափաքը, որոնք կը ճառագայթեն

այս գիրքին բոլոր էջերէն»:

- **Էլի Ուրրթինկթըն**, հեղինակը «Ազատիլ Չբաղուածութենէն. Ինչպէս Գտնել Խաղաղութիւն եւ Կեանքի Նպատակ այս Խելայեղ Աշխարհին մէջ» գիրքին

«Լիսային համարձակ եւ Հոգիով լեցուն խօսքերը կիներուն պիտի օգնեն, որ ազատին բաղդատութիւններէն, հպարտութենէն եւ նախանձէն: Ան կ'ապրի ինչ որ կը քարոզէ. երբ Յիսուսի կը պատկանիս, դուն չունիս մրցակիցներ»:

- **Սառա Պետի**, հեղինակ «Յիսուս՝ Իգական Սեռի Իրաւունքներու Ջատագով» եւ «Շփոթած. Խաղաղութիւն Հաստատել Փոխուող Հաւատքին հետ» գիրքերուն

«Լիսային նորագոյն գիրքը իսկական գանձ մըն է: Անկէկա բառացիօրէն համարժէք է հետեւեալին՝ Աստուած Իր ձեռքերուն մէջ կ'առնէ մեր երեսը, մեր հայեացքը Իրեն կ'ուղղէ եւ դանդաղ ու հաստատուն ձայնով կ'ըսէ. «Ես կը սիրեմ քեզ»:

- **Լիսա Հարփըր**, հեղինակ եւ Աստուածաշունչի ուսուցիչ

«Մարդուն սիրտին եւ անձին առողջ աճին համար չափազանց կարեւոր է հասկնալ, թէ դուն որո՞ւ կը պատկանիս, ո՞ր է քու իւրայատուկ տեղդ Աստուծոյ ընտանիքին մէջ, եւ ինչպիսի՞ նկարագիր ունի Քրիստոս: Լիսա Պըվիորը կը խօսի այս յաւիտենական սկզբունքներուն մասին՝ բացառիկ կերպով մեկնաբանելով Աստուծոյ Խօսքին ճշմարտութիւնները եւ բաժնեկցելով իր անձնական յայտնութիւնները: Դուն դարձեալ պիտի բացայայտես դուն քեզ, եւ բացի անկէ՝ վերստին պիտի ճանչնաս զԱյն՝ անզուգական, անձնական եւ զօրաւոր Փրկիչը»:

- **Պրայըն եւ Պոպի Հիուսթըն**, համաշխարհային Հիլտնկ Չըրչի հիմնադիրները եւ աւագ հովիւները



«Այս աշխարհի մէջ, ուր կիները կը բնորոշուին բաղդատուելով եւ մրցակցութեամբ, Լիսա Պըվիրը կ'ընէ այն, ինչ որ ինք լաւագոյնս կ'ընէ. ան կը մօտենայ մեզի իր սիրտին սնուցանող, զօրացնող եւ բժշկող խօսքերով. «Աղջիկս, դուն լիարժէք ես, քանի որ դուն իւրայատուկ կերպով սիրուած ես»: *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքը մեզմէ կը հեռացնէ մրցակցելու փափաքը՝ տանելով մեզ դէպի Հայր Աստուծոյ սիրտը եւ հաստատելով մեզ Անոր գիրկին մէջ: Այս գիրքը պէտք է կարդան այն կիները, որոնք կը ձգտին անելի խոր անձնական յարաբերութիւն ունենալ Աստուծոյ հետ, անոնք որոնք կ'ուզեն ճշմարտապէս ճանչնալ իրենց ինքնութիւնը եւ գտնել կեանքին նպատակը»:

- **Քրիսթա Պլեք Կիֆըրտ**, մրցանակակիր երգահան, քարոզիչ, եւ «Աստուած կը Սիրէ Տգեղները» եւ «Բժշկուած Սիրտ» գիրքերուն հեղինակ

«Լիսա Պըվիրին նոր գիրքը՝ *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* հիանալի ձեւով կը նկարագրէ Աստուծոյ իւրայատուկ սէրը մեզմէ իւրաքանչիւրին հանդէպ: Այս գիրքը մեզի կը յիշեցնէ, որ մենք մրցակիցներ չունինք, քանի որ Աստուծոյ նպատան է, որ գտնենք մեր իւրայատուկ արժէքները եւ ինքնութիւնը Իր մէջ: Բոլորը պէտք է կարդան այս գիրքը»:

- **Ճենթզըն Ֆրենքլին**, աւագ հովիւ *Ֆրի Չեփըլի* եւ հանրաճանաչ հեղինակ՝ «Նիւ Եորք Թայմզ» ամսաթերթին համաձայն

«Իմ սիրելի բարեկամուհիս՝ Լիսա Պըվիրը հիանալի գործ մը ըրաւ: *Կեանք՝ Առանց Մրցակցութեան* գիրքը ազդեցիկ, մարգարէական եւ ներշնչիչ պատգամ մըն է, որ քեզի պիտի օգնէ, որ բացայայտես քու ինքնութիւնդ եւ պատկանելիութիւնդ՝ որպէս Աստուծոյ կին: Այս գիրքէն

մէկական օրինակ նուիրէ այն կիներուն, զորս կը ճանչնաս: Ես ալ պիտի ընեմ ատիկա»:

- **Քրիսթին Քէյն**, էջ.21 եւ «Յառաջ Միէ Կիները» ծառայութիւններուն հիմնադիր

«Աստուած ոչ թէ հաւասարապէս կը սիրէ մեզ, այլ՝ իւրայատուկ կերպով: Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքին մէջ Լիսան կը մեկնաբանէ այն ճշմարտութիւնները, որոնք քեզի պիտի օգնեն, որ վերականգնես ուժերդ եւ կեանքիդ նպատակը»:

- **Մարք Պեթըրսըն**, ըստՆիւ Եորք Թայմզի «Շրջանակներ Գծողը» գիրքի մեծ վաճառք ունեցող (պեսթսելինկ) հեղինակ, եւ Նեշընըլ Քոմիւնիթի Չըրչի գլխաւոր հովիւ

# ՍՈՒՐ ԿՐՈՂ ԱՂՋԻԿՆԵՐ


Ինչպես խաչող կրես հերոսի մը պէս



Աստուծոյ Խօսքը սուր մըն է, գոր մենք անելի հանգիստ կերպով կը կարդանք քան կը ճօճենք կամ կը գործածենք: Ժամանակն է, որ սուրեր դնենք աղջիկներու ձեռքերուն մէջ եւ տեսնենք, որ անոնք ինչպէս երկինքը երկիրին պիտի կապեն: Ամբողջ աշխարհի տարածքին կիները թիրախներն են նախապաշարումի, սեռային մաքսանենգութեան, բռնաբարումի եւ նոյնիսկ սեռասպանութեան: Լիսա Պըվիր կը գրէ, թէ այդ յարձակումները անելի բան կ'ըսեն անոր մասին, թէ կիները ղվ կրնան ըլլալ ապագային քան թէ ղվ էին անցեալին: «Սուր Կրող Աղջիկներ»ուն մէջ ան կը բացատրէ, թէ հոգետոր թշնամին կը փորձէ զինաթափ ընել կիները ամէն մակարդակի վրայ: Ժամանակն է, որ կիները ըլլան այն հերոսները, որ Աստուած ստեղծած է զիրենք, որ ըլլան եւ ուղքի ելլեն՝ քաջաբար, զանազանելու կարողութեամբ, ներող եւ իմաստուն կերպով: Ժամանակն է, որ սուրդ քաշես եւ հերոս մը ըլլաս:

# X MessengerX

Աշակերտ ըլլալու ճամբորդութիւն մը ամէն մարդու համար ամէն տեղ





- Անվճար, աւելի քան 125 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս հեռաձայնային կիրարկում («Էփիլիքէյշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ Նախատեսուած ձեր աճին համար
- Հետեւեցէք ձեր անցած կիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական նիւթերուն ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, վիտեօ-ուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք կամ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

## MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

«Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքը իւրայատուկ դիրքորոշում մը կ'որդեգրէ ընդդէմ այն մնայուն պատերազմին, որ Քրիստոսով մեր ունեցած ինքնութեան դէմ կը մղուի»:

## — ՃՈՅՍ ՄԱՅՐԸ

Աստուածաշունչի ուսուցիչ եւ մեծ վաճառք ունեցող գիրքերու (*պեսթ-սելիսկ*) հեղինակ

Պատճառ մը կայ, որ մենք ուրիշներուն կը նայինք որպէս մրցակիցներ եւ մենք զմեզ կը սահմանափակենք՝ շարունակ անոնց հետ բաղդատուելով եւ մրցակցելով: Մենք ունինք թշնամի մը, որ կը յարձակի մեր միտքին, կամքին եւ զգացումներուն վրայ՝ յուսալով, որ մեզ մեր անձին եւ ուրիշներուն թշնամի կը դարձնէ: Ատիկա կրկնուող շրջան մըն է, որ մեզ կը մեկուսացնէ մտերիմ յարաբերութիւններէ, կասկածի կ'ենթարկէ մեր ինքնութիւնը եւ կը սահմանափակէ մեր արդիւնաւետութիւնը:

Կեանք՝ Առանց Մրցակցութեան գիրքին մէջ մեծ վաճառք ունեցող գիրքերու հեղինակ Լիսա Պըվիրը ցոյց կու տայ, թէ ինչպէս Աստուծոյ սիրոյն մասին յայտնութիւնը կը քանդէ այս սահմանափակումները: Դուն պիտի սորվիս այլեւս չտեսնել ուրիշները իբրեւ մրցակիցներ եւ քու Ստեղծիչիդ հետ պիտի հաստատես այն խոր կապերը, որոնց համար մեծ փափաք ունիս. կապեր, որոնց շնորհիւ կը բացայայտես քու իսկական ինքնութիւնդ եւ մտերմօրէն կը ճանչնաս զինք: Լիսային առողջ աստուածաշնչակա ուսուցումը՝ լեցուն մեր օրերուն վերաբերող մարգարեական խորաթափանցութեամբ եւ համեմուած հիւմըրով եւ կրակով, կոչ կ'ուղղէ քեզի.

- Օգտագործելու մրցակցութիւնը, որպէսզի անիկա քու մէջդ լաւագոյնը դուրս բերէ:
- Այլեւս չպահուըտելու այն խօսակցութիւններէն, որոնց պէտք է մասնակցիս:
- Պատասխանելու այն պատճառաբանութեան, որ կ'ըսէ, թէ կիները որոշ գործերու համար յարմար չեն, թէ անոնք կրնան դիւրութեամբ խաբուիլ եւ դիւրահաւատ են:
- Պատռելու սեռերուն միջեւ գտնուող մրցակցութեան դիմակը եւ համագործակցելու այն տղամարդոց հետ, որոնք կեանքիդ մէջ կը գտնուին:

ժամանակն է, որ քայլ առնես եւ ապրիս կեանք մը, որ մրցակցութենէ զուրկ է:

Լիսա Պըվիրին անկեղծ, կրակոտ եւ զուրթամիտ մօտեցումը կը միահիւսէ խոր աստուածաշնչական ճշմարտութիւնները գործնական քայլերու հետ: Անոր գիրքերը, որոնց շարքին են՝ *Պայթարիք Աղջկայ մը Նման*, *Երբ Կին Առիւծները Կ'արթնան*, եւ *Սուրբ Կրող Աղջիկները*, աւելի քան վաթսուհիկ լեզուներու թարգմանուած են եւ միլիոնաւոր մարդոց կողմէ կը կարդացուին ամբողջ աշխարհի շուրջ: Լիսան եւ իր ամուսինը՝ ճոնը, մեծ վաճառք ունեցող գիրքերու հեղինակներն են *Մեսենճըր Ինթըրնաշնըլ* ծառայութեան հիմնադիրները:

Յանելեալ տեղեկութեան համար այցելէ [MessengerX.com](https://messengerx.com) կայքէջը:



Այս գիրքը նուրբ է հեղինակին կողմէ եւ վաճառքի ենթակայ չէ:

Միակողմանի օգտակար  
Տեսարաններ ձեր հոգիին

